1659

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՄԱՐՔՍ—ԷՆԳԵԼՍ—ՄԱՐՔՍԻԶՄ

3К23
Л-40

U. Sb.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

21 MAY 2005
3K23
Մ-40
14 NOV 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՄԱՐՔՍ—ԵՆԳԵԼՍ—ՄԱՐՔՍԻԶՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

1659

11 SEP 2013

1303
40

В. И. ЛЕНИН

МАРКС—ЭНГЕЛЬС—МАРКСИЗМ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1939

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

Կարլ Մարքսը ծնվել է 1818 թ. նոր տոմարով մայիսի 5-ին Տրիր քաղաքում (մերձհռենոսյան Պրուսիա): Նրա հայրը փաստաբան եր, հրեա, որ 1824 թ. բողոքականություն ընդունեց: Ընտանիքն ունևոր եր, կուլտուրական, բայց ոչ հեղափոխական: Ավարտելով գիմնազիան Տրիրում, Մարքսը մտավ նախ Բոննի, ապա Բեռլինի համալսարանը, ուսումնասիրեց իրավաբանական գիտությունները, բայց ամենից ավելի պատմություն և փիլիսոփայություն: Կուրսն ավարտեց 1841 թվականին, ներկայացնելով համալսարանական դիսերտացիա Եպիկուրի փիլիսոփայության մասին: Իր հայացքներով Մարքսը դեռ այն ժամանակ հեգելյան-իդեալիստ եր: Բեռլինում նա հարում եր «ձախ հեգելականների» խմբակին (Բրունո Բաուեր և ուրիշներ), որոնք ձգտում եյին Հեգելի փիլիսոփայությունից աթեիստական և հեղափոխական յեզրակացություններ հանել:

Համալսարանն ավարտելուց հետո Մարքսը փոխադրվեց Բոնն, հույս ունենալով պրոֆեսոր դառնալ: Բայց կառավարության ռեակցիոն քաղաքականությունը,—կառավարություն, որ 1832 թվին ամբիոնից զրկեց Լուդվիգ Ֆոյերբախին և 1836 թ. վերստին հրաժարվեց նրան համալսարան թողնել, իսկ 1841 թ. յերիտասարդ պրոֆեսոր Բրունո Բաուերից խլեց Բոննում դասախոսություններ կարդալու իրավունքը,—ստիպեց Մարքսին հրաժարվել գիտական կարյերայից: Ձախ հեգելականության հայացքների զարգացումը Գերմանիայում այդ ժամանակ շատ արագ եր առաջ գնում: Լուդվիգ Ֆոյերբախը, մանավանդ 1836 թվից ի վեր, սկսում է քննադատել թեոլոգիան և դառնալ դեպի մատերիալիզմը, որ նրա մոտ լիակատար գերակշռություն է ստանում 1841 թ. («Քրիստոնեության եյությունը»). 1843 թ. լույս տեսան նրա իսկ «Ապագայի փիլիսոփայության հիմնական դրույթները»: «Հարկավոր եր զգալ և ապրել այս գրքերի ազատարար ներգործությունը»,—գրում եր հետագայում Ենգելսը

Ֆոյերբախի այս յերկերի մասին։ «Մենք» (այսինքն՝ ձախ հեգելականները, նույն թվում և Մարքսը) «մեկ անգամից ֆոյերբախականներ դարձանք»[1]։ Այդ ժամանակ հռենոսյան ռադիկալ բուրժուաները, վորոնք ձախ հեգելականների հետ շփման կետեր ունեյին, Քյոլնում հիմնադրեցին «Հռենոսյան լրագիր» ոպոզիցիոն թերթը (սկսեց լույս ընծայվել 1842 թ. հունվարի 1-ից)։ Մարքսը և Բրունո Բաուերը հրավիրվեցին իբրև գլխավոր աշխատակիցներ, իսկ 1842 թ. հոկտեմբերին Մարքսը գլխավոր խմբագիր դարձավ և Բոննից Քյոլն փոխադրվեց։ Մարքսի խմբագրության օրով թերթի հեղափոխական-դեմոկրատական ուղղությունն ավելի ու ավելի վորոշակի դարձավ, և կառավարությունը նախ թերթը կրկնակի ու յեռակի գրաքննության յենթարկեց, իսկ հետո վորոշեց բոլորովին փակել 1843 թ. հունվարի 1-ին։ Մարքսը հարկադրված յեղավ այդ ժամկետին թողնել խմբագրությունը, բայց նրա հեռանալն այնուամենայնիվ թերթը չփրկեց, և նա փակվեց 1843 թ. մարտին։ «Հռենոսյան լրագրում» Մարքսի զետեղած ամենից ավելի խոշոր հոդվածներից Ենգելսը նշում է, բացի ստորև մատնանշվածներից (տե՛ս Գրականություն[2]), Մոզելի հովտի գինեգործ գյուղացիների դրության վերաբերյալ հոդվածը ևս։ Լրագրական աշխատանքը ցույց տվեց Մարքսին, վոր նա բավականաչափ ծանոթ չէ քաղաքատնտեսությանը, և նա յեռանդով ձեռնարկեց նրա ուսումնասիրությանը։

1843 թ. Մարքսը Կրոյցնախում ամուսնացավ իր մանկության ընկերուհի Ջեննի ֆոն Վեստֆալենի հետ, վորի հետ ինքը նշանված էր դեռ ուսանող ժամանակ։ Նրա կինը պրուսական ռեակցիոն ազնվական մի ընտանիքից էր։ Մարքսի կնոջ մեծ յեղբայրը ամենառեակցիոն եպոխաներից մեկում, այն է՝ 1850—1858 թ. թ. ներքին գործերի մինիստր էր Պրուսիայում։ 1843 թ. աշնանը Մարքսը Փարիզ յեկավ, վորպեսզի արտասահմանում, Առնոլդ Ռուգեյի հետ միասին (1802—1880, ձախ հեգելական, 1825—1830 թվին բանտարկված, 1848 թվից հետո էմիգրանտ, 1866—1870 թ. հետո բիսմարկական) ռադիկալ ժուռնալ հրատարակի։ «Գերման-Ֆրանսական Տարեգիր» կոչվող այս ժուռնալի միայն առաջին գիրքը լույս տեսավ։ Նա դադարեց՝ Գերմանիայում գաղտնի կեր-

1 Ֆ. Ենգելս, Լուդվիգ Ֆոյերբախ, եջ 14, Պետքաղհրատ, 1938 թ. :—Խմբ.։

2 Այստեղ և ստորև Լենինը վկայակոչում է «Կարլ Մարքս» հոդվածի համար իր կազմած «Մարքսիզմի բիբլիոգրաֆիան (տե՛ս Յերկ., հ. XVIII, եջ 329) :—Խմբ.։

պով տարածելու դժվարությունների և Ռուգեյի հետ ունեցած տարաձայնությունների հետևանքով։ Այդ ժուռնալում զետեղած իր հոդվածներում Մարքսն արդեն հանդես է գալիս իբրև հեղափոխական, վոր ազդարարում է «անխնա քննադատություն գոյություն ունեցող ամեն բանի», մասնավորապես «զենքի քննադատություն», վոր դիմում է մասսաներին ու պրոլետարիատին։

1844 թ. սեպտեմբերին մի քանի օրով Փարիզ յեկավ Ֆրիդրիխ Ենգելսը, վորն այդ ժամանակվանից Մարքսի ամենամտերիմ ընկերը դարձավ։ Նրանք յերկուսով ամենաջերմ մասնակցություն ցույց տվին Փարիզի հեղափոխական խմբերի այն ժամանակվա յեռուն կյանքին (հատուկ նշանակություն ունեցավ Պրուդոնի ուսմունքը, վորի հետ Մարքսը վճռականորեն հաշվի նստեց իր «Փիլիսոփայության աղքատությունը» գրքում, 1847 թ.) և, մանր-բուրժուական սոցիալիզմի զանազան ուսմունքների դեմ բուռն պայքար մղելով, մշակեցին հեղափոխական պրոլետարական սոցիալիզմի կամ կոմունիզմի (մարքսիզմի) թեորիան ու տակտիկան։ Տե՛ս Մարքսի այս եպոխայի, 1844—1848 թ. թ., յերկերն ստորև. Գրականություն։ 1845 թ. Մարքսը, պրուսական կառավարության պնդումով, իբրև վտանգավոր հեղափոխական, արտաքսվեց Փարիզից։ Նա փոխադրվեց Բրյուսել։ 1847 թ. գարնանը Մարքսը և Ենգելսը հարեցին «Կոմունիստների միություն» գաղտնի պրոպագանդիստական ընկերությանը, աչքի ընկնող մասնակցություն ունեցան այդ միության II համագումարին (1847 թվի նոյեմբերին Լոնդոնում) և, նրա հանձնարարությամբ, կազմեցին 1848 թ. փետրվարին լույս տեսած նշանավոր «Կոմունիստական Կուսակցության Մանիֆեստը»։ Այս աշխատության մեջ հանճարեղ հստակությամբ ու ցայտունությամբ ուրվագծված է նոր աշխարհայեցողությունը, հետևողական մատերիալիզմը, վորն ընդգրկում է նաև սոցիալական կյանքի բնագավառը, դիալեկտիկան, վորպես ամենից ավելի բազմակողմանի ու խորն ուսմունք զարգացման մասին, դասակարգային պայքարի և նոր, կոմունիստական հասարակարգ ստեղծող պրոլետարիատի համաշխարհային-պատմական հեղափոխական դերի թեորիան։

Յերբ բռնկվեց 1848 թ. փետրվարյան հեղափոխությունը, Մարքսին Բելգիայից արտաքսեցին։ Նա կրկին Փարիզ յեկավ, այնտեղից էլ, մարտյան հեղափոխությունից հետո, գնաց Գերմանիա, հատկապես Քյոլն։ Այնտեղ 1848 թ. հունիսի 1-ից մինչև 1849 թ. մայիսի 19-ը լույս էր տեսնում «Նոր Հռենոսյան Լրագի-

րը»․ գլխավոր խմբագիրը Մարքսն էր։ 1848—1849 թ․ թ․ հեղափոխական դեպքերի ընթացքը փայլուն կերպով հաստատեց նոր թեորիան, ինչպես վոր այն հետագայում հաստատում եյին աշխարհի բոլոր յերկրների բոլոր պրոլետարական և դեմոկրատական շարժումները։ Հաղթանակող հակահեղափոխությունը սկըզբում դատի տվեց Մարքսին (արդարացվեց 1849 թ․ փետրվարի 9-ին), իսկ հետո արտաքսեց Գերմանիայից (1849 թ․ մայիսի 16-ին)։ Մարքսը նախ Փարիզ ուղևորվեց, բայց 1849 թ․ հունիսի 13-ի ցույցից հետո այնտեղից էլ արտաքսվեց և գնաց Լոնդոն, վորտեղ և ապրում էր մինչև մահը։

Եմիգրանտական կյանքի պայմանները, վորոնք առանձնապես ցայտուն կերպով ցույց են տրված Մարքսի՝ Էնգելսի հետ ունեցած նամակագրության մեջ (հրատարակված է 1913 թ.[1]), ծայր աստիճան ծանր եյին։ Կարիքն ուղղակի խեղդում էր Մարքսին ու իր ընտանիքին․ յեթե չլիներ Էնգելսի մշտական ինքնազոհ ֆինանսական օժանդակությունը, Մարքսը վոչ միայն չեր կարողանա վերջացնել «Կապիտալը», այլև անխուսափելիորեն կկործանվեր աղքատության ճնշման տակ։ Բացի այդ, մանր-բուրժուական, առհասարակ վոչ-պրոլետարական սոցիալիզմի գերակշռող ուսմունքներն ու հոսանքները հարկադրում եյին Մարքսին մշտապես անխնա կռիվ մղելու, յերբեմն հետ մղելու ամենակատաղի ու ամենավայրի անձնական հարձակումները («Herr Vogt»)[2]։ Եմիգրանտական խմբակներից մի կողմ քաշվելով, Մարքսը մի շարք պատմական աշխատությունների մեջ (տե՛ս Գրականությունը) մշակում էր իր մատերիալիստական թեորիան, ուժերը նվիրելով գլխավորապես քաղաքատնտեսության ուսումնասիրությանը։ Այդ գիտությունը Մարքսը հեղափոխականացրեց (տե՛ս ստորև Մարքսի ուսմունքը) իր «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» (1859) և «Կապիտալ» (հ. I, 1867) յերկերում։

50-ական թվականների վերջի և 60-ական թվականների դեմոկրատական շարժումների աշխուժացման եպոխան Մարքսին նորից պրակտիկ գործունեության կոչեց։ 1864 թ. (սեպտեմբերի 28) Լոնդոնում հիմնադրվեց հռչակավոր 1-ին Ինտերնացիոնալը, «Բանվորների Միջազգային Ընկերությունը»։ Մարքսն այդ ընկերության հոգին էր, նրա առաջին «դիմումի» և բազմաթիվ բանաձևերի, հայտարարությունների, մանիֆեստների հեղինակը։ Միավորելով զանազան յերկրների բանվորական շարժումը, ջանալով համատեղ գործունեության հունի մեջ ուղղել վոչ-պրոլետարական, մինչ-մարքսիստական սոցիալիզմի զանազան ձևերը (Մաձձինի, Պրուդոն, Բակունին, անգլիական լիբերալ տրեդյունիոնիզմը, լասսալյան որորումները դեպի աջ Գերմանիայում և այլն), պայքարելով այս բոլոր աղանդների ու դպրոցների թեորիաների դեմ, Մարքսը կոփում էր զանազան յերկրների բանվոր դասակարգի պրոլետարական պայքարի միասնական տակտիկան։ Յերբ տապալվեց Փարիզի Կոմունան (1871), վորն այնպես խորը, անվրեպ, փայլուն ու գործնորեն, հեղափոխականորեն գնահատել է Մարքսը («Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում 1871 թ.»), և յերբ Ինտերնացիոնալը բակունինիստների կողմից պառակտվեց, նրա գոյությունը Յեվրոպայում անհնարին դարձավ։ Ինտերնացիոնալի Հաագայի կոնգրեսից հետո (1872) Մարքսը հաջողեցրեց, վոր Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհուրդը Նյու-Յորք փոխադրվի։ 1-ին Ինտերնացիոնալն ավարտեց իր պատմական դերը, տեղը զիջելով աշխարհի բոլոր յերկրներում բանվորական շարժումն անհամեմատ ավելի խոշոր չափով աճելու եպոխային, հատկապես շարժումը լայնությամբ աճելու, առանձին ազգային պետությունների բազայի վրա մասսայական սոցիալիստական բանվորական կուսակցություններ ստեղծելու եպոխային։

Ուժգին աշխատանքն Ինտերնացիոնալում և է՛լ ավելի ուժգին թեորիական պարապմունքները վերջնականորեն խախտեցին Մարքսի առողջությունը։ Նա շարունակում էր քաղաքատնտեսությունը վերամշակելու և «Կապիտալն» ավարտելու իր աշխատանքը, հավաքելով բազմաթիվ նոր նյութեր և ուսումնասիրելով մի շարք լեզուներ (որինակ՝ ռուսերեն), բայց հիվանդությունը թույլ չտվեց, վոր նա ավարտի «Կապիտալը»։

1881 թ. դեկտեմբերի 2-ին մեռավ նրա կինը, 1883 թ. մարտի 14-ին Մարքսը հանգիստ և հավետ ննջեց իր բազկաթոռի վրա։ Նա թաղված է իր կնոջ և գրեթե ընտանիքի անդամ դարձած անձնվեր սպասուհու՝ Յելենա Դեմուտի կողքին, Լոնդոնի Հայգեյտ գերեզմանոցում։

ՄԱՐՔՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մարքսիզմը Մարքսի հայացքների և ուսմունքի սիստեմն է։ Մարքսը շարունակողն ու հանճարեղ ավարտողը հանդիսացավ

[1] Տե՛ս Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Յերկեր, հ. հ. XXI—XXIV։—Խմբ.։

[2] «Պարոն Ֆոգտ», տես Մարքսի ու Էնգելսի Յերկերը, հ. XII, մ. I կամ առանձին հրատարակություն։—Խմբ.։

XIX դարի յերեք գլխավոր գաղափարական հոսանքների, վորոնք պատկանում եյին մարդկության յերեք ամենաառաջավոր յերկրներին—գերմանական կլասիկ փիլիսոփայության, անգլիական կլասիկ քաղաքատնտեսության և ֆրանսիական սոցիալիզմի՝ առհասարակ ֆրանսիական հեղափոխական ուսմունքների կապակցությամբ: Մարքսի հայացքների հիանալի հետևողականությունն ու ամբողջականությունը, վոր խոստովանում են անգամ նրա հակառակորդները, հայացքներ, վորոնք ամբողջությամբ վերցրած տալիս են ժամանակակից մատերիալիզմն ու ժամանակակից գիտական սոցիալիզմը, վորպես աշխարհի բոլոր քաղաքակիրթ յերկրների բանվորական շարժման թեորիան ու ծրագիրը,—հարկադրում են մեզ մարքսիզմի գլխավոր բովանդակության, այն է՝ Մարքսի տնտեսական ուսմունքի շարադրանքին իբրև նախաբան՝ տալ ընդհանրապես նրա աշխարհայեցողության համառոտ ուրվագիծը:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ

1844—5 թվականներից սկսած, յերբ կազմավորվում եյին Մարքսի հայացքները, նա մատերիալիստ եր, մասնավորապես՝ Ֆոյերբախի կողմնակից, սակայն հետագայում էլ Մարքսը նրա թույլ կողմերը համարում է բացառապես նրա մատերիալիզմի վոչ-բավականաչափ հետևողականությունն ու ամենակողմանիությունը: Ֆոյերբախի համաշխարհային-պատմական, «դարաշրջան կազմող» նշանակությունը Մարքսը տեսնում եր հենց նրանում, վոր նա վճռականորեն կտրվել եր Հեգելի իդեալիզմից և ազդարարել եր մատերիալիզմը, վոր դեռ «XVIII դարում, հատկապես Ֆրանսիայում, պայքար եր վոչ միայն գոյություն ունեցող քաղաքական հիմնարկների դեմ, այլ դրանով մեկտեղ կրոնի և թեոլոգիայի դեմ, այլև... ամեն տեսակ մետաֆիզիկայի դեմ» («հարբած սպեկուլյացիան» «զգաստ ֆիլիսոփայությունից» տարբերելու իմաստով) («Սուրբ ընտանիք»[1] «Գրական ժառանգության» մեջ): «Հեգելի համար,—գրում եր Մարքսը, մտածողության պրոցեսը, վոր նա իդեա անվան տակ մինչև իսկ ինքնուրույն սուբյեկտ է դարձնում, իրականի դեմիուրգն է (ստեղծողը, արարիչը)... Իսկ ինձ մոտ, ընդհակառակը, իդեալականը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մարդկանց ուղեղը տեղափոխված և

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Յերկեր, հ. III, եջ 153—156:—Խմբ.:

այնտեղ վերափոխված նյութականը» («Կապիտալ», I. 2-րդ հրատ. առաջաբան): Լիովին համապատասխան Մարքսի այս մատերիալիստական փիլիսոփայությանը և այն շարադրելով, Ֆր. Էնգելսը գրում եր «Անտի-Դյուրինգում» (տե՛ս).—Մարքսը այս յերկին ծանոթացավ ձեռագիր յեղած ժամանակ—... «Աշխարհի միասնությունը նրա կեցության մեջ չե, այլ նրա նյութականության մեջ, վորն ապացուցվում է... փիլիսոփայության և բնագիտության յերկարատև ու դժվար զարգացմամբ... Շարժումը նյութի կեցության ձևն է: Վոչ մի տեղ և յերբեք չի յեղել ու չի կարող լինել նյութ առանց շարժման, շարժում՝ առանց նյութի... յեթե հարց տանք... ի՞նչ են մտածողությունն ու իմացողությունը, վո՞րտեղից են ծագում նրանք, ապա մենք կտեսնենք, վոր նրանք մարդկային ուղեղի արդյունք են և վոր ինքը մարդը բնության արդյունք է, վոր զարգացել է բնության վորոշ պայմաններում և նրա հետ միասին: Այդ պատճառով էլ ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մարդկային ուղեղի արդյունքները, վորոնք վերջին հաշվով նույնպես բնության արդյունք են, չեն հակասում բնության մնացած կապակցությանը, այլ համապատասխանում են նրան»: «Հեգելն իդեալիստ եր, այսինքն՝ նրա համար մեր գլխի մտքերը վոչ թե իրական իրերի և պրոցեսների առավել կամ նվազ չափով վերացական արտացոլումներն եյին (Abbilder, պատկերացումներ, Էնգելսը յերբեմն ասում է «արտատպություններ»), այլ, ընդհակառակը, իրերը և նրանց զարգացումը Հեգելի համար արտացոլումներ եյին ինչ-վոր իդեայի, վոր գոյություն է ունեցել ինչ-վոր տեղ՝ աշխարհի ծագումից առաջ»[1]: Իր «Լուդվիգ Ֆոյերբախ» յերկում, վորտեղ Ֆր. Էնգելսը շարադրում է իր և Մարքսի հայացքները Ֆոյերբախի փիլիսոփայության վերաբերմամբ և վորն Էնգելսը տպագրության է ուղարկել՝ նախորոք վերընթեռնելով իր և Մարքսի 1844—5 թ. թ. հին ձեռագիրը՝ նվիրված Հեգելի, Ֆոյերբախի և պատմության մատերիալիստական ըմբռնման հարցին, Էնգելսը գրում է. «Ամեն մի փիլիսոփայության, մանավանդ նորագույն փիլիսոփայության մեծ հիմնական հարցը մտածողության ու կեցության հարաբերության հարցն է, վոգու և բնության հարաբերության հարցը... վո՛րը վո՛րին է նախորդում—վոգին բնությանը, թե՞ բնությունը՝ վոգուն... Փիլիսոփաները յերկու խոշոր

1 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, եջ 24—25, 36, 44, 60, ИМЭЛ—Պետքաղհրատ, 1938 թ.:—Խմբ.:

բանակի էին բաժանվել, նայած թե նրանք ինչպես էին պատասխանում այս հարցին: Նրանք, ովքեր պնդում էին, թե ոգին գոյություն ուներ բնությունից առաջ, և ովքեր, հետևաբար, այս կամ այն կերպ ընդունում էին աշխարհի ստեղծագործությունը..., իդեալիստական բանակը կազմեցին: Իսկ նրանք, ովքեր հիմնական նախապատճառը համարում էին բնությունը, հարեցին մատերիալիզմի զանազան դպրոցներին»: Իդեալիզմի և մատերիալիզմի հասկացողությունների (փիլիսոփայական) ամեն մի այլ գործածություն շփոթ է սոսկ առաջացնում: Մարքսը վճռականորեն հերքում էր ոչ միայն իդեալիզմը, որ շարունակ այս կամ այն կերպ կապված է կրոնի հետ, այլև մանավանդ մեր օրերում տարածված՝ Յումի և Կանտի տեսակետը, ագնոստիցիզմը, կրիտիցիզմը, պոզիտիվիզմն իր այլ և այլ տեսակներով, գտնելով, որ նման փիլիսոփայությունը «ռեակցիոն» մի զիջում է իդեալիզմին և լավագույն դեպքում «հասարակության աչքերի առաջ դուրս վտարված մատերիալիզմը հետևի դռնից ամոթխածությամբ ներս թողնել է»[1]: Այս հարցի մասին, Էնգելսի և Մարքսի վերոհիշյալ յերկերից բացի, տե՛ս վերջինիս 1866 թ. դեկտեմբերի 12-ի նամակն Էնգելսին, որտեղ Մարքսը, շեշտելով հայտնի բնագետ Տ. Հյոքսլիի «ավելի մատերիալիստական», քան սովորաբար, յելույթը և նրա այն խոստովանությունը, թե որքան որ «մենք իրոք դիտում և մտածում ենք, չենք կարող ոչ մի ժամանակ դուրս գալ մատերիալիզմի հողից», կշտամբում է նրան ագնոստիցիզմի, յումիզմի կողմը «սողալու» համար: Առանձնապես պետք է նշել Մարքսի հայացքն ազատության և անհրաժեշտության առնչության վերաբերյալ՝ «կույր է անհրաժեշտությունը, քանի նա չի գիտակցված: Ազատությունն անհրաժեշտության գիտակցումն է» (Էնգելսը «Անտի-Դյուրինգում»)=ճանաչումը բնության օբյեկտիվ օրինաչափության և անհրաժեշտության դիալեկտիկորեն ազատության վերածվելը (ինչպես չիմացված, բայց իմանալի «ինքնին իրը» վերածվում է «իրի մեզ համար», «իրերի էությունը»՝ «յերևույթի»): «Հին», այդ թվում նաև Ֆոյերբախյան (և մանավանդ «վուլգար», Բյուխներ-Ֆոգտ-Մոլեշոտտի) մատերիալիզմի հիմնական թերությունը Մարքսն ու Էնգելսը համարում էին (1) այն, որ այդ մատերիալիզմը «առավելապես մեխանիկական» էր, հաշվի չառնելով քիմիայի և բիոլոգիայի (իսկ մեր օրերում պետք է ավելացնել

1 Ֆ. Էնգելս, Լուդվիգ Ֆոյերբախ, Պետքաղհրատ, էջ 18, 1938 թ.:—Խմբ.:

նաև նյութի էլեկտրական թեորիայի) նորագույն զարգացումը. (2) այն, որ հին մատերիալիզմը վոչ-պատմական ու վոչ-դիալեկտիկական էր (մետաֆիզիկական էր՝ հակադիալեկտիկայի իմաստով), հետևողականորեն և բազմակողմանիորեն չեր կիրառում զարգացման տեսակետը. (3) այն, որ նրանք «մարդու էությունը» վերացականորեն էին հասկանում և վոչ թե իբրև (կոնկրետ-պատմականորեն վորոշակի) «բոլոր հասարակական հարաբերությունների» «ամբողջություն» և դրա համար էլ միմիայն «բացատրում էին» աշխարհը, մինչդեռ խոսքը այն «փոխելու» մասին է, այսինքն՝ չեյին հասկանում «հեղափոխական պրակտիկ գործունեության» նշանակությունը:

ԴԻԱԼԵԿՏԻԿԱ.

Հեգելյան դիալեկտիկան, վորպես զարգացման բազմակողմանի, բովանդակությամբ հարուստ և խոր ուսմունք, Մարքսն ու Էնգելսը գերմանական կլասիկ փիլիսոփայության մեծագույն նվաճումն էյին համարում: Զարգացման, եվոլուցիայի սկզբունքի ամեն մի այլ ձևակերպում նրանք համարում էին միակողմանի, բովանդակությամբ աղքատ, թե՛ բնության և թե՛ հասարակության մեջ զարգացման իրական ընթացքը (հաճախ թռիչքներով, կատաստրոֆներով, հեղափոխություններով) աղավաղող և այլանդակող: «Յես ու Մարքսը գրեթե միակ մարդիկն էյինք, վոր խնդիր էյինք դրել փրկել» (իդեալիզմի և այդ թվում հեգելյականության խորտակումից) «գիտակցական դիալեկտիկան և այն փոխադրել բնության մատերիալիստական ըմբռնողության մեջ»[1]: «Բնությունը դիալեկտիկայի հաստատումն է, և հենց նորագույն բնագիտությունը ցույց է տալիս, վոր այդ հաստատումն արտասովոր հարուստ է» (գրված է ռադիի, էլեկտրոնների, տարրերի վերածման հայտաբերումից առաջ և այլն), «ամեն որը բազմաթիվ նյութեր է կուտակում և ապացուցում, թե իրերի ընթացքը բնության մեջ վերջին հաշվով դիալեկտիկական է և վոչ թե մետաֆիզիկական»[2]:

Այն մեծ ու հիմնական միտքը,—գրում է Էնգելսը,—թե աշխարհը բաղկացած է վոչ թե պատրաստի, ավարտված առարկաներից, այլ իրենից ներկայացնում է պրոցեսների մի ամբողջու-

1 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, էջ 10, ИМЭЛ—Պետքաղհրատ, 1938 թ.:—Խմբ.:

2 Նույն տեղում, էջ 23:—Խմբ.:

թյուն, վորտեղ առարկաները, վորոնք անփոփոխ են թվում, ինչպես և այդ առարկաների՝ մեր գլխի միջոցով պատրաստված մտավոր լուսանկարները, հասկացողությունները, գտնվում են անընդհատ փոփոխման մեջ, մերթ ծագում են, մերթ վոչնչանում,— այս մեծ ու հիմնական միտքը Հեգելի ժամանակվանից սկսած այն աստիճանի յե թափանցել ընդհանուր գիտակցության մեջ, վոր հազիվ թե վորևէ մեկն այն վեճի առարկա դարձնի ընդհանուր առմամբ: Բայց այլ բան է այն խոսքով ընդունելը և այլ բան՝ այն կիրառել յուրաքանչյուր առանձին դեպքում և հետազոտության յուրաքանչյուր տվյալ բնագավառում»: «Դիալեկտիկական փիլիսոփայության համար մեկ անգամ ընդմիշտ սահմանված, անպայմանական, սուրբ վոչինչ գոյություն չունի: Ամեն ինչի վրա և ամեն ինչի մեջ նա տեսնում է անխուսափելի անկման կնիքը, և վոչինչ չի կարող նրա դեմ կանգնել, բացի առաջացման ու վոչնչացման անընդհատ պրոցեսից, բացի անվերջ վերելքից ստորինից դեպի վերինը: Նա ինքը սոսկ այդ պրոցեսի պարզ անդրադարձումն է մտածող ուղեղում»[1]: Այսպիսով, դիալեկտիկան, ըստ Մարքսի, «ինչպես արտաքին աշխարհի, այնպես և մարդկային մտածողության շարժման ընդհանուր որենքների գիտությունն է»[2]:

Մարքսը յուրացրեց և զարգացրեց Հեգելի փիլիսոփայության այդ հեղափոխական կողմը: Դիալեկտիկական մատերիալիզմը «կարիք չունի մյուս գիտություններից բարձր կանգնած վոչ մի փիլիսոփայության»: Նախկին փիլիսոփայությունից մնում է «մտածողության և նրա որենքների ուսմունքը—Ֆորմալ տրամաբանությունը և դիալեկտիկան»: Իսկ դիալեկտիկան, Մարքսի ըմբռնումով, նաև համաձայն Հեգելի, իր մեջ պարփակում է այն, ինչ ներկայումս կոչում են իմացության թեորիա, գնոսեոլոգիա, վոր իր առարկան պետք է քննի նմանապես պատմականորեն, ուսումնասիրելով և ընդհանրացնելով իմացողության ծագումն ու զարգացումը, չիմացողությունից իմացողության անցնելը:

Մեր ժամանակում զարգացման, եվոլուցիայի իդեան գրեթե ամբողջապես թափանցել է հասարակական գիտակցության մեջ, բայց այլ ճանապարհներով, վոչ Հեգելի փիլիսոփայության

1 Ֆ. Էնգելս, *Լուդվիգ Ֆոյերբախ*, էջ 36, 8, Պետքաղհրատ, 1938 թ.:—Խմբ.:

2 Նույն տեղում, էջ 35 (տե՛ս նաև «Անտի-Դյուրինգ», էջ 147):—Խմբ.:

միջոցով: Սակայն այդ իդեան այն ձևակերպությամբ, վոր տվին Մարքսն ու Էնգելսը՝ հենվելով Հեգելի վրա, շատ ավելի բազմակողմանի յե, շատ ավելի հարուստ է բովանդակությամբ, քան եվոլուցիայի տարածված իդեան: Զարգացում, վոր ասես թե կրկնում է արդեն անցկացած աստիճանները, բայց կրկնում է դրանք այլ կերպ, ավելի բարձր բազայի վրա («բացասման բացասում»), զարգացում, այսպես ասած, սպիրալ և վոչ թե ուղիղ գծով,—զարգացում թռիչքաձև, կատաստրոֆիկական, հեղափոխական,—«աստիճանականության ընդհատումներ», քանակի վերածում վորակի,—զարգացման ներքին մղումներ, վորոնք տրվում են հակասությամբ տվյալ մարմնի վրա կամ տվյալ յերևույթի սահմաններում կամ տվյալ հասարակության ներսում գործող տարբեր ուժերի և տենդենցների ընդհարումով.—յուրաքանչյուր յերևույթի բոլոր կողմերի (ըստվորում պատմությունը շարունակ նորանոր կողմեր է բաց անում) փոխադարձ կախվածություն և ամենասերտ, անխզելի կապակցություն, մի կապակցություն, վոր տալիս է շարժման միասնական, որինաչափ, համաշխարհային պրոցես,—սրանք են դիալեկտիկայի՝ իբրև զարգացման վերաբերյալ առավել բովանդակալից (քան սովորականը) ուսմունքի՝ միքանի գծերը: (Համեմատիր Մարքսի՝ 1868 թ. հունվարի 8-ին Էնգելսին ուղղած նամակը, վորտեղ նա ծաղրում է Շտայնի «փայտյա տրիխոտոմիաները», վորոնք մատերիալիստական դիալեկտիկայի հետ խառնելն անհեթեթություն է):

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Հին մատերիալիզմի անհետևողականության, անավարտության, միակողմանիության գիտակցությունը Մարքսին այն համոզման բերեց, վոր անհրաժեշտ է «հասարակության վերաբերյալ գիտությունը համաձայնեցնել մատերիալիստական հիմունքի հետ և այն վերակառուցել համապատասխան այդ հիմունքի»[1]: Յեթե մատերիալիզմը գիտակցությունն ընդհանրապես բացատրում է կեցությամբ և վոչ թե ընդհակառակը, ապա մարդկության հասարակական կյանքի նկատմամբ կիրառվելիս՝ մատերիալիզմը պահանջում էր, վոր հասարակական գիտակցությունը հասարակական կեցությամբ բացատրվի: «Տեխնոլոգիան,—ասում է Մարքսը («Կապիտալ», հ. I)[2]— բացահայտում

1 Ֆ. Էնգելս, *Լուդվիգ Ֆոյերբախ*, էջ 23, Պետքաղհրատ, 1938 թ.:—Խմբ.:

2 Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. I, էջ 301, 1936 թ.:—Խմբ.:

է մարդու ակտիվ վերաբերմունքը դեպի բնությունը, նրա կյանքի արտադրության, իսկ դրա հետ միասին նաև նրա կյանքի հասարակական պայմանների և նրանցից բխող հոգևոր մտապատկերների արտադրության անմիջական պրոցեսը»: Մարդկային հասարակության և նրա պատմության վրա տարածվող մատերիալիզմի հիմնական դրույթների ամբողջական ձևակերպությունը Մարքսը տվեց «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» յերկի առաջաբանում հետևյալ խոսքերով.

«Իրենց կյանքի հասարակական արտադրության մեջ մարդիկ վորոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների մեջ են մտնում—արտադրական հարաբերությունների մեջ, վորոնք համապատասխանում են նրանց նյութական արտադրողական ուժերի զարգացման վորոշ աստիճանին:

Այդ արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասարակության տնտեսական ստրուկտուրան, մի ռեալ բազիս, վորի վրա բարձրանում է իրավական ու քաղաքական վերնաշենքը, և վորին համապատասխանում են հասարակական գիտակցության վորոշ ձևերը: Նյութական կյանքի արտադրության յեղանակը պայմանավորում է առհասարակ կյանքի սոցիալական, քաղաքական և հոգևոր պրոցեսները: Վո՛չ թե մարդկանց գիտակցությունն է վորոշում նրանց կեցությունը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական կեցությունն է վորոշում նրանց գիտակցությունը: Իրենց զարգացման վորոշ աստիճանի վրա հասարակության նյութական արտադրողական ուժերը սկսում են հակասել գոյություն ունեցող արտադրական հարաբերություններին, կամ—վորը սրա իրավաբանական արտահայտությունն է լոկ—սեփականության հարաբերություններին, վորոնց ներսում նրանք մինչև այդ զարգանում էյին: Արտադրողական ուժերի զարգացման ձևերից այդ հարաբերությունները սրանց համար կապանքների յեն վերածվում: Այն ժամանակ վրա յե հասնում սոցիալական հեղափոխության դարաշրջանը: Տնտեսական հիմքի փոփոխման հետ միասին առավել կամ նվազ արագությամբ հեղաշրջում է կատարվում վողջ հսկայական վերնաշենքում: Այդորինակ հեղաշրջումները քննելիս անհրաժեշտ է միշտ տարբերել արտադրության տնտեսական պայմանների մեջ նյութական, բնագիտական ճշտությամբ հավաստվող հեղաշրջումը իրավաբանական, քաղաքական, կրոնական, գեղարվեստական կամ փիլիսոփայական, կարճ ասած՝ իդեոլոգիական ձևերից, վո-

րոնց մեջ մարդիկ գիտակցում են այդ կոնֆլիկտը և պայքարում են նրա դեմ:

Ինչպես վոր առանձին մարդու մասին չի կարելի դատել հիմք ունենալով այն, ինչ նա ինքն է մտածում իր մասին, ճիշտ այդպես էլ չի կարելի դատել հեղաշրջման նման դարաշրջանի մասին՝ ըստ սրա գիտակցության: Ընդհակառակը, այդ գիտակցությունը նյութական կյանքի հակասություններով պետք է բացատրել, հասարակական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև գոյություն ունեցող կոնֆլիկտով...»: «Ընդհանուր գծերով, ասիական, անտիկ, ֆեոդալական և ժամանակակից, բուրժուական, արտադրության յեղանակները կարելի յե նշել իբրև տնտեսական հասարակական ֆորմացիայի պրոգրեսիվ դարաշրջաններ»[1]: (Համեմատիր Մարքսի 1866 թ. հուլիսի 7-ին Ենգելսին գրած նամակում տրված կարճ ձևակերպումը—«Աշխատանքի կազմակերպումն արտադրության միջոցներով վորոշելու վերաբերյալ մեր թեորիան»)[2]:

Պատմության մատերիալիստական ըմբռնման հայտաբերումը կամ, ավելի ճիշտ, մատերիալիզմի հետևողական շարունակումը, տարածումը հասարակական յերևույթների բնագավառի վրա,—վերացնում էր նախկին պատմական թեորիաների յերկու գլխավոր թերությունը: 1-ին, նրանք լավագույն դեպքում քննում էյին մարդկանց պատմական գործունեության լոկ իդեական դրդապատճառները, չհետազոտելով այն, թե ինչից են առաջանում այդ դրդապատճառները, չըմբռնելով հասարակական հարաբերությունների սիստեմի զարգացման ոբյեկտիվ որինաչափությունը, չփնտռելով այդ հարաբերությունների արմատները նյութական արտադրության զարգացման աստիճանի մեջ. 2-րդ, նախկին թեորիաները չէյին ընդգրկում հենց բնակչության մասսաների գործողությունները, մինչդեռ պատմական մատերիալիզմն առաջինը յեղավ, վոր հնարավորություն տվեց բնապատմական ճշտությամբ հետազոտել մասսաների կյանքի հասարակական պայմանները և այդ պայմանների փոփոխությունները: Մինչմարքսյան «սոցիոլոգիան» և պատմագրությունը լավագույն դեպքում տալիս էյին հատ ու կտոր հավաքված հում փաստերի կուտակում և պատմական պրոցեսի առանձին կողմերի պատկերացում:

1 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, եջ 6—7, Պետքաղհրատ, 1938 թ.:—Խմբ.:

2 Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հ. XXIII, եջ 363:—Խմբ.:

Մարքսիզմը ցույց տվեց այն ուղին, որ տանում էր դեպի հասարակական-տնտեսական ֆորմացիաների ծագման, զարգացման և անկման պրոցեսի համապարփակ, բազմակողմանի ուսումնասիրությունը, քննելով բոլոր հակասական տենդենցների ամբողջությունը, նրանց հանգեցնելով հասարակության տարբեր դասակարգերի կյանքի և արտադրության ճիշտ որոշվող պայմաններին, վանելով սուբյեկտիվիզմն ու կամայականությունը առանձին «գլխավորող» իդեաների ընտրության կամ նրանց մեկնաբանման մեջ, բացահայտելով անխտիր բոլոր իդեաների և բոլոր տարբեր տենդենցների արմատները նյութական արտադրողական ուժերի կացության մեջ: Մարդիկ իրենք են ստեղծում իրենց պատմությունը, բայց թե ինչո՞վ են որոշվում մարդկանց և հենց մարդկային մասսաների դրդապատճառները, ինչի՞ց են առաջանում հակասական իդեաների և ձգտումների ընդհարումները, որպիսի՞ն է բազմաթիվ մարդկային հասարակությունների այս բոլոր ընդհարումների ամբողջությունը, որպիսի՞ք են նյութական կյանքի արտադրության օբյեկտիվ պայմանները, որոնք մարդկանց ամբողջ պատմական գործունեության բազա են ստեղծում, որպիսի՞ն է այդ պայմանների զարգացման օրենքը,— այս բոլորի վրա ուշադրություն դարձրեց Մարքսը և ցույց տվեց պատմության գիտական ուսումնասիրության ուղին, որպես միասնական, իր ամբողջ վիթխարի բազմակողմանիությամբ ու հակասականությամբ օրինաչափ մի պրոցեսի:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ

Որ տվյալ հասարակության անդամներից ոմանց ձգտումները հակառակ են գնում մյուսների ձգտումներին, որ հասարակական կյանքը լեցուն է հակասություններով, որ պատմությունը մեզ ցույց է տալիս ժողովուրդների և հասարակությունների միջև, ինչպես նաև նրանց ներսում մղվող պայքարը, և բացի այդ՝ հեղափոխությունների և ռեակցիաների, խաղաղության և պատերազմների, անշարժության և արագ առաջադիմության կամ անկման շրջանների իրար հաջորդումը,— այդ փաստերը հանրածանոթ են: Մարքսիզմը տվեց մի ղեկավարող թել, որը թույլ էր տալիս օրինաչափություն յերևան հանել այս առերևույթ լաբիրինթոսում ու քաոսում, այսինքն՝ դասակարգային պայքարի թեորիան: Միմիայն տվյալ հասարակության կամ հասարակությունների խմբակցության բոլոր անդամների ձգտումների ամբողջության ուսումնասիրությունն է ընդունակ բերել-հասցնել այդ ձգտումների արդյունքի գիտական որոշման: Իսկ հակասական ձգտումների աղբյուրն է հանդիսանում յուրաքանչյուր հասարակության մեջ գոյություն ունեցող դասակարգերի դրության և նրանց կյանքի պայմանների մեջ յեղած տարբերությունը: «Մինչև այժմ գոյություն ունեցած բոլոր հասարակությունների պատմությունը—ասում է Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստում» (բացառությամբ նախնադարյան համայնքի պատմության,—ավելացնում է Ենգելսը)—դասակարգերի պայքարի պատմություն է յեղել: Ազատն ու ստրուկը, պատրիկն ու պլեբեյը, կալվածատերն ու ճորտը, վարպետն ու յենթավարպետը, կարճ ասած՝ կեղեքողն ու կեղեքվողը մշտական ներհակության մեջ են յեղել իրար հանդեպ, անընդհատ, մերթ գաղտնի, մերթ ակընհայտ պայքար են մղել, որը միշտ վերջացել է ամբողջ հասարակական շենքի հեղափոխական վերակառուցումով կամ պայքարող դասակարգերի ընդհանուր կործանումով... Կործանված ֆեոդալական հասարակության ծոցից դուրս յեկած ժամանակակից բուրժուական հասարակությունը չվոչնչացրեց դասակարգային հակասությունները: Նա միայն հների տեղը դրեց նոր դասակարգեր, կեղեքման նոր պայմաններ և պայքարի նոր ձևեր: Մեր դարաշրջանը, բուրժուազիայի դարաշրջանը, տարբերվում է, սակայն, նրանով, որ նա պարզացրել է դասակարգային հակասությունները. հասարակությունն ավելի ու ավելի յէ բաժանվում յերկու խոշոր բանակի, յերկու խոշոր, իրար դեմ կանգնած դասակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի»: Ֆրանսական մեծ հեղափոխության ժամանակվանից յեվրոպական պատմությունը մի շարք յերկրներում առանձին ակնհայտությամբ բաց արեց դեպքերի այս իսկական աստառը, դասակարգերի պայքարը: Յեվ արդեն ռեստավրացիայի եպոխան Ֆրանսիայում առաջ քաշեց մի շարք պատմաբանների (Տիերրի, Գիզո, Մինիե, Տիեր), որոնք ընդհանրացնելով տեղի ունեցող դեպքերը, չէյին կարող դասակարգերի պայքարը բանալի չընդունել ամբողջ ֆրանսական պատմությունը հասկանալու համար: Իսկ նորագույն դարաշրջանը, բուրժուազիայի լիակատար հաղթանակի, ներկայացուցչական հաստատությունների, լայն (յեթե վոչ ընդհանուր) ընտրական իրավունքի, եժան, մասսաների մեջ գնացող, ամենօրյա մամուլի եպոխան և այլն, հզոր և անընդհատ ընդլայնվող բանվորական միությունների ու ձեռ-

1303
40

նարկատերերի միությունների եղափան և այլն, ե՛լ ավելի ակնառու (թեպետ և յերբեմն չափ միակողմանի, «խաղաղ», «սահմանադրական» ձևով) ցույց տվեց դասակարգերի պայքարը՝ իբրև դեպքերի շարժիչ: Մարքսի «Կոմունիստական Մանիֆեստի» հետևյալ տեղը մեզ ցույց կտա, թե Մարքսը յուրաքանչյուր դասակարգի զարգացման պայմանների վերլուծության առնչությամբ ժամանակակից հասարակության մեջ մտնող յուրաքանչյուր դասակարգի դրության օբյեկտիվ վերլուծության ինչպիսի պահանջներ էր առաջադրում հասարակական գիտությանը. «Ներկայումս բուրժուազիային հակադիր բոլոր դասակարգերից միայն պրոլետարիատն է, վոր իրենից իրոք հեղափոխական դասակարգ է ներկայացնում: Մյուս բոլոր դասակարգերը դեպի անկում են գնում և վոչնչանում խոշոր արդյունաբերության զարգացման հետ միասին, իսկ պրոլետարիատը նրա սեփական արդյունքն է: Միջին դասերը՝ մանր արդյունաբերողը, մանր առևտրականը, արհեստավորն ու գյուղացին—սրանք բոլորն էլ բուրժուազիայի դեմ պայքարում են նրա համար, վորպեսզի իրենց՝ իբրև միջին դասերի՝ գոյությունը փրկեն կործանումից: Հետևաբար, նրանք հեղափոխական չեն, այլ պահպանողական: Անգամ ավելին. նրանք ռեակցիոն են, նրանք ձգտում են հետ դարձնել պատմության անիվը: Յեթե նրանք հեղափոխական են, ապա այնքան, վորքան նրանց սպասում է պրոլետարիատի շարքերն անցնելը, վորքան նրանք պաշտպանում են իրենց վոչ թե ներկա, այլ ապագա շահերը, վորքան նրանք թողնում են իրենց սեփական տեսակետը՝ պրոլետարիատի տեսակետի վրա կանգնելու համար»: Մի շարք պատմական յերկերում (տե՛ս Գրականությունը) Մարքսը տվել է մատերիալիստական պատմագրության, յուրաքանչյուր առանձին դասակարգի և յերբեմն դասակարգի ներսում գոյություն ունեցող զանազան խմբերի կամ խավերի դրության վերլուծության փայլուն և խոր նմուշներ, ակներև կերպով ցույց տալով, թե ինչո՛ւ և ի՛նչպես «ամեն մի դասակարգային պայքար քաղաքական պայքար է»[1]: Մեր բերած հատվածը լուսաբանում է, թե հասարակական հարաբերությունների և մեկ դասակարգից մյուսին, անցյալից ապագային տանող անցումային աստիճանների ինչպիսի՛ բարդ ցանց է վերլուծում Մարքսը պատմական զարգացման ամբողջ համաչափ գործող գիծը հաշվի առնելու համար:

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական Կուսակցության Մանիֆեստը, եջ 87, ИМЭЛ, 1938 թ.:—Խմբ.:

Մարքսի թեորիայի ամենախոր, բազմակողմանի և մանրակրկիտ հաստատումն ու կիրառումը հանդիսանում է նրա տնտեսական ուսմունքը:

ՄԱՐՔՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

«Իմ յերկի վերջնական նպատակն է—ասում է Մարքսը «Կապիտալի» առաջաբանում—բացահայտել ժամանակակից հասարակության», այսինքն՝ կապիտալիստական, բուրժուական հասարակության «շարժման տնտեսական օրենքը»: Տվյալ, պատմականորեն վորոշ, հասարակության արտադրական հարաբերությունների հետազոտություն՝ նրանց ծագման, զարգացման և անկման պրոցեսում,—այս է Մարքսի տնտեսական ուսմունքի բովանդակությունը: Կապիտալիստական հասարակության մեջ տիրապետում է ապրանքների արտադրությունը, և դրա համար էլ Մարքսի վերլուծությունն սկսվում է ապրանքի վերլուծությունից:

ԱՐԺԵՔ

Ապրանքն, 1-ին, մի իր է, վոր բավարարում է մարդու վորևե մի պահանջը. 2-րդ, մի իր, վոր փոխանակվում է մի այլ իրի հետ: Իրի օգտակարությունը սպառողական արժեք է դարձնում այն: Փոխանակային արժեքը (կամ պարզապես արժեքը) ամենից առաջ մի հարաբերություն է, պրոպորցիա՝ մի տեսակի սպառողական արժեքների վորոշ քանակը մի այլ տեսակի սպառողական արժեքների վորոշ քանակի հետ փոխանակելիս: Ամենօրյա փորձը մեզ ցույց է տալիս, վոր միլիոնավոր ու միլիարդավոր այդպիսի փոխանակությունները շարունակ իրար են հավասարեցնում բոլոր և ամեն տեսակի, ամենատարբեր ու միմյանց անհամեմատելի սպառողական արժեքներ: Իսկ ի՞նչ ընդհանուր բան կա այդ իրարից տարբեր իրերի միջև, վորոնք շարունակ հավասարվում են իրար հասարակական հարաբերությունների վորոշ սիստեմում: Նրանց միջև ընդհանուրն այն է, վոր նրանք աշխատանքի արդյունքներ են: Արդյունքները փոխանակելով՝ մարդիկ հավասարեցնում են աշխատանքի ամենատարբեր տեսակները: Ապրանքների արտադրությունը հասարակական հարաբերությունների մի սիստեմ է, վորի ժամանակ առանձին արտադրողները զանազան տեսակի արդյունքներ են ստեղծում (աշխատանքի հասարակական բաժանում), և այդ բոլոր արդյունքները փոխանակու-

թյան ժամանակ հավասարվում են միմյանց: Հետևաբար, այն ընդհանուրը, որ կա բոլոր ապրանքների մեջ, ոչ թե արտադրության որոշ ճյուղի կոնկրետ աշխատանքն է, ոչ թե մեկ տեսակի աշխատանքը, այլ մարդկային աբստրակտ աշխատանքը, մարդկային աշխատանքն առհասարակ: Տվյալ հասարակության ամբողջ բանվորական ուժը, որ արտահայտվում է բոլոր ապրանքների արժեքների գումարով, միևնույն մարդկային բանվորական ուժն է. փոխանակման միլիարդավոր փաստերն այդ են ապացուցում: Յեվ, հետևաբար, յուրաքանչյուր առանձին ապրանք հասարակականորեն-անհրաժեշտ բանվորական ժամանակի որոշ մի մասն է սոսկ: Արժեքի մեծությունը որոշվում է հասարակականորեն-անհրաժեշտ աշխատանքի քանակով կամ այն բանվորական ժամանակով, որը հասարակականորեն-անհրաժեշտ է տվյալ ապրանքը, տվյալ սպառողական արժեքն արտադրելու համար: «Փոխանակման ժամանակ իրենց տարբեր արդյունքները մեկը մյուսին հավասարեցնելով՝ մարդիկ իրենց աշխատանքի տարբեր տեսակներն են մեկը մյուսին հավասարեցնում: Նրանք այդ չեն գիտակցում, բայց այդ անում են»[1]: Արժեքը յերկու անձերի միջև գոյություն ունեցող հարաբերությունն է—ինչպես ասել է մի հին տնտեսագետ. միայն թե նա պետք է ավելացներ՝ հարաբերություն, որ քողարկված է իրային թաղանթով: Հասարակության մի որոշ պատմական ֆորմացիայի հասարակական արտադրական հարաբերությունների սիստեմի, ընդվորում փոխանակության մասսայական, միլիարդավոր անգամ կրկնվող յերևույթի մեջ արտահայտվող հարաբերությունների տեսակետից է միայն, որ կարելի յե հասկանալ, թե ինչ է արժեքը: «Որպես արժեքներ, ապրանքները կարծրացած բանվորական ժամանակի որոշ քանակություններ են միայն»[2]: Ապրանքների մեջ մարմնացած աշխատանքի յերկյակ բնույթը մանրակրկիտ վերլուծելուց հետո Մարքսն անցնում է արժեքի ձևի և փողի վերլուծության: Ընդվորում Մարքսի գլխավոր խնդիրն է հանդիսանում ուսումնասիրել արժեքի փողային ձևի ծագումը, ուսումնասիրել փոխանակության ծավալման պատմական պրոցեսը, սկսած նրա առանձին, պատահական ակտերից («արժեքի հասարակ, առանձին կամ պատահական ձևը»՝ մի ապրանքի տվյալ քանակը փոխանակվում է մի այլ ապրանքի տվյալ քանակի հետ) մինչև արժեքի ընդհա-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, եջ 35, 1936 թ.:—Խմբ.:
2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, եջ 5, 1936 թ.:—Խմբ.:

նուր ձևը, յերբ մի շարք տարբեր ապրանքներ փոխանակվում են միևնույն որոշ ապրանքի հետ, և մինչև արժեքի փողային ձևը, յերբ այդ որոշ ապրանքը, ընդհանուր համարժեքը հանդիսանում է ոսկին: Փողը փոխանակության և ապրանքային արտադրության ամենաբարձր արդյունքը լինելով՝ նսեմացնում, քողարկում է մասնավոր աշխատանքների հասարակական բնույթը, շուկայի միջոցով միավորված առանձին արտադրողների հասարակական կապը: Մարքսը չափազանց մանրակրկիտ վերլուծության է յենթարկում փողի տարբեր ֆունկցիաները, ընդվորում այստեղ ևս (ինչպես առհասարակ «Կապիտալի» առաջին գլուխներում) առանձնապես կարևոր է նշել, որ շարադրության վերացական և յերբեմն զուտ դեդուկտիվ թվացող ձևը—իրոք վերարտադրում է փոխանակության և ապրանքային արտադրության զարգացման պատմության վերաբերյալ հսկայական փաստական նյութեր: «Փողը յենթադրում է ապրանքային փոխանակության որոշ բարձրություն: Փողի զանազան ձևերը— հասարակ ապրանքային համարժեք կամ շրջանառության միջոց կամ վճարման միջոց, գանձ և համաշխարհային փող—ցույց են տալիս, նայած այս կամ այն ֆունկցիայի կիրառման չափերին և նրանցից մեկն ու մեկի համեմատական գերակշռության, արտադրության հասարակական պրոցեսի խիստ տարբեր աստիճանները» («Կապիտալ», հ. I)[1]:

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ

Ապրանքային արտադրության զարգացման որոշ աստիճանի վրա փողը կապիտալ է դառնում: Ապրանքային շրջանառության ֆորմուլան եր Ա (ապրանք)—Փ (փող)—Ա (ապրանք), այսինքն՝ մի ապրանք վաճառել մի ուրիշ ապրանք գնելու համար: Ընդհակառակը, կապիտալի ընդհանուր ֆորմուլան է՝ Փ—Ա—Փ, այսինքն՝ գնել վաճառելու համար (շահույթով): Մարքսը հավելյալ արժեք է անվանում շրջապտույտի մեջ դրված փողի սկզբնական արժեքի այս աճումը: Կապիտալիստական շրջապտույտի մեջ փողի այս «աճման» փաստը հանրահայտնի յե: Հենց այդ «աճումն» է, որ փողը դարձնում է կապիտալ, որպես արտադրության հատուկ, պատմականորեն որոշ, հասարակական հարաբերություն: Հավելյալ արժեքը չի կարող առաջանալ ապրանքային

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, եջ 121, 1936 թ.:—Խմբ.:

շրջանառությունից, վորովհետև վերջինս միայն համարժեքների փոխանակություն է ճանաչում, չի կարող առաջանալ գնի վրա մի բան ավելացնելուց, վորովհետև գնողների և վաճառողների փոխադարձ կորուստներն ու շահումները կհավասարվեյին, մինչդեռ խոսքը հենց մասսայական, միջին, հասարակական յերևույթի մասին է և վոչ թե անհատականի: Հավելյալ արժեք ստանալու համար «փողի տերը պիտի գտնի շուկայում այնպիսի ապրանք, վորի սպառողական արժեքն ինքը արժեքի աղբյուր դառնալու օրիգինալ հատկություն ունենա»[1], այնպիսի ապրանք, վորի սպառման պրոցեսը միաժամանակ արժեքի ստեղծման պրոցես լինի: Յեվ այդպիսի ապրանք գոյություն ունի: Մարդու բանվորական ուժն է այդ: Նրա սպառումն աշխատանք է, իսկ աշխատանքն արժեք է ստեղծում: Փողի տերը բանվորական ուժը գնում է ըստ նրա արժեքի, վորը ամեն մի այլ ապրանքի արժեքի նման, վորոշվում է այն հասարակականորեն—անհրաժեշտ բանվորական ժամանակով, վորն անհրաժեշտ է նրա արտադրության համար (այսինքն՝ բանվորի և նրա ընտանիքի ապրուստի արժեքով): Գնելով բանվորական ուժը՝ փողի տերն իրավունք ունի սպառել այն, այսինքն՝ ստիպել, վոր նա աշխատի ամբողջ օրը, ասենք՝ 12 ժամ: Այնինչ բանվորը 6 ժամվա ընթացքում («անհրաժեշտ» բանվորական ժամանակ) ստեղծում է մի արդյունք, վորը նրա ապրուստի գինը հանում է, իսկ հաջորդ 6 ժամվա ընթացքում («հավելյալ» բանվորական ժամանակ) ստեղծում է «հավելյալ» արդյունք կամ հավելյալ արժեք, վորի համար կապիտալիստը չի վճարում: Հետևաբար, արտադրության պրոցեսի տեսակետից, կապիտալի մեջ անհրաժեշտ է տարբերել յերկու մաս—հաստատուն կապիտալ, վոր ծախսվում է արտադրության միջոցների վրա (մեքենաների, աշխատանքի գործիքների, հում նյութի և այլն)—նրա արժեքը (մեկ անգամից կամ մաս-մաս) առանց փոփոխության անցնում է պատրաստի արդյունքին—և փոփոխական կապիտալ, վոր ծախսվում է բանվորական ուժի վրա: Այս կապիտալի արժեքն անփոփոխ չի մնում, այլ աշխատանքի պրոցեսում աճում է, ստեղծելով հավելյալ արժեք: Ուստի կապիտալի կողմից շահագործվող բանվորական ուժի այդ շահագործման աստիճանն արտահայտելու համար հավելյալ արժեքը հարկավոր է համեմատել վոչ թե ամբողջ կապիտալի հետ, այլ միայն փոփոխական կապիտալի հետ: Հավելյալ արժեքի նոր-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, եջ 118, 1936 թ.:—Խմբ.:.

ման, ինչպես կոչում է այդ հարաբերությունը Մարքսը, կլինի, օրինակ՝ մեր բերած օրինակում $^6/_6$ այսինքն՝ 100%:

Կապիտալի ծագման պատմական նախադրյալ է հանդիսանում, 1-ին, վորոշ փողային գումարի կուտակումն առանձին անձերի ձեռքում, առհասարակ ապրանքային արտադրության զարգացման համեմատաբար բարձր մակարդակի վրա, և 2-րդ, «ազատ» բանվորի գոյությունը յերկյակ իմաստով, ազատ՝ ամեն տեսակ ճնշումներից կամ սահմանափակումներից՝ իր բանվորական ուժը վաճառքի հանելու և ազատ՝ հողից ու ընդհանրապես արտադրության միջոցներից, բանվոր՝ առանց տիրոջ, «պրոլետար», վորն իր բանվորական ուժի վաճառումից բացի գոյության ուրիշ վոչ մի միջոց չունի:

Հավելյալ արժեքի ավելացումը հնարավոր է յերկու հիմնական յեղանակով՝ բանվորական օրը յերկարացնելու միջոցով («բացարձակ հավելյալ արժեք») և անհրաժեշտ բանվորական օրը կրճատելու միջոցով («հարաբերական հավելյալ արժեք»): Վերլուծության յենթարկելով առաջին յեղանակը՝ Մարքսը ծավալում է բանվորական օրը կարճացնելու համար բանվոր դասակարգի մղած պայքարի և բանվորական օրվա յերկարացման (XIV—XVII դարեր) ու նրա կրճատման (XIX դարի գործարանային օրենսդրությունը) համար պետական իշխանության կողմից կատարված միջամտության լայն պատկերը: «Կապիտալի» յերևան գալուց հետո աշխարհի բոլոր քաղաքակիրթ յերկրների բանվորական շարժման պատմությունն այդ պատկերը լուսաբանող հազար ու հազար նորանոր փաստեր է տվել:

Վերլուծելով հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը, Մարքսը հետազոտության է յենթարկում կապիտալիզմի կողմից աշխատանքի արտադրողականության բարձրացման յերեք հիմնական պատմական ստադիաները. 1) պարզ կոոպերացիան, 2) աշխատանքի բաժանումն ու մանուֆակտուրան, 3) մեքենաներն ու խոշոր արդյունաբերությունը: Թե վորքան խորաթափանցությամբ Մարքսը բացահայտել է այստեղ կապիտալիզմի զարգացման հիմնական, տիպիկական գծերը, այդ յերևում է, ի միջի այլոց, նրանից, վոր ռուսական այսպես կոչված «տնայնագործական» արդյունաբերության հետազոտություններն ամենահարուստ նյութ են տալիս հիշյալ յերեք ստադիաներից առաջին յերկուսի լուսաբանության համար: Իսկ խոշոր մեքենային ինդուստրիայի հեղափոխականացնող ներգործությունը, վորը Մարք-

ը նկարագրել է 1867 թվականին, դրսևորվել է այդ ժամանակվանից հետո անցած կես դարի ընթացքում մի ամբողջ շարք «նոր» յերկրներում (Ռուսաստան, Ճապոնիա և այլն):

Այնուհետև: Վերին աստիճանի կարևոր ու նոր է Մարքսի վերլուծությունը կապիտալի կուտակման մասին, այսինքն՝ հավելյալ արժեքի մի մասի կապիտալ դառնալը, հավելյալ արժեքի գործադրումը վոչ թե կապիտալիստի անձնական կարիքների կամ քմահաճույքների վրա, այլ նոր արտադրության վրա: Մարքսը ցույց ավեց ամբողջ նախկին կլասիկ քաղաքատնտեսության (սկսած Ադամ Սմիթից) սխալը, քաղաքատնտեսություն, վորը յենթադրում եր, թե կապիտալի վերածվող ամբողջ հավելյալ արժեքը գնում է փոփոխական կապիտալին: Իսկ իրոք նա բաժանվում է արտադրության միջոցների և այլուս փոփոխական կապիտալի վրա: Կապիտալիզմի զարգացման և նրա՝ սոցիալիզմի փոխարկվելու պրոցեսում վիթխարի նշանակություն ունի հաստատուն կապիտալին ընկնող բաժնի (կապիտալի ընդհանուր գումարում) ավելի արագ աճումը՝ փոփոխական կապիտալին ընկնող բաժնի համեմատությամբ:

Կապիտալի կուտակումը, արագացնելով բանվորների արտամղումը մեքենայի միջոցով, մի բևեռում հարստություն, մյուս բևեռում աղքատություն ստեղծելով, առաջ է բերում նաև այսպես կոչված «բանվորական պահեստի բանակը», բանվորների «հարաբերական ավելցուկ» կամ «կապիտալիստական գերբնակչություն», վոր չափազանց բազմազան ձևեր է ստանում և կապիտալին հնարավորություն է տալիս արտակարգ արագությամբ ընդարձակելու արտադրությունը: Այս հնարավորությունը՝ վարկավորման և կապիտալն արտադրության միջոցների մեջ կուտակվելու առնչությամբ, ի միջի այլոց, բանալի յե տալիս ըմբռնելու գերարտադրության կրիզիսները, վորոնք պարբերաբար տեղի յեն ունենում կապիտալիստական յերկրներում նախ՝ միջին հաշվով ամեն 10 տարին մեկ անգամ, հետո՝ ավելի տևական ու ավելի անորոշ ժամանակամիջոցներով: Կապիտալիզմի հիման վրա կատարվող կապիտալի կուտակումից հարկավոր է տարբերել այսպես կոչված նախնական կուտակումը՝ գործավորին բռնի կերպով արտադրության միջոցներից զատելը, գյուղացիներին հողից հեռացնելը, համայնական հողերի հափշտակությունը, գաղութների և պետական պարտքերի, հովանավորողական մաքսերի սիստեմը և այլն: «Նախնական կուտակումը» մեկ բևեռում

«ազատ» պրոլետար, մյուս բևեռում փողատեր, կապիտալիստ է ստեղծում:

«Կապիտալիստական կուտակման պատմական տենդենցը» Մարքսը բնորոշում է հետևյալ նշանավոր խոսքերով. «Անմիջական արտադրողների եքսպրոպրիացիան կատարվում է ամենաանխնա վանդալությամբ և ամենասուր, ամենակեղտոտ, ամենամանր ու ամենամոլի կրքերի ճնշման ներքո: Սեփականատիրոջ» (գյուղացու և արհեստավորի) «աշխատանքով ձեռք բերած մասնավոր սեփականությունը, վորը հիմնված է, այսպես ասած, առանձին անկախ գործավորի և նրա աշխատանքի գործիքների ու միջոցների զուգորդման վրա, դուրս է մղվում կապիտալիստական մասնավոր սեփականության կողմից, վորը հենվում է ուրիշ, բայց ձևականորեն ազատ բանվորական ուժի շահագործման վրա... Այժմ արդեն եքսպրոպրիացիայի յենթակա յե վոչ թե ինքնուրույն տնտեսություն վարող բանվորը, այլ բազմաթիվ բանվորներ շահագործող կապիտալիստը: Այդ եքսպրոպրիացիան կատարվում է հենց իր՝ կապիտալիստական արտադրության իմմանենտ որենքների խաղով, կապիտալների կենտրոնացման ճանապարհով: Մեկ կապիտալիստը հաղթում է շատ կապիտալիստների: Այս կենտրոնացման, կամ փոքրաթիվ քանակությամբ կապիտալիստների կողմից բազմաթիվ կապիտալիստների այս եքսպրոպրիացիայի հետ ձեռք-ձեռքի, հետզհետե ավելի լայն, մեծ չափերով զարգանում է աշխատանքի պրոցեսի կոոպերատիվ ձևը, զարգանում է գիտության գիտակցական տեխնիկական կիրառումը, հողի պլանաչափ շահագործումը, աշխատանքի միջոցների վերածումը աշխատանքի այնպիսի միջոցների, վորոնք թույլ են տալիս սոսկ կոլեկտիվ գործադրություն, արտադրության բոլոր միջոցների տնտեսում՝ այդ միջոցներն իբրև համակցված հասարակական աշխատանքի արտադրության միջոցներ գործադրելու ճանապարհով, բոլոր ժողովուրդների ներհյուսում համաշխարհային շուկայի ցանցում, իսկ դրա հետ միասին՝ կապիտալիստական ռեժիմի ինտերնացիոնալ բնույթ: Կապիտալի մագնատների թվի անընդհատ նվազման հետ միասին, մագնատների, վորոնք ուզուրպացիայի և մոնոպոլիզացիայի յեն յենթարկում այդ վերափոխման պրոցեսի ամբողջ ոգուտը, աճում է ահռելի աղքատությունը, կեղեքումը, ստրկությունը, այլասերումը, շահագործումը, բայց միաժամանակ՝ նաև բանվոր դասակարգի զայրույթը, բանվոր դասակարգի, վոր սովորում, միավորվում է

կազմակերպվում է հենց կապիտալիստական արտադրության պրոցեսի մեխանիզմի միջոցով: Կապիտալի մոնոպոլիան կապանք է դառնում այն արտադրության եղանակի համար, որն աճել է այդ մոնոպոլիայի օրոք և նրա ներքո: Արտադրության միջոցների կենտրոնացումը և աշխատանքի հանրայնացումը հասնում են այնպիսի մի կետի, երբ նրանք անհամատեղելի են դառնում իրենց կապիտալիստական կեղևի հետ: Այդ կեղևը պայթում է: Հնչում է կապիտալիստական մասնավոր սեփականության վերջին ժամը: Էքսպրոպրիատորներին էքսպրոպրիացիայի են ենթարկում» («Կապիտալ», հ. I)[1]:

Այնուհետև, վերին աստիճանի կարևոր ու նոր է ամբողջությամբ վերցրած հասարակական կապիտալի վերարտադրության վերլուծությունը, որ տվել է Մարքսը «Կապիտալի» II հատորում: Այստեղ ևս Մարքսը վերցնում է ոչ թե անհատական, այլ մասսայական երևույթը, ոչ թե հասարակության տնտեսության կոտորակային մասնիկը, այլ այդ ամբողջ տնտեսությունն ամբողջությամբ: Ուղղելով կլասիկների վերոհիշյալ սխալը, Մարքսն ամբողջ հասարակական արտադրությունը բաժանում է երկու մեծ բաժինների՝ I) արտադրության միջոցների արտադրություն և II) սպառման առարկաների արտադրություն, և իր վերցրած թվական օրինակներով մանրամասն քննում է ամբողջ հասարակական կապիտալի շրջանառությունն ամբողջությամբ, ինչպես նախկին չափերով կատարվող արտադրության, այնպես և կուտակման ժամանակ: «Կապիտալի» III հատորում արժեքի օրենքի հիման վրա լուծվել է շահույթի միջին նորմայի կազմության հարցը: Հանձին Մարքսի՝ տնտեսական գիտության համար առաջընթաց մեծ քայլ է այն, որ վերլուծությունը կատարվում է մասսայական տնտեսական երևույթների, հասարակական բովանդակ տնտեսության տեսակետից, և ոչ թե առանձին կազուսների կամ մրցության արտաքին մակերևույթի տեսակետից, որով հաճախ սահմանափակվում է վուլգար քաղաքատնտեսությունը կամ ժամանակակից «սահմանային օգտակարության թեորիան»: Մարքսը նախ վերլուծության է ենթարկում հավելյալ արժեքի ծագումը և ապա արդեն անցնում է նրա բաժանմանը շահույթի, տոկոսի և հողային ռենտայի: Շահույթը հավելյալ արժեքի և ձեռնարկության մեջ ներդրված ամբողջ կապիտալի հարաբերությունն է: «Բարձր օրգանական կազմ ունե-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 655—656. 1936 թ.:—Խմբ.:

ցող» կապիտալը (այսինքն՝ երբ հաստատուն կապիտալը գերակշռում է փոփոխական կապիտալի նկատմամբ միջին հասարակականից բարձր չափերով) տալիս է միջինից ցածր շահույթի նորմա: «Ցածր օրգանական կազմ ունեցող» կապիտալը տալիս է—միջինից բարձր: Մրցությունը կապիտալների միջև, այդ կապիտալների ազատ անցնելը մի ճյուղից մյուսը երկու դեպքում էլ շահույթը միջին նորմային է հասցնում: Տվյալ հասարակության բոլոր ապրանքների արժեքների գումարը զուգադիպում է ապրանքների գների գումարին, բայց առանձին ձեռնարկություններում և արտադրության առանձին ճյուղերում ապրանքները, մրցության ազդեցության տակ, վաճառվում են ոչ թե իրենց արժեքով, այլ արտադրության գներով (կամ արտադրական գներով), որոնք հավասար են ծախսված կապիտալին՝ պլյուս միջին շահույթը:

Այսպիսով, գների՝ արժեքներից շեղվելու և շահույթի հավասարության հանրածանոթ և անվիճելի փաստը Մարքսը լիովին պարզաբանեց արժեքի օրենքի հիման վրա, որովհետև բոլոր ապրանքների արժեքների գումարը զուգադիպում է գների գումարին: Բայց արժեքի (հասարակականի) մոտեցումը գներին (անհատական) տեղի չի ունենում ոչ թե հասարակ, անմիջական եղանակով, այլ շատ բարդ ճանապարհով. միանգամայն բնական է, որ միայն շուկայով իրար կապված անջատ ապրանքարտադրողների հասարակության մեջ օրինաչափությունը չի կարող այլ կերպ դրսևորվել, եթե ոչ միջին, հասարակական, մասսայական օրինաչափության ձևով, փոխադարձաբար հանդեցնելով անհատական շեղումներն այս կամ այն կողմը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը նշանակում է հաստատուն կապիտալի ավելի արագ աճում՝ փոփոխական կապիտալի համեմատությամբ: Իսկ քանի որ հավելյալ արժեքը միմիայն փոփոխական կապիտալի ֆունկցիան է, ապա հասկանալի է, որ շահույթի նորման (հավելյալ արժեքի հարաբերությունն ամբողջ կապիտալի, և ոչ թե միայն նրա փոփոխական մասի հանդեպ) անկման տենդենց ունի: Մարքսը մանրամասն վերլուծում է այս տենդենցը և նրան քողարկող կամ նրա վրա հակազդող մի շարք հանգամանքներ: Կանգ չառնելով III հատորի չափազանց հետաքրքիր բաժինների վրա, որոնք նվիրված են վաշխառուական, առևտրական և փողային կապիտալին, անցնենք

ամենագլխավորին—հողային ռենտայի թեորիային: Հողագործական արդյունքների արտադրության գինը, շնորհիվ հողի տիրածության սահմանափակության, հողի, որը ամբողջապես գրաղեցված է առանձին տերերի կողմից կապիտալիստական երկրներում, որոշվում է ոչ թե միջին, այլ ամենավատ հողի վրա գործադրած արտադրության ծախքերով, արդյունքը շուկա հասցնելու ոչ թե միջին, այլ վատ պայմանների համեմատ: Այս գնի և լավագույն հողի վրա (կամ լավագույն պայմաններում) արտադրության գնի միջև եղած տարբերությունը տալիս է տարբերական կամ դիֆերենցիալ ռենտա: Մանրամասն վերլուծելով այդ ռենտան, ցույց տալով նրա ծագումը առանձին հողամասերի տարբեր աստիճանի բերրիության պայմաններում, հողի վրա ներդրված կապիտալի տարբեր չափերի պայմաններում, Մարքսն ամբողջապես բացահայտեց Ռիկարդոյի այն սխալը (տե՛ս նաև «Հավելյալ արժեքի թեորիաները»[1], որտեղ առանձին ուշադրության է արժանի Ռոդբերտուսի քննադատությունը), որ իբր թե դիֆերենցիալ ռենտան ստացվում է միմիայն լավագույն հողերից հաջորդաբար վատագույն հողերին անցնելիս: Ընդհակառակը, լինում են նաև հակառակ անցումներ, լինում է, երբ մի կարգի հողը մի այլ կարգի հողի յե վերածվում (շնորհիվ ագրիկուլտուր տեխնիկայի առաջադիմության, քաղաքների աճման և այլն), և խորապես սխալ է, կապիտալիզմի թերությունները, սահմանափակումներն ու հակասությունները բնության շնքին փաթաթել և նշանակում «հողի նվազող պտղաբերության» չարաբաստիկ «օրենքը»: Այնուհետև, շահույթի հավասարությունը արդյունաբերության և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում առհասարակ ենթադրում է մրցության կատարյալ ազատություն, կապիտալի մի ճյուղից դեպի մյուսը տեղափոխվելու ազատություն: Մինչդեռ հողի մասնավոր սեփականությունը մոնոպոլիա է ստեղծում, որը արգելք է այդ տեղափոխության համար: Այդ մոնոպոլիայի պատճառով գյուղատնտեսության արդյունքները—գյուղատնտեսություն, որը հատկանշվում է ավելի ցած կազմի կապիտալով և, հետևաբար, շահույթի անհատապես ավելի բարձր նորմայով,—չեն մտնում շահույթի նորմայի հավասարեցման միանգամայն ազատ պրոցեսի մեջ. հողի սեփականատերն, իբրև մոնոպոլիստ, հնարավորու-

[1] Կ. Մարքս, Հավելյալ արժեքի թեորիաները, հ. II, մ. I, էջ 111—206, 1936 թ.:—Խմբ.:

թյուն է ստանում գինը միջինից բարձր պահել, իսկ այդ մոնոպոլ գինը ծնունդ է տալիս բացարձակ ռենտայի: Դիֆերենցիալ ռենտան կապիտալիզմի գոյության օրով վոչնչացվել չի կարող, իսկ բացարձակ ռենտան կարող է. օրինակ՝ հողն ազգայնացնելիս, պետական սեփականությանն անցնելիս: Այդպիսի անցումը կնշանակեր պայթեցնել մասնավոր սեփականատերերի մոնոպոլիան, կնշանակեր ավելի հետևողական, ավելի լիովին կիրառել մրցակցության ազատությունը հողագործության մեջ: Ցեվ դրա համար էլ ռադիկալ բուրժուաները, նշում է Մարքսը, պատմության մեջ քանիցս հանդես են յեկել հողի նացիոնալիզացիայի այդ պրոգրեսիվ բուրժուական պահանջով, որը, սակայն, խրտնեցնում է բուրժուազիայի մեծամասնությանը, վորովհետև խիստ մոտիկից «կպչում է» մի այլ, մեր օրերում առանձնապես կարևոր ու «զգայուն» մոնոպոլիայի՝ արտադրության միջոցների մոնոպոլիային առհասարակ: (Մարքսը կապիտալի միջին շահույթի և հողային բացարձակ ռենտայի իր թեորիան աքանչելիորեն հանրամատչելի, սեղմ ու պարզ ձևով շարադրել է 1862 թ. օգոստոսի 2-ին Էնգելսին գրած նամակում: Տե՛ս «Переписка», հ. III, էջ 77—81: Համեմատիր նաև 1862 թ. օգոստոսի 9-ի նամակը, նույն տեղում, էջ 86—87):—Հողային ռենտայի պատմության շուրջը կարևոր է նույնպես մատնանշել Մարքսի այն վերլուծությունը, վորով նա ցույց է տալիս, թե ինչպես աշխատավճար ռենտան (յերբ գյուղացին կալվածատիրոջ հողի վրա իր աշխատանքով ստեղծում է հավելյալ արդյունք) վերածվում է արդյունավճար կամ բնարդյունավճար ռենտայի (գյուղացին իր հողի վրա արտադրում է հավելյալ արդյունք, վորը տալիս է կալվածատիրոջը՝ «արտատնտեսական հարկադրման» հետևանքով), ապա՝ փողային ռենտայի (նույն բնարդյունավճար ռենտան, վորը փողի յե վերածվում, հին Ռուսիայի «բահրան»՝ ապրանքային արտադրության զարգացման հետևանքով) և վերջապես՝ կապիտալիստական ռենտայի, յերբ գյուղացու փոխարեն հողագործության մեջ հանդես է գալիս ձեռնարկուն, վորը մշակումը կատարում է վարձու աշխատանքի միջոցով: «Կապիտալիստական հողային ռենտայի ծենեզիսի» այս վերլուծության առնչությամբ հարկավոր է մատնանշել Մարքսի մի շարք նուրբ (և հետամնաց յերկրների համար, ինչպիսին է Ռուսաստանը, խիստ կարևոր) մտքերը կապիտալիզմի եվոլուցիայի մասին հողագործության մեջ: «Բնարդյունավճար ռենտան փողային ռենտայի վերածվելուն վոչ միայն անխուսափե-

լիովին ուղեկցում է, այլ նույնիսկ նախորդում է փողով վարձվող ընչազուրկ օրամշակների դասակարգի գոյացումը: Այս դասակարգի ծագման շրջանում, յերբ նա յերևան է գալիս դեռ միայն սպորադիկ կերպով, ավելի ունևոր՝ բահրայով պարտավորված գյուղացիների մեջ բնականաբար զարգանում է իրենց հաշվին գյուղական վարձու բանվորներ շահագործելու սովորությունը—ճիշտ այնպես, ինչպես Ֆեոդալական ժամանակներում ունևոր ճորտ գյուղացիներն իրենք իրենց հերթին ճորտեր էլին պահում: Այսպիսով, այս գյուղացիների մեջ հետզհետե զարգանում է վորոշ գումար կուտակելու և ապագա կապիտալիստներ դառնալու հնարավորությունը: Հետևաբար, այն հին հողատերերի մեջ, վորոնք ինքնուրույն տնտեսություն են վարում, առաջ է գալիս աննպաստ հող կապիտալիստական վարձակալների համար, վորոնց զարգացումը պայմանավորված է կապիտալիստական արտադրության ընդհանուր զարգացմամբ՝ գյուղատնտեսությունից դուրս» («Կապիտալ», հ. III, 332)[1]... «Գյուղական ազգաբնակության մի մասի էքսպրոպրիացիան և գյուղից վտարելը վոչ միայն «ազատում է» արդյունաբերական կապիտալի համար բանվորներ, նրանց գոյության միջոցներ, նրանց աշխատանքի գործիքներ, այլև ստեղծում է ներքին շուկա» («Կապիտալ», հ. I, 778)[2]: Իր հերթին, գյուղական ազգաբնակության աղքատացումն ու ավերումը կապիտալի համար պահեստի բանվորական բանակ ստեղծելու դեր է կատարում: Ամեն մի կապիտալիստական յերկրում «գյուղական ազգաբնակության մի մասն այդ պատճառով շարունակ գտնվում է քաղաքային կամ մանուֆակտուրային (այսինքն՝ վոչ-հողագործական) ազգաբնակության վերածվելու անցման վիճակում: Հարաբերական ավելորդ ազգաբնակության այս աղբյուրը հոսում է շարունակ... Գյուղական բանվորին իջեցնում են աշխատավարձի ամենացածր աստիճանի, և նա միշտ մեկ վոտքով կանգնած է պաուպերիզմի ճահճում» («Կապիտալ» հ. I, էջ 668)[3]: Գյուղացու մասնավոր սեփականությունն այն հողի նկատմամբ, վոր նա ինքն է մշակում, մանր արտադրության հիմքն է և նրա ծաղկման, կլասիկ ձև ստանալու պայմանը: Բայց այս մանր արտադրությունը համատեղելի յէ միայն արտադրության և հասարակության նեղ պրիմիտիվ շըր-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 703, 1936 թ.:—Խմբ.:

2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 642, 1936 թ.:—Խմբ.:

3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 549, 1936 թ.:—Խմբ.:

ջանակների հետ: Կապիտալիզմի որով «գյուղացիների շահագործումն արդյունաբերական պրոլետարիատի շահագործումից միայն ձևով է տարբերվում: Շահագործողը նույն ինքը կապիտալն է: Առանձին կապիտալիստներ առանձին գյուղացիների շահագործում են հիպոթեքի և վաշխառության միջոցով, կապիտալիստների դասակարգը գյուղացիների դասակարգին շահագործում է պետական հարկերի միջոցով» («Դասակարգային պայքարը Ֆրանսիայում»): «Գյուղացու պարցելլան (մանր հողամասը) միայն մի պատրվակ է, վորը թույլ է տալիս կապիտալիստին հողից շահույթ, տոկոս և ռենտա քաղել, թողնելով, վոր ինքը հողատերը հանի իր աշխատավարձն՝ ինչպես կամենա»: Սովորաբար գյուղացին տալիս է նույնիսկ կապիտալիստական հասարակությանը, այսինքն՝ կապիտալիստների դասակարգին, աշխատավարձի մի մասը, ցած իջնելով մինչև «իռլանդական վարձակալի մակարդակը—մասնավոր սեփականատիրոջ անվան տակ» («Դասակարգային պայքարը Ֆրանսիայում»): Վո՞րն է «այն բանի պատճառներից մեկը, վոր այն յերկրներում, վորտեղ գերակշռում է մանր գյուղացիական հողատիրությունը, հացի գինն ավելի ցած է, քան այն յերկրներում, վորտեղ արտադրության կապիտալիստական յեղանակն է գերակշռում» («Կապիտալ», հ. III, էջ 340)[1]: Այդ այն է, վոր գյուղացին հավելյալ արդյունքի մի մասը ձրիաբար տալիս է հասարակությանը (այսինքն՝ կապիտալիստների դասակարգին): «Հետևաբար, այդպիսի ցածր գինը (հացի և գյուղատնտեսական այլ արդյունքների) արտադրողների չքավորության հետևանք է, և վոչ մի դեպքում՝ նրանց աշխատանքի արտադրողականության հետևանք» («Կապիտալ», հ. III, էջ 340): Մանր հողային սեփականությունը, մանր արտադրության նորմալ ձևը դեգրադացիայի յէ յենթարկվում, վոչնչանում, կործանվում է կապիտալիզմի որով: «Մանր հողային սեփականությունն, ըստ իր էության, բացառում է աշխատանքի հասարակական արտադրողական ուժերի զարգացումը, աշխատանքի հասարակական ձևերը, կապիտալների հասարակական համակենտրոնացումը, խոշոր չափերի անասնապահությունը, գիտության ավելի ու ավելի մեծ գործադրումը: Վաշխառությունը և հարկերի սիստեմն անխուսափելի կերպով նրան ամենուրեք դեպի աղքատացումն են մղում: Կապիտալի գործադրումը հող գնելու

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 710, 1936 թ.:—Խմբ.:

վրա կորում է այդ կապիտալը հողի կուլտուրայի վրա գործադրվելուց: Արտադրության միջոցների անվերջ մասնատվելը և իրենց՝ արտադրողների անջատվելը»: (Կոոպերացիաները, այսինքն՝ մանր գյուղացիների ընկերությունները, չափազանց պրոգրեսիվ բուրժուական դեր խաղալով, սոսկ թուլացնում են այդ տենդենցը, բայց չեն վոչնչացնում այն. նաև չպետք է մոռանալ, վոր այդ կոոպերացիաները շատ բան են տալիս ունևոր գյուղացիներին և շատ քիչ, համարյա վոչինչ չեն տալիս չքավորության մասսային, իսկ այնուհետև ընկերություններն իրենք դառնում են վարձու աշխատանք շահագործողներ): «Մարդկային ուժի հսկայական գիշատում: Արտադրության պայմանների ավելի և ե՛լ ավելի վատթարացումն և արտադրության միջոցների թանկացումը պարցելլային (մանր) սեփականության օրենքն է»[1]: Կապիտալիզմը թե հողագործության և թե արդյունաբերության մեջ արտադրության պրոցեսը փոխակերպում է «արտադրողների նահատակության» գնով միայն[2]: «Գյուղական բանվորների՝ մեծ տարածությունների վրա ցրված լինելը կոտրում է նրանց դիմադրության ուժը, մինչդեռ քաղաքային բանվորների համակենտրոնացումն ավելացնում է այդ ուժը: Ժամանակակից, կապիտալիստական, հողագործության մեջ, ինչպես և ժամանակակից արդյունաբերության մեջ, աշխատանքի արտադրողական ուժի բարձրացումը և նրա մեծ շարժունությունը ձեռք են բերվում իրեն՝ բանվորական ուժի քայքայման ու հյուծման գնով: Բացի այդ, կապիտալիստական հողագործության ամեն մի առաջդիմություն առաջադիմություն է վոչ միայն բանվորին թալանելու արվեստում, այլև հողը թալանելու արվեստում... Հետևաբար, կապիտալիստական արտադրությունը արտադրության հասարակական պրոցեսի տեխնիկան ու կոմբինացիան զարգացնում է միայն այնպիսի ճանապարհով, վոր նա միաժամանակ խորտակում է ամեն մի հարստության աղբյուր հանդիսացող հողն ու բանվորին» («Կապիտալ», I, 13-րդ գլխի վերջը):

ՍՈՑԻԱԼԻԶՄ

Նախորդ ասածներից յերևում է, վոր կապիտալիստական հասարակությունը սոցիալիստականի փոխարկվելու անխուսափելիությունը Մարքսն ամբողջապես և բացառապես յեզրակացնում է

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 711, 1936 թ.:—Խմբ.:

2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 420, 1936 թ.:—Խմբ.:

ժամանակակից հասարակության շարժման տնտեսական օրենքից: Աշխատանքի հանրայնացումը, վորը հազարավոր ձևերով ավելի ու ավելի արագ առաջ է գնում և Մարքսի մահվանից հետո անցած կես դարի ընթացքում առանձնապես ակներև է խոշոր արտադրության, կապիտալիստների կարտելների, սինդիկատների ու տրեստների աճման, այլև ֆինանսական կապիտալի չափերի ու հզորության հսկայական ավելացման մեջ,—ահա սոցիալիզմի անխուսափելի թևակոխման գլխավոր նյութական հիմքը: Այդ փոխարկման ինտելեկտուալ ու բարոյական շարժիչը, ֆիզիկական կատարողը հանդիսանում է հենց կապիտալիզմի դաստիարակած պրոլետարիատը: Նրա պայքարն ընդդեմ բուրժուազիայի, արտահայտվելով զանազան և ավելի ու ավելի բովանդակալից ձևերով, անխուսափելի կերպով վերածվում է քաղաքական պայքարի՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը գրավելու համար («պրոլետարիատի դիկտատուրա»): Արտադրության հանրայնացումը չի կարող արտադրության միջոցները հասարակության սեփականություն չդարձնել, «էքսպրոպրիատորներին էքսպրոպրիացիայի» չենթարկել: Աշխատանքի արտադրողականության վիթխարի բարձրացում, բանվորական օրվա կրճատում, մանր, պրիմիտիվ, բաժան-բաժան արտադրության մնացորդների ու փլատակների փոխարինում կոլեկտիվ կատարելագործված աշխատանքով—ահա այդպիսի անցման ուղիղ հետևանքները: Կապիտալիզմը վերջնականապես խզում է հողագործության կապն արդյունաբերության հետ, բայց և միաժամանակ իր բարձրագույն զարգացմամբ նա պատրաստում է այդ կապի, արդյունաբերության և գյուղատնտեսության միացման նոր տարրեր՝ գիտության գիտակցական գործադրության, կոլեկտիվ աշխատանքի կոմբինացիայի, մարդկության նոր վերաբնակեցման հողի վրա (վոչնչացնելով ինչպես գյուղի լքված լինելը, աշխարհից կտրված լինելը, վայրենացումը, այնպես էլ մեծ քաղաքներում հսկայական մասսաների հակաբնական կիտվածությունը), Ժամանակակից կապիտալիզմի ամենաբարձր ձևերը նախապատրաստում են ընտանիքի նոր ձևը, կանանց դրության և աճող սերունդների դաստիարակության նոր պայմանները. կանանց և յերեխաների աշխատանքը, նահապետական ընտանիքի քայքայումը կապիտալիզմի միջոցով—ժամանակակից հասարակության մեջ անխուսափելիորեն ընդունում են ամենասոսկալի, աղետալի և զզվելի ձևեր: Բայց չնայած դրան, «խոշոր արդյունաբերությունը,

ընտանեկան օջախի շրջանից դուրս, կանանց և յերկու սեռի անչափահասներին ու յերեխաներին վճռական դեր հատկացնելով արտադրության հանրորեն կազմակերպված պրոցեսում, տնտեսական հիմք է ստեղծում ընտանիքի և յերկու սեռերի փոխհարաբերության բարձրագույն ձևի համար: Անշուշտ, հավասարապես անհեթեթություն է բացարձակ համարել ընտանիքի ինչպես քրիստոնեյական-գերմանական ձևը, այնպես էլ հին հռոմեյական կամ հին հունական կամ արևելյան ձևերը, վորոնք, ի միջի այլոց, մեկը մյուսին կապակցված կազմում են զարգացման միասնական պատմական մի շարք: Ակներև է, վոր յերկու սեռի և զանազան հասակի անձերից բաղկացած բանվորական համակցված անձնակազմ կազմելը, իր տարերային, կոպիտ, կապիտալիստական ձևով, յերբ բանվորը գոյություն ունի արտադրության պրոցեսի համար, և վոչ թե արտադրության պրոցեսը բանվորի համար, կոռստի և ստրկության ախտավոր աղբյուր լինելով,—համապատասխան պայմաններում, ընդհակառակը, անխուսափելիորեն մարդասիրական զարգացման աղբյուր պիտի դառնա» («Կապիտալ», I, 13-րդ գլխի վերջը): Ֆաբրիկային սիստեմը ցույց է տալիս մեզ «ապագա դարաշրջանի դաստիարակության սաղմերը, յերբ վորոշ հասակից բարձր բոլոր յերեխաների համար արտադրողական աշխատանքը պիտի միանա դասավանդման և մարմնամարզության հետ վոչ միայն իբրև հասարակական արտադրությունն ավելացնելու միջոցներից մեկը, այլև իբրև միակ միջոց՝ բազմակողմանիորեն զարգացած մարդիկ արտադրելու համար» (Նույն տեղում): Նույն պատմական հողի վրա յե դնում Մարքսի սոցիալիզմը, վո՛չ միայն անցյալը բացատրելու իմաստով, այլև ապագան աներկյուղ նախատեսելու և նրա իրագործմանն ուղղված պրակտիկ գործունեյության իմաստով, նաև ազգության ու պետության հարցերը: Ազգերը հասարակական զարգացման բուրժուական դարաշրջանի անխուսափելի արդյունքը և ձևն են: Յեվ բանվոր դասակարգը չեր կարող ամրապնդվել, առնականություն ձեռք բերել, կազմվել առանց «ազգի սահմաններում տեղավորվելու», առանց «ազգային» լինելու («թեև ամենևին վոչ այն իմաստով, ինչպես բուրժուազիան է այդ հասկանում»[1]): Բայց կապիտալիզմի զարգացումը գնալով ավելի ու ավելի յե քանդում ազգային պատնեշները, վոչնչացնում ազգային առանձ-

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության Մանիֆեստ, եջ 109, ИМЭЛ, 1938 թ.։—Խմբ.։

նացումը, ազգային ներհակությունների տեղ դասակարգայիններն է դնում: Այդ պատճառով էլ՝ զարգացած կապիտալիստական յերկրներում լիակատար ճշմարտություն է, թե՝ «բանվորները հայրենիք չունեն» և թե՝ բանվորների «ճիգերի միացումը», գոնե քաղաքակիրթ յերկրների,—«պրոլետարիատի ազատագրման առաջին պայմաններից մեկն է» («Կոմունիստական Մանիֆեստ»): Պետությունը, այդ կազմակերպված բռնությունը, անխուսափելիորեն ծագում է առել հասարակության զարգացման վորոշ աստիճանի վրա, յերբ հասարակությունը բաժանվել եր անհաշտ դասակարգերի, յերբ նա չեր կարողանա գոյություն ունենալ առանց «իշխանության», վորն իբր թե կանգնած է հասարակությունից վեր և մինչև վորոշ աստիճան առանձնացել է նրանից: Ծագելով դասակարգային հակասությունների ներսում՝ պետությունը դառնում է «պետություն ամենաուժեղ, տնտեսապես տիրող դասակարգի, վորը նրա ոգնությամբ դառնում է նաև քաղաքականապես տիրող դասակարգ և այդ ճանապարհով նոր միջոցներ է ձեռք բերում ճնշված դասակարգը հպատակեցնելու ու շահագործելու համար: Այսպես,—անտիկ պետությունն ամենից առաջ ստրկատերերի պետություն եր՝ ստրուկներին հպատակեցնելու համար, Ֆեոդալական պետությունն ազնվականության որգանն եր՝ ճորտ գյուղացիներին հպատակեցնելու համար, իսկ ժամանակակից ներկայացուցչական պետությունը մի գործիք է՝ կապիտալիստների կողմից վարձու բանվորներին շահագործելու համար» (Էնգելսը «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքում, վորտեղ նա շարադրում է իր և Մարքսի հայացքները): Բուրժուական պետության անգամ ամենաազատ և պրոգրեսիվ ձևը—դեմոկրատական հանրապետությունը—ամենևին չի վերացնում այս փաստը, այլ միայն փոխում է նրա ձևը (կառավարության կապը բորսայի հետ, աստիճանավորների և մամուլի ուղղակի ու անուղղակի կաշառվածությունը և այլն): Սոցիալիզմը տանելով դեպի դասակարգերի վոչնչացումը, դրանով հենց տանում է դեպի պետության վոչնչացումը: «Առաջին ակտը,—գրում է Էնգելսը «Անտի-Դյուրինգում»,—վորով պետությունը հանդես է գալիս իրոք իբրև ամբողջ հասարակության ներկայացուցիչ—արտադրության միջոցների էքսպրոպրիացիան հոգուտ ամբողջ հասարակության,—միաժամանակ նրա՝ վորպես պետության՝ վերջին ինքնուրույն ակտը կլինի: Պետական իշխանության միջամտությունը հասարակական հարաբերություններին

կսկսի բնագավառից բնագավառ ավելորդ դառնալ և ինքն իրեն կընդհատվի: Մարդկանց կառավարելը կփոխարինվի իրերը կառավարելով և արտադրության պրոցեսը կանոնավորելով: Պետությունը չի «վերացվի», նա «կմահանա»»: «Այն հասարակությունը, որ կազմակերպում ե արտադրությունը արտադրողների ազատ և հավասար ասոցիացիաների հիման վրա, պետական մեքենան կդնի այնտեղ, որտեղ այն ժամանակ կլինի նրա տեղը՝ հնությունների թանգարանում, իլիկի և բրոնզե կացնի կողքին» (Ենգելսը «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքում):

Վերջապես, այն հարցի առիթով, թե ինչպես ե վերաբերվում Մարքսի սոցիալիզմը դեպի մանր գյուղացիությունը, որ կմնա եքսպրոպրիատորների եքսպրոպրիացիայի դարաշրջանում, անհրաժեշտ ե մատնանշել Ենգելսի հայտարարությունը, որ Մարքսի մտքերն ե արտահայտում. «Յերբ մենք կտիրանանք պետական իշխանությանը, մենք չենք էլ մտածի մանր գյուղացիներին բռնի կերպով եքսպրոպրիացիայի յենթարկելու մասին (միևնույն ե, վարձատրությամբ, թե ոչ), ինչպես մենք ստիպված կլինենք այդ անելու խոշոր հողատերերի նկատմամբ: Մանր գյուղացիների վերաբերմամբ մեր խնդիրն ե լինելու ամենից առաջ այն, որ մենք նրանց մասնավոր արտադրությունն ու մասնավոր սեփականությունը փոխադրենք ընկերականի, բայց ոչ բռնի ճանապարհով, այլ որինակ տալու և այդ նպատակի համար հասարակական ոգնություն առաջարկելու միջոցով: Յեվ մենք այն ժամանակ, իհարկե, բավականաչափ միջոցներ կունենանք, որպեսզի գյուղացուն ապացուցենք այդպիսի անցումի բոլոր առավելությունները, առավելություններ, որ հենց հիմա էլ նրանց պետք ե բացատրենք» (Ենգելս, «К аграрному вопросу на Западе», հրատ. Ալեքսեյևայի, եջ 17, ռուսերեն թարգմանությունը սխալներով ե: Որիգինալը «Neue Zeit»-ում):

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ

Դեռևս 1844—5 թ. թ. պարզելով հին մատերիալիզմի հիմնական թերություններից մեկը, այն ե, որ նա չեր կարող հասկանալ հեղափոխական պրակտիկ գործունեության պայմանները և գնահատել նրա նշանակությունը, Մարքսն իր ամբողջ կյանքի ընթացքում, թեորիական աշխատանքներին զուգընթաց, անդուլ ուշադրություն ե նվիրել պրոլետարիատի դասակարգային պայ-

քարի տակտիկայի հարցերին: Այդ տեսակետից հսկայական նյութ են տալիս Մարքսի բոլոր յերկերը և 1913 թ. հրատարակված նրա քառահատոր նամակագրությունը Ենգելսի հետ հատկապես: Այս նյութը դեռևս հավաքված, ամփոփված, ուսումնասիրված և մշակված չե: Ուստի մենք պետք ե այստեղ բավականանանք սոսկ ամենաընդհանուր և հակիրճ դիտողություններով, ընդգծելով, որ առանց մատերիալիզմի ա յ դ կողմի՝ Մարքսն իրավամբ այն համարում եր կիսատ, միակողմանի և անկենդան: Պրոլետարիատի տակտիկայի հիմնական խնդիրը Մարքսը բնորոշում եր խիստ համապատասխան իր մատերիալիստական-դիալեկտիկական աշխարհայեցողության բոլոր հիմնական նախադրյալներին: Տվյալ հասարակության անխտիր բոլոր դասակարգերի բոլոր փոխհարաբերությունների գումարի միմիայն ոբյեկտիվ հաշվառումը, հետևաբար նաև այդ հասարակության զարգացման ոբյեկտիվ աստիճանի և նրա ու մյուս հասարակությունների փոխհարաբերությունների հաշվառումն ե, որ կարող ե հենարան ծառայել առաջավոր դասակարգի ճիշտ տակտիկայի համար: Ըստ որում բոլոր դասակարգերը և բոլոր յերկրները քննարկվում են իրենց ոչ թե ստատիկ, այլ դինամիկ տեսքով, այսինքն՝ ոչ թե անշարժ վիճակում, այլ շարժման մեջ (որի որենքները բղխում են յուրաքանչյուր դասակարգի գոյության տնտեսական պայմաններից): Շարժումն իր հերթին քննարկվում ե ոչ միայն անցյալի, այլև ապագայի տեսակետից և այն էլ ոչ թե «եվոլյուցիոնիստների» գռեհիկ ըմբռնումով, որոնք միայն դանդաղ փոփոխումներ են տեսնում, այլ դիալեկտիկորեն. «Պատմական մեծ զարգացումների մեջ 20 տարին հավասար ե մեկ որվա,—գրում եր Մարքսը Ենգելսին,—թեև հետագայում կարող են գալ այնպիսի որեր, որոնցից ամեն մեկում 20-ական տարի կկենտրոնանա» («Նամակագրություն», հ. III, եջ 127»): Զարգացման յուրաքանչյուր աստիճանի վրա, յուրաքանչյուր մոմենտին պրոլետարիատի տակտիկան պետք ե հաշվի առնի մարդկային պատմության այս ոբյեկտիվորեն անխուսափելի դիալեկտիկան, մի կողմից՝ ոգտագործելով քաղաքական անշարժության կամ կրիայի, այսպես կոչված «խաղաղ» զարգացման դարաշրջանները առաջավոր դասակարգի գիտակցության, ուժի ու մարտական ընդունակության զարգացման համար, իսկ մյուս կողմից՝ այդ ոգտագործման ամբողջ աշխատանքը վարելով տվյալ դասակարգի շարժման «վերջնական նպատակի» ուղղությամբ և նրա մեջ

«20-ական տարի կենտրոնացնող» մեծ օրերի մեծ խնդիրները գործնականորեն լուծելու ընդունակություն ստեղծելու ուղղությամբ։ Տվյալ հարցում առանձնապես կարևոր են Մարքսի դատողություններից յերկուսը. մեկը «Փիլիսոփայության աղքատությունից»՝ պրոլետարիատի տնտեսական պայքարի և տնտեսական կազմակերպությունների առթիվ, մյուսը՝ «Կոմունիստական Մանիֆեստից»՝ նրա քաղաքական խնդիրների առթիվ։ Առաջինն ասում է. «Խոշոր արդյունաբերությունը կուտակում է մի վայրում իրար անհայտ մարդկանց մի մասսա։ Մրցությունը պառակտում է նրանց շահերը։ Բայց աշխատավարձի պահպանումը, այդ ընդհանուր շահը իրենց տիրոջ դեմ, նրանց միավորում է դիմադրության, կոալիցիայի մեկ ընդհանուր գաղափարով... Սկզբում մեկուսացած կոալիցիաները ձևավորվում են խմբերի մեջ, և իրենց միությունների պաշտպանությունը բանվորների կողմից ընդդեմ մշտապես միավորված կապիտալի, դառնում է նրանց համար ավելի անհրաժեշտ, քան աշխատավարձի պաշտպանությունը... Այս պայքարում, այս իսկական քաղաքացիական պատերազմում, միավորվում և զարգանում են բոլոր տարրերը գալիք ճակատամարտի համար։ Այս կետին հասնելով՝ կոալիցիան ընդունում է քաղաքական բնույթ»։ Այստեղ մեր առաջն է տնտեսական պայքարի և արհեստակցական շարժման ծրագիրն ու տակտիկան միքանի տասնամյակի համար, պրոլետարիատի ուժերը «գալիք ճակատամարտին» նախապատրաստելու ամբողջ յերկարատև եպոխայի համար։ Սրան պետք է զուգադրել Մարքսի և Էնգելսի՝ անգլիական բանվորական շարժման օրինակի վրա բերած այն բազմաթիվ ցուցումները, թե ի՛նչպես արդյունաբերական «բարգավաճումը» ծնունդ է տալիս «բանվորներին գնելու» (I, 136, «Переписка с Энгельсом»), և նրանց պայքարելուց հետ կասեցնելու փորձերի, թե ի՛նչպես այդ բարգավաճումն ընդհանրապես «բարոյալքում է բանվորներին» (II, 218), թե ի՛նչպես «բուրժուականանում է» անգլիական պրոլետարիատը—«ամենաբուրժուականը բոլոր ազգություններից» (անգլիականը) «կամենում է; ըստ յերևույթին, գործը վերջիվերջո այնտեղ հասցնել, վոր բուրժուազիայի կողքին ունենա նաև բուրժուական արիստոկրատիա և բուրժուական պրոլետարիատ» (II, 290). թե ի՛նչպես նրա մեջ անհետանում է «հեղափոխական յեռանդը» (III, 124). թե ի՛նչպես հարկավոր է լինում քիչ թե շատ յերկար սպասել, վորպեսզի «անգլիական բանվորներն ազատ-

վեն առերևույթ բուրժուական այլասերումից» ((III, 127). թե ի՛նչպես անգլիական բանվորական շարժմանը պակասում է «չարտիստների հուրը» (1866, III, 305). թե ի՛նչպես բանվորների անգլիական առաջնորդներն ստեղծվում են «ռադիկալ բուրժուայի և բանվորի» միջին տիպով (Գոլլիոկի մասին, IV, 209). թե ի՛նչպես, շնորհիվ Անգլիայի մենաշնորհի և մինչև վոր այդ մենաշնորհը չորաքի, «բրիտանական բանվորների հետ վոչինչ չի կարելի անել» (IV, 433)։ Տնտեսական պայքարի տակտիկան բանվորական շարժման ընդհանուր ընթացքի (և յելքի) առնչությամբ քննարկվում է այստեղ յերևելի կերպով լայն, բազմակողմանի, դիալեկտիկական, իսկական հեղափոխական տեսակետով։

«Կոմունիստական Մանիֆեստը» քաղաքական պայքարի տակտիկայի մասին առաջադրեց մարքսիզմի հիմնական դրույթը. «Կոմունիստները պայքարում են հանուն բանվոր դասակարգի մոտակա նպատակների ու շահերի, բայց միաժամանակ նրանք պաշտպանում են նաև շարժման ապագան»։ Հանուն դրա յեր, վոր Մարքսը 1848 թ. պաշտպանում եր Լեհաստանում «ագրարային հեղափոխության» կուսակցությանը, «այն կուսակցությանը, վորն առաջացրեց 1846 թ. Կրակովի ապստամբությունը»։ 1848—1849 թ. թ. Մարքսը Գերմանիայում պաշտպանում եր ծայրահեղ հեղափոխական դեմոկրատիային և հետագայում յերբեք հետ չվերցրեց տակտիկայի մասին իր այն ժամանակվա ասածները։ Գերմանական բուրժուազիային նա համարում եր իբրև այնպիսի մի տարր, վորը «սկզբից ևեթ հակված եր ժողովրդին դավաճանելու» (միայն գյուղացիության հետ ունեցած դաշինքը կարող եր բուրժուազիային հնարավորություն տալ ամբողջապես իրականացնելու իր խնդիրները) «և կոմպրոմիսի հանգելու հին հասարակության թագադիր ներկայացուցիչների հետ»։ Ահա Մարքսի տված հանրագումարային վերլուծությունը գերմանական բուրժուազիայի դասակարգային դրության մասին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության եպոխայում, վերլուծություն, վոր ի միջի այլոց տիպար է հանդիսանում այն մատերիալիզմի, վորը քննում է հասարակությունը շարժման մեջ, ընդորում միայն վոչ շարժման այն կողմից, վորը դեպի հետ է դարձած... «առանց ինքն իրեն հավատալու, առանց ժողովրդին հավատալու. վերնախավերի առաջ քրթմնջալով, ներքնախավերի առաջ դողալով... համաշխարհային մրրիկից սարսափահար. վոչ մի տեղ յեռանդուն, ամեն տեղ բանագող..անձեռնե-

րեց...անինձյալ ծերուկ, վորը դատապարտված է ի սեր իր ծերունական շահերի ղեկավարելու յերիտասարդ և առողջ ժողովրդի յերիտասարդական առաջին մղումները»... («Նոր Հռենոսյան Լրագիր», 1848 թ., տե՛ս «Литературное наследство», հ. III, եջ 212)։ Մոտ 20 տարի անց Էնգելսին գրած մի նամակում (III, 224) Մարքսը 1848 թ. հեղափոխության անհաջողության պատճառը հայտարարում եր այն, վոր բուրժուազիան ստրկության հետ հաշտվելը գերադասեց ազատության համար պայքարելու սոսկ հեռանկարից։ Յերբ վերջացավ 1848—1849 թ. թ. հեղափոխությունների եպոխան, Մարքսը դեմ դուրս յեկավ հեղափոխություն խաղալու ամեն տեսակ խաղի (Շապպեր—Վիլլիխ և պայքարը նրանց դեմ), աշխատելու ունակություն պահանջելով այն նոր շրջանի համար, վորն իբր թե «խաղաղ կերպով» նոր հեղափոխություններ եր նախապատրաստելու։ Թե ինչ վոգով եր պահանջում Մարքսը կատարել այդ աշխատանքը, այդ յերևում է նրա՝ 1856 թ. ամենախուլ ռեակցիոն ժամանակի Գերմանիայի դրության հետևյալ գնահատականից. «Ամբողջ գործը Գերմանիայում կախված կլինի գյուղացիական պատերազմի վորևէ յերկրորդ հրատարակությամբ պրոլետարական հեղափոխությանն աջակցելու հնարավորությունից» («Նամակագրություն Էնգելսի հետ», II, 108)։ Քանի դեռ դեմոկրատական (բուրժուական) հեղափոխությունը Գերմանիայում չեր վերջացած, սոցիալիստական պրոլետարիատի տակտիկայում ամբողջ ուշադրությունը Մարքսն ուղղում եր զարգացնելու գյուղացիության դեմոկրատական յեռանդը։ Լասսալին նա համարում եր «ի նպաստ Պրուսիայի՝ բանվորական շարժմանն ոբյեկտիվորեն դավաճանող» (III, 210) ի միջի այլոց հենց նրա համար, վոր Լասսալը ներողամիտ վերաբերմունք ուներ կալվածատերերի և պրուսական նացիոնալիզմի հանդեպ։ «Ստորություն է,—գրում եր Էնգելսը 1865 թ. Մարքսի հետ մտքերի փոխանակություն ունենալով իրենց առաջիկա ընդհանուր յելույթի առթիվ մամուլում,—«հողագործական յերկրում արդյունաբերական բանվորների անունից միայն բուրժուաների վրա հարձակվել, մոռացության տալով գյուղական բանվորների նահապետական «խարազանային շահագործումը» ֆեոդալական ազնվականության կողմից» (III, 217)։ 1864—1870 թ. թ. ժամանակաշրջանում, յերբ Գերմանիայում իր վախճանին եր մոտենում բուրժուա-դեմոկրատական հեղափոխու-

թյան ավարտման եպոխան, այդ հեղափոխությունը վերևից այս կամ այն կերպ ավարտելու համար Պրուսիայի և Ավստրիայի շահագործող դասակարգերի կողմից մղվող պայքարի եպոխան, Մարքսը վոչ միայն դատապարտում եր Լասսալին, վորն աշխատում եր Բիսմարկին հաճոյանալ, այլև ուղղում եր Լիբկնեխտին, վորն ընկել եր «ավստրոֆիլության» և պարտիկուլարիզմի պաշտպանության մեջ. Մարքսը պահանջում եր հեղափոխական այնպիսի տակտիկա, վորը հավասար անողոքությամբ պայքարեր թե՛ Բիսմարկի և թե՛ ավստրոֆիլների դեմ, այնպիսի տակտիկա, վորը չքծներ հաղթողի, այն է՝ պրուսական յունկերի առաջ, այլ իսկույն ևեթ վերսկսեր հեղափոխական պայքարը նրա դեմ և այն հողի վրա, վոր ստեղծել եյին պրուսական պատերազմական հաղթանակները («Переписка с Энгельсом», III, 134, 136, 147, 179, 204, 210, 215, 418, 437, 440—1)։ Ինտերնացիոնալի 1870 թվի սեպտեմբերի 9-ի նշանավոր դիմումի մեջ Մարքսը ֆրանսական պրոլետարիատին նախազգուշացնում եր անժամանակ ապստամբությունից, բայց յերբ նա այնուամենայնիվ վրա հասավ (1871 թ.), Մարքսը խանդավառությամբ վողջունեց «յերկնքի դեմ գրոհող» մասսաների հեղափոխական նախաձեռնությունը (Մարքսի նամակը Կուգելմանին)։ Հեղափոխական յելույթի պարտությունն այս սիտուացիայում, ինչպես բազմաթիվ այլ սիտուացիաներում, Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից փոքրագույն չարիք եր պրոլետարական պայքարի ընդհանուր ընթացքի և յելքի տեսակետից, քան թե գրաված դիրքից հրաժարվելը, առանց կռվի անձնատուր լինելը. այդպիսի անձնատուր լինելը կբարոյալքեր պրոլետարիատին, կկոտրեր նրա պայքարելու ընդունակությունը։ Լիովին գնահատելով պայքարի լեգալ միջոցների ոգտագործումը քաղաքական անշարժության և բուրժուական լեգալության տիրապետման եպոխայում, Մարքսը 1877—1878 թ. թ., յերբ բացառիկ որենք հրատարակվեց սոցիալիստների դեմ, խստիվ դատապարտեց Մոստի «հեղափոխական ֆրազը», բայց նույնպիսի, յեթե վոչ ավելի մեծ խստությամբ, հարձակվեց ոպորտունիզմի վրա, վոր այն որերին առժամանակ համակել եր պաշտոնական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վորը բացառիկ որենքին ի պատասխան չկարողացավ անմիջապես կայունություն, ամրություն, հեղափոխականություն և անլեգալ պայքարի անցնելու պատ-

բաստակամություն հայտարարել («Письма Маркса к Энгельсу», IV, 397, 404, 418, 422, 424։ *Համեմատիր նույնպես Զորգեյին գրած նամակները*)։

Գրված է 1914 թ. հուլիս—նոյեմբերին։
Առաջին անգամ տպագրված է Գրանատի հանրագիտական բառարանում (7-րդ հրատարակություն), հ. XXVIII։
Երկ., հ. XVIII, էջ 1—31։

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

Գրականություն

Մարքսի յերկերի և նամակների լիակատար ժողովածուն մինչև այժմ դեռ չի հրատարակված։ Մարքսի յերկերի ավելի մեծ մասն է թարգմանված ռուսերեն, քան վորևէ այլ լեզվով։ Այդ յերկերի ստորև բերվող ցանկը կազմված է ժամանակագրական կարգով։ 1841 *թվին է վերաբերում Մարքսի դիսերտացիան Եպիկուրի փիլիսոփայության մասին (մտել է «Գրական ժառանգություն» հետմահվան հրատարակության մեջ, նրա մասին ստորև)։ Այդ դիսերտացիայի մեջ Մարքսը դեռևս լրիվին կանգնած է իդեալիստական-հեգելական տեսակետի վրա։* 1842 *թվին են վերաբերում Մարքսի հոդվածները «Հռենոսյան Լրագրում» (Քյոլն), հատկապես մամուլի ազատության վերաբերյալ Հռենոսյան լանդտագում տեղի ունեցած վիճաբանությունների քննադատությունը, այնուհետև՝ փայտեղենի գողության վերաբերյալ օրենքների առթիվ, ապա՝ քաղաքականությունն աստվածաբանությունից ազատագրելու պաշտպանությունը և այլն (մասամբ մտել են «Գրական ժառանգության» մեջ)։ Այստեղ նշվում է Մարքսի անցումն իդեալիզմից մատերիալիզմին և հեղափոխական դեմոկրատիզմից՝ կոմունիզմին։* 1844 *թվին Փարիզում Մարքսի և Առնոլդ Ռուգեյի խմբագրությամբ լույս է տեսնում «Գերմանո-ֆրանսական Տարեգիրքը», վորտեղ վերևում մատնանշված անցումը կատարվում է վերջնականապես։ Առանձնապես ուշագրավ են Մարքսի հոդվածները՝ «Հեգելի իրավունքի փիլիսոփայության քննադատության ներածություն» (բացի «Գրական ժառանգությունից» կա նաև առանձին հրատարակություն վորպես գրքույկ) և «Հրեյական հարցի շուրջը» (նույնպես,* «Знание» *հրատարակչ. գրքույկ, «Եժանագին գրադարան»* № 210)։ 1845 *թվին Մարքսն ու Էնգելսը միասին հրատարակում են* (*Մայնի Ֆրանկֆուրտում*) *«Սուրբ ընտանիքը։ Բրունո Բաուերի և Ընկ. դեմ» գրքույկը* (*բացի «Գրական ժառանգությունից»՝*

ռուսերեն կա յերկու առանձին հրատարակություն, վորպես գըրքույկ հրատարակությամբ «Новый Голос»-ի ՍՊԲ, 1906 թ., և «Вестник Знания»-յի, ՍՊԲ, 1907 թ.)։ 1845 թվի գարնանն են վերաբերում Մարքսի թեզիսները Ֆոյերբախի մասին (տպագըրված են Ֆր. Ենգելսի «Լուդվիգ Ֆոյերբախ» գրքույկի հավելվածում. կա ռուսերեն թարգմանությունը)։ 1845—1847 թ. թ. Մարքսը գրել է մի շարք հոդվածներ (վորոնք մեծ մասամբ չեն հավաքված, չեն վերահրատարակված և ռուսերեն չեն թարգմանված) հետևյալ լրագրերում. «Vorwärts»[1]—Փարիզ, «Brüsseler Deutsche Zeitung»[2] (1847), «Das Westphäliche Dampfboot» Bielefeld[3], 1845—1848. «Der Gesellschaftsspiegel» (1846, Elberfeld)[4], «Բրյուսսելի գերմանական լրագիր»—Բրյուսսել, «La Réfome»[5]—Փարիզ և այլն։ 1847 թվին է վերաբերում Բրյուսսելում և Փարիզում հրատարակված Մարքսի հիմնական աշխատությունը Պրուդոնի դեմ՝ փիլիսոփայության աղքատություն։ Պատասխան պ-րն Պրուդոնի «աղքատության փիլիսոփայության»» (ռուսերեն՝ «Новый Мир»-ի յերեք հրատարակություն, մեկը՝ Գ. Լվովիչի, մեկը՝ Ալեքսեյեվայի, մեկը՝ «Просвещение»-յի, բոլո՛րն էլ 1905—6 թ. թ.)։ 1848 թվին Բրյուսսելում հրատարակվել է «Ճառ առևտրի ազատության մասին» (կա ռուսերեն թարգմանություն) և ապա Լոնդոնում, Ֆր. Ենգելսի աշխատակցությամբ, հռչակավոր, Յեվրոպայի համարյա բոլոր լեզուներով և մասամբ աշխարհի մյուս յերկրների լեզուներով թարգմանված «Կոմունիստական կուսակցության Մանիֆեստը» (ռուսերեն թարգմանությունն ունեցել է մոտ 8 հրատարակություն 1905—6 թ. թ., «Молот»-ի, «Колокол»-ի, Ալեքսեյեվայի և ուրիշն., վորոնք մեծ մասամբ բռնագրավված են և տարբեր անուններ են կրում. «Կոմ. Մանիֆ.», «Կոմունիզմի մասին», «Հասարակական դասակարգերն ու կոմունիզմը», «Կապիտալիզմ և կոմունիզմ», «Պատմության փիլիսոփայություն». Մարքսի այս, ինչպես նաև այլ յերկերի լրիվ և ամենից ավելի ճշգրիտ թարգմանությունը տե՛ս արտասահմանյան, մեծ մասամբ «Աշխատանքի Ազատագրություն

1 — «Հառաջ»: Խմբ.:
2 — «Բրյուսսելի Գերմանական Թերթ»: Խմբ.:
3 — «Վեստֆալյան Շոգենավ», Բիլեֆելդ: Խմբ.:
4 — «Հասարակության Հայելին», Ելբերֆելդ: Խմբ.:
5 — «Ռեֆորմ»: Խմբ.:

Խմբի», հրատարկություններում։ 1848 թ. հունիսի 1-ից մինչև 1849 թ. մայիսի 19-ը Քյոլնում լույս եր տեսնում «Նոր Հռենոսյան Լրագիրը», վորի գլխավոր խմբագիրը փաստորեն Մարքսն եր։ Հեղափոխական պրոլետարիատի այդ մինչև այժմ լավագույն, չգերազանցված մնացած որգանում Մարքսի գրած բազմաթիվ հոդվածները հավաքված չեն և լրիվ վերահրատարակված չեն։ Ամենակարևորները մտել են «Գրական Ժառանգության» մեջ։ Վորպես առանձին գրքույկ բազմիցս հրատարակվել են Մարքսի հոդվածներն այդ լրագրից՝ «Վարձու աշխատանք և կապիտալ» (ռուսերեն 4 հրատարակություն՝ Կոզմանի, «Молот»-ի. Մյագկովի և Լվովիչի, 1905—6 թ. թ.)։ Նույն լրագրից՝ «Լիբերալներն իշխանության գլուխ» («Знание»-յի հրատ. «Եժանագին Գրադ.» № 272. ՍՊԲ. 1906)։ 1849 թվին Մարքսը Քյոլնում հրատարակեց «Յերկու քաղաքական դատավարություն»-ը (Մարքսի յերկու պաշտպանողական ճառերը. յերդվյալների դատարանն արդարացրեց նրան մամուլի մեջ կատարած հանցագործության և կառավարությանը զինված դիմադրության կոչ անելու մեղադրանքների վերաբերմամբ։ Ռուսերեն թարգմանությունն ունի 5 հրատարակություն 1905—6 թ. թ.—Ալեքսեյեվայի, «Молот»-ի, Մյագկովի, «Знание»-յի, «Новый Мир»-ի)։ 1850 թվին Մարքսը Համբուրգում հրատարակեց «Նոր Հռենոսյան Լրագիր» ժուռնալի 6 համար։ Այստեղ յեղած կարևորագույն հոդվածները մտել են «Գրական Ժառանգության» մեջ։ Առանձնապես ուշագրավ են 1895 թվին Ենգելսի կողմից վորպես գրքույկ վերահրատարակված Մարքսի հոդվածները՝ «Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848 թվից մինչև 1850 թ.» (ռուսերեն թարգմանություն, հրատ. Մ. Մալիխ, «Բիբլ.» № 59—60, նմանապես և «Պատմական աշխատությունների հավաքածու» ժողովածվում, թարգմ. Բազարովի և Ստեպանովի, հրատ. Սկիրմունտի, ՍՊԲ. 1906 թ., նույնը՝ «Մտքեր և հայացքներ XX դարի կյանքի մասին», ՍՊԲ., 1912 թիվ)։ 1852 թվին Նյու-Յորքում լույս տեսավ Մարքսի «Լուի Բոնապարտի Բրյումերի տասնութը» (ռուսերեն թարգմանությունը հենց նոր հիշատակված ժողովածուներում)։ Նույն թվին Լոնդոնում՝ «Մերկացումներ կոմունիստների Քյոլնի դատավարության վերաբերյալ» (ռուս. թարգմանություն «Կոմունարների Քյոլնի դատավարությունը»— «Հանրամատչելի-գիտական Գրադարանի» № 43, ՍՊԲ. 1906, հոկտ. 28)։ 1851 թվի ոգոստոսից մինչև 1862

թիվը[1] Մարքսը յեղել է Նյու-Յորկի «Տրիբունա» լրագրի («The New-York Tribune») մշտական աշխատակից, վորտեղ նրա հոդվածներից շատերը լույս են տեսել առանց ստորագրության վորպես խմբագրական հոդվածներ: Առանձնապես ուշագրավ են հետևյալ հոդվածները. «Հեղափոխություն ու հակահեղափոխությունը Գերմանիայում», վորոնք Մարքսի ու Էնգելսի մահվանից հետո հրատարակվել են գերմաներեն թարգմանությամբ (ռուսերեն թարգմանությունը յերկու ժողովածուներում, թարգմ. Բազարովի և Ստեպանովի, ապա՝ առանձին բրոշյուրով հինգ հրատարակություն 1905—6 թ. թ.—Ալեքսեյեվայի, «Общественная Польза»-յի, «Новый Мир»-ի, «Всеобщая Библиотека»-յի և «Молот»-ի): Մարքսի «Տրիբունայում» գրած հոդվածներից մի քանիսը հրատարակվել են Լոնդոնում առանձին բրոշյուրներով, որինակ՝ Պալմերստոնի մասին 1856 թ., «Մերկացումներ XVIII դարի դիվանագիտական պատմության վերաբերյալ» (լիբերալ կուսակցությանը պատկանող անգլիական մինիստրների մշտական շահադիտական կախման մասին Ռուսաստանից) և այլն: Մարքսի մահից հետո նրա դուստր Էլեոնորա Էվելինգը հրատարակեց նրա մի շարք հոդվածները «Տրիբունա»-յից արևելյան հարցի մասին «The Eastern Question» վերնագրով. London, 1897. [«Արևելյան հարցը», մի մասը թարգմանված է ռուսերեն «Война и Революция». պրակ I, Մարքս և Էնգելս՝ «Չհրատարակված հոդվածներ (1852, 53, 54 թ. թ.)»: Խարկով. 1919: («Наша Мысль»-ի գրադարան)]: 1854 թվի վերջից, ինչպես նաև 1855 թվի ընթացքում, Մարքսն աշխատակցում եր «Neue Oder-Zeitung»[2] լրագրում, իսկ 1861—62 թ. թ. Վիեննայի «Presse»[3] լրագրում: Այդ հոդվածները հավաքված չեն և միայն մասամբ են լույս տեսել «Neue Zeit»-ում, ինչպես և Մարքսի շատ նամակները: Նույնը վերաբերում է նաև Մարքսի հոդվածներին «Das Volk»[4] լրագրից (Լոնդոն. 1859 թ.) 1859 թ. իտալական պատերազմի դիվանագիտա-

1 Էնգելսը «Handwörterbuch der Staatswissenschaften»-ու Մարքսի մասին գրած հոդվածում, Bd. 6. S. 603 («Պետական գիտությունների բառարան», հատ. 6, եջ 603: Խմբ.) և Բերնշտայնը «Բրիտանական Էնցիկլոպեդիա-յի» 11-րդ հրատարակության մեջ Մարքսի մասին գրած հոդվածում 1911 թվին սխալաբար մատնանշում են 1853—1860 թ. թ.: Տե՛ս Մարքսի ու Էնգելսի նամակագրությունը, վոր հրատարակվել է 1913 թվին:

2 — «Օդերի Նոր Լրագիր»: Խմբ.:

3 — «Մամուլ»: Խմբ.:

4 — «Ժողովուրդ»: Խմբ.:

կան պատմության վերաբերմամբ: 1859 թվին Բեռլինում լույս տեսավ Մարքսի «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատությունը (ռուսերեն թարգմանություն: M. 1896 թ., Մանուիլովի խմբագրությամբ և ՍՊԲ. 1907 թ., թարգմ. Ռումյանցեվի): 1860 թվին Լոնդոնում լույս տեսավ Մարքսի «Herr Vogt» («Պարոն Ֆոգտ») բրոշյուրը:

1864 թվին Լոնդոնում լույս տեսավ Մարքսի գրած «Բանվորների Միջազգային Ընկերության Դիմումը» (կա ռուսերեն թարգմանություն): Մարքսը Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի բազմաթիվ մանիֆեստների, դիմումների և բանաձևերի հեղինակն եր: Այդ ամբողջ նյութը դեռ շատ հեռու յե մշակված լինելուց և մինչև անգամ հավաքված չե: Այդ աշխատանքի առաջին ձեռնարկում է հանդիսանում Գ. Իեկկի «Ինտերնացիոնալ» գիրքը (ռուսերեն թարգմանություն ՍՊԲ. 1906, հրատ. «Знание»), վորտեղ տպագրված են, ի միջի այլոց, Մարքսի մի քանի նամակները և վորոշումների նրա կազմած նախագծերը: Ինտերնացիոնալի՝ Մարքսի կողմից գրված փաստաթղթերի թվին է պատկանում Գլխավոր Խորհրդի մանիֆեստը Փարիզի Կոմունայի առթիվ, վորը լույս է տեսել 1871 թվին Լոնդոնում վորպես բրոշյուր հետևյալ վերնագրով. «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» (ռուս. թարգմ. Լենինի խմբագրությամբ, հրատ. «Молот»-ի և այլ հրատ.): 1862—1874 թ. թ. դարաշրջանին է վերաբերում Մարքսի նամակագրությունը Ինտերնացիոնալի անդամ Կուգելմանի հետ (ռուս. թարգմ. յերկու հրատարակություն. մեկը՝ Ա. Գոյխբարգի թարգմանությունը, մյուսը՝ Լենինի խմբագրությամբ): 1867 թվին Համբուրգում լույս տեսավ Մարքսի գլխավոր յերկը՝ «Կապիտալ: Քաղաքատնտեսության քննադատություն»: Հատ. I: Յերկրորդ և յերրորդ հատորները հրատարակված են Մարքսի մահից հետո Էնգելսի կողմից 1885 և 1894 թ. թ.: Ռուսերեն թարգմանությունը՝ հատ. I—հինգ հրատարակություն (յերկուսը Դանիելսոնի թարգմանությամբ, 1872 և 1898 թ. թ., յերկուսը Յե. Ա. Գուրվիչի և Լ. Մ. Զակի թարգմ. Ստրուվեյի խմբագրությամբ 1-ին հրատ. 1899 թ., 2-րդ հրատ.—1905 թ., մեկը՝ Բազարովի և Ստեպանովի խմբագրությամբ): II և III հատորները—յերկուական հրատարակություն (Դանիելսոնի թարգմ. ավելի պակաս գոհացուցիչ) և Բազարովի ու Ստեպանովի խմբագրությամբ կատարված թարգմանության (լավագույնը): 1876 թվին Մարքսը մասնակցություն ունեցավ Էնգելսի գրքի շարադրման մեջ—«Անտի-Դյուրինգ» (Herrn Eugen Dührings Umwälzung der

Wissenschaft), աչքի անցկացնելով ամբողջ աշխատության ձեռագիրը և ամբողջությամբ գրելով քաղաքատնտեսության պատմության նվիրված գլուխը:

Այնուհետև, Մարքսի մահից հետո հրատարակվել են նրա հետևյալ յերկերը. «Գոթայի ծրագրի քննադատությունը» (ՍՊԲ. 1906 թ., գերմաներեն՝ «Neue Zeit»-ում, 1890/91 թ., № 18): «Աշխատավարձ, գին և շահույթ» (1865 թվի հունիսի 26-ին կարդացած զեկուցում, «Neue Zeit», XVI, 1897/98, ռուս. թարգմանություն «Молот»-ի հրատ. 1906 թ. և Լվովիչինը 1905 թ.): «Կ. Մարքսի, Ֆր. Ենգելսի և Ֆ. Լասսալի Գրական ժառանգությունը», 3 հատոր: Շտուտգարտ. 1902: (Ռուսերեն թարգմանություն Ակսելրոդի և ուրիշն. խմբագրությամբ, 2 հատոր, ՍՊԲ. 1908: I հատորը դեռ Ցե. Գուրվիչի խմբագրությամբ, Մ. 1907: Առանձին հրատարակված են Լասսալի նամակները Մարքսին, մտնում են «Գրական ժառանգության» մեջ): «Կ. Մարքսի, Ֆ. Ենգելսի և ուրիշն. նամակները Զորգեյին» (յերկու հրատ. ռուսերեն, մեկը՝ Ակսելրոդի խմբագրությամբ, մյուսը՝ Լենինի առաջաբանով, հրատ. Դաուգեյի): «Հավելյալ արժեքի թեորիաները», 3 հատոր, 4 մասերով, Շտուտգարտ, 1905—1910, Կաուցկու հրատարակած «Կապիտալի» չորրորդ հատորի ձեռագիրը (միայն առաջին հատորի ռուս. թարգմ. յերեք հրատարակությամբ— ՍՊԲ. 1906, Պլեխանովի խմբագրությամբ. Կիեվ, 1906, Ժելեզնովի խմբագրությամբ. Կիեվ, 1907, Տուչանսկու խմբագրությամբ): 1913 թ. Շտուտգարտում լույս տեսավ 4 մեծ հատոր «Կ. Մարքսի և Ֆր. Ենգելսի նամակագրությունը», վոր բովանդակում է 1386 նամակ 1844 թ. սեպտեմբերից մինչև 1883 թվի հունվարի 10-ն ընկած ժամանակաշրջանում, վորոնք վերին աստիճանի արժեքավոր նյութ են տալիս Կ. Մարքսի կենսագրությունն ու հայացքներն ուսումնասիրելու համար: 1917 թվին լույս տեսան Մարքսի և Ենգելսի 2 հատոր՝ Հոդվածներ 1852—1862 թ. թ. (գերմաներեն): Ի վերջո՝ Մարքսի յերկերի այս ցուցակի առթիվ անհրաժեշտ է վերապահում անել, վոր սրա մեջ չեն մտել ելի մի քանիսն ավելի մանր հոդվածներից ու առանձին նամակներից, վորոնք զետեղված են մեծ մասամբ «Neue Zeit»-ում, «Vorwärts»-ում և այլ սոց.-դեմ. պարբերական հրատարակություններում գերմաներեն լեզվով. անկասկած է նաև, վոր լրիվ չէ Մարքսի բոլոր թարգմանությունների ցուցակը ռուսերեն լեզվով, հատկապես 1905—1906 թ. թ. բրոշյուրներինը:

Մարքսի և մարքսիզմի մասին յեղած գրականությունն արտասովոր շատով մեծ է: Մենք կնշենք միմիայն ամենաեյականը, հեղինակներին բաժանելով յերեք գլխավոր մասի—մարքսիստների, վորոնք եյականում կանգնած են Մարքսի տեսակետի վրա. բուրժուական գրողների, վորոնք ըստ եյության թշնամի յեն մարքսիզմին, և ռևիզիոնիստների, վորոնք իբր թե ընդունում են մարքսիզմի այս կամ այն հիմունքները, իսկ գործով այն փոխարինում են բուրժուական հայացքներով: Իբրև ռևիզիոնիզմի յուրահատուկ ռուսական այլատեսակություն պետք է դիտել նարոդնիկական վերաբերմունքը դեպի Մարքսը: Վ. Զոմբարտն իր «Ein Beitrag zur Bibliographie des Marxismus» (Archiv für Sozialwissenschaft und Sozialpolitik, XX, 2. Heft, 1905, S. S. 413—430 [1] ամենևին վոչ լրիվ ցուցակում բերում է 300 անուն: Նրա լրացման համար տե՛ս «Neue Zeit», 1883—1907 թ. թ. և հետագա տարիների ցանկերը: Այնուհետև՝ տե՛ս Josef Stammhammer: «Bibliographie des Sozialismus und Kommunismus». Bd. I—III. Jena (1893—1909 [2]): Այս՝ մարքսիզմի մանրամասն բիբլիոգրաֆիայի համար կարելի յե մատնանշել դարձյալ — «Bibliographie der Socialwissenschaften». Berlin. Jahrgang 1, 1905 u. ff. [3]: (Տե՛ս նաև Ն. Ա. Ռուբակին, «Գրքերի մեջ», հատ. II, 2-րդ հրատ.): Այստեղ մենք բերում ենք միմիայն ամենից ավելի եյականները: Մարքսի կենսագրության հարցի վերաբերյալ հարկ է մատնանշել ամենից առաջ Ֆր. Ենգելսի հոդվածները «Volkskalender»-ում [4], վոր հրատարակել է Բրակկեն Բրաունշվայգում 1878 թվին և «Handwörterbuch der Staatswissenschaften»-ում. Bd. 6, S. 600—603. *W. Liebknecht*: «Karl Marx zum Gedächtniss». Nürnb. 1896 [5]: *Lafargue*: «K. Marx. Persönliche Erinnerungen» [6]: Վ. Լիբկնեխտ, «Կարլ Մարքս». 2-րդ հրատ. ՍՊԲ. 1906: Պ. Լաֆարգ, «Իմ հիշողությունները Կ. Մարքսի մասին»: Ոդ. 1905: (Տե՛ս որիգին. «Neue Zeit»-ում, IX, I): «Կ. Մարքսի հիշատակին». ՍՊԲ. 1908, եջ 410,

1 — «Մարքսիզմի բիբլիոգրաֆիա» (Սոցիալական գիտությունների և սոցիալական քաղաքականության արխիվ, XX հատ., 2-րդ գիրք, 1905 թիվ. եջ 413—430): Խմբ.:

2 — Յոզեֆ Շտամհամմեր. «Սոցիալիզմի և կոմունիզմի բիբլիոգրաֆիա», հատ. I—III: Յենա (1893—1909): Խմբ.:

3 — «Սոցիալական գիտությունների բիբլիոգրաֆիա»: Բեռլին: Հրատարակության I տարի, 1905 թիվ և շար.: Խմբ.:

4 — «Ժողովրդական Օրացույց»: Խմբ.:

5 — Վ. Լիբկնեխտ: «Կարլ Մարքսի հիշատակին»: Նյուրնբերգ. 1896 թ.: Խմբ.:

6 — Լաֆարգ: «Կ. Մարքս: Անձնական հիշողություններ»: Խմբ.:

Յու. Նեվզորովի, Ն. Ռոժկովի, Վ. Բազարովի, Յու. Ստեկլովի, Ա. Ֆինն–Ենոտաևսկու, Պ. Ռումյանցևի, Կ. Ռեններիի, Գ. Ռոլլանդ–Հոլստի, Վ. Իլյինի, Ռ. Լուքսեմբուրգի, Գ. Զինովևի, Յու. Կամենևի, Պ. Օրլովսկու և Մ. Տագանսկու հոդվածների ժողովածու: Ֆր. Մերինգ, «Կարլ Մարքս»: Մարքսի ընդարձակ կենսագրությունն անգլերեն լեզվով, որ կազմել է ամերիկյան սոցիալիստ Սպարգոն (*Spargo*: «K. Marx, his life and work». London, 1911[1]), անբավարար է: Մարքսի գործունեության ընդհանուր տեսությունը տե՛ս *K. Kautsky*: «Die historische Leistung von K. Marx. Zum 25. Todestag des Meisters». Berlin 1908[2]: Ռուս. թարգմանությունը՝ «Կ. Մարքսը և նրա պատմական նշանակությունը»: ՍՊԲ, 1908: Հմմտ. նաև *Klara Zetkin*–ի հանրամատչելի բրոշյուրը. «K. M. und sein Lebenswerk» (1913)[3]: Հիշողություններ Մարքսի մասին՝ Աննենկովի «Вестник Европы»–ում, 1880, № 4 (և «Հիշողություններ», հատ. III. «Նշանավոր տասնամյակ»: ՍՊԲ. 1882) և Կարլ Շուրցի «Русское Богатство»–յում: 1906, № 12: Մ. Կովալևսկու «Вестник Европы»–ում, 1909, VI և շար.:

Մարքսիզմի փիլիսոփայության և պատմական մատերիալիզմի հարցի վերաբերյալ լավագույն շարադրանքը տվել է Գ. Վ. Պլեխանովը. «20 տարվա ընթացքում» («За 20 лет»), ՍՊԲ. 1909, 3–րդ հրատ.: «Պաշտպանությունից դեպի հարձակում». ՍՊԲ. 1910: «Մարքսիզմի հիմնական հարցերը». ՍՊԲ. 1908: «Մեր քննադատների քննադատությունը». ՍՊԲ. 1906: «Պատմության մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը». ՍՊԲ. 1908 և այլ աշխատություններ: Անտոնիո Լաբրիոլա. «Պատմության մատերիալիստական հայացքի հարցի շուրջը». ՍՊԲ. 1898: Նույնի՝ «Պատմական մատերիալիզմ և փիլիսոփայություն»: ՍՊԲ. 1906: Ֆր. Մերինգ. «Պատմական մատերիալիզմի մասին». ՍՊԲ. 1906 (2 հրատարակություն—«Просвещение»–յի և «Молог»–ի): Նույնի՝ «Լեգենդա Լեսսինգի մասին». ՍՊԲ. 1908 («Знание»): Հմմտ. նաև (ոչ–մարքսիստ) Շ. Անդլեր—«Կոմունիստական Մանիֆեստ: Պատմություն, ներածություն, կոմենտար». ՍՊԲ. 1906: Տե՛ս նաև «Պատմական մատերիալիզմ». ՍՊԲ. 1908, Էնգելսի, Կաուց-

1 — Սպարգո. «Կ. Մարքս, նրա կյանքն ու ուսմունքը»: Լոնդոն, 1911: Խմբ.:

2 — Կ. Կաուցկի. «Կ. Մարքսի պատմական նշանակությունը: Ուսուցչի մահվան 25–ամյակի առթիվ»: Բեռլին, 1908 թ.: Խմբ.:

3 — Կլարա Ցետկին. «Կարլ Մարքսը և նրա ուսմունքը» (1913): Խմբ.:

կու, Լաֆարգի և շատ ուրիշն. հոդվածների ժողովածու: Լ. Ակսելրոդ. «Փիլիսոփայական ուրվագծեր: Պատասխան պատմական մատերիալիզմի փիլիսոփայական քննադատներին»: ՍՊԲ. 1906: Դիցգենի՝ մարքսիզմից կատարած անհաջող շեղումների հատուկ պաշտպանությունը E. *Untermann*–ի մոտ. «Die logischen Mängel des engeren Marxismus». München. 1910[1] (753 էջ—ընդարձակածավալ, բայց վոչ–լուրջ աշխատանք): *Hugo Riekes*: «Die philosophischen Würzel des Marxismus», «Zeitschrift für die gesammte Staatswissenschaft»–ում, 62. Jahrgang, 1906, 3. Heft, S. 407—432[2], Մարքսի հայացքների հակառակորդի մի հետաքրքրական աշխատություն, որը ցույց է տալիս նրանց փիլիսոփայական ամբողջականությունը մատերիալիզմի տեսակետից: *Benno Erdmann*: «Die philosophischen Voraussetzungen der materialistischen Geschichtsauffassung», «Jahrbuch für Gesetzgebung, Verwaltung und Volkswirtschaft–ում (Schmollers Jahrbuch). 1907, 3. Heft, S. 1—56[3] (փիլիսոփայական առարկությունների հավաքածու ընդդեմ մարքսիզմի)—Մարքսի փիլիսոփայական մատերիալիզմի մի քանի հիմնական դրույթների խիստ օգտակար ձևակերպում և առարկությունների հավաքածու կանտականության և ընդհանրապես ագնոստիցիզմի լայն ծավալում ունեցող տեսակետից: *R. Stammler*: «Wirtschaft und Recht nach der materialistischen Geschichtsauffassung». 2–րդ հրատ. Lpz. 1906[4] (կանտական): Վոլտման. «Պատմական մատերիալիզմ», ռուս. թարգմանություն, 1901 թ. (նույնպես կանտական): Ֆորլենդեր. «Կանտը և Մարքսը». ՍՊԲ. 1909 (նույնպես): Հմմտ. նաև Ա. Բոգդանովի, Վ. Բազարովի և ուրիշն. («Մարքսիզմի փիլիսոփայության ուրվագծեր», ՍՊԲ. 1908: Ա. Բոգդանով. «Մեծ ֆետիշիզմի անկումը». Մ. 1909 և այլ գրքեր) ու Վ. Իլյինի («Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ». ՍՊԲ. 1909) միջև յեղած բանակռիվը: Պատմական մատերիալիզմի և էթիկայի հարցի վերա-

1 — Ե. Ունտերման. «Ուղղափառ մարքսիզմի տրամաբանական թերությունները»: Մյունխեն, 1910: Խմբ.:

2 — Հյուգո Ռիկես. «Մարքսիզմի փիլիսոփայական արմատները», «Պետագիտությունների ժուռնալում», հրատարակության 62–րդ տարի, 1906, 3–րդ գիրք, էջ 407—432: Խմբ.:

3 — Բեննո Էրդման. «Պատմության մատերիալիստական ըմբռնման նախադրյալները» «Օրենսդրության, կառավարման և ժողովրդատնտեսության տարեգիրք» (Շմոլլերի Տարեգիրքը). 1907, 3–րդ գիրք, էջ 1—56: Խմբ.:

4 — Ռ. Շտամմլեր, «Տնտեսությունն ու իրավունքը պատմության մատերիալիստական ըմբռնման տեսակետից»: 2–րդ հրատ. Լայպցիգ, 1906 թ.: Խմբ.:

բերյալ՝ Կ. Կաուցկի. «Էթիկան և պատմության մատերիալիստական ըմբռնումը». ՍՊԲ. 1906 և Կաուցկու մյուս բազմաթիվ յերկերը: Այնուհետև՝ *Boudin*: «Das theoretische System von K. Marx». Stuttg. 1909 (Լ. Բ. Բուդին. «Կ. Մարքսի տեսական սիստեմը նորագույն քննադատության լույսով», թարգմ. անգլերենից Վ. Զասուլիչի խմբագրությամբ: ՍՊԲ. 1908): *Hermann Gorter*: «Der historische Materialismus», 1909[1]: Մարքսիզմի հակառակորդների յերկերից մատնանշենք Տուգան-Բարանովսկու՝ «Մարքսիզմի տեսական հիմունքները». ՍՊԲ. 1907: Ս. Պրոկոպովիչ. «Մարքսի քննադատության շուրջը». ՍՊԲ. 1901: *Hammacher*: «Das philosophisch-oekonomische System des Marxismus» (Lpz. 1910[2], էջ 730—քաղվածքների ժողովածու): Վ. Զոմբարտ. «Սոցիալիզմն ու սոցիալական շարժումը XIX դարում»: ՍՊԲ.: *Max Adler* (կանտական). «Kausalität und Teleologie» (Wien. 1909: «Marx-Studien») և «Marx als Denker»[3]:

Ուշադրության արժանի յե իդեալիստ հեգելական *Giov. Gentile*-յի գիրքը «La philosophia di Marx» Pisa. 1899)[4]:—Հեղինակը նշում է Մարքսի մատերիալիստական դիալեկտիկայի մի քանի կարևոր կողմերը, վորոնք սովորաբար վրիպում են կանտականների, պոզիտիվիստների և նմանների ուշադրությունից, և *Lévy* «Feuerbach»[5]—Մարքսի փիլիսոփայական ամենագլխավոր նախորդներից մեկի մասին: Մարքսի մի շարք աշխատություններից քաղվածքների օգտակար հավաքածու կա Չերնիշեվի մոտ—«Մարքսիստի հուշատետրը». ՍՊԲ. («Дело»), 1908: Մարքսի տնտեսական ուսմունքի հարցի վերաբերյալ՝ Կ. Կաուցկի—«Մարքսի տնտեսական ուսմունքը» (բազմաթիվ ռուս. հրատարակություններ): Նույնի, «Ագրարային հարցը», «Էրֆուրտի ծրագիրը» և բազմաթիվ բրոշյուրները: Հմմտ. նաև Բերնշտայն, «Մարքսի տնտեսական ուսմունքը»: «Կապիտալի» 3-րդ հատորը (ռուս. թարգմ. 1905): Գաբրիել Դևիլ, «Կապիտալ» («Կապիտալի»

1 — Հերման Գորտեր, «Պատմական մատերիալիզմ», 1909: Խմբ.:

2 — Համմախեր. «Մարքսիզմի փիլիսոփայական-տնտեսական սիստեմը» (Լայպցիգ, 1910): Խմբ.:

3 — Մաքս Ադլեր. «Պատճառականություն և տելեոլոգիա» (Վիեննա, 1909: Նյութեր Մարքսի ուսումնասիրության համար) և «Մարքսը վորպես մտածող: Խմբ.:

4.— Ջովաննի Ջենտիլե. «Մարքսի փիլիսոփայությունը» (Պիզա, 1899 թ.): Խմբ.:

5 — Լևի. «Ֆոյերբախ»: Խմբ.:

I հատորի շարադրանքը. ռուսերեն թարգմանություն 1907): Այսպես կոչված ռեվիզիոնիզմի ներկայացուցիչը մարքսիստների մեջ ագրարային հարցի վերաբերյալ հանդիսանում է Է. Դավիդը, «Սոցիալիզմը և գյուղատնտեսությունը» (ռուս. թարգմ. ՍՊԲ. 1902): Ռեվիզիոնիզմի քննադատությունը հմմտ. Վ. Իլյինի մոտ՝ «Ագրարային հարցը», I մաս, ՍՊԲ. 1908: Տե՛ս նաև Վ. Իլյին, «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում»: 2-րդ հրատ. ՍՊԲ. 1908, և Նույնի՝ «Տնտեսագիտական էտյուդներ և հոդվածներ». ՍՊԲ. 1899: Վ. Իլյին, «Նոր տվյալներ կապիտալիզմի զարգացման օրենքների մասին հողագործության մեջ», պրակ I, 1917: Վորոշ շեղումներով Մարքսի հայացքների կիրառումը Ֆրանսիայի ագրարային հարաբերությունների մասին յեղած նորագույն տվյալների վերաբերմամբ տե՛ս *Compère-Morel*-ի մոտ՝ «La question agraire et le socialisme en France». Paris. 1912[1] (455 էջ): Մարքսի տնտեսական հայացքների հետագա զարգացումը տնտեսական կյանքի նորագույն յերևույթների կիրառումով տե՛ս Հիլֆերդինգի մոտ՝ «Ֆինանսական կապիտալ». ՍՊԲ. 1911: (Հեղինակի հայացքների մեջ յեղած էական անճշտությունների ուղղումը արժեքի թեորիայի վերաբերյալ տե՛ս Կաուցկու մոտ «Neue Zeit»-ում—«Gold, Papier und Ware»—«Վոսկին, թուղթ փողը և ապրանքը»—30, I; 1912, S. 837, 886): Վ. Իլյին, «Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն էտապ», 1917 թ.: Էական կետերում մարքսիզմից շեղվում է Պ. Մասլովը՝ «Ագրարային հարցը» (2 հատոր) և «Ժողովրդական տնտեսության զարգացման թեորիան» (ՍՊԲ. 1910 թ.): Այդ շեղումներից մի քանիսի քննադատությունը տե՛ս Կաուցկու մոտ «Neue Zeit»-ում, XXIX, 1, 1911, հոդված՝ «Մալթուսականություն և սոցիալիզմ»:

Մարքսի տնտեսական ուսմունքի քննադատությունը բուրժուական պրոֆեսորների մեջ լայնորեն տարածված «սահմանային օգտակարության» թեորիայի տեսակետից՝ *Böhm-Bawerk*: «Zum Abschluss des Marxschen Systems» (Brl. 1896 «Staatswis. Arbeiten»-ի մեջ, Festgabe für K. Knies[2]). Կա ռուս. թարգմանություն. ՍՊԲ. 1897, «Մարքսի թեորիան և նրա քննադատությունը», և Նույնի «Kapital und Kapitalzins», 2-րդ հրատ. Insbr. 1900—2, 2 հատոր («Կապիտալ և շահույթ». ՍՊԲ. 1909): Այնուհետև՝ տե՛ս *Riekes*:

1 — Կոմպեր-Մորել. «Ագրարային հարցը և սոցիալիզմը Ֆրանսիայում»: Փարիզ, 1912: Խմբ.:

2 — Բյոմ-Բավերկ. «Մարքսի սիստեմի քննադատությունը»: (Բեռլին, 1896. «Պետական գիտությունների ժողովածու»: Նվիրված է Կ. Կնիսին): Խմբ.:

«Wert und Tauschwert» (1899)[1], *v. Bortkiewicz*: «Wertrechnung u. Preisrechnung im Marxschen System» (Archiv f. Sozialw., 1906—7)[2], *Leo v. Buch*: «Über die Elemente d. polit. Oekonomie. Die Intensität d. Arbeit, Wert u. Preis»[3] (Հրատ. նաև ռուսերեն): Բյոմ-Բավերկի քննադատության վերլուծումը մարքսիստական տեսակետից՝ *Hilferding*: «Böhm-Bawerks Marx-Kritik» («Marx-Studien», Bd. I. Wien, 1904)[4] և ավելի մանր հոդվածներ «Neue Zeit»-ում:

Մարքսիզմի մեկնաբանության և զարգացման վերաբերյալ յեղած յերկու գլխավոր ուղղությունների,—«ռեվիզիոնիստական» և ռադիկալ («օրթոդոքսալ») ուղղությունների,—հարցի մասին տե՛ս Եդ. Բերնշտայն, «Սոցիալիզմի նախադրյալները և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները» (գերմ. բնագիրը Stuttg. 1899, ռուս. թարգմ. «Պատմական մատերիալիզմ», ՍՊԲ. 1901: «Սոցիալական պրոբլեմները», Մ. 1901). Հմմտ. նաև նույնի՝ «Ուրվագծեր սոցիալիզմի պատմությունից ու թեորիայից»: ՍՊԲ. 1902: Նրա պատասխանը՝ Կ. Կաուցկի, «Բերնշտայնն ու ս.-դ. ծրագիրը» (գերմ. բնագ. Stuttg. 1899: Ռուս. թարգմ. 4 հրատարակություն 1905—06 թ. թ.): Ֆրանսական մարքսիստական գրականությունից՝ *Jules Guesde*: «Quatre ans de lutte des classes»[5], «En garde»[6], Questions d'aujourd'hui (Paris, 1911)[7], *P. Lafargue*: «Le déterminisme économique de K. Marx» (Paris, 1909)[8]. *Ant. Pannekoek*: «Zwei Tendenzen in der Arbeiter-Bewegung»[9]:

Կապիտալի կուտակման մարքսյան թեորիայի հարցի վերաբերյալ *Rosa Luxemburg*-ի նոր աշխատությունը՝ «Die Akkumulation des Karitals» (Brl. 1913)[10] և Մարքսի թեորիայի նրա սխալ մեկ-

---

1 — Ռիկես. «Արժեք և փոխանակային արժեք» (1899): Խմբ.:

2 — Բորտկեվիչ. «Արժեքի և գների վորոշումը Մարքսի սիստեմում» (Սոցիալական գիտությունների արխիվ: 1906—07): Խմբ.:

3 — Լ. Բուխ. «Քաղաքատնտեսության հիմնական տարրերը: Աշխատանքի ինտենսիվությունը, արժեք և գին»: Խմբ.:

4 — Հիլֆերդինգ. «Բյոմ-Բավերկն իբրև Մարքսի քննադատ»: «Նյութեր Մարքսի ուսումնասիրման համար», հատ. I, Վիեննա, 1904): Խմբ.:

5 — Ժ. Գեդ. «Դասակարգային պայքարի չորս տարի»: Խմբ.:

6 — «Պահակադիրքում»: Խմբ.:

7 — «Ընթացիկ հարցեր»: (Փարիզ, 1911 թիվ): Խմբ.:

8 — Պ. Լաֆարգ. «Կ. Մարքսի տնտեսական դետերմինիզմը»: (Փարիզ, 1909): Խմբ.:

9 — Ա. Պաննեկուկ. «Յերկու տենդենց բանվորական շարժման մեջ»: Խմբ.:

10 — Ռ. Լյուքսեմբուրգ. «Կապիտալի կուտակումը»: (Բեռլին, 1913 թ.): Խմբ.:

նաբանության վերլուծումը *Otto Bauer*-ի մոտ. «Die Akkumulation des Kapitals»[1] («Neue Zeit» 31 հատ., 1913, I, S. S. 831 և 862): *Eckstein* «Vorwärts»-ում և *Pannekoek* «Bremer Bürger-Zeitung»-ում, 1913[2]:

Ռուսական հին գրականությունից Մարքսի մասին. Բ. Զիչերին, «Գերմանական սոցիալիստները» Բեզոբրազովի «Պետական գիտությունների ժողովածվում»: ՍՊԲ. 1888, և «Քաղաքական ուսմունքների պատմություն», 5-րդ մաս. Մ. 1902, եջ 156: Զիբերի պատասխանը. «Գերմանական տնտեսագետները պ. Զիչերինի ակնոցների միջից», «Յերկերի ժողովածու» հ. II. ՍՊԲ. 1900: Լ. Սլոնիմսկի, «Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը». ՍՊԲ. 1898: Ն. Զիբեր, «Դավիդ Ռիկարդոն և Կ. Մարքսը իրենց հասարակական-տնտեսագիտական հետազոտություններում»: ՍՊԲ. 1885, և «Յերկերի ժողովածու», 2 հատոր, ՍՊԲ. 1900: Ի. Կաուֆմանի (Ի. Կ—նի) գրախոսությունը «Կապիտալի» մասին «Вестник Европы»-ի մեջ, 1872, № 5—ուշագրավ է նրանով, վոր Մարքսը «Կապիտալի» 2-րդ հրատարակության վերջաբանում ցիտել է Ի. Կ—նի դատողությունները, ընդունելով, վոր նրանք ճիշտ են շարադրում իր մատերիալիստական-դիալեկտիկական մեթոդը:

Ռուս նարոդնիկները մարքսիզմի մասին: Ն. Կ. Միխայլովսկին «Русское Богатство»-յում 1894, № 10. 1895, №№ 1 և 2, արտատպված է յերկերի ժող.—Պ. Ստրուվեյի «Քննադատական դիտողությունների» առթիվ (ՍՊԲ. 1894), վորոնք վերլուծված են մարքսիստական տեսակետից Կ. Տուլինի (Վ. Իլյինի) կողմից «Նյութեր մեր տնտեսական զարգացման բնութագրության շուրջը» գրքում (ՍՊԲ. 1895, վոչնչացված է գրաքննության կողմից), արտատպված է Վ. Իլյինի մոտ «За 12 лет». ՍՊԲ. 1908: Այնուհետև՝ նարոդնիկական գրականությունից—Վ. Վ., «Մեր ուղղությունները». ՍՊԲ. 1892: Նույնի՝ «70-ական թվականներից դեպի 900-ականները». ՍՊԲ. 1908: Նիկոլայ—ոն, «Ուրվագծեր մեր հետռեֆորմյան հասարակական տնտեսության մասին». ՍՊԲ. 1893: Վ. Չերնով, «Մարքսիզմը և ագրարային հարցը»: ՍՊԲ. 1906: Նույնի, «Փիլիսոփայական և սոցիոլոգիական էտյուդներ»: ՍՊԲ. 1907:

Բացի նարոդնիկներից նշենք դարձյալ՝ Ն. Կարեյեվ, «Հին և նոր էտյուդներ պատմական մատերիալիզմի մասին»: ՍՊԲ. 1896.

---

1 — Օ. Բաուեր. «Կապիտալի կուտակումը»: Խմբ.:

2 — Պաննեկուկ. «Բրեմենի Քաղաքացիական Լրագիր»: Խմբ.:

2–րդ հրատ. 1913 թվին «Տնտեսական մատերիալիզմի քննադատությունը» վերնագրով: Մասարիկ, «Մարքսիզմի փիլիսոփայական և սոցիոլոգիական հիմունքները». Մ. 1900: Կրոչե, «Պատմական մատերիալիզմ և մարքսիստական տնտեսություն»: ՍՊԲ. 1902:

Մարքսի հայացքների ճիշտ գնահատման համար անպայման անհրաժեշտ է ծանոթ լինել նրա մերձավորագույն համախոհ և աշխատակից Ֆրիդրիխ Էնգելսի չերկերի հետ: Չի կարելի մարքսիզմը հասկանալ և այն ամբողջականորեն շարադրել, առանց հաշվի առնելու Էնգելսի բոլոր երկերը:

Մարքսի քննադատությունը անարխիզմի տեսակետից տե՛ս Վ. Չերկեզովի մոտ—«Մարքսիզմի դոկտրինաները»: ՍՊԲ. 1905, 2 մաս: Վ. Տեկեր, «Գրքի տեղ». Մ. 1907: Սինդիկալիստ Սորել, «Արդի տնտեսության սոցիալական ուրվագծեր: Մ. 1908:

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

Какой светильник разума погас,
Какое сердце биться перестало!

Նոր տոմարով 1895 թվականի օգոստոսի 5–ին (հուլիսի 24–ին) Լոնդոնում վախճանվեց Ֆրիդրիխ Էնգելսը: Իր բարեկամ Կարլ Մարքսից հետո (վորը մեռել եր 1883 թվականին) Էնգելսն արդի պրոլետարիատի ամենանշանավոր գիտնականը և ուսուցիչն եր ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Այն ժամանակներից սկսած, յերբ բախտն իրար հանդիպեցրեց Կարլ Մարքսին ու Ֆրիդրիխ Էնգելսին, յերկու բարեկամների կյանքի աշխատանքը նրանց ընդհանուր գործը դարձավ: Այս պատճառով էլ, վորպեսզի հասկանանք, թե ինչ է արել Ֆրիդրիխ Էնգելսը պրոլետարիատի համար, պետք է պարզորոշ յուրացնենք այն, թե արդի բանվորական շարժման զարգացման մեջ ինչ նշանակություն ունի Մարքսի գործունեությունը և ուսմունքը: Առաջինը Մարքսն ու Էնգելսն եյին, վոր ցույց տվին, թե բանվոր դասակարգն իր պահանջներով անհրաժեշտ ծնունդ է արդի տնտեսակարգի, վորը բուրժուազիայի հետ կոդք–կողքի անխուսափելիորեն ստեղծում և կազմակերպում է պրոլետարիատին. Նրանք ցույց տվին, վոր վո՛չ թե առանձին ազնիվ անհատների բարեմիտ փորձերն, այլ կազմակերպված պրոլետարիատի դասակարգային պայքարը կազատի մարդկությանն այն թշվառություններից, վորոնք ճնշում են նրան: Առաջինը Մարքսն ու Էնգելսն եյին, վորոնք իրենց գիտական աշխատությունների մեջ պարզաբանեցին, թե սոցիալիզմը վո՛չ թե յերազողների մտքի հերյուրանքն է, այլ արդի հասարակության արտադրողական ուժերի զարգացման վերջնական նպատակն ու անհրաժեշտ հետևանքը: Գրի առած ամբողջ պատմությունը մինչև այժմ յեղել է դասակարգային պայքարի պատմություն, միքանի հասարակական դասակարգերի՝ մյուսների վրա ունեցած տիրապետության ու տարած հաղթությունների հերթափոխություն: Յեվ այս կշարունակվի մինչև այն ժամանակ, քանի

դեռ չեն չքացել դասակարգային պայքարի ու դասակարգային տիրապետության հիմքերը—մասնավոր սեփականությունն ու հասարակական խառնաշփոթ արտադրությունը: Պրոլետարիատի շահերը պահանջում են վոչնչացնել այս հիմքերը, ուստի և այս հիմքերը խորտակելուն պետք է ուղղված լինի կազմակերպված բանվորների գիտակից դասակարգային պայքարը: Իսկ ամեն մի դասակարգային պայքար քաղաքական պայքար է:

Մարքսի և Էնգելսի այս հայացքները հիմա յուրացրել է իր ազատագրության համար պայքարող ամբողջ պրոլետարիատը, բայց յերբ 40-ական թվականներին յերկու ընկերները մասնակցում եյին իրենց ժամանակվա սոցիալիստական գրականությանն ու հասարակական շարժումներին, այսպիսի հայացքները կատարյալ նորություն եյին: Այն ժամանակ շատ կային տաղանդավոր ու անտաղանդ, պատվավոր ու պատվազուրկ մարդիկ, վորոնք՝ հափշտակվելով քաղաքական ազատության համար մղվող պայքարով, թագավորների, վոստիկանության ու տերտերների դեմ մղվող պայքարով, չեյին տեսնում բուրժուազիայի ու պրոլետարիատի շահերի հակադրությունը: Այս մարդիկ անընդունելի եյին համարում նույնիսկ այն միտքը, վոր բանվորները հանդես գային իբրև հասարակական ինքնուրույն ուժ: Մյուս կողմից, կային բազմաթիվ, յերբեմն նույնիսկ հանճարեղ յերազողներ, վորոնք մտածում եյին, թե հարկավոր է միմիայն համոզել կառավարողներին ու իշխող դասակարգերին, վոր արդի հասարակակարգն անարդար հասարակակարգ է, և այն ժամանակ հեշտ կլինի աշխարհիս յերեսին խաղաղություն ու ընդհանրական բարօրություն հաստատել: Նրանք յերազում եյին այնպիսի սոցիալիզմի մասին, վոր գալու յեր առանց պայքարի: Վերջապես, այն ժամանակվա համարյա բոլոր սոցիալիստներն ու ընդհանրապես բանվոր դասակարգի բարեկամները պրոլետարիատին համարում եյին մի խոց միայն, սարսափով նկատում եյին նրանք, թե ինչպես արդյունաբերության հետ աճում է այս խոցն էլ: Այս պատճառով նրանք բոլորը մտածում եյին այն մասին, թե ինչպես դադարեցնեն արդյունաբերության և պրոլետարիատի զարգացումը, կանգնեցնեն «պատմության անիվը»: Հակառակ այն ընդհանուր վախին, վոր տածում եյին ուրիշները պրոլետարիատի զարգացման նկատմամբ, Մարքսն ու Էնգելսն իրենց բոլոր հույսերը դնում եյին պրոլետարիատի անընդհատ աճման վրա: Վորքան ավելի բազմաթիվ են պրոլետարները, այնքան ավելի մեծ է նրանց

ուժն իբրև հեղափոխական դասակարգի, այնքան մոտ ու ավելի հնարավոր է սոցիալիզմը: Մարքսի ու Էնգելսի՝ բանվոր դասակարգին մատուցած ծառայությունները միքանի բառով կարելի յե այսպես արտահայտել. նրանք բանվոր դասակարգին սովորեցրին ինքնաճանաչողություն ու ինքնագիտակցություն, և յերազանքների տեղը գիտությունը դրին:

Ահա թե ինչու Էնգելսի անունն ու կյանքը պետք է ծանոթ լինեն յուրաքանչյուր բանվորի, ահա թե ինչու մեր ժողովածուի մեջ, վորի նպատակը, ինչպես և մեր բոլոր հրատարակությունների նպատակն է՝ դասակարգային ինքնագիտակցություն զարթեցնել ռուսական բանվորների մեջ,—մենք պետք է տանք արդի պրոլետարիատի յերկու մեծ ուսուցիչներից մեկի—Ֆրիդրիխ Էնգելսի կյանքի ու գործունեյության ուրվագիծը:

Էնգելսը ծնվել է 1820 թվականին Բարմեն քաղաքում, պրուսական թագավորության Հռենոսի պրովինցիայում: Նրա հայրը ֆաբրիկանտ եր: 1838 թվականին Էնգելսն ընտանեկան հանգամանքների պատճառով ստիպված յեղավ առանց գիմնազիան ավարտելու գործակատար մտնել Բրեմենի մի առևտրական տան մեջ: Վաճառականական գործով ունեցած զբաղմունքներն արգելք չեղան Էնգելսին՝ աշխատելու իր գիտական ու քաղաքական կրթության վրա: Դեռևս գիմնազիստ յեղած պահին նա ատել եր ինքնակալությունն ու աստիճանավորների կամայականությունը: Փիլիսոփայությամբ զբաղվելը նրան ե՛լ ավելի առաջ մղեց: Այն ժամանակ գերմանական փիլիսոփայության մեջ տիրապետում եր Հեգելի ուսմունքը, և Էնգելսը նրա հետևորդը դարձավ: Թեև ինքը Հեգելը յերկրպագու յեր պրուսական ինքնակալական պետության, վորի ծառայության մեջ եր նա իբրև Բեռլինի համալսարանի պրոֆեսոր,—Հեգելի ուսմունքը հեղափոխական ուսմունք եր: Այն հավատը, վոր Հեգելը տածում եր մարդկային բանականության ու նրա իրավունքների նկատմամբ, և հեգելյան փիլիսոփայության այն հիմնական դրույթը, թե տիեզերքում փոփոխման ու զարգացման մշտական պրոցես է կատարվում, Բեռլինի փիլիսոփայի աշակերտներից նրանց, ովքեր չեյին ուզում հաշտվել իրականության հետ, բերում, հասցնում եյին այն մտքին, թե իրականության դեմ մղվող պայքարը, գոյություն ունեցող անարդարության ու թագավորող չարիքի դեմ մղվող պայքարը հիմնվում է մշտնջենական զարգացման տիեզերական որենքի վրա: Ցեթե ամեն ինչ զարգանում է, յեթե հիմնարկներից միքանի-

սին փոխարինելու չեն գալիս ուրիշները, ապա ինչո՞ւ պետք է մշտնջենապես հարատևեն պրուսական թագավորի կամ ռուսաց ցարի ինքնակալությունը, չնչին փոքրամասնության հարստացումն ի հաշիվ վիթխարի մեծամասնության, բուրժուազիայի տիրապետությունը ժողովրդի գլխին: Հեգելի փիլիսոփայությունը խոսում եր ոգու և գաղափարների զարգացման մասին, այս փիլիսոփայությունն իդեալիստական եր: Ոգու զարգացումից այս փիլիսոփայությունը բխեցնում եր բնության, մարդու և մարդկային, հասարակական հարաբերությունների զարգացումը: Մարքսն ու Ենգելսը պահելով Հեգելի այն միտքը, թե գոյություն ունի զարգացման հավիտենական պրոցես[1], գեն նետեցին կանխակալ իդեալիստական հայացքը. դիմելով կյանքին՝ նրանք տեսան, վոր վո՛չ թե ոգու զարգացումն է բացատրում բնության զարգացումը, այլ ընդհակառակը, ոգին պետք է բացատրել, բխեցնել բնությունից, մատերիայից... Հեգելի ու մյուս հեգելյանների հակառակ՝ Մարքսն ու Ենգելսը մատերիալիստ եյին: Մատերիալիստորեն նայելով տիեզերքին ու մարդկությանը՝ նրանք տեսնում եյին, վոր ինչպես բնության բոլոր յերևույթների հիմքում մատերիալ պատճառներ են հանգչում, այնպես էլ մարդկային հասարակության զարգացման պատճառը մատերիալ, արտադրողական ուժերի զարգացումն է: Արտադրողական ուժերի զարգացումից են կախված այն հարաբերությունները, վորոնց մեջ մտնում են մարդիկ իրար նկատմամբ՝ մարդկային պահանջները բավարարելու համար անհրաժեշտ առարկաների արտադրության ժամանակ: Յեվ այս հարաբերությունների մեջ է հասարակական կյանքի բոլոր յերևույթների, մարդկային ձգտումների, գաղափարների ու օրենքների բացատրությունը: Արտադրողական ուժերի զարգացումն ստեղծում է հասարակական այնպիսի հարաբերություններ, վորոնք խարսխվում են մասնավոր սեփականության վրա, բայց մենք հիմա տեսնում ենք, թե ինչպես արտադրողական ուժերի միևնույն զարգացումը խլում է մեծամասնությունից սեփականությունը և այս կենտրոնացնում չնչին փոքրամասնության ձեռքում: Այս զարգացումը վոչնչացնում է սեփա-

1 Մարքսն ու Ենգելսը բազմաթիվ անգամ եյին մատնանշում, վոր նրանք իրենց մտավոր զարգացման մեջ շատ բանով են պարտական գերմանական մեծ փիլիսոփաներին ու մասնավորապես Հեգելին: «Յեթե չլիներ գերմանական փիլիսոփայությունը,—ասում է Ենգելսը,—գիտական սոցիալիզմն էլ չեր լինի»: Ծանոթագրություն Լենինի:

կանությունը, արդի հասարակակարգի հիմքը. այս զարգացումն ինքը ձգտում է հենց այն նպատակին, վոր իրենց առաջ դրել են սոցիալիստները: Սոցիալիստներին հարկավոր է միմիայն մեկ բան—հասկանալ, թե վո՛ր հասարակական ուժն է, վոր արդի հասարակության մեջ ունեցած իր դրությամբ շահագրգռված է սոցիալիզմի իրականացմամբ, և այս ուժին հաղորդել իր շահերի ու պատմական խնդրի գիտակցությունը: Այսպիսի ուժը պրոլետարիատն է: Նրա հետ Ենգելսը ծանոթացավ Անգլիայում, անգլիական արդյունաբերության կենտրոնում, Մանչեստրում, ուր նա տեղափոխվել եր 1842 թվականին՝ ծառայության մտնելով մի առևտրական տան մեջ, վորի բաժնետերերից մեկը նրա հայրն եր: Այստեղ Ենգելսը միայն ֆաբրիկայի գրասենյակում չեր նստում,—նա շրջում եր կեղտոտ թաղերում, վորտեղ ծվարած եյին բանվորները. նա իր աչքերով տեսնում եր նրանց աղքատությունն ու թշվառությունները: Բայց նա չեր գոհանում անձնական դիտողություններով. նա կարդաց այն ամենը, ինչ վոր նրանից առաջ գտնված եր անգլիական բանվոր դասակարգի դրության մասին. նա ջանադիր ուսումնասիրեց այն բոլոր պաշտոնական վավերագրերը, վոր մատչելի եյին նրան: Այս ուսումնասիրությունների և դիտողությունների պտուղը յեղավ «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում»[1] գիրքը, վոր լույս տեսավ 1845 թվականին: Մենք վերևում արդեն հիշատակեցինք, թե վո՛րն է Ենգելսի յերախտիքը, իբրև «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքի հեղինակի: Ենգելսից առաջ էլ շատ-շատերը նկարագրել եյին պրոլետարիատի տանջանքները և մատնացույց եյին արել նրան օգնելու անհրաժեշտության վրա: Առաջինն Ենգելսն եր, վոր ասաց, թե պրոլետարիատը տառապող դասակարգ չէ միայն, և թե հենց այն տնտեսական անարգ դրությունը, վորի մեջ գտնվում է պրոլետարիատը, սրան անզսպելի թափով առաջ է մղում և հարկադրում է պայքարելու իր վերջնական ազատագրության համար: Իսկ կռվող պրոլետարիատն ինքը կօգնի իրեն: Բանվոր դասակարգի քաղաքական շարժումը բանվորներին անխուսափելիորեն կբերի այն գիտակցության, թե նրանց համար սոցիալիզմից դուրս յելք չկա: Մյուս կողմից, սոցիալիզմը միայն այն ժամանակ ուժ կլինի, յերբ կդառնա բանվոր դասակարգի քաղաքական պայքարի նպատակ: Ահա Ենգելսի՝ Անգլիայի բանվոր դասակարգի դրությանը նվիրած գրքի հիմ-

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հ. III, էջ 293—573:—Խմբ.:

նական մտքերը, մտքեր, վոր հիմա յուրացրել ե ամբողջ մտածող ու մարտնչող պրոլետարիատը, բայց վորոնք բոլորովին նոր մտքեր եյին այն ժամանակ։ Այս մտքերը շարադրված եյին մի գրքում, վոր գրված եր հափշտակիչ վոճով և լի յեր անգլիական պրոլետարիատի թշվառությունների ամենից սոսկալի ու ցնցող պատկերներով։ Այս գիրքը սարսափելի մեղադրանք եր կապիտալիզմի ու բուրժուազիայի հասցեյին։ Նրա թողած տպավորությունը շատ մեծ եր։ Ամենուրեք սկսեցին Ենգելսի գիրքը վկայակոչել իբրև արդի պրոլետարիատի դրության լավագույն պատկեր։ Յեվ իրոք, վո՛չ 1845 թվականից առաջ, վո՛չ ել ավելի հետո յերևան չի յեկել բանվոր դասակարգի թշվառությունների այդքան վառ ու ճշմարիտ նկարագրություն։

Ենգելսը սոցիալիստ դարձավ Անգլիայում միայն։ Մանչեստրում նա կապեր հաստատեց այն ժամանակվա անգլիական բանվորական շարժման գործիչների հետ և սկսեց գրել անգլիական սոցիալիստական հրատարակություններում։ 1844 թվականին, Գերմանիա վերադառնալիս, նա ճանապարհին Փարիզում ծանոթացավ Մարքսի հետ, վորի հետ առաջուց արդեն նամակագրություն եր հաստատել։ Մարքսը Փարիզում ֆրանսական սոցիալիստների ու ֆրանսական կյանքի ազդեցության տակ նույնպես սոցիալիստ եր դարձել։ Այստեղ ընկերները միասին գրեցին «Սուրբ ընտանիք կամ քննադատական քննադատության քննադատություն» գիրքը։ Այս գրքում, վորը լույս ե տեսել «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքից մի տարի առաջ և վորը մեծ մասամբ Մարքսի գրածն ե, դրված են այն հեղափոխական-մատերիալիստական սոցիալիզմի հիմքերը, վորի գլխավոր մտքերը մենք շարադրեցինք վերևում։ «Սուրբ ընտանիք»—փիլիսոփա Բաուեր յեղբայրների ու նրանց հետևորդների ծաղրական կոչումն ե։ Այս պարոնները քարոզում եյին մի քննադատություն, վորը բարձր ե կանգնած ամեն մի իրականությունից, բարձր ե կանգնած կուսակցություններից ու քաղաքականությունից, ժխտում ե ամեն մի պրակտիկ գործունեություն և լոկ «քննադատորեն» մտահայում ե շրջապատող աշխարհն ու նրանում կատարվող դեպքերը։ Պարոնայք Բաուերները բարձրից եյին դատում պրոլետարիատի, իբրև վոչ-քննադատական մասսայի մասին։ Այս անհեթեթ ու վնասակար ուղղության դեմ վճռականորեն ծառացան Մարքսն ու Ենգելսը։ Հանուն իրական մարդկային անհատականության—հանուն բանվորի, վորին տրորում են տիրող դասակարգերն ու պե-

տությունը,—նրանք պահանջում են վո՛չ թե մտահայեցողություն, այլ պայքար հասարակության լավագույն կազմակերպության համար։ Նրանք, իհարկե, պրոլետարիատի մեջ են տեսնում այն ուժը, վորը կարող ե այսպիսի պայքար մղել և շահագրգռված ե այս պայքարով։ Ենգելսը դեռևս «Սուրբ ընտանիքից» ել առաջ Մարքսի ու Ռուգեյի՝ «Գերման-ֆրանսական ժուռնալում» տպագրել եր իր «Քննադատական ուրվագծերը քաղաքատնտեսության վերաբերյալ», վորոնցում նա սոցիալիզմի տեսակետից ե քննել արդի տնտեսակարգի հիմնական յերևույթները, իբրև մասնավոր սեփականության տիրապետության անհրաժեշտ հետևանքներ։ Ենգելսի հետ ունեցած շփումն անվիճելիորեն նպաստեց այն բանին, վոր Մարքսը վճռեց զբաղվել քաղաքատնտեսությամբ, այն գիտությամբ, վորի մեջ մի ամբողջ հեղաշրջում առաջ բերին նրա աշխատությունները։

1845-ից մինչև 1847 թվականը յեղած ժամանակն Ենգելսն անցկացրեց Բրյուսելում ու Փարիզում՝ գիտական զբաղմունքները միացնելով Բրյուսելի ու Փարիզի գերմանական բանվորների շրջանում կատարած պրակտիկ գործունեության հետ։ Այստեղ Ենգելսն ու Մարքսը հարաբերություններ հաստատեցին գերմանական «Կոմունիստների միության» հետ, վորը գաղտնի միություն եր և վորը նրանց հանձնարարեց շարադրել իրենց մշակած սոցիալիզմի հիմնական սկզբունքները։ Այսպես առաջ յեկավ Մարքսի ու Ենգելսի հռչակավոր «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», վոր տպագրվեց 1848 թվականին։ Այս փոքրիկ գրքույկն արժե ամբողջ հատորներ. նրա վոգով ե ապրում և շարժվում մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ կազմակերպված ու մարտնչող պրոլետարիատը։

1848 թվականի հեղափոխությունը, վոր բռնկվեց նախ Ֆրանսիայում ու հետո տարածվեց Արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրներում ել, Մարքսին ու Ենգելսին հայրենիք բերեց։ Այստեղ, Հռենոսյան Պրուսիայում նրանք դեմոկրատական «Նոր Հռենոսյան Լրագիր»[1] գլուխ կանգնեցին, վորը հրատարակվում եր Քյոլնում։ Յերկու ընկերները Հռենոսյան Պրուսիայում բոլոր հեղափոխական-դեմոկրատական ձգտումների հոգին եյին։ Մինչև վերջին

1 «Նոր Հռենոսյան Լրագիր» («Neue Rheinische Zeitung»)—հրատարակվում եր 1848 թ. հունիսի 1-ից մինչև 1849 թ. մայիսի 19-ը Քյոլնում՝ Կ. Մարքսի և Ֆ. Ենգելսի գլխավորած կոմունիստների խմբակի կողմից։ Խմբ.։

հնարավորությունը նրանք պաշտպանում եյին ժողովրդի ու ազատության շահերը հետադիմական ուժերից: Վերջիններս, ինչպես հայտնի յե, հաղթեցին: «Նոր Հռենոսյան Լրագիրն» արգելվեց. Մարքսը, վոր իր եմիգրանտական կյանքի ընթացքում կորցրել եր պրուսահպատակի իրավունքները, վտարվեց, իսկ Ենգելսը մասնակցեց ժողովրդական զինված ապստամբությանը, յերեք ճակատամարտում կռվեց ազատության համար և ապստամբների պարտությունից հետո Շվեյցարիայի վրայով փախավ Լոնդոն:

Հենց այստեղ հաստատվեց նաև Մարքսը: Ենգելսը շուտով նորից դարձավ գործակատար, իսկ հետո ել բաժնետեր Մանչեստրում, այն առևտրական տան մեջ, վորտեղ նա ծառայել եր 40-ական թ. թ.: Մինչև 1870 թվականը նա ապրում եր Մանչեստրում, իսկ Մարքսը՝ Լոնդոնում, մի հանգամանք, վոր նրանց չեր խանգարում ամենակենդանի հոգևոր կապ ունենալ իրար հետ. նրանք գրեթե ամեն որ նամակներ եյին գրում իրար: Այս նամակագրության մեջ ընկերներն իրենց հայացքներն ու գիտելիքներն եյին փոխանակում մեկ-մեկու հետ և շարունակում եյին գիտական սոցիալիզմը միասին մշակել: 1870 թ. Ենգելսը տեղափոխվեց Լոնդոն, և մինչև 1883 թ., մինչև Մարքսի մահվան տարին, շարունակվել ե նրանց միասին հոգևոր կյանքը, վոր լի յեր լարված աշխատանքով: Սրա պտուղները յեղան—Մարքսի կողմից՝ «Կապիտալը», մեր դարի մեծագույն քաղաքատնտեսական ստեղծագործությունը, Ենգելսի կողմից՝ մի ամբողջ շարք խոշոր ու մանր յերկեր: Մարքսն աշխատում եր կապիտալիստական տնտեսության բարդ յերևույթների քննության վրա: Ենգելսը շատ մատչելի գրված, հաճախ բանավիճային աշխատությունների մեջ լուսաբանում եր ամենից ընդհանուր գիտական հարցերը և անցյալի ու ներկայի զանազան յերևույթները՝ պատմության մատերիալիստական ըմբռնման ու Մարքսի տնտեսագիտական թեորիայի վոգով: Ենգելսի այս աշխատություններից անուն-անուն ասենք.—Դյուրինգի դեմ ուղղված բանավիճային յերկը (սրա մեջ քննված են մեծագույն հարցերը փիլիսոփայության, բնագիտության ու հասարակական գիտությունների ասպարեզից)[1]: «Ընտանիքի, սեփականության և պետության ծագումը»

1 Այս մի զարմանալիորեն բովանդակալի և ուսանելի գիրք ե: Սրանից, դժբախտաբար, ռուսերեն թարգմանված ե մի փոքրիկ մասը միայն, վոր պարունակում ե սոցիալիզմի զարգացման պատմական ուրվագիծը («Развитие научного социализма», «Գիտական սոցիալիզմի զարգացումը», 2-րդ հրատ.,

(թարգմանված ե ռուսերեն, հրատարակված ե Ս.-Պետերբուրգում, 3-րդ հրատ., 1895), «Լուդվիգ Ֆոյերբախ» (Գ. Պլեխանովի ռուսերեն թարգմանությունը՝ ծանոթագրություններով, Ժնև, 1892), հոդված ռուսական կառավարության արտաքին քաղաքականության մասին (ռուսերեն թարգմանված ե Ժնևի «Социал-демократ»-ի մեջ, № 1 ու 2), յերևելի հոդվածները բնակարանային հարցի մասին, վերջապես, յերկու փոքր, բայց շատ արժեքավոր հոդված Ռուսաստանի տնտեսական զարգացման մասին («Ֆրիդրիխ Ենգելսը Ռուսաստանի մասին», ռուսերեն թարգմանել ե Վ. Ի. Զասուլիչը, Ժնև, 1894): Մարքսը մեռավ՝ չկարողանալով վերջնականորեն մշակել իր վիթխարի աշխատությունը կապիտալի մասին: Սակայն այս աշխատությունը սևագիր վիճակում արդեն պատրաստ եր, և ահա Ենգելսն իր ընկերոջ մահվանից հետո ձեռք զարկեց «Կապիտալի» II ու III հատորները մշակելու և հրատարակելու ծանր աշխատանքին: 1885 թ. նա հրատարակեց II հատորը, 1894 թ.՝ III-ը (IV հատորը նա ժամանակ չունեցավ մշակելու): Այս յերկու հատորն իրենց վրա թափելիք շատ մեծ աշխատանք եյին պահանջում: Ավստրիական սոցիալ-դեմոկրատ Ադլերը ճիշտ ե նկատել, վոր «Կապիտալի» II ու III հատորների հրատարակությամբ Ենգելսն իր հանճարեղ ընկերոջը մեծակերտ արձան ե կանգնեցրել, վորի վրա ակամայից քանդակել ե իր սեփական անունն անջնջելի գծերով: Իսկապես «Կապիտալի» այս յերկու հատորը յերկուսի—Մարքսի ու Ենգելսի—աշխատությունն ե: Հնագույն ավանդությունները պատմում են բարեկամության զանազան սրտաշարժ որինակների մասին: Յեվրոպական պրոլետարիատը կարող ե ասել, վոր նրա գիտությունն ստեղծել են յերկու գիտնականներ ու մարտիկներ, վորոնց հարաբերությունները գերազանցում են հնադարյան մարդկանց բոլոր ամենասրտաշարժ զրույցներից, վոր պատմում են մարդկային բարեկամության մասին: Ենգելսը միշտ,—և, ընդհանուր առմամբ, միանգամայն իրավացի,—իրեն դնում եր Մարքսից հետո: «Մարքսի ժամանակ,—գրում ե նա մի հին ընկերոջ,—յես յերկրորդ ջութակն եյի նվագում»: Նրա սերը դեպի

Ժնև 1892 թ.): Ծանոթագրություն Լենինի: («Անտի-Դյուրինգ» ռուսերեն լրիվ թարգմանությունը լույս ե տեսել 1904 թ.: Հետագայում գիրքը վերահրատարակվել ե մի քանի անգամ: Տե՛ս առանձին հրատարակությունները, ինչպես նաև Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հ. XIV, եջ 1—388:—Խմբ.):

կենդանի Մարքսը և ջերմեռանդ գուրգուրանքը մեռածի հիշատակի հանդեպ անսահման եյին: Այս մռայլադեմ մարտիկն ու խստապահանջ մտածողը խորապես սիրող հոգի ուներ:

1848—49 թ. թ. շարժումից հետո Մարքսն ու Ենգելսն աքսորում միմիայն գիտությամբ չեյին պարապում: Մարքսը 1864 թվին ստեղծեց «Բանվորների Միջազգային Ընկերությունը» և մի ամբողջ տասնամյակ ղեկավարում եր այս ընկերությունը: Նրա գործերում կենդանի մասնակցություն եր ունենում նաև Ենգելսը: Մարքսի մտքի համաձայն՝ բոլոր յերկրների պրոլետարներին միացնող «Միջազգային Ընկերության» գործունեյությունը վիթխարի նշանակություն ունեցավ բանվորական շարժման զարգացման մեջ: Բայց «Միջազգային Ընկերության»՝ 70-ական թվականներին տեղի ունեցած փակումով ել չընդհատվեց Մարքսի ու Ենգելսի միավորիչ դերը: Ընդհակառակը, կարելի յե ասել, վոր նրանց՝ իբրև բանվորական շարժման հոգևոր ղեկավարների՝ դերը շարունակ աճում եր, վորովհետև անընդհատ աճում եր բուն իսկ շարժումն ել: Մարքսի մահվանից հետո Ենգելսը միայնակ եր շարունակում յեվրոպական սոցիալիստների խորհրդատուն ու ղեկավարը լինել: Խորհուրդներ ու ցուցումներ ստանալու նպատակով հավասարապես նրան եյին դիմում թե՛ գերմանական սոցիալիստները, վորոնց ուժն արագ ու անընդհատ մեծանում եր, չնայած կառավարական հալածանքներին, թե՛ հետամնաց յերկրների ներկայացուցիչները—որինակ իսպանացիները, ռումինացիները, ռուսները, վորոնք հարկ եյին ունենում խորհելու և կշռադատելու իրենց անդրանիկ քայլերը: Նրանք բոլորը ծերունի Ենգելսի գիտելիքների ու փորձի հարուստ գանձարանից առատորեն վերցնում եյին, ինչ վոր պետք եր իրենց:

Մարքսն ու Ենգելսը, վորոնք յերկուսով ել գիտեյին ռուսերեն և կարդում եյին ռուսական գրքեր, խիստ հետաքրքրվում եյին Ռուսաստանով, համակրությամբ հետևում եյին ռուսական հեղափոխական շարժմանը և հարաբերություններ ունեյին ռուսական հեղափոխականների հետ: Նրանք յերկուսն ել սոցիալիստ եյին դարձել դեմոկրատ լինելուց հետո, և նրանց մեջ անչափ զորեղ եր քաղաքական կամայականության նկատմամբ ատելության դեմոկրատական զգացմունքը: Այս անմիջական քաղաքական զգացմունքը և քաղաքական կամայականության ու տնտեսական հարստահարման կապի թեորիական խոր ըմբռնումը,

այլև կյանքի հարուստ փորձը Մարքսին ու Ենգելսին հատկապես հենց քաղաքական տեսակետից անչափ զգայուն եյին դարձրել: Այս պատճառով ել ռուսական հեղափոխականների փոքրաքանակ խմբակի հերոսական կռիվն ընդդեմ ցարական հզոր կառավարության՝ ամենահամակրական արձագանք եր գտնում այս փորձված ու կոփված հեղափոխականների հոգու մեջ: Ընդհակառակը, կարծեցյալ տնտեսական օգուտներ ստանալու համար արված այն նկրտումները, վորոնց նպատակն եր յերես շուռ տալ ռուսական սոցիալիստների ամենաանմիջական ու կարևոր խնդրից—քաղաքական ազատություն նվաճելուց—բնականաբար կասկածելի եյին յերևում նրանց աչքին և մինչև անգամ ուղղակի դավաճանություն համարվում սոցիալիստական շարժման մեծ գործի նկատմամբ: «Պրոլետարիատի ազատագրությունը պետք ե նրա սեփական գործը լինի»,—ահա թե մշտապես ինչ եյին սովորեցնում Մարքսն ու Ենգելսը: Իսկ իր տնտեսական ազատագրության համար պայքարելու նպատակով պրոլետարիատը պետք ե վորոշ քաղաքական իրավունքներ նվաճի իր համար: Բացի սրանից, թե՛ Մարքսն և թե՛ Ենգելսը պարզորոշ տեսնում եյին, վոր Ռուսաստանում լինելիք քաղաքական հեղափոխությունը վիթխարի նշանակություն ե ունենալու Արևմտյան Յեվրոպայի բանվորական շարժման համար ել: Ինքնակալական Ռուսաստանը միշտ ել յեղել ե ամբողջ յեվրոպական ռեակցիայի հենարանը: Այն արտասովոր բարենպաստ միջազգային դրությունը, վորի մեջ դրեց Ռուսաստանին 1870 թվականի պատերազմը, վորը յերկարատև պառակտում առաջացրեց Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև,—իհարկե, միայն մեծացրեց ինքնակալական Ռուսաստանի նշանակությունն, իբրև հետադիմական մի ուժի: Միմիայն ազատ Ռուսաստանը, վոր վո՛չ կարիք ունի լեհերին, ֆիններին, գերմանացիներին, հայերին ու մյուս մանր ժողովուրդներին ճնշելու և վո՛չ ել Ֆրանսիային ու Գերմանիային մշտապես իրար դեմ սրելու,—հնարավորություն կտա արդի Յեվրոպային ազատ շունչ քաշելու ռազմական ծանրաբեռնումներից, կթուլացնի Յեվրոպայի բոլոր հետադիմական տարրերին և կմեծացնի յեվրոպական բանվոր դասակարգի ուժը: Ահա թե ինչու Ենգելսն Արևմուտքի բանվորական շարժման հաջողությունների համար ել ջերմագին ցանկանում եր, վոր Ռուսաստանում քաղաքական ազատություն հաստատվի: Ռուսական հեղափոխականները հանձին նրա կորցրին իրենց լավագույն բարեկամին:

Հավերժ հիշատա՛կ Ֆրիդրիխ Էնգելսին, պրոլետարիատի մեծ մարտիկին և ուսուցչին:

Գրված է 1895 թ. աշնանը:
Տպագրված է «Работник» ժողովածուի մեջ, 1896 թ. № 1—2.
Առանց հեղինակի ստորագրության:
Երկեր, հ. 1, էջ 409—416:

ՄԱՐՔՍՆ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ «ՉՅՈՐՆԻ ՊԵՐԵԴԵԼԻ» ՄԱՍԻՆ

«Вперед»-ի[1] № 12-ում *հիշված էր Մարքսի ելույթն ագրարային հարցի շուրջը Կրիգեի դեմ: Այդ եղել է ո՛չ թե* 1848 *թվին, ինչպես սխալմամբ ասված է* ТОВ.—Ъ-*ի հոդվածում, այլ* 1846 *թվին: Մարքսի աշխատակիցը, Հերման Կրիգեն, որ այն ժամանակ դեռ շատ երիտասարդ մարդ էր,* 1845 *թ. տեղափոխվեց Ամերիկա և այնտեղ հիմնեց* «Volkstribun» (*«Ժողովրդական տրիբուն») ժուռնալը՝ կոմունիզմի պրոպագանդայի համար: Սակայն նա այդ պրոպագանդան այնպես մղեց, որ Մարքսն ստիպված եղավ գերմանական կոմունիստների անունից վճռականորեն ծառանալ Հերման Կրիգեի կողմից կոմունիստական կուսակցությունը վարկաբեկելու դեմ: Կրիգեի ուղղության քննադատականը, տպված* 1846 *թ.* «Westfälsches Dampfboot»-*ում*[2] *և արտատպված Մարքսի երկերի մերինգյան հրատարակության* II *հատորում, ժամանակակից ռուսական սոցիալ-դեմոկրատների համար հսկայական հետաքրքրություն ունի:*

Բանն այն է, որ ագրարային հարցը հենց ամերիկական սոցիալական շարժման շնորհիվ նույնպես առաջին տեղերից մեկն էր գրավել այն ժամանակ, ինչպես ներկայումս Ռուսաստանում, ընդ որում խոսքը վերաբերում էր ո՛չ թե զարգացած կապիտալիստական հասարակությանը, այլ կապիտալիզմի իսկական զարգացման համար սկզբնական, հիմնական պայմաններ ստեղծելուն: Այս վերջին հանգամանքն առանձնապես կարևոր է Մարքսի դեպի «չյորնի պերեդելի» ամերիկական գաղափարներն ունեցած վերաբերմունքի և ռուսական սոցիալ-դեմոկրատների՝ դեպի ժամանակակից գյուղացիական շարժումն[3] *ունեցած վերաբերմունքի միջև զուգահեռ անցկացնելու համար:*

1 *Տե՛ս Երկ.,* հ. VII, էջ 173: Խմբ.:

2 *«Վեստֆալյան Շոգենավ», միամսյա ժուռնալ, որ այն ժամանակ լույս էր տեսնում Գերմանիայում:* Խմբ.:

3 *Խոսքը վերաբերում է Ռուսաստանի գյուղացիական շարժմանը՝* 1905 *թվի հեղափոխության շրջանում:* Խմբ.:

Կրիգեն իր ժուռնալում վոչ մի նյութ չի տվել ամերիկյան հասարակակարգի կոնկրետ սոցիալական առանձնահատկությունները ուսումնասիրելու, ագրարային ռեֆորմատորների այն ժամանակվա շարժման իսկական բնույթը պարզելու համար, վորոնք ձգտում էին ռենտան վոչնչացնելու: Փոխարենը Կրիգեն (ճիշտ ինչպես մեր «սոցիալիստ-հեղափոխականները») ագրարային հեղափոխության հարցն սքողում էր փարթամ, բազմախոստում ֆրազներով: «Յուրաքանչյուր չքավոր,—գրում էր Կրիգեն,— իսկույն ևեթ փոխարկվում է մարդկային հասարակության օգտակար անդամի, յերբ նրա համար արտադրողական աշխատանքի հնարավորություն են ապահովում: Այդպիսի հնարավորություն նրա համար ընդմիշտ ապահովված կլինի, յեթե հասարակությունը նրան մի կտոր հող տա, վորի վրա նա կարողանա կերակրել իրեն ու իր ընտանիքին: Յեթե այս հսկա հողային մակարդակը (հենց հյուսիս-ամերիկյան պետական հողերի 1.400 միլիոն ակրը) վերցվի առևտրային շրջանառությունից և սահմանափակ քանակներով ապահովվի աշխատանքի համար[1], այն ժամանակ չքավորությանն Ամերիկայում մի հարվածով վերջ կտրվի»...

Մարքսը դրան առարկում է. «Կարելի յեր սպասել այն բանի ըմբռնումը, թե օրենսդիրների իշխանության տակ չէ դեկրետներով կանգնեցնել Կրիգեյի համար ցանկալի նահապետական կարգերի զարգացումը դեպի ինդուստրիալը կամ արևելյան ափի արդյունաբերական և առևտրային շտատները նետել հետ, դեպի նահապետական բարբարոսություն»:

Ուրեմն, մեր առաջն է ամերիկական չյորնի պերեդելի իսկական պլանը՝ բացառել հողի մասսան առևտրային շրջանառությունից, հողի վրա ունեցած իրավունքը, սահմանափակել հողատիրությունը կամ հողօգտագործումը: Յեվ Մարքսը հենց սկզբից հանդես է գալիս ուտոպիզմի զգաստ քննադատությամբ, մատնանշում է նահապետական կարգերի ինդուստրիալ դառնալու անխուսափելիությունը, այսինքն՝ կապիտալիզմի զարգացման անխուսափելիությունը, յեթե խոսենք ժամանակակից լեզվով: Բայց մեծ սխալ կլիներ կարծել, թե շարժման մասնակիցների ուտոպիական ցնորքներն են ստիպում Մարքսին բացասաբար վերաբերվել հենց շարժմանն ընդհանրապես: Այդպիսի բան չկա: Դեռ այն ժամանակ, իր գրական ասպարեզի հենց սկզբում, Մարքսը կարողանում էր զատել շարժման ռեալ առաջադիմական բովանդակությունը նրա իդեոլոգիական խարուսիկ զգեստավորումից: Իր քննադատության յերկրորդ մասում, վոր վերնագրված է ««Ժողովրդական տրիբունի» տնտեսագիտությունը (այսինքն քաղաքատնտեսությունը) և նրա վերաբերմունքը յերիտասարդ Ամերիկային», Մարքսը գրում էր.

«Մենք լիովին ընդունում ենք ամերիկյան նացիոնալ-ռեֆորմիստների շարժումը, նրա պատմական իրավաչափությամբ: Մենք գիտենք, վոր այդ շարժումը ձգտում է հասնել այնպիսի հետևանքի, վորը, ճիշտ է, ներկա րոպեյին խթան կհանդիսանար ժամանակակից բուրժուական հասարակության ինդուստրիալիզմի զարգացմանը, բայց վորը, լինելով պրոլետարական շարժման պտուղը, անխուսափելիորեն՝ վորպես հարձակում հողային սեփականության վրա ընդհանրապես և հատկապես ներկայումս Ամերիկայում գոյություն ունեցող պայմաններում պետք է տանի ավելի հեռուն, դեպի կոմունիզմը՝ շնորհիվ նրա սեփական հետևանքների: Կրիգեն, վոր Նյու-Յորքի գերմանացի կոմունիստների հետ միասին հարելով ռենտայի դեմ յելած շարժմանը՝ (Ant–Rent–Bewegung), այս հասարակ փաստը պարուրում է փքուն ֆրազներով, առանց մտնելու բուն շարժման բովանդակության քննարկման մեջ: Նա դրանով ապացուցում է, վոր իրեն համար բնավ պարզ չէ յերիտասարդ Ամերիկայի և ամերիկական հասարակական պայմանների միջև յեղած կապը: Բերենք մի օրինակ ևս նրա փքուն ֆրազներից հողատիրությունն ամերիկական մասշտաբով պարցելավորելու ագրարների պլանի մասին:

«Ժողովրդական տրիբունի» № 10-ում «Մենք ի՞նչ ենք ցանկանում» հոդվածում ասվում է. «Ամերիկյան ազգային-ռեֆորմիստները հողը բոլոր մարդկանց ընդհանուր սեփականություն են անվանում... և պահանջում են, վոր ժողովրդական օրենսդրությունն այնպիսի միջոցներ ձեռք առնի, վոր 1400 միլիոն ակր հողը, վոր դեռ թալանչի սպեկուլյանտների ձեռքը չի ընկել, պահպանվի, վորպես ամբողջ մարդկության անօտարելի ընդհանուր սեփականություն»: Յեվ ահա, վորպեսզի ամբողջ մարդկության համար պահպանվի այս «անօտարելի և ընդհանուր սեփականությունը», նա ընդունում է ազգային ռեֆորմիստների

1 Հիշեցեք, թե ինչ էր գրում «Революционная Россия»-ն սկսած № 8-ից հողը կապիտալից դեպի աշխատանք հոսեցնելու մասին, պետական հողերի նշանակության մասին Ռուսաստանում, հավասարար հողօգտագործման մասին, հողն առևտրային շրջանառության մեջ ներգրավելու բուրժուական իդեայի մասին և այլն: Բոլորովի՛ն ինչպես Կրիգեն:

պլանը՝ «տրամադրել յուրաքանչյուր գյուղացուն, վո՛ր երկրի ծնունդ էլ ուզում է նա լինի, 160 ակր ամերիկյան հող՝ նրան կերակրելու համար»: № 14-ում «Պատասխան Կոնզեին» (Konze) հոդվածում այս պլանն այսպես է շարադրվում. «Այս դեռևս անձեռնամուխ ժողովրդական սեփականությունից վոչ վոք 160 ակրից ավելի չպիտի ստանա ի տիրապետություն, այն էլ այս քանակությունը միայն այն պայմանով, վոր ինքը մշակի»: Ուրեմն, հողը վորպես «անօտարելի ընդհանուր սեփականություն», և այն էլ «ամբողջ մարդկության» սեփականություն պահպանելու համար պետք է անմիջապես նրանից սկսել, վոր բաժանվի այդ հողը: Կրիգեն յերևակայում է, թե ինքը վորևէ օրենքով կարող է արգելել այս բաժանման անհրաժեշտ հետևանքները՝ համակենտրոնացումը, արդյունաբերական պրոգրեսը և այլն: 160 ակր հողը նրան պատկերանում է վորպես ինքն իրեն հավասար մի ինչ-վոր բան, կարծես այդպիսի հողամասի արժեքը, նայած նրա վորակին, տարբեր չլինի: «Գյուղացիներն» իրենց մեջ և ուրիշ մարդկանց հետ կփոխանակեն յեթե վոչ ինքը հողը, գոնե նրա արդյունքը: Իսկ քանի վոր բանը դրան կհասնի, ապա շուտով դուրս կգա, վոր մի «գյուղացի» առանց կապիտալի էլ, շնորհիվ իր աշխատանքի և իր 160 ակրի ավելի մեծ բնական պտղաբերության, մյուսին կհասցնի մինչև իրեն բատրակ դառնալու դրության: Իսկ հետո, մի՞թե միևնույն չէ, «հողը» թե՞ հողի արդյունքը «կընկնի կողոպտիչների, սպեկուլյանտների ձեռքը»: Լուրջ քննենք այս նվերը, վոր մատուցում է մարդկությանը Կրիգեն: 1400 միլիոն ակր պետք է պահպանվի, վորպես «ամբողջ մարդկության անօտարելի ընդհանուր սեփականություն»: Ըստվորում յուրաքանչյուր գյուղացու ընկնելու յե 160-ական ակր: Հետևաբար, մենք կարող ենք հաշվել, թե վո՛րքան մեծ է Կրիգեյան «մարդկությունը». ճիշտ 8¾ միլիոն «գյուղացիներ» կամ, հաշվելով յուրաքանչյուր ընտանիք 5 գլխից, 43¾ միլիոն մարդ: Մենք ճիշտ նույն կերպով կարող ենք հաշվել, թե վո՛րքան յերկար կտևեն այդ «մշտնջենական ժամանակները», վորի ընթացքում ամբողջ հողին պիտի «տիրի պրոլետարիատը, վորպես մարդկության ներկայացուցիչ» գոնե Միացյալ Նահանգներում: Յեթե Միացյալ Նահանգների բնակչությունը նույնպես արագ կրկնապատկվի, ինչպես մինչև այժմ, այսինքն՝ յուրաքանչյուր 25 տարում, այդ դեպքում այդ «մշտնջենական ժամանակները» 40 տարուց էլ պակաս կտևեն: Այդ 1400 միլիոն ակրը 40 տա-

րում կտիրապետվի և հաջորդ սերունդներին «տիրապետելու» վոչինչ էլ չի մնա: Բայց վորովհետև հողի ձրի բաժանումը խիստ կուժեղացնի իմմիգրացիան, ուստի Կրիգեյան «մշտնջենական ժամանակները» կարող են ավելի շուտ վերջանալ, մանավանդ յեթե ուշադրության առնվի, վոր 44 միլիոն մարդու համար հողի քանակը չի բավականացնի նույնիսկ ներկայիս յեվրոպական պաուպերիզմին, վորպես նրա հեռատար կանալ: Յեվրոպայում յուրաքանչյուր տասներորդ մարդը պաուպեր է. միայն բրիտանական կղզիներում նրանց թիվը 7 միլիոն է: Նույնպիսի քաղաքատնտեսական միամտություն մենք տեսնում ենք № 13-ում «Կանանց» հոդվածում, վորտեղ Կրիգեն ասում է, վոր յեթե Նյու-Յորկ քաղաքը տար իր 52 000 ակր հողը Լոնգ-Այլենդում[1], այդ բավական կլիներ Նյու-Յորկը «միանգամից» ազատելու ամեն տեսակ պաուպերիզմից, չքավորությունից ու վոճրագործություններից:

«Յեթե հողն ազատելուն ձգտող շարժման վրա Կրիգեն նայեր վորպես պրոլետարական շարժման վորոշ պայմաններում անհրաժեշտ առաջին ձևի վրա, յեթե նա այդ շարժումը գնահատեր վորպես այնպիսին, վոր շնորհիվ այն դասակարգի կենսական դրության, վորից նա ծագում է, անհրաժեշտաբար պետք է ավելի ևս զարգանա և դառնա կոմունիստական շարժում, յեթե նա ցույց տար, թե ինչպես կոմունիստական ձգտումներն Ամերիկայում սկզբում պիտի յերևային այս ագրարային ձևով, վոր առաջին հայացքից հակասում է ամեն տեսակ կոմունիզմի,—այդ ժամանակ դրա դեմ վոչինչ չէր կարելի առարկել: Իսկ Կրիգեն վորոշ իրական մարդկանց շարժման այդ ձևը, վոր միայն ստորադաս նշանակություն ունի, հայտարարում է մարդկության գործ ընդհանրապես: Կրիգեն այդ գործը ցուցադրում է վորպես վերջին, բարձրագույն նպատակ ամեն տեսակ շարժման ընդհանրապես, այսպիսով շարժման վորոշ նպատակները դարձնելով զատագույն փքուն անմտություն: 10-րդ համարի նույն հոդվածում նա այսպիսի հաղթական յերգեր է յերգում. «Յեվ այսպես, վերջապես, այսպիսով կիրականանային յեվրոպացիների վաղեմի յերազանքները, ովկիանոսի այս կողմում նրանց համար հող կստեղծվեր, վորը նրանց կմնար վերցնել և արդյունավետ դարձնել իրենց ձեռքի աշխատանքով, վորպեսզի աշխարհի բոլոր բռնակալներին յերեսովը նետեյին հետևյալ հպարտ հայտարարությունը.

1 Կղզի՝ Նյու-Յորկի մոտ: Խմբ.:

սա իմ խրճիթն է, վոր դուք չեք կառուցել, սա իմ օջախն է, վոր նախանձով է լցնում ձեր սրտերը»:

«Կրիգեն կարող էր ավելացնել· սա իմ ագարակն է, վոր արտադրել ենք յես, կինս ու յերեխաներս, իմ բատրակը և իմ անասունները: Յեվ այդ ի՞նչ յեվրոպացիներ են, վոր դրանում իրենց յերազանքների իրագործումը պիտի տեսնեյին: Միայն վո՛չ կոմունիստական բանվորները: Գուցե այն սնանկացած խանութպաններն ու ցեխային վարպետները կամ քայքայված գյուղացիները, վորոնք ձգտում են Ամերիկայում նորից մանր բուրժուաներ ու գյուղացիներ դառնալու բախտին: Յեվ ի՞նչ է այն «յերազանքը», վոր իրագործվելու յե այդ 1400 միլիոն ակր հողի օգնությամբ: Վոչ այլ ինչ է, բայց յեթե բոլոր մարդկանց մասնավոր սեփականատերեր դարձնելը: Այդպիսի յերազանքը նույնքան անիրագործելի և նույնքան էլ կոմունիստական է, վորքան բոլոր մարդկանց կայսրներ, թագավորներ և պապեր դարձնելու յերազանքը»:

Մարքսի քննադատությունը լի յե թույնով ու յերգիծանքով: Նա Կրիգեյին խարազանում է հենց նրա հայացքների այն գծերի համար, վոր մենք այժմ մեր «սոցիալիստ-հեղափոխականների» մոտ ենք տեսնում—ֆրազի գերիշխում, մանր-բուրժուական ուտոպիաներ, վորոնք վորպես բարձրագույն հեղափոխական ուտոպիզմ են ցուցադրվում, ժամանակակից տնտեսակարգի և նրա զարգացման ռեալ հիմունքները չըմբռնելը: Մարքսը, վոր իրենից այն ժամանակ միայն ապագայի տնտեսագետն էր ներկայացնում, զարմանալի խորաթափանցությամբ մատնանշում է փոխանակության, ապրանքային տնտեսության դերը: Յեթե վոչ հողը,—ասում է նա,—գոնե հողի բերքը փոխանակվելու յեն գյուղացիները, իսկ սրանով արդեն ամե՛ն ինչ ասված է: Այս ամբողջ հարցադրումը շատ ու շատ բաներով կիրառելի յե ռուսական գյուղացիական շարժման և նրա մանր-բուրժուական «սոցիալիստական» իդեոլոգների նկատմամբ:

Բայց Մարքսը միաժամանակ հեռու յե այս մանր-բուրժուական շարժումը պարզապես «ժխտելուց», այդ շարժման դոկտրինյորական[1] անտեսումից, շատ տիրացուներին հատուկ այն վախից, թե մանր-բուրժուական դեմոկրատիային շփվելով՝ իր ձեռքերը կկեղտոտի: Անխնա ծաղրելով շարժման իդեոլոգիական

1 — տիրացուական, փքուն-տառակերային: Խմբ.:

զգեստավորումների անհեթեթությունը, Մարքսն աշխատում է մատերիալիստորեն-զգաստ կերպով վորոշել նրա իսկական պատմական բովանդակությունը, նրա անխուսափելի հետևանքները, վորոնք պետք է գան օբյեկտիվ պայմանների շնորհիվ, անկախ այս կամ այն անձերի կամքից ու գիտակցությունից, յերազանքներից ու թեորիաներից: Այս պատճառով Մարքսը չի կշտամբում, այլ լիովին հավանություն է տալիս կոմունիստների կողմից այդ շարժումը պաշտպանելուն: Կանգնելով դիալեկտիկական տեսակետի վրա, այսինքն՝ դիտելով շարժումը բազմակողմանիորեն, նկատի ունենալով և՛ անցյալը, և՛ ապագան, Մարքսը նշում է հողային սեփականության վրա հարձակվելու հեղափոխական կողմը,—Մարքսը մանր-բուրժուական շարժումն ընդունում է վորպես պրոլետարական, կոմունիստական շարժման յուրատեսակ սկզբնական ձև: Դուք չեք հասնի, ինչի մասին յերազում եք հասնել այդ շարժման միջոցով,—ասում է Մարքսը Կրիգեյի հասցեյին,—յեղբայրության փոխարեն կգա մանր-բուրժուական մեկուսացում, գյուղացիական հողաբաժինների անօտարելիության փոխարեն՝ հողի ներգրավումն առևտրային շրջանառության մեջ, կողոպտիչ-սպեկուլյանտներին հարվածելու փոխարեն՝ բազայի ընդարձակում կապիտալիստական զարգացման համար: Իսկ այն կապիտալիստական չարիքը, վորից դուք իզուր կարծում եք խուսափել, պատմական բարիք է, վորովհետև նա սարսափելիորեն կարագացնի հասարակական զարգացումը և շատ ու շատ անգամ կմոտեցնի կոմունիստական շարժման նոր, բարձրագույն ձևերը: Հողային սեփականությանը հասցրած հարվածը կթեթևացնի հետագա անխուսափելի հարվածները՝ սեփականության ընդհանրապես· ստորին դասակարգի հեղափոխական յելույթը, ժամանակավորապես բնավ վո՛չ ամենքին նեղլիկ բարեկեցություն տվող ձևափոխությամբ, կթեթևացնի ամենից ստորին դասակարգի հետագա անխուսափելի հեղափոխական յելույթն այնպիսի ձևափոխությամբ, վորը բոլոր աշխատավորության համար իրոք կատարյալ մարդկային յերջանկություն կապահովի:

Մեզ, ռուսական սոցիալ-դեմոկրատների, համար Մարքսի հարցադրումը ընդդեմ Կրիգեյի պիտի օրինակ ծառայի: Ռուսաստանում ժամանակակից գյուղացիական շարժման իսկական մանր-բուրժուական բնույթը կասկածի յենթակա չե· այս մենք պետք է բոլոր ուժով և անխնա պարզաբանենք, անհաշտ կերպով պայքարենք ամեն տեսակի «սոցիալիստ-հեղափոխականների» կամ պրի-

մեջտեղ սոցիալիստների ամենատեսակ ցնորքների դեմ այս հարցի մասին: Պրոլետարիատի ինքնուրույն կուսակցության առանձին կազմակերպությունը, վոր բոլոր դեմոկրատական հեղաշրջումների միջոցով լիակատար սոցիալիստական հեղափոխության է ձգտում, պետք է լինի մեր մշտական, վոչ մի րոպե աչքից չթողնըվող նպատակը: Բայց այս պատճառով յերես դարձնել գյուղացիական շարժումից՝ ամենաանհույս ֆիլիստերություն[1] և պեդանտիզմ[2] կլիներ: Վո՛չ, այս շարժման հեղափոխական-դեմոկրատական բնույթն անկասկած է, և մենք բոլոր ուժերով պետք է պաշտպանենք այն, զարգացնենք, դարձնենք քաղաքականորեն գիտակից և դասակարգայնորեն-վորոշ, ավելի առաջ մղենք այն, նրա հետ միասին, ձեռք-ձեռքի գնանք մինչև վերջը,—վորովհետև մենք ամեն տեսակ գյուղացիական շարժման վերջից շատ ավելի հեռու յենք գնում, մենք գնում ենք մինչև հասարակության դասակարգերի բաժանված լինելու դրության լիակատար վերջը: Հազիվ թե աշխարհում գտնվի մի այլ յերկիր, վորտեղ գյուղացիությունն այնպիսի տանջանքներ, այնպիսի հարստահարություն և անարգանք կրի, ինչպես Ռուսաստանում: Վորքան ավելի անհույս է յեղել այդ հարստահարությունը, այժմ այնքան ավելի ուժգին կլինի նրա արթնացումը, այնքան անհաղթելի կլինի նրա հեղափոխական գրոհը: Գիտակից հեղափոխական պրոլետարիատի գործն է բոլոր ուժերով պաշտպանել այդ գրոհը, վոր նա քարը քարի վրա չթողնի հին, անիծյալ, ճորտատիրական-ինքնակալական ստրկական Ռուսաստանում, վոր նա ստեղծի ազատ և համարձակ մարդկանց նոր սերունդ, ստեղծի նոր հանրապետական յերկիր, վորտեղ ընդարձակորեն կծավալվի մեր պրոլետարական պայքարը սոցիալիզմի համար:

«Вперед» № 15, 20 (7) ապրիլի 1905 թ.
Երկ., հ. VII, էջ 219—224:

---

1 — որխվատելություն: Խմբ.:

2 — ձևական հետևողություն միանգամ սովորած կանոնների, թեորիական դրույթների, որենքների տառի և այլն, մանավանդ վոչ էական բաներում, մանրունքներում: Խմբ.:

ՍՈՑԻԱԼԻԶՄՆ ՈՒ ԿՐՈՆԸ

Ժամանակակից հասարակությունն ամբողջովին կառուցված է բանվորական ահագին մասսաների շահագործման վրա՝ բնակչության այն չնչին փոքրամասնության կողմից, վոր հողատերերի ու կապիտալիստների դասակարգերին է պատկանում: Այդ հասարակությունն ստրկատիրական հասարակություն է, վորովհետև «ազատ» բանվորները, վորոնք մինչև իրենց կյանքի վերջը կապիտալի համար են աշխատում, «իրավունք ունեն» միայն այնպիսի գոյամիջոցների, վորոնք անհրաժեշտ են շահույթ արտադրող ստրուկներին ապրեցնելու համար, կապիտալիստական ստրկությունն ապահովելու և հավերժացնելու համար:

Բանվորների տնտեսական ճնշումն անխուսափելիորեն ծնում և առաջ է բերում մասսաների կյանքի ամեն տեսակի քաղաքական ճնշում, սոցիալական նվաստացում, հոգեկան ու բարոյական կոպտացում ու մթագնում: Բանվորները կարող են իրենց համար փոքրիշատե քաղաքական ազատություն ձեռք բերել [պայքարելու համար] հանուն իրենց տնտեսական ազատագրման, բայց վոչ մի ազատություն նրանց չի փրկի թշվառությունից, գործազրկությունից ու ճնշումից, քանի դեռ կապիտալի իշխանությունը տապալված չէ: Կրոնը հոգևոր ճնշման մի տեսակն է, վորն ամենուրեք և ամեն տեղ ծանրացած է ժողովրդական մասսաների վրա, վորոնք ճզմված են ուրիշների համար հավիտենական աշխատանք կատարելուց, կարիքից ու մենակությունից: Շահագործողների դեմ մղած պայքարում չահագործվողների անզորությունը նույնպես անխուսափելիորեն հավատ է ծնում դեպի հանդերձյալ լավագույն կյանքը, ինչպես բնության դեմ մղվող պայքարի մեջ վայրենու անզորությունն է հավատ ծնում դեպի աստվածները, սատանաները, հրաշքներն ու այլ բաները: Ով մինչև կյանքի վերջն աշխատում ու կարիքի մեջ է լինում, կրոնը նրան յերկրային կյանքում հեզություն և համբերություն է ուսուցանում, մխիթարելով նրան յերկնային պարգևի հուսով: Իսկ

նրանց, ովքեր ուրիշի աշխատանքով են ապրում, կրոնը յերկրային կյանքում բարեգործություն է ուսուցանում, առաջարկելով նրանց արդարանալու շատ եժան միջոց իրենց շահագործողական ամբողջ գոյության համար ու ձեռնտու գնով յերկնային բարեկեցության տոմսեր ծախելով։ Կրոնը ժողովրդի հաշիշն է։ Կրոնը հոգևոր ողու մի տեսակն է, վորի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, փոքրիշատե մարդավայել ապրելու իրենց պահանջները։

Բայց ստրուկը, վոր գիտակցում է իր ստրկությունը և յելնում է պայքարի՝ իր ազատագրման համար, կիսով չափ արդեն դադարում է ստրուկ լինելուց։ Արդի գիտակից բանվորը, վոր դաստիարակված է գործարանային խոշոր արդյունաբերության կողմից ու լուսավորված է քաղաքի կյանքով, արհամարհանքով հետ է շպրտում իրենից կրոնական նախապաշարմունքները, յերկինքը թողնում է տերտերներին ու բուրժուական կեղծ բարեպաշտներին, իր համար լավագույն կյանք նվաճելով այստեղ, յերկրի վրա։ Ժամանակակից պրոլետարիատը սոցիալիզմի կողմն է անցնում, վորը կրոնական մշուշի դեմ մղվող պայքարին մասնակից է դարձնում գիտությունը և ազատագրում է բանվորին դեպի հանդերձյալ կյանքն ունեցած հավատից՝ միաձուլելով նրան յերկրային լավագույն կյանքի իսկական պայքարի համար։

Կրոնը պետք է հայտարարվի մասնավոր գործ,— ահա այս բառերով է սովորաբար ընդունված արտահայտել սոցիալիստների վերաբերմունքը դեպի կրոնը։ Բայց այս բառերի նշանակությունը պետք է ճշգրիտ վորոշել, վորպեսզի դրանք վոչ մի թյուրիմացություն չառաջացնեն։ Մենք պահանջում ենք, վոր պետության նկատմամբ կրոնը մասնավոր գործ լինի, բայց մեր սեփական կուսակցության նկատմամբ կրոնը վոչ մի կերպ մասնավոր գործ համարել չենք կարող։ Պետությունը կրոնի հետ վոչ մի գործ չպիտի ունենա, կրոնական ընկերությունները պետական իշխանության հետ կապ չպիտի ունենան։ Ամեն վոք ազատ պետք է լինի դավանելու իր ցանկացած կրոնը, կամ վոչ մի կրոն չճանաչելու, այսինքն՝ լինելու աթեիստ, ինչպես սովորաբար լինում է ամեն մի սոցիալիստ։ Քաղաքացիների մեջ իրենց իրավունքների նկատմամբ վոչ մի տարբերություն թույլատրելի չէ կրոնական հավատալիքներից կախում ունենալու տեսակետից։ Քաղաքացիների այս կամ այն դավանանքի մասին պաշտոնական փաստաթղթերում ամեն մի հիշատակություն անգամ պետք է անպայման

վոչնչացվի։ Վոչ մի վճարում չպիտի լինի պետական յեկեղեցուն, պետական գումարների վոչ մի վճարում չպիտի լինի յեկեղեցական ու կրոնական ընկերություններին, վորոնք միանգամայն ազատ և իշխանությունից անկախ՝ համախոհ քաղաքացիների միություններ պիտի լինեն։ Այս պահանջների լրիվ կատարումով միայն կարելի յե վերջ տալ այն անիծված ու ամոթալի անցյալին, յերբ յեկեղեցին ճորտական կախման մեջ եր պետությունից, իսկ ռուս քաղաքացիները ճորտական կախման մեջ եյին պետական յեկեղեցուց, յերբ գոյություն ունեյին և գործադրվում եյին միջնադարյան ինկվիզիտորական որենքները (վորոնք մինչև որս ել տեղ են բռնում քրեական որենսգրքերի ու կանոնադրությունների մեջ), վորոնք հետապնդում եյին հավատի կամ անհավատության համար, բռնություն եյին գործ դնում մարդու խղճի վրա, պետական պաշտոններն ու պետական յեկամուտները կապում եյին պետական-յեկեղեցական այս կամ այն ողին բաժանելու հետ։ Յեկեղեցու կատարյալ բաժանում պետությունից, ահա այն պահանջը, վոր սոցիալիստական պրոլետարիատն առաջադրում է ժամանակակից պետությանն ու ժամանակակից յեկեղեցուն։

Ռուսական հեղափոխությունը պետք է իրականացնի այս պահանջը, վորպես քաղաքական ազատության անհրաժեշտ բաղկացուցիչ մաս։ Ռուսական հեղափոխությունն այս տեսակետից առանձնապես նպաստավոր պայմաններում է գտնվում, վորովհետև քաղաքական-ճորտատիրական ինքնակալության զզվելի կազյոնչչինան անբավականություն, վրդովմունք ու խմորում է առաջ բերել նույնիսկ հոգևորականության մեջ։ Վորքան ել ճզմված, վորքան ել խավար եր ռուս ուղղափառ հոգևորականությունը, Ռուսաստանի հին, միջնադարյան հասարակակարգի անկման վորոտը նույնիսկ նրան արթնացրեց այժմ։ Նույնիսկ նա հարում է ազատության պահանջին, բողոքում է կազյոնչչինայի ու չինովնիկական կամայականության, վոստիկանական հետապնդման դեմ, վոր զոռով փաթաթել են «աստծու սպասավորների» վզին։ Մենք, սոցիալիստներս, պետք է պաշտպանենք այս շարժումը, մինչև վերջը հասցնելով ազնիվ ու անկեղծ հոգևորականների պահանջները, խոսքի մեջ բռնելով նրանց այն ժամանակ, յերբ ազատության մասին են խոսում, պահանջելով նրանցից, վոր վճռականապես խզեն բոլոր կապերը կրոնի ու վոստիկանության միջև։ Կա՛մ դուք անկեղծ եք, և այն ժամանակ դուք

յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց կատարելապես բաժանելու, կրոնը լիակատար կերպով ու միանգամայն մասնավոր գործ հայտարարելու կողմը պետք է լինենք: Կա՛մ դուք չեք ընդունում ազատության այս հետևողական պահանջները, և այն ժամանակ, նշանակում է, դուք դեռևս ինկվիզիցիայի տրադիցիաների գերին եք, այն ժամանակ, նշանակում է, դուք դեռևս պոկ չեք գալիս արքունական պաշտոններից և արքունական հասույթներից, այն ժամանակ, նշանակում է, դուք չեք վստահում ձեր զենքի հոգևոր ուժին, դուք շարունակում եք կաշառք վերցնել պետական իշխանությունից,—այդ դեպքում ամբողջ Ռուսաստանի գիտակից բանվորներն անողոք պատերազմ են հայտարարում ձեզ:

Սոցիալիստական պրոլետարիատի կուսակցության նկատմամբ կրոնը մասնավոր գործ չէ: Մեր կուսակցությունը բանվոր դասակարգի ազատագրման գիտակից, առաջավոր մարտիկների մի կուսակցություն է: Այսպիսի մի միություն չի կարող ու չպետք է անտարբեր վերաբերվի դեպի անգիտակցականությունը, դեպի խավարը կամ խավարամոլությունը, ինչպես կրոնական հավատալիքներն են: Մենք յեկեղեցու և պետության լիակատար անջատումն ենք պահանջում, վորպեսզի պայքարենք կրոնական մշուշի դեմ զուտ գաղափարական ու միմիայն գաղափարական զենքով, մեր մամուլով, մեր խոսքի միջոցով: Բայց մենք հիմնել ենք մեր միությունը, ՌՍԴԲԿ, վոր, ի միջի այլոց, հենց այդպիսի պայքար մղենք բանվորներին կրոնական հիմարության մեջ գցելու ամեն մի փորձի դեմ: Իսկ գաղափարական պայքարը մեզ համար վո՛չ թե մասնավոր, այլ համակուսակցական, համապրոլետարական մի գործ է:

Յեթե այդպես է, ապա ինչո՞ւ չենք հայտարարում մեր ծրագրում, թե մենք աթեիստներ ենք, ինչո՞ւ չենք արգելում քրիստոնյաներին ու աստծուն հավատացողներին մտնել մեր կուսակցության մեջ:

Այս հարցի պատասխանը պետք է պարզաբանի այն շատ կարևոր տարբերությունը, վոր գոյություն ունի բուրժուական-դեմոկրատական ու սոցիալ-դեմոկրատական հարցադրման մեջ կրոնի վերաբերմամբ:

Մեր ծրագիրն ամբողջովին կառուցված է գիտական և այն էլ հատկապես մատերիալիստական աշխարհայացքի վրա: Ուստի և մեր ծրագրի պարզաբանումն անհրաժեշտորեն իր մեջ պարունա-

կում է նաև կրոնի մշուշի իսկական պատմական ու տնտեսական արմատների պարզաբանումը: Մեր պրոպագանդան անհրաժեշտորեն իր մեջ պարունակում է նաև աթեիզմի պրոպագանդան, համապատասխան գիտական գրականության հրատարակումը, վոր մինչև այժմ խստիվ արգելում ու հետապնդում եր ինքնակալական-ճորտատիրական պետական իշխանությունը, ներկայումս մեր կուսակցական աշխատանքի ճյուղերից մեկը պետք է դառնա: Մենք այժմ պետք է, հավանորեն, հետևենք այն խորհրդին, վոր մի անգամ Ենգելսն է տվել գերմանական սոցիալիստներին, այն է՝ թարգմանել և մասսայականորեն տարածել XVIII դարի ֆրանսիական լուսավորական ու աթեիստական գրականությունը:

Բայց միաժամանակ մենք վոչ մի դեպքում չպետք է շեղվենք դեպի կրոնական հարցի աբստրակտ, իդեալիստական «բանականական» դրումը, դասակարգային պայքարից դուրս,—մի հարցադրում, վոր շատ անգամ է առաջարկվում բուրժուական ռադիկալ դեմոկրատների կողմից: Անհեթեթություն կլիներ կարծել, վոր զուտ քարոզչական ճանապարհով կարելի յե կրոնական նախապաշարումները վերացնել այն հասարակության մեջ, վոր բանվորական մասսաների անվերջ ճնշման ու կոպտացման վրա յե հիմնված: Բուրժուական սահմանափակություն կլիներ մոռանալ այն, վոր կրոնի ճնշումը մարդկության վրա՝ հասարակության ներսում գոյություն ունեցող տնտեսական ճնշման արդասիքն ու անդրադարձումն է միա՛յն: Վոչ մի գրքույկ ու վոչ մի քարոզ չի կարող լուսավորել պրոլետարիատին, յեթե նրան չլուսավորի իր սեփական պայքարն ընդդեմ կապիտալիզմի մութ ուժերի: Յերկրի վրա դրախտ ստեղծելու համար մղվող՝ ճնշված դասակարգի այդ իրոք հեղափոխական պայքարի միասնականությունն ավելի կարևոր է մեզ համար, քան յերկնային դրախտի մասին պրոլետարների ունեցած կարծիքների միասնականությունը:

Ահա թե ինչու մեր ծրագրի մեջ մենք չենք հայտարարում ու չպետք է հայտարարենք մեր անաստվածությունը: Ահա թե ինչու մենք չենք արգելում և չպետք է արգելենք հին նախապաշարումների այս կամ այն մնացորդները պահպանած պրոլետարների մերձեցումը մեր կուսակցությանը: Գիտական աշխարհայեցողությունը մենք միշտ էլ կքարոզենք. վորևէ կարգի «քրիստոնյաների» անհետևողականության դեմ պայքարելն անհրաժեշտ է մեզ. սակայն այս ամենևին չի նշանակում, թե պետք է կրոնական հարցին ամենևին իրեն չպատկանող առաջին տեղը տալ, թե պետք

է թույլ տանք իսկական հեղափոխական, տնտեսական ու քաղաքական պայքարի ուժերի մասնատումը՝ հանուն յերրորդական կարծիքների ու զառանցանքների, վորոնք արագ կորցնում են ամեն տեսակի քաղաքական նշանակություն և վորոնք հենց տնտեսական զարգացման ընթացքով արագ կերպով անպետք հնոտիների մառանն են նետվում:

Ռեակցիոն բուրժուազիան ամենուրեք հոգում էր և հիմա մեզ մոտ էլ սկսում է հոգալ այն մասին, վորպեսզի կրոնական թշնամություն հրահրի, մասսաների ուշադրությունը տնտեսական ու քաղաքական իսկապես կարևոր ու արմատական հարցերից դեպի այդ կողմը դարձնի, այն հարցերից, վոր այժմ իր հեղափոխական պայքարի ընթացքում վճռում է գործնականորեն համախմբվող համառուսական պրոլետարիատը: Պրոլետարական ուժերը մասնատող ռեակցիոն այդ քաղաքականությունը, վոր այսոր արտահայտվում է գլխավորապես սևհարյուրյակային ջարդերով, վաղը թերևս վորևէ տեսակի ավելի նուրբ ռեֆորմներ հնարի: Մենք, համենայն դեպս, այդ բանին կհակադրենք հանգիստ, փորձված ու համբերատար, ամեն տեսակ յերկրորդական տարաձայնություններ հրահրելուն խորթ՝ պրոլետարական համերաշխության ու գիտական աշխարհայեցողության քարոզը:

Հեղափոխական պրոլետարիատը կհասնի այն բանին, վոր կրոնը պետության համար իսկապես մասնավոր գործ կդառնա: Ցեվ միջնադարյան բորբոսից մաքրված քաղաքական այդ հասարակարգում պրոլետարիատը լայն, բացահայտ պայքար է մղելու տնտեսական ստրկությունը, մարդկության կրոնական հիմարացման իսկական աղբյուրը, վերացնելու համար:

«Новая Жизнь» № 28
16 (3) դեկտեմբերի 1905 թ.
Ստորագրություն՝ Ն. Լենին:
Ցերկերի հատ. VIII, եջ 419—423:

ԱՌԱՋԱԲԱՆ Կ. ՄԱՐՔՍԻ՝ Լ. ԿՈՒԳԵԼՄԱՆԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ[1] —

Առանձին բրոշյուրով հրատարակելով գերմանական սոցիալ-դեմոկրատական «Neue Zeit»[2] շաբաթաթերթում լույս տեսած՝ Մարքսի՝ Կուգելմանին գրած նամակների լրիվ ժողովածուն, մենք մեզ նպատակ ենք դրել ծանոթացնել ռուսական հասարակությանը Մարքսի և մարքսիզմի հետ: Մարքսի նամակագրության մեջ նրա անձնական գործերին, ինչպես և պետք էր սպասել, շատ մեծ տեղ է հատկացրած: Այս բոլորը կենսագրի համար չափազանց արժեքավոր նյութ է: Բայց լայն հասարակության համար ընդհանրապես և Ռուսաստանի բանվոր դասակարգի համար առանձնապես անհամեմատ ավելի կարևոր են նամակների այն տեղերը, վորոնք թեորիական և քաղաքական նյութ են բովանդակում: Հենց մեզնում, մեր ապրած հեղափոխական դարաշրջանում, առանձնապես ուսանելի յե թափանցել այն նյութի մեջ, վոր նկարում է Մարքսին, վորն անմիջապես արձագանքում է բանվորական շարժման և համաշխարհային քաղաքականության բոլոր հարցերին: Միանգամայն իրավացի յե «Neue Zeit»-ի խմբագրությունը, թե «մեզ բարձրացնում է ծանոթությունն այն մարդկանց դեմքերի հետ, վորոնց միտքն ու կամքը կազմվել են մեծ հեղաշրջումների պայմաններում»: Ռուսական սոցիալիստի համար 1907 թվին այդ ծանոթությունը կրկնակի անհրաժեշտ է, վորովհետև նա բազմաթիվ ամենաթանկ ցուցումներ է տալիս սոցիալիստների անմիջական խնդիրների համար նրանց յերկրի ապրած բոլոր և ամեն տեսակ հեղափոխություններում: Ռուսաստանը հենց այժմ «մեծ հեղաշրջում» է ապրում: Մարքսի քաղաքականությունը համեմատաբար փոթորկոտ 1860-ական թվերին շատ և շատ հաճախ պիտի ուղիղ որինակ ծառայի սոցիալ-դեմոկրատ-

---

1 Տե՛ս «Письма Маркса к Кугельману», с предисловием Ленина, Гиз, 1928 г. Ред.

2 — «Նոր ժամանակ»: Խմբ.:

ների քաղաքականության համար ժամանակակից ռուսական հեղափոխության մեջ:

Այս պատճառով մենք թույլ կտանք մեզ միայն համառոտակի նշել թեորիական տեսակետից ամենակարևոր տեղերը Մարքսի նամակագրությունից,—և ավելի մանրամասն կանգ առնել նրա, որպես պրոլետարիատի ներկայացուցչի, հեղափոխական քաղաքականության վրա:

Մարքսիզմի ավելի լրիվ և խոր լուսաբանման տեսակետից աչքի զարնող հետաքրքրություն ունի 1868 թ. հուլիսի 11-ի նամակը (էջ 42 և հաջորդները): Մարքսն այստեղ չափազանց ճիշտ կերպով շարադրում է—բանակռվային դիտողությունների ձևով ընդդեմ վուլգար տնտեսագետների—այսպես կոչված արժեքի «աշխատանքային» թեորիայի իր ըմբռնումը: Հենց այն առարկությունները Մարքսի՝ արժեքի թեորիայի դեմ, որոնք ամենից ավելի բնական կերպով առաջանում են «Կապիտալի» ամենից քիչ պատրաստված ընթերցողների մեջ, և որոնց այս պատճառով ամենից յեռանդով են կառչում «պրոֆեսորական» բուրժուական «գիտության» աննշան ներկայացուցիչները,—այստեղ Մարքսը հակիրճ, հասարակ, զարմանալի պարզ կերպով է վերլուծում: Մարքսն այստեղ ցույց է տալիս, թե ի՛նչ ճանապարհով է ինքը գնացել և ինչ ճանապարհով պիտի գնալ արժեքի օրենքը բացատրելու համար: Նա ամենասովորական առարկությունների միջոցով սովորեցնում է իր մեթոդը: Նա պարզաբանում է այսպիսի զուտ (կլթվար) թեորիական և վերացական խնդրի, ինչպիսին արժեքի թեորիան է, կապը տիրող դասակարգերի» շահերի հետ, որոնք «խառնաշփոթության հավերժացումն» են պահանջում: Մնում է ցանկանալ, որ ով սկսի ուսումնասիրել Մարքսին և կարդալ «Կապիտալը», կարդա և վերակարդա մեր հիշած նամակը՝ «Կապիտալի» առաջին և ամենադժվար գլուխները ուսումնասիրելու հետ մեկտեղ:

Նամակների թեորիական տեսակետից մյուս, ամենից հետաքրքիր տեղերը—Մարքսի գնահատականն է՝ զանազան գրողների: Երբ կարդում ես Մարքսի այս կարծիքները—գրած աշխույժ, լի յեռանդով, որոնք հափշտակիչ հետաքրքրություն են հայտաբերում դեպի բոլոր խոշոր գաղափարական հոսանքներն ու նրանց վերլուծությունը,—զգում ես, որ կարծես հանճարեղ մտածողի ճառ ես լսում: Բացի Դիցգենի մասին հարևանցի կերպով գցած կարծիքներից, ընթերցողների առանձին ուշադրությանն են արժանի պրուդոնիստների մասին հայտնած կարծիքները (էջ 17): Զարմանալի ցայտուն կերպով միքանի շտրիխներով նկարագրված է բուրժուական «փայլուն» ինտելիգենտական այն յերիտասարդությունը, որ նետվում է «պրոլետարիատի շարքերը» հասարակական վերելքի շրջանում, որ անընդունակ է տոգորվել բանվոր դասակարգի տեսակետով և համառ, լուրջ կերպով աշխատել պրոլետարական կազմակերպությունների «շարքում ու տողանում»:

Ահա կարծիքը Դյուրինգի մասին (էջ 35), որ կարծես թե կանխատեսել է ինը տարի անց Ենգելսի (Մարքսի հետ միասին) գրած նշանավոր «Anti-Düring»[1] գրքի բովանդակությունը: Կա Ցեդերբաումի ռուսերեն թարգմանությունը, որ, դժբախտաբար ոչ միայն բացթողումներով, այլ ուղղակի վատ թարգմանություն է՝ սխալներով: Հենց այստեղ էլ Տյունենի մասին կարծիք է հայտնած, որ դիպչում է նմանապես Ռիկարդոյի ռենտայի թեորիային. Մարքսն այդ ժամանակ արդեն, 1868 թվին, վճռականորեն ժխտում էր «Ռիկարդոյի սխալները», որոնք նա վերջնականապես հերքեց 1894 թ. լույս տեսած «Կապիտալի» III հատորում և որոնք մինչև օրս էլ կրկնում են ռեվիզիոնիստները՝ սկսած մեր ուլտրաբուրժուական[2] և նույնիսկ «սևհարյուրյակային» պ. Բուլգակովից և վերջացրած «համարյա ուղղափառ» Մասլովով:

Հետաքրքիր է նույնպես կարծիքը Բյուխների մասին վուլգար մատերիալիզմի գնահատականով և Լանգեյից արտագրած («պրոֆեսորական» բուրժուական փիլիսոփայության սովորական աղբյուրը) «մակերեսային շաղակրատությամբ» (էջ 48):

Անցնենք Մարքսի հեղափոխական քաղաքականությանը: Մեզնում—Ռուսաստանում, սոցիալ դեմոկրատների շրջանում զարմանալի տարածված է ինչ-որ քաղքենիական պատկերացում մարքսիզմի մասին,—կարծես հեղափոխական շրջանը պայքարի իր առանձին ձևերով և պրոլետարիատի հատուկ խնդիրներով համարյա թե անոմալիա յե, իսկ «սահմանադրությունը» և «ծայրահեղ օպոզիցիան»՝ կանոն: Աշխարհում ոչ մի յերկրում ներկա րոպեյիս չկա այնպիսի խոր հեղափոխական ճգնաժամ, ինչպես Ռուսաստանում,—և ոչ մի յերկրում չկան «մարքսիստներ» (մարքսիզմը նվաստացնող և գռեհկացնող), որոնք այնպես

1 — «Անտի-Դյուրինգ»: Խմբ.:

2 — Ծայրահեղ բուրժուական: Խմբ.:

սկեպտիկ, Ֆիլիստերաբար վերաբերվեցին հեղափոխությանը: Այն բանից, վոր հեղափոխության բովանդակությունը բուրժուական է, մեզնում տափակ յեզրակացություն են հանում բուրժուազիայի մասին, վորպես հեղափոխության շարժիչի, այդ հեղափոխության մեջ պրոլետարիատի ոժանդակիչ, վոչ-ինքնուրույն խնդիրների մասին, պրոլետարիատի կողմից նրան ղեկավարելու անկարելիությա՛ն մասին:

Մարքսիզմի այս տափակ ըմբռնումն ի՛նչպես է մերկացնում Մարքսը Կուգելմանին ուղղած նամակներում: Ահա 1866 թ. ապրիլի 6-ի նամակը: Մարքսն այդ ժամանակ վերջացրեց իր գլխավոր աշխատությունը: 1848 թվի գերմանական հեղափոխության գնահատականը նա արդեն վերջնականապես տվել էր այդ նամակից 14 տարի առաջ: Իր սոցիալիստական իլլյուզիաները մոտակա 1848 թվի սոցիալիստական հեղափոխության մասին նա ինքը հերքեց 1850 թվին: Յեվ 1866 թ. նա գրում է, նոր միայն սկսելով դիտել նոր քաղաքական ճգնաժամերի վերահասը.

«Կհասկանա՞ն, արդյոք, վերջապես, մեր Ֆիլիստերները (խոսքը գերմանական լիբերալ բուրժուաների մասին է), վոր առանց հեղափոխության, վորը կհեռացնի Հաբսբուրգներին և Հոհենցոլլերներին, բանը վերջիվերջո պիտի հասնի կրկին 30-ամյա պատերազմի»... (էջ 13—14):

Իլլյուզիայի նշույլ անգամ չկա այն մասին, թե մոտակա հեղափոխությունը (նա տեղի ունեցավ վերից և վոչ վարից, ինչպես սպասում էր Մարքսը) կհեռացնի բուրժուազիային և կապիտալիզմը: Ամենապարզ ու վորոշակի հավաստումն այն բանի, վոր նա կվերացնի պրուսական և ավստրիական միապետությունը: Յեվ ի՛նչ հավատ դեպի այդ բուրժուական հեղափոխությունը: Ի՛նչ հեղափոխական կրքոտություն պրոլետարական մարտիկի, վոր հասկանում է բուրժուական հեղափոխության վիթխարի դերը սոցիալիստական առաջխաղացման համար:

Յերեք տարի հետո Ֆրանսիայում Նապոլեոնյան կայսրության խորտակման նախօրյակին «շատ հետաքրքիր» հասարակական շարժում հավաստելով՝ Մարքսն ուղղակի հիացմունքով է խոսում այն մասին, թե «փարիզեցիք սկսում են ուղղակի ուսանել իրենց մոտիկ ժամանակի հեղափոխական անցյալը, վորպեսզի պատրաստվեն առաջիկա նոր հեղափոխական պայքարին»: Յեվ, նկարագրելով անցյալի այս գնահատականով բացահայտված դասակարգերի կռիվը, Մարքսը յեզրակացնում է (էջ 56). «Յեվ

ահա յեռում է կախարդ-պատմության ամբողջ կաթսան: Մի՞ որ էլ մեզ մոտ (Գերմանիայում) բանը կհասնի՛ դրան»:

Ահա թե ինչ պետք է սովորեյին Մարքսից ռուսաստանյան ինտելիգենտական մարքսիստները, վորոնք թուլացել են սկեպտիցիզմից, բթացել պեդանտությունից, հակված են դեպի զղջման ճառերը, արագ հոգնում են հեղափոխությունից, յերազում են հեղափոխության թաղման մասին և նրան սահմանադրական պրոզայով փոխարինելու մասին վորպես տոնի: Հարկ էր, վոր պրոլետարիատի տեսաբան-առաջնորդից սովորեյին հավատ դեպի հեղափոխությունը, բանվոր դասակարգին մինչև վերջն իր անմիջական-հեղափոխական խնդիրները պաշտպանելու կոչել կարողանալը, հոգու ամրություն, վոր հեղափոխության ժամանակավոր անհաջողություններից հետո փոքրոգի վնթվնթոց չի թույլ տալիս:

Մարքսիզմի պեդանտները կարծում են, վոր այս բոլորը բարոյախոսական շատախոսություններ են, ռոմանտիկա, ռեալիզմի բացակայություն: Վո՛չ, պարոններ, սա հեղափոխական թեորիայի միացումն է հեղափոխական քաղաքականության հետ, այն միացումը, առանց վորի մարքսիզմը դառնում է բրենտանիզմ, ստրուվիզմ, զոմբարտիզմ: Մարքսի ուսմունքն անքակտելի ամբողջության մեջ միավորեց դասակարգային կռվի թեորիան և պրակտիկան: Յեվ մարքսիստ չէ նա, ով օբյեկտիվ դրությունն զգաստորեն հավաստող թեորիան աղավաղում է՝ արդարացնելու համար գոյություն ունեցողը, հասնելով հեղափոխության յուրաքանչյուր ժամանակավոր անկմանը իսկույն հարմարվելու, «հեղափոխական իլլյուզիաները» շուտով դեն գցելու և «ռեալ» մանր-մունր գործերով զբաղվելու ձգտումին:

Մարքսն ամենախաղաղ, թվում է թե «իդիլլիական», նրա արտահայտությամբ,—«անհույս-ճահճային» («Neue Zeit»-ի խմբագրության խոսքերով) ժամանակները կարողանում էր շոշափել հեղափոխության մոտալուտ լինելը և բարձրացնել պրոլետարիատը՝ մինչև նրա առաջավոր, հեղափոխական խնդիրների գիտակցումը: Մարքսին Ֆիլիստերաբար գռեհկացնող մեր ռուսական ինտելիգենտները ամենահեղափոխական ժամանակ պրոլետարիատին սովորեցնում են՝ պասսիվության, «հոսանքին» հնազանդ հետևելու, մոդայիկ լիբերալ կուսակցության ամենից անկայուն էլեմենտներին յերկչոտորեն պաշտպանելու քաղաքականությանը:

Մարքսի՝ Կոմունայի գնահատականը Կուգելմանին ուղղած նա-

մուկների պսակն է։ Յեվ այդ գնահատականն առանձնապես շատ բան է տալիս՝ նրան ռուսական աջ թևի սոցիալ-դեմոկրատների գործելաձևի հետ համադրելիս։ Պլեխանովը, վոր 1905 թ. դեկտեմբերից հետո փոքրոգիորեն բացականչում եր՝ «Պետք չեր զենք վերցնել», համեստություն ուներ իրեն Մարքսի հետ համեմատելու։ Իբր թե Մարքսն ևս արգելակում եր 1870 թվի հեղափոխությունը։

Այո, Մարքսն ևս արգելակում եր այն։ Բայց տեսեք՝ ի՛նչ ահագին անդունդ է բացվում Մարքսի և Պլեխանովի միջև—իրեն Պլեխանովի վերցրած համեմատությամբ։

Պլեխանովը 1905 թվի նոյեմբերին, ռուսական առաջին հեղափոխական ալիքի գագաթնակետից մի ամիս առաջ, վոչ միայն վճռականորեն չեր զգուշացնում պրոլետարիատին, այլ ընդհակառակն, ուղղակի խոսում եր զենքը տիրապետել սովորելու և զինվելու անհրաժեշտության մասին։ Իսկ յերբ մի ամսից հետո կռիվը բռնկվեց,—Պլեխանովն առանց նրա նշանակության, դեպքերի ընդհանուր ընթացքում նրա դերի, կռվի նախկին ձևերի հետ նրա ունեցած կապի վերլուծման, շտապեց զղջացող ինտելիգենտ ձևանալ—«Պետք չեր զենք վերցնել»։

Մարքսը 1870 թ. սեպտեմբերին, Կոմունայից կես տարի առաջ, ուղղակի նախազգուշացրեց ֆրանսական բանվորներին. ապստամբությունն անմտություն կլինի, ասաց նա Ինտերնացիոնալի հայտնի կոչում[1]։ Նա նախօրոք բացահայտեց այն նացիոնալիստական իլյուզիաները, վոր հնարավոր է շարժում 1792 թվի վոգով։ Նա կարողանում եր վոչ հետին թվով, այլ շատ ամիսներ առաջ ասել՝ «Պետք չե զենք վերցնել»։

Յեվ ի՞նչպես պահեց նա իրեն, յերբ այս՝ ըստ նրա սեփական սեպտեմբերյան արտահայտության՝ անհույս գործն սկսեց իրականանալ 1871 թ. մարտին։ Գուցե Մարքսն ոգտագործում եր այս (ինչպես Պլեխանովը դեկտեմբերյան դեպքերը) միայն «խայթելու» համար իր թշնամիներին—պրուդոնիստներին և բլանկիստներին, վորոնք ղեկավարում եյին Կոմունան։ Գուցե նա սկսեց դաստիարակչուհու պես վնթվնթա՞լ, թե՝ յես ասում եյի, յես նախազգուշացնում եյի, ահա ձեզ ձեր ռոմանտիկան, ձեր հեղա-

1 Վ. Ի. Լենինը նկատի ունի I Ինտերնացիոնալի Գլխավոր Խորհրդի յերկրորդ կոչը ֆրանս-գերմանական պատերազմի առթիվ, վոր գրել է Մարքսը 1870 թ. սեպտեմբերի 9-ին Լոնդոնում (տե՛ս Կ. Մարքս, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում 1870—1871 թ. թ.»)։ Խմբ.։

փոխական զառանցանքները։ Գուցե նա ճամբու չեր դնում կոմունարներին, ինչպես Պլեխանովը դեկտեմբերյան մարտիկներին, ինքնաբավական ֆիլիստերի խրատո՞վ՝ «Պետք չեր զենք վերցնել»։

Վո՛չ։ 1871 թ. ապրիլի 12-ին Մարքսը մի խանդավառ նամակ է գրում Կուգելմանին,—նամակ, վոր մենք հաճույքով կկախեյինք յուրաքանչյուր ռուսական սոցիալ-դեմոկրատի, յուրաքանչյուր ռուսական գրագետ բանվորի պատից։

Մարքսը, վոր 1870 թ. սեպտեմբերին ապստամբությունն անմտություն եր անվանել, 1871 թվի ապրիլին, տեսնելով ժողովրդական մասսայական շարժումը, նրան վերաբերվում է խոշոր դեպքերին մասնակցողի ամենամեծ ուշադրությամբ, դեպքեր, վորոնք համաշխարհային-պատմական հեղափոխական շարժման մեջ մի քայլ առաջ եյին նշանակում։

Այս մի փորձ է, ասում է նա, կործանելու բյուրոկրատական-ռազմական մեքենան, և վոչ թե հենց այնպես հանձնելու ուրիշ ձեռք։ Յեվ նա իսկական ովսաննա յե յերգում պրուդոնիստների և բլանկիստների ղեկավարած պարիզյան «հերոսական» բանվորներին։ «Վորպիսի՛ ճկունություն,—գրում է նա,—վորպիսի՛ պատմական նախաձեռնություն, ինքնազոհողության վորպիսի՛ ընդունակություն ունեն այս պարիզցիները» (եջ 75)... «Պատմությունը դեռ նման հերոսության որինակ չգիտի»։

Մասսաների պատմական նախաձեռնությունը Մարքսն ամենից բարձր է գնահատում։ Ո՛, յեթե մեր ռուսական սոցիալ-դեմոկրատները Մարքսից սովորեյին 1905 թ. հոկտեմբերին և դեկտեմբերին ռուսական բանվորների և գյուղացիների պատմական նախաձեռնության գնահատականը։

Խորագույն մտածողի, վոր կես տարի առաջ անհաջողություն եր նախատեսել, մասսաների պատմական նախաձեռնության առաջ խոնարհվելը,—և անկյանք, անհոգի, պեդանտ «Պետք չե՛ր զենք վերցնել»-ը, մի՞թե սրանք յերկինք ու յերկիր չեն։

Յեվ վորպես մասնակից մասսայական կռվի, վոր նա ապրում եր իրեն հատուկ բոցով ու խանդով, նստած Լոնդոնի աքսորում, Մարքսը ձեռնարկում է քննադատելու «խելահեղ քաջ» պարիզցիների անմիջական քայլերը, պարիզցիների, վորոնք «պատրաստ են յերկինքը գրոհի յենթարկել»։

Ո՛, ինչպես կծիծաղեյին այն ժամանակ Մարքսի վրա մեր այժմյան «ռեալ» իմաստունները մարքսիստներից, վորոնք ջախջախում են 1906—1907 թ. թ. հեղափոխական ռոմանտիկան Ռու-

տատանում: Ինչպես կծաղրեյին մարդիկ մատերիալիստին, տնտեսագետին, ուտոպիստների թշնամուն, վորը խոնարհվում է յերկինքը գրոհի յենթարկելու «փորձի» առաջ: Վո՛րքան արցունք, վո՛րքան ներողամիտ ծիծաղ կամ կարեկցանք կթափեյին ամեն տեսակի պատենավոր մարդուկները խռովարար տենդենցների, ուտոպիզմի առթիվ և այլն, և այլն, դեպի յերկինք խոյացող շարժման այդ գնահատականի առթիվ:

Իսկ Մարքսը չհետևեց խարակաձկների գերիմաստությանը, վորոնք վախենում են քննարկել հեղափոխական կռվի բարձրագույն ձևերի տեխնիկան: Նա քննարկում է հենց ապստամբության տեխնիկական հարցերը: Պաշտպանությո՞ւն, թե՞ հարձակում, ասում է նա, կարծես ռազմական գործողությունները տեղի ունենային Լոնդոնի մոտ: Յեվ նա վճռում է՝ անպայման հարձակում, «պետք էր իսկույն ևեթ գնալ Վերսալի վրա»...

Այս գրված է 1871 թ. ապրիլին, մեծ արյունոտ մայիսից մի քանի շաբաթ առաջ...

Յերկինքը գրոհելու «խելահեղ» գործն սկսող (1870 թ. սեպտեմբերին) ապստամբները «պետք է իսկույն ևեթ գնային Վերսալի վրա»:

«Պետք չէր զենք վերցնել» 1905 թ. դեկտեմբերին՝ ուժով դիմադրելու խլած ազատությունները հետ վերցնելու առաջին փորձերին...

Այո՛, Պլեխանովը զուր չէր համեմատում իրեն Մարքսի հետ:

«Յերկրորդ սխալը»—շարունակում է Մարքսն իր տեխնիկական քննադատությունը—«Կենտրոնական Կոմիտեն» (զինվորական իշխանությունը—նկատեցեք, խոսքն ազգային գվարդիայի ԿԿ-ի մասին է), ԿԿ-ն «չափազանց վաղ վար դրեց իր լիազորությունները...»:

Մարքսը կարողանում էր առաջնորդներին նախազգուշացնել վաղաժամ ապստամբությունից: Իսկ «յերկինքը գրոհող» պրոլետարիատին նա վերաբերվում էր վորպես գործնական խորհրդատու, վորպես մասնակից մասսաների կռվին, վորոնք բարձրացրին ամբողջ շարժումն ամենաբարձր աստիճանի, չնայած Բլանկիի և Պրուդոնի կեղծ թեորիաներին և սխալներին:

«Ինչ էլ լինի,—գրում է նա,—փարիզյան ապստամբությունը, յեթե նույնիսկ հին հասարակության գայլերը, խոզերն ու ստոր գամփռները նրան ճնշեն, մեր կուսակցության ամենափառավոր սխրագործությունն է՝ հունիսյան ապստամբությունից ի վեր»:

Յեվ Մարքսը պրոլետարիատից չթաքցնելով Կոմունայի վոչ մի սխալը, այդ սխրագործությանը մի աշխատություն ձոնեց, վորը մինչև այժմ հանդիսանում է լավագույն ձեռնարկը «յերկինքի» համար մղվող պայքարում,—և ամենասարսափելի խրտվիլակը ազատամիտ և արմատական «խոզերի» համար:

Պլեխանովը դեկտեմբերին մի «աշխատություն» ձոնեց, վորը համարյա կադետների ավետարանը դարձավ:

Այո, իզուր չէր, վոր Պլեխանովն իրեն Մարքսի հետ էր համեմատում:

Կուգելմանը Մարքսին, ինչպես յերևում է, պատասխանեց ինչ-վոր կասկածի «արտահայտություններով», ցուցումներ անելով գործի անհուսալիության վրա, ռեալիզմի վրա՝ ի հակադրություն ռոմանտիկային,—գոնե նա համեմատում էր Կոմունան—ապստամբությունը—Փարիզի 1849 թ. հունիսի 13-ի խաղաղ ցույցի հետ:

Մարքսն անմիջապես (1871 թ. ապրիլի 17-ին) խիստ պատասխան է ուտեցնում Կուգելմանին:

«Համաշխարհային պատմություն կերտել,—գրում է նա,—իհարկե շատ հարմար կլիներ, յեթե պայքարը նախաձեռնվեր միայն անսխալական-բարենպաստ շանսերի պայմանով»:

Մարքսը 1870 թվի սեպտեմբերին ապստամբությունն անմտություն էր անվանում: Բայց յերբ մասսաները ապստամբեցին, Մարքսը ցանկանում է գնալ նրանց հետ, սովորել նրանց հետ միասին, կռվի ընթացքում, և վոչ թե գրասենյակային հորդորներ կարդալ: Նա հասկանում է, վոր շանսերը նախօրոք լրիվ ճշտությամբ հաշվի առնելու փորձը շառլատանություն կամ անհույս պեդանտություն կլիներ: Նա ամենից բարձր է դասում այն, վոր բանվոր դասակարգը հերոսաբար, ինքնազոհ կերպով, իր նախաձեռնությամբ համաշխարհային պատմություն է կերտում: Մարքսն այդ պատմության վրա նայում էր նրանց տեսակետից, ովքեր կերտում են այն, հնարավորություն չունենալով նախօրոք անսխալական կերպով հաշվի առնելու շանսերը, և վոչ թե այն ինտելիգենտ-քաղքենու տեսակետից, վոր բարոյախոսում է՝ «հեշտ էր նախատեսել... պետք չէր վերցնել...»:

Մարքսը կարողանում էր գնահատել և այն, վոր պատմության մեջ մոմենտներ են լինում, յերբ մասսաների կատաղի կռիվը նույնիսկ անհույս գործի համար անհրաժեշտ է՝ հանուն այդ մասսաների հետագա դաստիարակության և նրանց հաջորդ կռվին նախապատրաստելու համար:

Ներկայիս մեր քվազի-մարքսիստներին[1], որոնք ուզում են անտեղի մեջբերումներ անել Մարքսից, որպեսզի նրանից վերցնեն միայն անցյալի գնահատականը, այլ ոչ թե ապագան կերտելու շնորհքը,—միանգամայն անհասկանալի, նույնիսկ սկզբունքով խորթ է այսպիսի հարցադրումը: Պլեխանովը նրա մասին չէր էլ մտածում, երբ 1905 թ. դեկտեմբերից հետո ձեռնարկում էր «արգելակելու» խնդրին...

Բայց Մարքսը հենց այս հարցն էլ դնում է, բնավ չմոռանալով այն, որ 1870 թվի սեպտեմբերին ինքն էր անժամանակ համարում ապստամբությունը:

«Բուրժուական վերսալյան սրիկաները,—գրում է նա,—փարիզցիների առաջ ալտերնատիվ դրին՝ կա՛մ ընդունել մարտակոչը, կա՛մ անձնատուր լինել առանց կռվի: Վերջին դեպքում բանվոր դասակարգի բարոյալքումն անհամեմատ ավելի մեծ դժբախտություն կլիներ, քան ուզածդ չափ առաջնորդների կորուստը»:

Սրանով էլ մենք կվերջացնենք պրոլետարիատին արժանի քաղաքականության դասերի համառոտ տեսությունը, դասեր, որ ավանդում է Մարքսը Կուգելմանին ուղղած նամակներում:

Ռուսաստանի բանվոր դասակարգն արդեն մի անգամ ցույց տվեց և ցույց կտա էլի շատ անգամներ, որ ինքն ընդունակ է «գրոհելու երկինքը»:

Գրված է 1907 թ. փետրվարի 18 (5)-ին
Տպված է 1907 թ. «Կարլ Մարքս.
Նամակներ Լ. Կուգելմանին» գրքույկում:
Հրատարակություն «Новая Дума»-յի:
Երկ., հ. X, էջ 361—367:

[1] — իբր-մարքսիստներին: Խմբ.:

«Ի. Ֆ. ԲԵԿԿԵՐԻ, Ի. ԴԻՑԳԵՆԻ, Ֆ. ԵՆԳԵԼՍԻ, Կ. ՄԱՐՔՍԻ ՅԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ՝ ՈՒՂՂՎԱԾ Ֆ. Ա. ԶՈՐԳԵՅԻՆ ՅԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ» ԳՐՔԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Ռուսական հասարակությանն առաջարկվող՝ Մարքսի, Ենգելսի, Դիցգենի, Բեկկերի և անցյալ դարի միջազգային բանվորական շարժման ուրիշ առաջնորդների նամակների ժողովածուն մեր առաջավոր մարքսիստական գրականության անհրաժեշտ լրացումն է:

Մենք այստեղ մանրամասն կանգ չենք առնի այս նամակների կարևորության վրա՝ սոցիալիզմի պատմության համար և Մարքսի ու Ենգելսի գործունեությունն ամենակողմանիորեն լուսաբանելու համար: Գործի այս կողմը պարզաբանումներ չի պահանջում: Նշենք միայն, որ տպագրվող նամակները հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել Ինտերնացիոնալի պատմության հիմնական աշխատություններին (տե՛ս Jekk[1] «Ինտերնացիոնալ»: Ռուսերեն թարգմանությունը «Знание»-ի հրատարակության), այնուհետև գերմանական և ամերիկյան բանվորական շարժման (տե՛ս Ֆր. Մերինգ, «Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատմություն» և Մորիս Հիլլկվիտ, «Սոցիալիզմի պատմությունն Ամերիկայում») և այլն:

Մտադիր չենք նաև փորձելու տալ այստեղ այդ նամակագրության բովանդակության ընդհանուր տեսությունը և գնահատականը զանազան պատմական շրջանների, որոնց վերաբերում է նա: Այդ բանը հիանալի կերպով կատարել է Մերինգն իր՝ «Der Sorgesche Briefwechsel» («Neue Zeit», 25. Jahrg., Nr. 1 und 2)[2] հոդվածում, որը հավանորեն հրատարակիչը կկցի ներկա

1 — Յեկկ: Խմբ.:

2 — «Զորգեյի նամակագրությունը»: («Նոր ժամանակ», հրատ. 25-րդ տ., № 1 և 2): Խմբ.:

Թարգմանությանը, կամ լույս կտեսնի առանձին ռուսերեն հրատարակությամբ։

Մեր ապրած հեղափոխական դարաշրջանում ռուսական սոցիալիստների համար առանձին հետաքրքրություն ունեն այն դասերը, որ մարտնչող պրոլետարիատը պիտի հետևցնի Մարքսի և Էնգելսի համարյա 30 տարվա (1867—1895) գործունեության ինտիմ կողմերին ծանոթանալուց։ Ուստի զարմանալի չէ, որ նաև մեր սոցիալ-դեմոկրատական գրականության մեջ Զորգեին ուղղած՝ Մարքսի և Էնգելսի նամակների հետ ընթերցողներին ծանոթացնելու առաջին փորձերը կատարվել են ռուսական հեղափոխության մեջ սոցիալ-դեմոկրատական տակտիկայի «մարտական» խնդիրների կապակցությամբ (պլեխանովյան «Современная жизнь», մենշևիկյան «Отклики»)։ Տպագրվող նամակագրության այն տեղերի գնահատականների վրա, որոնք առանձնապես կարևոր են Ռուսաստանի բանվորական կուսակցության ժամանակակից խնդիրների տեսակետից, մենք մտադիր ենք հրավիրել ընթերցողի ուշադրությունը։

Մարքսն ու Էնգելսն իրենց նամակներում ամենից հաճախ արտահայտվել են անգլո-ամերիկական և գերմանական բանվորական շարժման հրատապ հարցերի մասին։ Այդ հասկանալի յե, որովհետև նրանք գերմանացիներ էին, որոնք այդ ժամանակ ապրում էին Անգլիայում և նամակագրություն ունեին իրենց ամերիկացի ընկերների հետ։ Ֆրանսական բանվորական շարժման և առանձնապես Փարիզի Կոմունայի մասին Մարքսն արտահայտվել է ավելի հաճախ և ավելի հանգամանորեն այն նամակներում, որ նա գրել է գերմանական սոցիալ-դեմոկրատ Կուգելմանին[1]։

Զափազանց ուսանելի յե այն համեմատությունը, թե Մարքսն ու Էնգելսն ինչպես են արտահայտվել անգլո-ամերիկական և գերմանական բանվորական շարժման մասին։ Յեթե նկատի ունենանք, որ Գերմանիան մի կողմից, Անգլիան և Ամերիկան մյուս կողմից, իրենցից ներկայացնում են կապիտալիստական զարգացման տարբեր ստադիաներ, բուրժուազիայի, որպես դասակարգի, տիրապետության տարբեր ձևեր այդ յերկրների ամբողջ քաղաքական կյանքում,—այդ դեպքում ցուցանշած համեմատությունն առանձնապես մեծ նշանակություն կունենա։ Գիտական տեսակետից՝ մենք այստեղ տեսնում ենք մատերիալիստական

1 Տե՛ս «Письма К. Маркса к Кугельману»։ Ն. Լենինի առաջաբանով։ Гиз, 1928 г. Խմբ.։

դիալեկտիկայի նմուշ, կարողություն՝ առաջին տեղը քաշելու և ընդգծելու հարցի զանազան կետերը, զանազան կողմերը՝ կիրառված այս կամ այն քաղաքական և տնտեսական պայմանների կոնկրետ առանձնահատկությունների նկատմամբ։ Գործնական քաղաքականության և բանվորական կուսակցության տակտիկայի տեսակետից մենք այստեղ տեսնում ենք այն բանի նմուշը, թե «Կոմունիստական մանիֆեստի» ստեղծողներն ինչպես էին որոշում մարտնչող պրոլետարիատի խնդիրները՝ զանազան յերկրների ազգային բանվորական շարժման տարբեր էտապների նկատմամբ։

Անգլո-ամերիկական սոցիալիզմում Մարքսն ու Էնգելսը ամենից սուր քննադատում են նրա կտրվածությունը բանվորական շարժումից։ Անգլիայի «Սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի» (Social Democratic Federation) և ամերիկական սոցիալիստների մասին նրանց բոլոր կարծիքների միջից կարմիր թելի նման մեղադրանք է անցնում, որ նրանք մարքսիզմը դոգմայի, «քարացած (starre) ուղղափառության» են վերածել, որ նրանք նրանում «հավատո հանգանակ և վոչ թե գործելու ուղեցույց» են տեսնում, որ նրանք չեն կարողանում հարմարվել իրենց շուրջը կատարվող թեորիապես անոգնական, բայց կենդանի, մասսայական հզոր բանվորական շարժմանը։ «Ո՞ւր կլինեյինք մենք այժմ,—բացականչում է Էնգելսը 1887 թ. հունվարի 27-ի նամակում,—յեթե 1864—1873 թ. թ. ժամանակաշրջանում միշտ ցանկանայինք ձեռք-ձեռքի միայն նրանց հետ գնալ, ովքեր բացահայտ կերպով իրենց մեր ծրագրի կողմնակիցներ էին ընդունում»։ Իսկ նախընթաց նամակում (1886 թ. դեկտեմբերի 28) շոշափելով Հենրի Ջորջի գաղափարների ազդեցության հարցն Ամերիկայի բանվոր դասակարգի վրա, նա գրում է.

«Մեկ կամ յերկու միլիոն բանվորների ձայները, որ նոյեմբերին տրված են իսկական («bona fide») բանվորական կուսակցությանը, տվյալ րոպեյին անսահմանորեն ավելի կարևոր են, քան թեորիական տեսակետից անաղարտ ծրագրի ոգտին տրված հարյուր հազարավոր ձայներ»։

Սրանք հետաքրքիր տեղեր են։ Մեզ մոտ գտնվեցին էս-դեկներ, որոնք շտապեցին ոգտագործել դրանք ի պաշտպանություն «բանվորական համագումարի» իդեայի կամ Լարինյան «լայն բանվորական կուսակցության» նման մի բանի։ Ինչո՞ւ վոչ ի պաշտպանություն «ձախ բլոկի»—կհարցնենք մենք Էնգելսի այդպիսի վա-

դահաս «ոգտագործողներին»։ Նամակները, որոնցից վերցված են ցիտատները, վերաբերում են այն ժամանակին, երբ բանվորներն Ամերիկայում ընտրությունների ժամանակ քվեարկում էին Հենրի Ջորջի օգտին։ Տիկին Վիշնևեցկայան—մի ամերիկուհի, որ ամուսնացել էր ռուսի հետ և թարգմանել Էնգելսի երկերը,—խնդրել է նրան, ինչպես երևում է Էնգելսի պատասխանից, մի լավ քննադատել Հենրի Ջորջին։ Էնգելսը գրում է (1886 թ. դեկտեմբերի 28-ին), թե դրա համար ժամանակը դեռ չի հասել, որովհետև ավելի լավ է բանվորական կուսակցությունն սկսի համախմբվել այնքան էլ ոչ բոլորովին մաքուր ծրագրով։ Հետո իրենք բանվորները կհասկանան՝ ինչումն է բանը, «իրենց սխալներով կսովորեն», իսկ խանգարել «միևնույն է՝ ինչ ծրագրի հիման վրա էլ ուզում է լինի՝ բանվորական կուսակցության ազգային ամրացմանը, ես մեծ սխալ կհամարեի»։

Իսկ ինչ խոսք, որ Հ. Ջորջի գաղափարների ամբողջ անհեթեթությունն ու սոցիալիստական ռեակցիոն լինելը Էնգելսը հիանալի հասկանում էր և բազմիցս նշել է։ Զորգեյի նամակագրության մեջ կա 1881 թ. հունիսի 30-ին գրված՝ Կ. Մարքսի չափազանց հետաքրքիր նամակը, որտեղ նա գնահատական է տալիս Հ. Ջորջին, որպես արմատական բուրժուազիայի իդեոլոգի։ «Հ. Ջորջը թեորիապես բոլորովին հետամնաց մարդ է» (total arrière), գրում էր Մարքսը։ Յեվ Ֆ. Էնգելսը չէր վախենում այս իսկական սոցիալիստ-ռեակցիոների հետ միասին ընտրությունների գնալ, միայն թե մարդիկ լինեյին, որ կարողանային մասսաներին կանխասել «իրենց սեփական սխալների հետևանքները» (Էնգելս, 1886 թ. նոյեմբերի 29-ի նամակում)։

«Աշխատանքի ասպետների» (Knights of Labor), այն ժամանակվա բանվորական կազմակերպության մասին հենց նույն նամակում Էնգելսը գրում էր. «Նրանց ամենաթույլ կողմը (բառացի՝ փտած, faulste) քաղաքական ձեռնպահությունն էր...»։ «Շարժման մեջ նոր մտնող յուրաքանչյուր երկրի կարևորագույն քայլերից մեկը պիտի լինի ինքնուրույն քաղաքական կուսակցության կազմակերպումը, միևնույն է, ինչ ճանապարհով էլ դրան հասնեն, միայն թե նա իսկական բանվորական կուսակցություն լինի»։

Ակնհայտ է, որ այստեղից բնավ ոչ՛ինչ չի կարելի եզրակացնել ի պաշտպանություն սոցիալ-դեմոկրատիայից դեպի անկուսակցական բանվորական համագումարը ցատկելը և այլն։ Իսկ

ռադիկալ «սոցիալ-ռեակցիոներների» հետ միատեղ ընտրական կամպանիա թույլ տալու անհրաժեշտությունն այստեղից պիտի հետևցնի ամեն մեկը, ով չի ուզում ընկնել Էնգելսի մեղադրանքի տակ՝ մարքսիզմը նվաստացնել մինչև «դոգմա», «ուղղափառություն», «աղանդավորություն» և այլն։

Բայց իհարկե հետաքրքիր է կանգ առնել ոչ այնքան ամերիկական-ռուսական այս զուգահեռների վրա (մենք պարտավոր էյինք դրանք շոշափել՝ հակառակորդներին պատասխանելու համար), որքան անգլո-ամերիկական բանվորական շարժման հիմնական գծերի վրա։ Այդ գծերն են—պրոլետարիատի առաջադրած փոքր ի շատե խոշոր, համազգային դեմոկրատական խնդիրների բացակայությունը. պրոլետարիատի կատարյալ յենթարկվելը բուրժուական քաղաքականության. սոցիալիստական խմբերի աղանդավորական կտրվածությունը պրոլետարիատից. ընտրությունների ժամանակ սոցիալիստների նույնիսկ նվազագույն հաջողություն չունենալը բանվորական մասսաների մեջ և այլն։ Ով մոռանում է այս հիմնական պայմաններն ու հանձն է առնում լայն եզրակացություններ անել ամերիկական-ռուսական զուգահեռներից, նա ծայրահեղ մակերեսայնություն է հայտաբերում։

Յեթե նման պայմաններում Էնգելսն այսպես ծանրանում է բանվորների տնտեսական կազմակերպությունների վրա, այդ միմիայն նրա համար է, որ խոսքն ամենից ավելի հաստատված դեմոկրատական կարգերին է վերաբերում, որոնք զուտ-սոցիալիստական խնդիրներ են առաջադրում պրոլետարիատին։

Յեթե Էնգելսը ծանրանում է ինքնուրույն բանվորական կուսակցության կարևորության վրա, թեկուզ վատ ծրագրով, ապա այդ նրա համար է, որ խոսքն այն երկրների մասին է, որտեղ մինչև այդ ոչ մի ակնարկ չի յեղել բանվորների ոչ մի քաղաքական ինքնուրույնության մասին,—որտեղ քաղաքականության մեջ բանվորները քարշ են յեկել ու քարշ են գալիս ամենից շատ բուրժուազիայի հետևից։

Փորձել այսպիսի դատողություններից վերցրած եզրակացությունները տարածել այն երկրների կամ պատմական մոմենտների վրա, որտեղ պրոլետարիատն ավելի շուտ է կազմակերպել իր կուսակցությունը, քան ազատամիտ բուրժուաները, որտեղ պրոլետարիատը բուրժուական պոլիտիկաններին թեր քվեարկելու տրադիցիաների հետքն անգամ չունի, որտեղ անմիջական հերթին յեն դրված ո՛չ թե սոցիալիստական, այլ բուրժուական-դեմո-

կրատական խնդիրները,—փորձել այդ կատարել, նշանակում է ծաղրի յենթարկել Մարքսի պատմական մեթոդը:

Ընթերցողի համար մեր միտքն ավելի պարզ կլինի, յեթե մենք անգլո-ամերիկական շարժման վերաբերյալ Ենգելսի կարծիքը առադրենք գերմանականի վերաբերյալ կարծիքներին:

Տպագրվող նամակագրության մեջ այսպիսի կարծիքները նույնպես բազմաթիվ են և չափազանց հետաքրքիր: Յեվ այս բոլոր կարծիքների միջով կարմիր թելի նման մի ինչ-որ բոլորովին այլ բան է անցնում՝ նախազգուշացում բանվորական կուսակցության «աջ թևի» հանդեպ, անխնա (յերբեմն, ինչպես Մարքսի մոտ 1877—1879 թ. թ. կատաղի) պայքար սոցիալ-դեմոկրատիայի մեջ գոյություն ունեցող օպորտունիզմի դեմ:

Նախ այս հաստատենք նամակներից առած ցիտատներով, իսկ հետո կանգ առնենք այդ յերևույթի գնահատականի վրա:

Այստեղ ամենից առաջ պիտի նշել Կ. Մարքսի արտահայտած կարծիքները Հյոխբերգի և Ընկ. մասին: Ֆր. Մերինգն իր «Der Sorgesche Briefwechsel»[1] հոդվածում աշխատում է մեղմել Մարքսի հարձակումներն, ինչպես նաև Ենգելսի ավելի ուշ ժամանակի հարձակումներն օպորտունիստների վրա,—աշխատում է, մեր կարծիքով, մի փոքր չափից դուրս: Մասնավորապես Հյոխբերգի և Ընկ. վերաբերյալ Մերինգը պաշտպանում է իր կարծիքը Լասսալին և լասսալականներին Մարքսի տված անճիշտ գնահատականի վերաբերյալ: Իսկ մեզ այստեղ, կրկնում ենք, հետաքրքրում է ո՛չ թե հենց այս կամ այն սոցիալիստի վրա Մարքսի կատարած հարձակումների ճշտության կամ չափազանցության պատմական գնահատականը, այլ ընդհանրապես սոցիալիզմի մեջ յեղած որոշ հոսանքների՝ Մարքսի սկզբունքային գնահատականը:

Գանգատվելով գերմանական սոցիալ-դեմոկրատների կոմպրոմիսներից՝ լասսալականների և Դյուրինգի հետ (1877 թ. հոկտեմբերի 19-ի նամակը), Մարքսը դատապարտում է նաև կոմպրոմիսը «տհաս ուսանողների և գերխելոք դոկտորների ամբողջ բանդայի» հետ («դոկտոր» գերմաներեն գիտական աստիճան է, որը համապատասխանում է մեր «կանդիդատին» կամ «համալսարանն առաջին կարգով ավարտածին»), «որոնք իրենց նպատակ են դրել «ավելի բարձր իդեալիստական» ուղղություն տալ սոցիալիզմին, այսինքն՝ նրա մատերիալիստական բազան (որը նախքան նրա

1 — «Զորգեյի նամակագրությունը»: Խմբ.:

գործադրումը լուրջ օբյեկտիվ ուսումնասիրություն է պահանջում)—փոխարինել նոր առասպելաբանությամբ՝ նրա արդարադատության, ազատության, հավասարության ու fraternité-ի (յեղբայրության) բոլոր աստվածուհիներով: Այս ուղղության ներկայացուցիչներից մեկն է կուսակցության «անդամությունը գնած» «Zukunft»[1] ժուռնալի հրատարակիչ դ-ր Հյոխբերգը—թույլ եմ տալիս՝ «ամենաբարեմիտ» մտադրություններով, բայց յես թքում եմ ամեն տեսակ «մտադրությունների» վրա: Սակավ է լույս աշխարհ յեկել ավելի խղճուկ և ավելի «համեստ պահանջներով» վորևէ բան, քան նրա «Zukunft»-ի ծրագիրը» (նամակ № 70):

Համարյա յերկու տարի հետո գրած մի ուրիշ նամակում (1879 թ. սեպտեմբերի 19-ին) Մարքսը հերքում է այն բամբասանքները, վորպես թե Ի. Մոստի հետևում կանգնած են նրանք՝ Ենգելսի հետ միասին, և մանրամասն պատմում է Զորգեյին իր վերաբերմունքը դեպի գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ յեղած օպորտունիստները: «Zukunft» ժուռնալը վարում եյին Հյոխբերգը, Շրամը և Եդ. Բերնշտայնը: Մարքսն ու Ենգելսը հրաժարվեցին նման հրատարակությանը մասնակցելուց, իսկ յերբ խոսք ծագեց նույն Հյոխբերգի մասնակցությամբ և նրա դրամական օժանդակությամբ նոր կուսակցական օրգան հիմնելու մասին, Մարքսն ու Ենգելսն սկզբում պահանջեցին ընդունել այս «դոկտորներից, ուսանողներից և կաթեդեր-սոցիալիստներից բաղկացած խառնուրդի» վրա իրենց կողմից վորպես վերահսկիչ նշանակված պատասխանատու խմբագիր Հիրշին, իսկ հետո ուղղակի շրջաբերականով դիմեցին Բեբելին, Լիբկնեխտին և սոցիալ-դեմոկրատական կուսակցության մյուս առաջնորդներին, նախազգուշացնելով, վոր բացահայտ կերպով պայքարելու յեն թեորիայի և կուսակցության «այդպիսի գռեհկացման» (Verluderung—գերմաներեն ավելի ուժեղ բառ է) դեմ, յեթե չփոխվի Հյոխբերգի, Շրամի, Բերնշտայնի ուղղությունը:

Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ այս այն ժամանակն եր, վորի մասին Մերինգն իր «Պատմության» մեջ գրում եր—«Խառնաշփոթության տարի») («Ein Jahr der Verwirrung»): «Բացառիկ օրենքից» հետո կուսակցությունը մի անդամից ուղիղ ճանապարհը չգտավ, ընկնելով նախ Մոստի անարխիզմի և Հյոխբերգի ու Ընկ. օպորտունիզմի մեջ: «Այդ պարոնները,—գրում է Մարքսը վերջինիս մասին,—վորոնք թեո-

1 — «Ապագա»: Խմբ.:

բիական տեսակետից զերո յեն, իսկ գործնականում վոչ մի բանի պետք չեն, ուզում են սոցիալիզմը, (վորի մասին նրանք համալսարանական դեղատոմսով հասկացողություն ունեն) և, գլխավորապես, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը դարձնել ավելի չափավոր, իսկ բանվորներին լուսավորել, կամ, ինչպես իրենք են արտահայտվում, նրանց «կրթության ելեմենտներ» պատվաստել, իրենք միայն խառնակ կիսագիտություն ունենալով, և բացի դրանից, նրանք ամենից առաջ իրենց համար խնդիր են դնում՝ բարձրացնել կուսակցության նշանակությունը մանր բուրժուազիայի աչքում: Այնուամենայնիվ նրանք իրենցից ներկայացնում են վոչ ավելի, վոչ պակաս, քան խղճուկ հակահեղափոխական շաղակրատներ»:

Մարքսի «կատաղի» հարձակումն այնտեղ հասցրեց, վոր օպորտունիստները նահանջեցին և... իրենց նշանակությունը բոլորովին կորցրին: 1879 թ. նոյեմբերի 19-ի նամակում Մարքսը հայտնում է, վոր Հյոխբերգին խմբագրական հանձնաժողովից հեռացրել են, իսկ նրա գաղափարներից հրաժարվել են կուսակցության բոլոր ազդեցիկ առաջնորդները՝ Բեբելը, Լիբկնեխտը, Բրակկեն և ուրիշները: Սոցիալ-դեմոկրատների կուսակցական օրգան «Սոցիալ-դեմոկրատն» սկսել է լույս տեսնել Ֆոլմարի խմբագրությամբ, վորն այդ ժամանակ կանգնած եր կուսակցության հեղափոխական թևում: Մի տարի ևս անց (1880 թ. նոյեմբերի 5-ին) Մարքսը պատմում է, վոր նրանք Ենգելսի հետ միասին միշտ պայքարել են այս «Սոցիալ-դեմոկրատի» «խղճուկ» (miserabel) ղեկավարման դեմ և հաճախ խիստ (wobei's oft scharf hergeht) են պայքարել: Լիբկնեխտը 1880 թ. յեղավ Մարքսի մոտ և խոստացավ, վոր ըստ ամենայնի «բարվոքում» տեղի կունենա:

Հաշտությունը վերականգնված եր, և կռիվը չդրսևորվեց: Հյոխբերգը հետ քաշվեց, իսկ Բեռնշտայնը դարձավ հեղափոխական սոցիալ-դեմոկրատ... գոնե մինչև Ենգելսի մահը—1895 թ.:

Ենգելսը 1882 թվի հունիսի 20-ին գրում է Զորգեյին, պատմելով այդ պայքարի մասին արդեն վորպես անցյալի մասին. «Ընդհանրապես գործերը Գերմանիայում շատ լավ են ընթանում: Ճիշտ է, պարոնայք կուսակցական գրականագետները փորձեցին կուսակցության մեջ ռեակցիոն շրջադարձ կատարել, սակայն փառավորապես խորտակվեցին: Ծաղրանքներին, վորոնց ամենուրեք յենթարկվում են սոցիալ-դեմոկրատ բանվորները, նրանց ավելի հեղափոխական դարձրին, քան նրանք սրանից յերեք տարի առաջ

եյին... Այս պարոնները (կուսակցական գրականագետները) ըստ ամենայնի ցանկանում եյին հեզության, խոնարհության ու քծնելու գնով մուրալ սոցիալիստների դեմ յեղած օրենքի վերացումը, վորն այնքան անողոք կերպով զրկում եր նրանց գրական վաստակից: Այդ օրենքի անկումից հետո պառակտումն, անշուշտ, յերևան կգա, և պ. պ. Ֆիրեկկներն ու Հյոխբերգները և ուրիշները աջ թև կազմելով՝ կանջատվեն. նրանց հետ կարելի կլինի ժամանակ առ ժամանակ բանակցություններ վարել, մինչև վոր վերջնապես նրանք բոլորովին իրենց նշանակությունը կկորցնեն: Այս կարծիքը մենք հայտնել ենք սոցիալիստների դեմ օրենք մտցնելուց անմիջապես հետո, յերբ Հյոխբերգն ու Շրամը կուսակցական գործունեյության մի վերին աստիճանի զզվելի գնահատական տպեցին «Տարեգրի» մեջ և կուսակցությունից ավելի պարկեշտ, բարեկիրթ ու ելեգանտ գործելակերպ պահանջեցին» («jebildetes» — փոխանակ gebildetes: Ենգելսը նկատի յե առնում գերմանական գրականագետների բեռլինյան ակցենտը):

Բեռնշտայնիադայի գուշակությունը, արված 1882 թվին, զարմանալի կերպով հաստատվեց 1898 և հաջորդ տարիներում:

Յեվ այն ժամանակվանից, մանավանդ Մարքսի մահից հետո, Ենգելսը, կարելի յե առանց չափազանցության ասել, անխոնջ կերպով «ուղղում է ծռնափայտը», վոր ծռում են գերմանական օպորտունիստները:

1884 թվի վերջն է: Դատապարտվում են «քաղքենիական նախապաշարումները» ռայխստագի գերմանական սոցիալ-դեմոկրատ պատգամավորների, վորոնք քվեարկել եյին շոգենավարկության սուբսիդիա տալու օգտին («Dampfersubvention» տե՛ս Մերինգի «Պատմության» մեջ): Ենգելսը հաղորդում է Զորգեյին, թե այդ առթիվ ինքն ստիպված է շատ նամակագրություն ունենալ (1884 թվի դեկտեմբերի 31-ի նամակը):

1885 թիվն է: Գնահատելով «Dampfersubvention»-ի ամբողջ պատմությունը, Ենգելսը գրում է (հունիսի 3-ին), թե «քիչ եր մնում բանը պառակտման հասներ»: Սոցիալ-դեմոկրատ պատգամավորների «Ֆիլիստերությունը» «հսկայական էր»: «Մանր բուրժուական սոցիալիստական ֆրակցիան անխուսափելի յե այնպիսի յերկրում, ինչպիսին Գերմանիան է»,—ասում է Ենգելսը:

1887 թիվն է: Ենգելսը պատասխանում է Զորգեյին, վորը գրել եր նրան, թե Ֆիրեկկի (հյոխբերգյան) յերանգի սոցիալ-դե-

մոկրատ) պես մարդկանց պատգամավոր ընտրելով՝ կուսակցությունն իրեն խայտառակում է։ Հնար չկա,— արդարանում է Էնգելսը,— բանվորական կուսակցությունը ռայխստագի համար լավ պատգամավոր վերցնելու տեղ չունի։

«Իսկ աջ թևի պարոններին հայտնի չէ, որ իրենք հանդուրժելի չեն միայն սոցիալիստների դեմ հրապարակված օրենքի հետևանքով և թե կուսակցության թեթև շունչ քաշելու հենց առաջին օրն իրենք կվտարվեն նրանից»։

Առհասարակ ավելի լավ է, «թող կուսակցությունն իր պառլամենտական հերոսներից ավելի բարձր կանգնի, քան ընդհակառակը» (1887 թ. մարտի 3)։ Լիբկնեխտը հաշտվողական է,— գանգատվում է Էնգելսը,— նա տարաձայնությունները շարունակ ֆրազներով է քողարկում։ Բայց երբ գործը պառակտման հասնի,— վճռական րոպեին նա մեզ հետ կլինի։

1889 թիվն է։ Երկու միջազգային սոցիալ-դեմոկրատական կոնգրեսներ են տեղի ունենում Փարիզում։ Ոպորտունիստները (ֆրանսական պոսիբիլիստների գլխավորությամբ) անջատվեցին հեղափոխական սոցիալ-դեմոկրատներից։ Էնգելսը (այդ ժամանակ նա 68 տարեկան էր) նետվում է պայքարի մեջ որպես պատանի։ Մի շարք նամակներ (սկսած 1889 թ. հունվարի 12-ից մինչև հուլիսի 20-ը) նվիրված են ոպորտունիստների դեմ մղված պայքարին։ Հարվածում է ո՛չ միայն նրանց, այլև գերմանացիներին՝ Լիբկնեխտին, Բեբելին և ուրիշներին՝ իրենց հաշտվողականության համար։

Պոսիբիլիստները ծախվել են կառավարությանը,— գրում է Էնգելսը 1889 թ. հունվարի 12-ին։ Իսկ Անգլիական «սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի» (S.D.F.) անդամներին նա մերկացնում է պոսիբիլիստների հետ դաշնակցելու համար։ «Այս անիծված համագումարի առթիվ վազվզոցն ու ահագին նամակագրությունն ուրիշ բանի համար ինձ ժամանակ չեն թողնում» (1889 թ. մայիսի 11)։

Պոսիբիլիստներն աշխատում, չարչարվում են, իսկ մերոնք քնած են,— զայրանում է Էնգելսը։ Այժմ նույնիսկ Աուերը և Շիպպելն են պահանջում, որ մենք գնանք պոսիբիլիստների կոնգրեսին։ Բայց սա «վերջապես» բացեց Լիբկնեխտի աչքերը։ Էնգելսը Բեռնշտայնի հետ պամֆլետներ է գրում ոպորտունիստների դեմ (Բեռնշտայնի ստորագրությամբ,— Էնգելսը նրանց անվանում է «մեր պամֆլետները»)։ «Պոսիբիլիստներն ամբողջ Եվրոպայում

բացի S.D.F.-ից, ոչ մի սոցիալիստական կազմակերպություն չունեն իրենց կողմը (1889 թ. հունիսի 8)։ Հետևաբար նրանց ուրիշ ոչինչ չի մնում անելու, բայց եթե հետ դառնալ ոչ-սոցիալիստական տրեդ-յունիոնների մոտ» (ի գիտություն լայն բանվորական կուսակցության, բանվորական համագումարի մեր երկրպագուների և այլն)։ «Ամերիկայից նրանց մոտ կգա միայն մի պատգամավոր՝ աշխատանքի ասպետներից»։ Հակառակորդը նույնն է, ինչ որ էր բակունինականների դեմ մղվող պայքարում. «միայն այն տարբերությամբ, որ անարխիստների դրոշը փոխարինված է պոսիբիլիստների դրոշով. իրենց սկզբունքների նույն մանրածախ վաճառքը բուրժուազիային՝ զիջումների համար, իսկ որ գլխավորն է՝ առաջնորդների համար փափուկ պաշտոններով (քաղաքային խորհրդի, աշխատանքի բորսայի անդամներ և այլն)»։ Բրուսը (պոսիբիլիստների առաջնորդը) և Հայնդմանը (պոսիբիլիստների հետ միացած S.D.F.-ի առաջնորդը) հարձակվում են «ավտորիտար մարքսիզմի» վրա և ուզում են «նոր Ինտերնացիոնալի միջուկ» կազմել։

«Դու չես կարող երևակայել, թե որքան միամիտ են գերմանացիները։ Հսկայական ջանք եմ գործ դրել՝ համոզելու նույնիսկ Բեբելին իրեն, թե իրոք այստեղ ինչումն է բանը» (1889 թ. հուլիսի 8)։ Եվ երբ երկու կոնգրեսներն էլ կայացան, երբ հեղափոխական սոցիալ-դեմոկրատները թվով գերազանցեցին պոսիբիլիստներից (միացած տրեդ-յունիոնիստների, S.D.F.-ի, ավստրիացիների մի մասի հետ և այլն), Էնգելսը հրճվում է (1889 թ. հուլիսի 17)։ Նրան ուրախացնում է, որ Լիբկնեխտի և ուրիշների հաշտվողական պլաններն ու առաջարկները չհաջողվեցին (1889 թ. հուլիսի 20)։ «Իսկ մեր սենտիմենտալ հաշտվողական եղբայրությանը՝ նրա ամբողջ ընկերասիրության փոխարեն տեղն էր, որ բաժին ընկավ կոպիտ աքացի ստանալն ամենափափուկ տեղին»։ «Թերևս դա նրանց բժշկի մի որոշ ժամանակով»։

... Իրավացի չէ Մերինգը («Der Sorgesche Briefwechsel»), թե Մարքսն ու Էնգելսը «լավ տոնից» քիչ էին հասկանում. «Երկար չէին խորհում՝ հարված հասցնելիս, բայց և չէին նվնվում ստացած յուրաքանչյուր հարվածի համար»։ «Եթե դուք կարծում եք,— գրում էր մի անգամ Էնգելսը,— թե ձեր գնդասեղային ծակոցները կարող են ծակել իմ ծեր, լավ դաբաղած, հաստ կաշին,— դուք սխալվում եք»։ Եվ նրանց ձեռք բերած

այս անգլայությունը,—գրում է Մերինգը Մարքսի և Ենգելսի մասին,—նրանք յենթադրում եյին նաև ուրիշների մեջ։

1893 թիվն է։ «Ֆաբիականների» հաշվեհարդար է, վոր Ենգելսն առիթ է տալիս... դառնալու բերնշտայնականների մասին (ախր Բերնշտայնը զուր չէր իր ոպորտունիզմը «կրթել» Անգլիայում՝ «Փաբիանականներով»)։

«Ֆաբիաններն այստեղ, Լոնդոնում իրենցից կարյերիստների բանդա յեն ներկայացնում, վորոնք, սակայն, բավական առողջ միտք ունեն՝ սոցիալական հեղաշրջման անխուսափելիությունը հասկանալու համար, բայց այս հսկայական աշխատանքը չվստահելով միայն կոպիտ պրոլետարիատին, հաճեցին նրա գլուխն անցնել։ Յերկյուղը հեղափոխության հանդեպ—նրանց հիմնական սկզբունքն է։ Նրանք ինտելիգենտներ են par excellence*)։ Նրանց սոցիալիզմը մունիցիպալ սոցիալիզմ է. կոմունան, բայց վոչ ազգը, առնվազն սկզբում, պետք է արտադրության միջոցների սեփականատերը դառնա։ Իսկ իրենց սոցիալիզմը նրանք պատկերում են բուրժուազիայի լիբերալիզմի ծայրահեղ, բայց անխուսափելի հետևանք։ Այստեղից էլ բղխում է նրանց տակտիկան. լիբերալների դեմ վճռական պայքար չմղել, վորպես հակառակորդների դեմ, այլ հրել նրանց դեպի սոցիալիստական յեզրակացություններ, այսինքն՝ խաբել նրանց, «լիբերալիզմը տոգորել սոցիալիզմով», լիբերալներին չհակադրել սոցիալիստ թեկնածուներ, այլ նրանց խցկել լիբերալների մոտ, այսինքն խաբելով անցկացնել նրանց... Բայց վոր այդ դեպքում կամ իրենք խաբված կլինեն, կամ սոցիալիզմին կխաբեն, նրանք, իհարկե, չեն հասկանում։

Ֆաբիականներն, ամեն տեսակ անպետք բաների հետ միասին, մեքանի պրոպագանդիստական լավ յերկեր են հրատարակեցին և այս ամենալավն է այն բոլորից, վոր այս բնագավառում արել են անգլիացիները։ Բայց հենց վոր նրանք վերադառնում են իրենց սպեցիֆիկ տակտիկային՝ դասակարգային պայքարի նսեմացմանը, իսկույն բանը վատանում է։ Դասակարգային պայքարի պատճառով նրանք ֆանատիկորեն ատում են Մարքսին ու մեզ բոլորիս։

Ֆաբիականներն, իհարկե, շատ բուրժուական կողմնակիցներ ունեն, այդ պատճառով էլ իրենց տրամադրության տակ «մեծ փողեր» ունեն...»։

---

1 — գերազանցապես։ Խմբ.։

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԱԿԱՆ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԿԼԱՍԻԿ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1894 թիվ։ Գյուղացիական հարց։

«Ցամաքի վրա,—գրում է Ենգելսը 1894 թ. նոյեմբերի 10-ին,—վորքան շարժումն աճում է, այնքան էլ մեծանում է ձգտումը դեպի ավելի մեծ հաջողություններ, իսկ գյուղացիներ վորսալն, այս բառի տառացի իմաստով, մոդա յե դառնում։ Սկզբում Փրանսացիները Լաֆարգի բերանով Նանտում հայտարարեցին, թե վո՛չ միայն մեր գործը չէ շտապեցնել մանր գյուղացիության քայքայումը, այս մասին մեզ համար կհոգա կապիտալիզմը,—այլև ուղղակի պետք է պաշտպանել գյուղացուն հարկից, վաշխառուներից և խոշոր հողատերերից։ Բայց սրա հետ մենք արդեն վոչ մի կերպ համաձայնել չենք կարող, վորովհետև սա, նախ, հիմար բան է, և յերկրորդ—նաև անկարելի։ Սրանից անմիջապես հետո Ֆրանկֆուրտում յելույթ է ունենում Ֆոլմարը, վոր ընդհանրապես մտադրվում է կաշառել գյուղացիներին, ըստվորում գյուղացին, վորի հետ նա գործ ունի Վերին-Բավարիայում, այն չէ, ինչ մերձռենոսյան մանր, պարտքերով ճզմված գյուղացին, այլ միջակ և ինքնուրույն խոշոր հողատեր է, վոր շահագործում է բատրակներին և բատրակուհիներին և հացի ու անասունների առուտուր է անում։ Իսկ հաշտվել սրա հետ—առանց հրաժարվելու ամեն տեսակ սկզբունքներից—անկարելի յե»։

1894 թ., դեկտեմբերի 4.

«...Բավարացիները շատ և շատ են ոպորտունիստացել և համարյա թե հասարակ ժողովրդական կուսակցություն են դարձել (յես խոսում եմ առաջնորդների մեծամասնության և կուսակցության մեջ մտած շատ նորեկների մասին). բավարական լանդտագում նրանք քվեարկել են բյուջեյի ոգտին՝ ամբողջովին, իսկ հատկապես Ֆոլմարն ագիտացիա յե կազմակերպել գյուղացիների մեջ՝ նպատակ ունենալով իր կողմը գրավել վո՛չ թե բատրակներին, այլ վերին-բավարական խոշոր հողատերերին—մարդիկ, վորոնք տեր են 20—80 ակր հողի (10—13 հեկտար), այսինքն՝ բոլորովին անկարող են առանց վարձու բանվորի յոլա գնալ»...

Աստեղից տեսնում ենք, վոր ավելի քան տասը տարվա ընթացքում Մարքսն ու Ենգելսը սիստեմատիկ, անշեղ կերպով պայքարել են գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության

մեջ յեղած օպորտունիզմի դեմ և հետապնդել են ինտելիգենտական ֆիլիստերությունն ու մեշչանականությունը սոցիալիզմի մեջ: Շատ կարևոր փաստ է այս: Լայն հասարակությունը գիտի, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիան օրինակ է համարվում մարքսիստական քաղաքականության և պրոլետարիատի տակտիկայի, բայց չգիտի, թե մարքսիզմի հիմնադիրներն ի՛նչ մշտական պայքար են հարկադրված յեղել մղել այս կուսակցության «աջ թևի» (Էնգելսի արտահայտությունը) դեմ: Վոր այդ պայքարն Էնգելսի մահից հետո շատ շուտով գաղտնի վիճակից հայտնի դարձավ,—պատահականություն չէ այս: Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պատմական զարգացման տասնամյակների անխուսափելի հետևանքն է այս:

Յեվ այժմ մեր առաջ առանձնապես ցայտուն կերպով են ծառանում Էնգելսյան (և Մարքսյան) խորհուրդների, ցուցումների, ուղղումների, սպառնալիքների և խրատների յերկու գծերը: Անգլո-ամերիկական սոցիալիստներին նրանք ամենից ավելի հաստատակամությամբ կոչ եյին անում՝ ձուլվել բանվորական շարժման հետ, իրենց կազմակերպություններից արմատախիլ անել նեղ ու կոշտացած աղանդավորական վոգին: Գերմանական սոցիալ-դեմոկրատներին նրանք ամենից ավելի հաստատակամությամբ սովորեցնում եյին. մի՛ ընկեք ֆիլիստերության, «պառլամենտական կրետինիզմի» (Մարքսի արտահայտությունը 1879 թ. սեպտեմբերի 19-ի նամակում), քաղքենիական-ինտելիգենտական օպորտունիզմի մեջ:

Մի՞թե բնորոշ չէ, վոր մեր սոցիալ-դեմոկրատական սանամերները կրկնում եյին առաջին տեսակի խորհուրդների մասին և փակում եյին շրթունքները, լռության տալով յերկրորդ տեսակի խորհուրդները: Մի՞թե Մարքսի և Էնգելսի նամակների գնահատականում այսպիսի միակողմանիությունը լավագույն ցուցանիշ չէ մեր վորոշ ռուսաստանյան, սոցիալ-դեմոկրատական... «միակողմանիության»:

Ներկայումս, յերբ միջազգային բանվորական շարժումը խոր խմորման և տատանման նշաններ է յերևան բերում, յերբ օպորտունիզմի, «պառլամենտական կրետինիզմի» և ֆիլիստերական ռեֆորմիզմի ծայրահեղությունները հեղափոխական սինդիկալիզմի հակառակ ծայրահեղություններն են առաջ բերել,—ներկայումս Մարքսի և Էնգելսի «ուղղումների» ընդհանուր գիծը անգլո-ամերիկական և գերմանական սոցիալիզմի նկատմամբ բացառիկ կարևորություն է ստանում:

Այնպիսի յերկրներում, վորտեղ չկա սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն, չկան սոցիալ-դեմոկրատ պատգամավորներ պառլամենտներում, չկա վոչ մի սիստեմատիկ, կայուն սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն վո՛չ ընտրությունների ժամանակ, վո՛չ մամուլում և այլն,—այդպիսի յերկրներում Մարքսն ու Էնգելսը սովորեցնում եյին սոցիալիստներին՝ ինչպես էլ լինի պատռել նեղ աղանդավորականությունը և հարել բանվորական շարժմանը՝ պրոլետարիատին քաղաքականորեն թափահարելու համար: Վորովհետև վո՛չ Անգլիայում, վո՛չ Ամերիկայում XIX դարի վերջին յերրորդում պրոլետարիատը համարյա վոչ մի քաղաքական ինքնուրույնություն հանդես չի բերել: Քաղաքական ասպարեզն այս յերկրներում, վորտեղ բացարձակապես բացակայում են բուրժուա-դեմոկրատական պատմական խնդիրները, ամբողջովին լցված եր հաղթանակող ինքնաբավական բուրժուազիայով, վորն աշխարհում իրեն հավասարը չունի՝ բանվորներին խաբելու, այլասերելու, կաշառելու արվեստում:

Կարծել, թե Մարքսի և Էնգելսի այս խորհուրդներն անգլո-ամերիկական բանվորական շարժման հասցեյին կարող են պարզ և ուղղակի կերպով կիրառվել ռուսաստանյան պայմանների վերաբերմամբ,—նշանակում է օգտագործել մարքսիզմը վո՛չ թե նրա մեթոդը պարզելու համար, վո՛չ թե վորոշ յերկրներում բանվորական շարժման կոնկրետ պատմական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար, այլ մանր, ֆրակցիոն, ինտելիգենտական հաշիվների համար:

Ընդհակառակն, այնպիսի յերկրում, վորտեղ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը մնացել է անավարտ, վորտեղ թագավորել և թագավորում է «պառլամենտական ձևերով կարած զինվորական բռնակալությունը» (Մարքսի արտահայտությունը նրա «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ), վորտեղ պրոլետարիատը վաղուց է ներգրավված քաղաքականության մեջ և սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն է վարում,—այդպիսի յերկրում Մարքսն ու Էնգելսն ամենից շատ եյին վախենում պառլամենտական գռեհկացումից, բանվորական շարժման խնդիրները և թափը ֆիլիստերաբար հաշտեցնելուց:

Մարքսիզմի այս կողմը մենք ավելի ևս պարտական ենք ընդգծել և Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության դարաշրջանում առաջին շարքը մղել, վոր մեզ մոտ ընդարձակ, «փայլուն», հարուստ լիբերալ-բուրժուական մամուլը հազարավոր

ձայներով փաղաքշում է պրոլետարիատին՝ հարևան գերմանական բանվորական շարժման «օրինակելի» լոյալության, պառլամենտական լեգալության, համեստության և չափավորության մասին:

Ռուսական հեղափոխության բուրժուական դավաճանների այս շահախնդիր սուտը հետևանք է ո՛չ պատահականության և ո՛չ էլ կադետական բանակից ինչ-որ անցյալ կամ ապագա մինիստրների անձնական փչացածության: Նրա պատճառը ռուսաստանյան լիբերալ կալվածատերերի և լիբերալ բուրժուաների խոր տնտեսական շահերն են: Եվ այս սուտի, «մասսաների այս բթացման» («Massenverdummung»—Էնգելսի արտահայտությունը 1886 թ. նոյեմբերի 29-ի նամակում) դեմ մղած պայքարում Մարքսի և Էնգելսի նամակները պետք է անփոխարինելի զենք ծառայեն ռուսաստանյան բոլոր սոցիալիստների համար:

Լիբերալ բուրժուաների շահախնդիր սուտը ցույց է տալիս ժողովրդին գերմանական սոցիալ-դեմոկրատների օրինակելի «համեստությունը»: Այս սոցիալ-դեմոկրատների առաջնորդները, մարքսիզմի թեորիայի հիմնադիրները, ասում են մեզ.

«Ֆրանսիացիների հեղափոխական յելույթը յերևան բերեց Ֆիրեկկի և Ընկ. (օպորտունիստ սոցիալ-դեմոկրատները գերմանական պառլամենտական սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայում) կեղծավորությունն՝ ավելի ևս տգեղ ձևով» (խոսքը ֆրանսական պառլամենտում բանվորական կուսակցություն կազմելու և Դեկազվիլյան գործադուլի, ֆրանսական պրոլետարիատից անջատված ֆրանսական ռադիկալների մասին է): «Վերջին սոցիալիստական վիճաբանությունների ժամանակ յելույթ ունեցան արդեն միայն Լիբկնեխտն ու Բեբելը և յերկուսն էլ շատ հաջող: Այսպիսի վիճաբանություններով մենք կրկին կարող ենք յերևալ կարգին հասարակության մեջ, որ, դժբախտաբար, առաջ ոչ ամեն ժամանակ եր տեղի ունենում: Ընդհանրապես լավ է այս, որ գերմանացիների մոտ, մանավանդ նրանից հետո, յերբ նրանք ռայխստագ ուղարկեցին ֆիլիստերների այնպիսի մեծ թիվ (որ, սակայն, անխուսափելի յեր), վիճակվում է միջազգային սոցիալիստական շարժման ղեկավարների դերը: Գերմանիայում խաղաղ ժամանակ ամեն ինչ փիլիստերական է դառնում, և այդպիսի մոմենտներին բացարձակապես անհրաժեշտ է ֆրանսական մրցման խայթոցը...» (1886 թվի ապրիլի 29-ի նամակը):

Ահա թե ինչ դասեր պիտի շատ ամուր կերպով յուրացնի Ռուսաստանյան Սոցիալ-դեմոկրատական Բանվորական կուսակ-

ցությունը, որ գտնվում է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գերակշռող գաղափարական ազդեցության տակ:

Այս դասերը մեզ ավանդում է ո՛չ թե XIX դարի մեծագույն մարդկանց նամակագրության այս կամ այն առանձին տեղը,—այլ պրոլետարիատի միջազգային փորձի նրանց ընկերական, շիտակ, դիպլոմատության և մանր հաշիվներին խորթ քննադատության ամբողջ ոգին ու ամբողջ բովանդակությունը:

Թե Մարքսի և Էնգելսի նամակներն իսկապես մինչև ո՛ր աստիճան են տոգորված այս ոգով, կարող են ցույց տալ նաև հետևյալ, ճիշտ է, համեմատաբար մասնավոր, բայց դրա փոխարեն չափազանց բնորոշ տեղերը:

1889 թվին Անգլիայում սկսվում եր չսովորած, անվորակ, հասարակ բանվորների (գազային, դոկերների և այլն) յերիտասարդ, թարմ, նոր ու հեղափոխական ոգով լի շարժումը: Էնգելսը հիացած եր դրանից: Նրանց մեջ ագիտացիա մղող՝ Մարքսի աղջիկ «Տասիի» (Tussy) դերը նա հաղթականորեն է ընդգծում:

«Ամենից գարշելին այստեղ,—գրում է նա 1889 թվի դեկտեմբերի 7-ին Լոնդոնից,—դա բանվորների մսի ու արյան մեջ ներծծված բուրժուական «ռեսպեկտաբելությունն է»: Հասարակության սոցիալական անդամաբաժանումը անթիվ, անվիճելի կերպով բոլորի կողմից ընդունված գրադացիաների, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած ունի իր «հոնորը» և տոգորված է հարգանքի բնածին զգացումներով դեպի «լավագույններն» ու «բարձրերը», այնքան հին, այնքան կայուն է, որ բուրժուազիայի համար այնքան էլ դժվար չէ մասսաներին խաբել: Ես, օրինակ, բնավ համոզված չեմ, թե Ջոն Բյորնսը (Burns) իր հոգում պարծենում է ավելի շատ իր հեղինակությամբ իր դասակարգի մեջ, քան իր հեղինակությամբ կարդինալ Մաննինգի, լորդ-մերի և առհասարակ բուրժուազիայի մոտ: Իսկ Չեմպիոնը (Champion)—պաշտոնաթող լեյտենանտը—դեռ շատ տարիներ առաջ ինչ-որ գործեր եր կատարում բուրժուական և, գլխավորապես, կոնսերվատիվ տարրերի հետ, իսկ տերտերական յեկեղեցական համագումարում սոցիալիզմ եր քարոզում և այլն: Եվ նույնիսկ ինքը, Թոմ Մենը (Mann), որին յես նրանց մեջ ամենից լավն եմ համարում, նա էլ սիրում է պատմել այն մասին, թե ինքն ինչպես է նախաճաշելու լորդ-մերի մոտ: Եվ միայն յերբ զուգադրում ես նրանց ֆրանսիացիների հետ, համոզվում

ես, թե այս տեսակետից հեղափոխությունն ինչ բարեբար կերպով է ազդում»:

Կոմենտարիաներն ավելորդ են:

Դարձյալ օրինակ: 1891 թվին յեվրոպական պատերազմի վտանգ կար: Այս առթիվ Էնգելսը նամակագրություն ուներ Բեբելի հետ և նրանք համաձայն էին այն բանում, թե Ռուսաստանը Գերմանիայի վրա հարձակվելիս՝ գերմանական սոցիալիստները պարտավոր կլինեն կատաղաբար կռվել ռուսների և ռուսների ամեն տեսակի դաշնակիցների դեմ:

«Յեթե Գերմանիան խեղդվի, մենք էլ նրա հետ միասին: Իսկ բարենպաստ շրջադարձի դեպքում կռիվն այնպիսի կատաղի բնույթ կստանա, վոր Գերմանիան դիմանալ կարող է միայն հեղափոխական միջոցներով, ուստի մենք, շատ հնարավոր է, ստիպված կլինենք կառավարության ղեկը վերցնել և 1793 թվականը խաղալ» (1891 թ. հոկտեմբերի 24-ի նամակը):

Ի տեղեկություն այն օպորտունիստների, վորոնք աշխարհով մեկ գոռում էին «յակոբինյան» հեռանկարների վոչ-սոցիալ-դեմոկրատականության մասին ռուսական բանվորական կուսակցության համար 1905 թվին: Էնգելսը Բեբելին ուղղակի ցույց էր տալիս այն հնարավորությունը, թե սոցիալ-դեմոկրատները ստիպված կլինեն մասնակցելու ժամանակավոր կառավարությանը:

Միանգամայն բնական է, վոր այսպիսի հայացք ունենալով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների խնդիրների մասին, Մարքսն ու Էնգելսը լի էին ամենալավատես հավատով դեպի ռուսական հեղափոխությունը և դեպի նրա հզոր համաշխարհային նշանակությունը: Համարյա ամբողջ քսան տարվա ընթացքում տվյալ նամակագրության մեջ տեսնում ենք Ռուսաստանի հեղափոխության այդ տենչալի սպասումը:

Ահա Մարքսի 1877 թ. սեպտեմբերի 27-ի նամակը: Արևելյան ճգնաժամը Մարքսի մեջ հիացմունք է առաջացնում: «Ռուսաստանն արդեն վաղուց է կանգնած մեծ հեղաշրջումների շեմքին, և սրա համար անհրաժեշտ բոլոր էլեմենտներն արդեն հասունացել են: Շնորհիվ կորովի տաճիկների հասցրած հարվածների՝ պոռթկումը շատ տարիներով արագացել է... Հեղաշրջումը կսկսվի secundum artem («արվեստի բոլոր օրենքների համաձայն») սահմանադրական խաղերից և լավ տուրուդմբոց կառաջանա (il y aura un beau tapage): Յեվ մայր բնության բարեհաճությամբ մենք կապրենք մինչև այդ հաղթանակը»: (Մարքսն այդ ժամանակ 61 տարեկան եր):

Մայր բնությունը մինչև «այդ հաղթանակը» չթողեց, չեր էլ կարող նույնիսկ թողնել, վոր Մարքսն ապրի: Բայց «սահմանադրական խաղերը» նա նախագուշակեց, և նրա խոսքերը կարծես հենց յերեկ լինեն գրված ռուսական I և II Դումաների մասին: Բայց չե՞ վոր ժողովրդին «սահմանադրական խաղերից» նախազգուշացնելն էլ հենց «կենդանի հոգին» եր կազմում լիբերալների և օպորտունիստների կողմից այնքան ատելի բոյկոտի տակտիկայի...

Ահա Մարքսի 1880 թ. նոյեմբերի 5-ի նամակը: Նա հրճվում է Ռուսաստանում «Կապիտալի» ունեցած հաջողությունից և նարոդովոլյականների կողմն է անցնում՝ ընդդեմ այդ ժամանակ հենց նոր կազմակերպված չյորնի-պերեդելականների: Մարքսը ճիշտ է ըմբռնել նրանց հայացքների անարխիստական տարրերը, և այն ժամանակ չիմանալով ու հնարավորություն չունենալով իմանալու չյորնի-պերեդելական-նարոդնիկների գալիք էվոլյուցիան դեպի սոցիալ-դեմոկրատները, Մարքսն իր խարազանիչ ծաղրի ամբողջ ուժով հարձակվում է չյորնի-պերեդելականների վրա.

«Այս պարոնները դեմ են ամեն տեսակ քաղաքական-հեղափոխական յելույթների: Ռուսաստանը, նրանց պլանով, պետք է թռիչքը գործի ուղղակի դեպի անարխիստական-կոմունիստական-աթեիստական հազարամյակը: Իսկ մինչ այդ՝ նրանք այդ թռիչքը նախապատրաստում են ամենաատելի դոկտրինյորությամբ: Նրանց ուսմունքի այսպես կոչված սկզբունքներն առնված են հանգուցյալ Բակունինից»:

Այստեղից կարելի յե տեսնել, թե սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական-հեղափոխական յելույթների կարևորությունն ինչպես կգնահատեր Մարքսը 1905 և հաջորդ թվերի Ռուսաստանի համար[1]:

Ահա Էնգելսի 1887 թվի ապրիլի 6-ի նամակը: «Դրա փոխարեն, կարծես, մոտ է ճգնաժամը Ռուսաստանում: Վերջին մահափորձերը մեծ իրարանցում են առաջ բերել...»:

---

1 Ի դեպ: Յեթե հիշողությունս ինձ չի դավաճանում, Պլեխանովը կամ Վ. Ի. Զասուլիչը 1900—1903 թ. թ. ինձ պատմել են «Մեր տարաձայնությունների» և Ռուսաստանի առաջիկա հեղափոխության բնույթի վերաբերյալ Էնգելսի՝ Պլեխանովին ուղղած նամակի գոյության մասին: Հետաքրքրական կլիներ ճշտորեն իմանալ՝ յեղե՞լ է այդպիսի նամակ, մնո՞ւմ է այն և ժամանակը չե՞ արդյոք հրատարակելու այն:

1887 թ. ապրիլի 9-ի նամակը նույնն է... «Բանակը լի յէ դժգոհ ու դաղտնի աշխատող սպաներով» (այդ ժամանակ Ենգելսը գտնվում եր նարոդովոլյական հեղափոխական պայքարի ազդեցության տակ, հույս դնելով սպաների վրա և դեռ չտեսնելով ռուսական զինվորի և նավաստու հեղափոխականությունը, վոր այնքան փայլուն կերպով յերևան յեկավ 18 տարի հետո...): «...Չեմ կարծում, թե իրերի ներկա դրությունը թեկուզ մի տարի դիմանա: Իսկ յերբ հեղափոխությունը պայթի («losgeht») Ռուսաստանում, այն ժամանակ ուռա՛»:

1887 թվի ապրիլի 23-ի նամակը. «Գերմանիայում տեղի յեն ունենում հետապնդումներ (սոցիալիստների) հետապնդումների հետևից: Բիսմարկը, կարծես, ամեն ինչ ուզում է պատրաստել այն բանի համար, վոր այն մոմենտին, յերբ Ռուսաստանում հեղափոխություն բռնկվի, վորը միքանի ամիսների հարց է, Գերմանիան կարողանա անմիջապես նրա որինակին հետևել» («losgeschlagen werden»):

Ամիսները շատ ու շատ յերկար յեղան: Կասկած չկա, կգտնվեն փիլիստերներ, վորոնք ճակատը կիտելով, դեմքը կնճռոտելով, սուր կերպով կդատապարտեն Ենգելսի «ռևոլյուցիոնարիզմը» կամ ներողամտաբար կծիծաղեն ծեր հեղափոխական-եմիգրանտի հին ուտոպիաների վրա:

Այո, Մարքսն ու Ենգելսը շատ են սխալվել և հաճախ են սխալվել հեղափոխության մոտալուտությունը վորոշելու մեջ, հեղափոխության հաջողության հույսերի մեջ (որինակ, 1848 թ. Գերմանիայում), գերմանական «հանրապետության մոտալուտ» լինելու հավատում («մեռնել հանրապետության համար», գրում եր այդ ժամանակաշրջանի մասին Ենգելսը, հիշելով իր տրամադրությունը, վորպես 1848—1849 թվերի կայսրության սահմանադրության համար ռազմական կամպանիայի մասնակցի): Նրանք սխալվեցին 1871 թվին, յերբ զբաղված եյին նրանով, վոր «բարձրացնեն Ֆրանսիայի հարավը, վորի համար նրանք (Բեկկերը գրում է՝ «մենք» իր և մերձավոր բարեկամների մասին. 1871 թ. հուլիսի 21-ի №14 նամակը) զոհեցին և վտանգի յենթարկեցին ամեն ինչ, վոր մարդու ուժը կպատեր...»: Նույն նամակում. «Յեթե մենք մարտին ու ապրիլին ավելի շատ փող ունենայինք, ապա վոտքի կհանեյինք ամբողջ Հարավային Ֆրանսիան և կփրկեյինք Փարիզի կոմունան» (եջ 29): Սակայն հեղափոխական մտքի հսկաների այսպիսի սխալները, վորոնք բարձրացրել ու բարձրաց-

նում են ամբողջ աշխարհի պրոլետարիատին մանր, առօրյա կոպեկանոց խնդիրների մակարդակից վեր,—հազար անգամ ավելի վեհ, վսեմ ու պատմականորեն ավելի գնահատելի, ճիշտ են, քան գռեհիկ իմաստությունը կազյոննի լիբերալիզմի, վոր յերգում, աղմկում, բացականչում, բարբառում է հեղափոխական ունայնությունների ունայնության մասին, հեղափոխական պայքարի ապարդյունության մասին, հակահեղափոխական «սահմանադրական» զառանցանքների հրաշալիության մասին...

Ռուսական բանվոր դասակարգն իրեն համար ազատություն կնվաճի և իր սխալներով լի հեղափոխական գործողություններով Յեվրոպային առաջ ընթանալու խթան կտա—և թող գռեհիկները փքվեն իրենց հեղափոխական անգործության անսխալականությամբ:

19 (6) ապրիլի 1907 թ.:
Տպագրված է «Ի. Ֆ. Բեկկերի, Ց. Դիցգենի, Ֆ. Ենգելսի,
Կ. Մարքսի և ուրիշների նամակները
Ֆ. Ա. Զորգեյին և ուրիշներին» գրքում:
Պ. Գ. Դաուգեյի հրատարակություն:
Ստորագրություն՝ Ն. Լ ե ն ի ն:
Յերկ., հ. XI, եջ 161—179:

ՄԱՐՔՍԻԶՄ ՅԵՎ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄ

Հայտնի ասացված է, վոր յեթե յերկրաչափական աքսիոմաները դիպչեյին մարդկանց շահերին, նրանք անշուշտ կհերքվեյին։ Բնապատմական թեորիաները, վորոնք դիպչում եյին թեոլոգիայի հին նախապաշարումներին, ամենակատաղի պայքար եյին հարուցում ու մինչև որս էլ հարուցում են։ Զարմանալի չե, վոր Մարքսի ուսմունքը, վոր ուղղակի ծառայում է ժամանակակից հասարակության առաջավոր դասակարգի լուսավորությանն ու կազմակերպմանը, ցույց է տալիս այդ դասակարգի խնդիրները և ապացուցում է ժամանակակից հասարակակարգի անխուսափելի փոխարինումը—տնտեսական զարգացման հետևանքով—նոր կարգերով, զարմանալի չե, վոր այդ ուսմունքն ստիպված եր իր ամեն մի քայլափոխը կյանքի ճանապարհին կռվով գրավել։

Կարիք չկա խոսելու բուրժուական գիտության և փիլիսոփայության մասին, վոր ավանդում են պաշտոնական յեղանակով պաշտոնական պրոֆեսորները՝ ունևոր դասակարգերի հասունացող յերիտասարդությանը հիմարացնելու և նրան արտաքին ու ներքին թշնամիների վրա «քըս» տալու համար։ Այդ գիտությունը լսել էլ չի ուզում մարքսիզմի մասին, հերքված ու վոչնչացված հայտարարելով այն. և՛ յերիտասարդ գիտնականները, վորոնք սոցիալիզմի հերքումով կարյերա են ստեղծում իրենց համար, և՛ զառամյալ ծերունիները, վոր ամեն տեսակ խարխլած «սիստեմների» ավանդն են պահում, միակերպ յեռանդով հարձակվում են Մարքսի վրա։ Մարքսիզմի աճումը, բանվոր դասակարգի մեջ նրա գաղափարների տարածումն ու աճումը անխուսափելիորեն հաճախացնում ու սրում է այդ բուրժուական հարձակումները մարքսիզմի դեմ, վորն ամեն անգամ պաշտոնական գիտության կողմից «վոչնչացվելուց» հետո ավելի ամուր, ավելի կուռ ու կենսունակ է դառնում։

Սակայն բանվոր դասակարգի պայքարի հետ կապված՝ առավելապես պրոլետարիատի մեջ տարածված ուսմունքների շրջանում էլ մարքսիզմն ամենևին միանգամից չի ամրացրել իր դրությունը։ Իր գոյության առաջին կես դարում (XIX դարի 40-ական թվականներից) մարքսիզմը պայքարել է այնպիսի թեորիաների դեմ, վորոնք արմատապես թշնամի յեն յեղել նրան։ 40-ական թվականների առաջին կեսին Մարքսն ու Էնգելսն իրենց հաշիվները մաքրեցին ռադիկալ յերիտասարդ-հեգելականների հետ, վորոնք կանգնած եյին փիլիսոփայական իդեալիզմի տեսակետի վրա։ 40-ական թվականների վերջին հանդես է գալիս պայքարը տնտեսական ուսմունքների դեմ՝ պրուդոնիզմի դեմ։ Հիսունական թվականներն այդ պայքարն իր վախճանին են հասցնում—քննադատություն կուսակցությունների և ուսմունքների, վորոնք դրսևորվել եյին փոթորկալից 1848 թվականին։ 60-ական թվականներին պայքարն ընդհանուր թեորիայի բնագավառից անմիջական բանվորական շարժմանն ավելի մոտ բնագավառն է տեղափոխվում—բակունիզմի վտարումն Ինտերնացիոնալից։ 70-ական թվականների սկզբին Գերմանիայում կարճ ժամանակով աչքի յե ընկնում պրուդոնիստ Մյուլբերգերը. 70-ական թվականների վերջին՝ պոզիտիվիստ Դյուրինգը։ Բայց թե՛ մեկի և թե՛ մյուսի ազդեցությունը պրոլետարիատի վրա արդեն միանգամայն չնչին եր։ Մարքսիզմն անպայմանորեն արդեն հաղթում է բանվորական շարժման բոլոր մյուս իդեոլոգիաներին։

Անցյալ դարի 90-ական թվականներին այդ հաղթությունն իր հիմնական գծերով ավարտվեց։ Նույնիսկ ռոմանական յերկրներում, վորտեղ պրուդոնիզմի տրադիցիաներն ամենից յերկար դիմացան, բանվորական կուսակցություններն իրապես իրենց ծրագրերն ու տակտիկան մարքսիստական հիմքի վրա կառուցեցին։ Բանվորական շարժման միջազգային վերանորոգված կազմակերպությունը—պարբերական միջազգային համագումարների ձևով—բոլոր եյական հարցերում միանգամից և համարյա առանց պայքարի մարքսիստական հողի վրա կանգնեց։ Բայց յերբ մարքսիզմը դուրս մղեց իրեն թշնամի բոլոր քիչ թե շատ ամբողջական ուսմունքները, այն տենդենցները, վորոնք արտահայտվում եյին այդ ուսմունքների մեջ, սկսեցին իրենց համար այլ ուղիներ փնտռել։ Փոխվեցին պայքարի ձևերն ու առիթները, բայց պայքարը շարունակվում եր։ Յեվ մարքսիզմի գոյության յերկրորդ կես դարն էլ սկսվեց պայքարով (անցյալ դարի 90-ական թվականները) մարքսիզմի ներսում մարքսիզմին թշնամի հոսանքի դեմ։

Նախկին ուղղափառ մարքսիստ Բերնշտայնն անուն տվեց այդ

հոսանքին, հանդես գալով ամենամեծ աղմուկով և Մարքսի ուսմունքի մեջ մտցնելիք ուղղումների, Մարքսի վերաքննության, ռևիզիոնիզմի ամենից ամբողջական արտահայտությամբ։ Նույնիսկ Ռուսաստանում, որտեղ ոչ–մարքսիստական սոցիալիզմը բնականաբար,—երկրի տնտեսական հետամնացության և ճորտատիրության մնացորդներով ճնշված գյուղացիական ազգաբնակության գերիշխման շնորհիվ,—ամենից ավելի երկար դիմացավ, նույնիսկ Ռուսաստանում նա պարզորեն մեր աչքի առաջ ռևիզիոնիզմի է վերափոխվում։ Ե՛վ ագրարային հարցում (ամբողջ հողի մունիցիպալիզացիայի ծրագիրը), և՛ ծրագրի ու տակտիկայի ընդհանուր հարցերում մեր սոցիալ–նարոդնիկներն ավելի ու ավելի Մարքսի ուսմունքի մեջ մտցվող «ուղղումներով» են փոխարինում հին, յուրահատուկ կերպով ամբողջական և մարքսիզմին արմատապես թշնամի սիստեմի մնացորդները։

Նախամարքսիստական սոցիալիզմը խորտակված է։ Նա շարունակում է կռիվը այլևս ոչ իր ինքնուրույն հողի վրա, այլ մարքսիզմի՝ իբրև ռևիզիոնիզմի ընդհանուր հողի վրա։ Հապա՛ նայենք, թե ռևիզիոնիզմն ինչպիսի գաղափարական բովանդակություն ունի։

Փիլիսոփայության բնագավառում ռևիզիոնիզմը բուրժուական պրոֆեսորական «գիտության» պոչից էր գնում։ Պրոֆեսորները՝ գնում էին «հետ դեպի Կանտը»,—և ռևիզիոնիզմն էլ թրև էր գալիս նեոկանտականների հետևից․ պրոֆեսորները կրկնում էին փիլիսոփայական մատերիալիզմի դեմ հազար անգամ ասած տերտերական գռեհկությունները,—ռևիզիոնիստներն էլ, ներողամտաբար ժպտալով, մրթմրթում էին (բառ առ բառ ըստ վերջին հանդբուխի[1]), թե մատերիալիզմը վաղուց է «հերքված», պրոֆեսորները վատաբանում էին Հեգելին, որպես «սատկած շան» և, իրենք էլ իդեալիզմ քարոզելով, միայն հազար անգամ ավելի մանր ու գռեհիկ, քան հեգելյանը, արհամարհանքով ուսերն էին թոթվում դիալեկտիկայի առթիվ,—և ռևիզիոնիստներն էլ՝ նրանց հետևից գիտության փիլիսոփայական գռեհկացման ճահիճն էին մտնում, «խորամանկ» (և հեղափոխական) դիալեկտիկան «պարզ» և (հանդարտ) «էվոլյուցիայով» փոխարինելով․ պրոֆեսորներն իրենց ստացած պետական ռոճիկի փոխարեն իրենց և՛ իդեալիստա-

1 — դասագրքի։ Խմբ․։

կան, և՛ «քննադատական սիստեմները» հարմարեցնում էին տիրող միջնադարյան «փիլիսոփայությանը» (այսինքն՝ թեոլոգիային),—և ռևիզիոնիստներն էլ մոտենում էին նրանց՝ աշխատելով կրոնը «մասնավոր գործ» դարձնել ո՛չ թե ժամանակակից պետության վերաբերմամբ, այլ առաջավոր դասակարգի կուսակցության վերաբերմամբ։

Թե իրական դասակարգային ի՛նչ նշանակություն ունեին Մարքսի ուսմունքի մեջ մտցվող այդպիսի «ուղղումները», դրա մասին խոսելու կարիք չկա․ հարցն ինքնըստինքյան պարզ է։ Մենք կնշենք միայն, որ միջազգային սոցիալ–դեմոկրատիայի մեջ միակ մարքսիստը, որ տվել է ռևիզիոնիստների այստեղ ասած բազմաթիվ աներևակայելի գռեհկությունների քննադատությունը՝ հետևողական դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից, Պլեխանովն է եղել։ Այս հանգամանքն է՛լ ավելի անհրաժեշտ է վճռականորեն ընդգծել, որովհետև այժմ հին և ռեակցիոն փիլիսոփայական շփոթը Պլեխանովի տակտիկական օպորտունիզմի քննադատության դրոշակի տակ անցկացնելու խորապես սխալ փորձեր են կատարվում[1]։

Անցնելով քաղաքատնտեսությանը՝ պետք է նշել, ամենից առաջ, որ այդ ասպարեզում ռևիզիոնիստների «ուղղումները» շատ ավելի բազմակողմանի և մանրամասն են եղել․ հասարակության վրա աշխատել են ազդել «տնտեսական զարգացման նոր տվյալներով»։ Ասում էին, թե համակենտրոնացումը և խոշոր արտադրության կողմից մանրի դուրս մղվելը գյուղատնտեսության մեջ ամենևին տեղի չի ունենում, իսկ առևտրի և արդյունաբերության ասպարեզում տեղի է ունենում ծայր աստիճան դանդաղ։ Ասում էին, թե կրիզիսներն այժմ ավելի սակավ են, ավելի թույլ, կարտելներն ու տրեստները, հավանորեն, հնարավորություն կտան կապիտալին կրիզիսները բոլորովին վերացնելու։ Ասում էին, թե «խորտակման թեորիան», դեպի որը գնում է կապիտալիզմը, սնանկ է՝ շնորհիվ դասակարգային հակասու-

[1] — Տե՛ս «Очерки философии марксизма» Բոգդանովի, Բազարովի և մյուսների գիրքը։ Այստեղ այդ գիրքը քննարկելու տեղը չէ, և ես ստիպված եմ առայժմ սահմանափակվել հայտարարելով, թե ամենամոտ ապագայում մի շարք հոդվածներով կամ առանձին բրոշյուրով ցույց կտամ, որ տեքստում նեոկանտականների մասին ամբողջ ասածը, ըստ գործի էության, վերաբերում է նաև այս «նոր» նոր–յումական ու նոր–բերկլիական ռևիզիոնիստներին (տե՛ս Երկ․, հ․ XIII։ Խմբ․)։

թյունների բթացման ու մեղմացման տենդենցի։ Ասում եյին, վերջապես, թե չի խանգարի, վոր Մարքսի արժեքի թեորիան ել ըստ Բյոմ–Բավերկի ուղղվի։

Այդ հարցերի վերաբերմամբ ռեվիզիոնիստների դեմ մղած պայքարը միջազգային սոցիալիզմի թեորիական մտքին նույնպիսի բեղուն կենդանություն տվեց, ինչպես Դյուրինգի դեմ Ենգելսի մղած բանակռիվը դրանից քսան տարի առաջ։ Ռեվիզիոնիստների փաստարկումները քննարկվում եյին փաստերն ու թվերը ձեռքին։ Ապացուցվեց, վոր ռեվիզիոնիստները սիստեմատիկ կերպով գունազեղում են ժամանակակից մանր արտադրությունը։ Անհերքելի տվյալներն ապացուցում են խոշոր արտադրության տեխնիկական և առևտրական գերազանցության փաստը մանրի հանդեպ վո՛չ միայն արդյունաբերության մեջ, այլև հողագործության մեջ։ Բայց հողագործության մեջ ապրանքային արտադրությունը շատ ավելի թույլ ե զարգացած, և ժամանակակից վիճակագիրներն ու տնտեսագետները սովորաբար լավ չեն կարողանում զատել հողագործության այն հատուկ ճյուղերը (երբեմն նույնիսկ գործառնությունները), վորոնք արտահայտում են հողագործության պրոգրեսիվ ներգրավումը համաշխարհային տնտեսության փոխանակության մեջ։ Մանր արտադրությունը դիմանում ե բնական տնտեսության ավերակների վրա՝ սնունդի անվերջ վատթարացումով, քրոնիկական սովածությամբ, բանվորական որվա երկարացումով, անասունների վորակի և նրանց խնամքի վատթարացումով, մի խոսքով՝ հենց նույն միջոցներով, վորոնցով դիմանում եր նաև տնայնագործական արտադրությունը կապիտալիստական մանուֆակտուրայի դեմ։ Գիտության ու տեխնիկայի յուրաքանչյուր առաջքայլը անխուսափելի ու անողորմ կերպով քանդում ե մանր արտադրության հիմքերը կապիտալիստական հասարակության մեջ, և սոցիալիստական տնտեսագիտության խնդիրն ե՝ հետազոտել այդ պրոցեսը նրա բոլոր, երբեմն բարդ ու խճճված ձևերում,—ապացուցել մանր արտադրողին, վոր կապիտալիզմի որով նրա դիմանալն անհնարին ե, վոր կապիտալիզմի որով գյուղացիական տնտեսության դրությունն անելանելի յե, թե անհրաժեշտ ե, վոր գյուղացին անցնի պրոլետարի տեսակետին։ Տվյալ հարցում ռեվիզիոնիստները մեղանչել են գիտական տեսակետից միակողմանիորեն կորզած փաստերի մակերևութային ընդհանրացումով, նրանց՝ կապիտալիզմի ամբողջ հասարակակարգի հետ ունեցած կապից անկախ. իսկ քաղաքական տեսակետից մեղանչել

են նրանով, վոր անխուսափելիորեն, կամա թե ակամա, կանչել են գյուղացուն, կամ հրել են գյուղացուն դեպի սեփականատիրոջ տեսակետը (այսինքն՝ բուրժուազիայի տեսակետը), փոխանակ նրան դեպի հեղափոխական պրոլետարի տեսակետը հրելու։

Կրիզիսների թեորիայի և փլուզման թեորիայի հարցում ռեվիզիոնիզմի բանը շատ ավելի վատ եր։ Միայն ամենակարճ ժամանակ և միայն ամենակարճատես մարդիկ արդյունաբերության մի քանի տարվա բարձրացման ու ծաղկման ազդեցության տակ կարող եյին Մարքսի ուսմունքի հիմքերի փոփոխման մասին մտածել։ Վոր կրիզիսները չեն ապրել–անցրել իրենց ժամանակը, ռեվիզիոնիստներին այդ բանը շատ շուտով ցույց տվեց ինքն իրականությունը—ծաղկումից հետո վրա հասավ կրիզիսը։ Փոխվեցին ձևերը, հաջորդականությունը, առանձին կրիզիսների պատկերը, բայց կրիզիսները մնացին իբրև կապիտալիստական հասարակակարգի անխուսափելի բաղկացուցիչ մաս։ Կարտելներն ու տրեստները՝ միավորելով արտադրությունը՝ միևնույն ժամանակ բոլորի աչքի առաջ ուժեղացնում եյին արտադրության անարխիան, պրոլետարիատի անապահովությունն ու կապիտալի ճնշումը, այդ կերպ դեռ չտեսնված աստիճանի սրելով դասակարգային հակասությունները։ Վոր կապիտալիզմը դեպի փլուզում ե գնում—և՛ առանձին քաղաքական ու տնտեսական կրիզիսների իմաստով, և՛ ամբողջ կապիտալիստական հասարակակարգի լիակատար խորտակման իմաստով,—այդ առանձին ակնառությամբ և առանձնապես լայն չափերով ցույց տվին հատկապես նորագույն հսկայական տրեստները։ Վերջերս Ամերիկայում տեղի ունեցած ֆինանսական կրիզիսը, ամբողջ Յեվրոպայում գործազրկության սոսկալիորեն սաստկանալը, չխոսելով արդեն մոտակա արդյունաբերական կրիզիսի մասին, վորի մոտենալը ցույց են տալիս բազմաթիվ նշաններ,—այս ամենի հետևանքն այն յեղավ, վոր ռեվիզիոնիստների վոչ վաղուցվա «թեորիաները» մոռացան բոլորը, թվում ե, թե հենց իրենցից շատերն ել։ Միայն թե չպետք մոռանալ այն դասերը, վոր ինտելիգենտական այդ անկայունությունը տվեց բանվոր դասակարգին։

Արժեքի թեորիայի մասին այսքանը միայն պետք ե ասել, վոր, բացի ակնարկներից ու ըստ Բյոմ–Բավերկի խիստ մշուշապատ հառաչանքներից, ռեվիզիոնիստներն այս խնդրում բացարձակապես վոչինչ չեն տվել, և այդ պատճառով ել գիտական մտքի զարգացման մեջ վոչ մի հետք չեն թողել։

Քաղաքականության բնագավառում ռեվիզիոնիզմը փորձեց իսկապես մարքսիզմի հիմքը վերաքննել, այն է՝ դասակարգային պայքարի ուսմունքը: Քաղաքական ազատությունը, դեմոկրատիան, ընդհանուր ընտրական իրավունքը վոչնչացնում են դասակարգային պայքարի հողը,—ասում եյին մեզ,—և «Կոմունիստական մանիֆեստի» հին դրույթը, թե՝ բանվորները հայրենիք չունեն, դարձնում են սխալ: Դեմոկրատիայում, քանի վոր «մեծամասնության կամքն» է իշխում, չի կարելի, իբր թե, վո՛չ նայել պետության վրա իբրև դասակարգային իշխանության որգանի, վո՛չ էլ հրաժարվել ռեակցիոներների դեմ առաջադիմական, սոցիալ-ռեֆորմատորական բուրժուազիայի հետ դաշնակցելուց:

Անհերքելի յե, վոր ռեվիզիոնիստների այդ առարկությունները հանգում եյին հայացքների բավական բարեկարգ մի սիստեմի, այն է՝ վաղուց հայտնի լիբերալ-բուրժուական հայացքների սիստեմին: Լիբերալները միշտ ասում եյին, թե բուրժուական պառլամենտարիզմը վոչնչացնում է դասակարգերն ու դասակարգային բաժանումները, քանի վոր պետական գործերում ձայնի իրավունք, մասնակցության իրավունք ունեն անխտիր բոլոր քաղաքացիները: Յեվրոպայի XIX դարի յերկրորդ կեսի ամբողջ պատմությունը, XX դարի սկզբի ռուսական հեղափոխության ամբողջ պատմությունն ակներև կերպով ցույց է տալիս, թե վորքան անհեթեթ են նման հայացքները: Տնտեսական տարբերությունները չեն մեղմանում, այլ ուժեղանում ու սաստկանում են «դեմոկրատական» կապիտալիզմի ազատության որով: Պառլամենտարիզմը չի վերացնում, այլ մերկացնում է ամենադեմոկրատական բուրժուական հանրապետությունների եյությունն իբրև դասակարգային ճնշման որգանի: Ոգնելով լուսավորել ու կազմակերպել բնակչության անչափ ավելի լայն մասսաները, քան այն մասսաները, վորոնք առաջ ակտիվ կերպով մասնակցում եյին քաղաքական դեպքերին, պառլամենտարիզմը դրանով վո՛չ թե կրիզիսների ու քաղաքական հեղափոխությունների վերացումն է նախապատրաստում, այլ քաղաքացիական պատերազմի ամենախիստ սրումը այդ հեղափոխությունների ժամանակ: Փարիզի դեպքերը 1871 թ. գարնանը և ռուսական դեպքերը 1905 թ. ձմռանը ամենապարզ կերպով ցույց տվին, թե ինչպես անխուսափելի կերպով է վրա հասնում այդ սրվածությունը: Ֆրանսական բուրժուազիան, առանց մի վայրկյան տատանվելու, համաձայնության յեկավ համազգային թշնամու, իր հայրենիքն ավերող ոտարերկրյա

զորքի հետ՝ պրոլետարական շարժումը ճնշելու համար: Ով չի հասկանում պառլամենտարիզմի ու բուրժուական դեմոկրատիզմի ներքին անխուսափելի դիալեկտիկան, վոր հասցնում է վեճի է՛լ ավելի խիստ լուծմանը մասսայական բռնությամբ, քան նախկին ժամանակներում, նա յերբեք չի կարողանա այդ պառլամենտարիզմի հողի վրա մղել սկզբունքորեն հաստատ պրոպագանդա ու ագիտացիա, վորն իսկապես բանվորական մասսաներին պատրաստում է հաղթական մասնակցություն ունենալու այդ տեսակի «վեճերում»: Սոցիալ-ռեֆորմատորական լիբերալիզմի հետ դաշն, համաձայնություն կնքելու, բլոկ կազմելու փորձերն Արևմուտքում, լիբերալ ռեֆորմիզմի (կադետների) հետ՝ ռուսական հեղափոխության մեջ, համոզեցուցիչ կերպով ցույց տվին, վոր այդ համաձայնությունները միայն բթացնում են մասսաների գիտակցությունը՝ չուժեղացնելով, այլ թուլացնելով նրանց կռվի իսկական նշանակությունը, կապելով կռվողներին այնպիսի տարրերի հետ, վորոնք ամենից քիչ են ընդունակ կռվելու, ամենից շատ են խախուտ ու դավաճան: Ֆրանսական միլյերանիզմը—ռեվիզիոնիստական քաղաքական տակտիկայի լայն, հիրավի ազգային մասշտաբով կիրառելու ամենախոշոր փորձը—ռեվիզիոնիզմի այնպիսի գործնական գնահատումը տվեց, վորը յերբեք չի մոռանա ամբողջ աշխարհի պրոլետարիատը:

Ռեվիզիոնիզմի տնտեսական ու քաղաքական տենդենցների բնական լրացումը հանդիսացավ նրա վերաբերմունքը դեպի սոցիալիստական շարժման վերջնական նպատակը: «Վերջնական նպատակը—վոչինչ է, շարժումը—ամեն ինչ է»—Բերնշտայնի այս թևավոր խոսքը ռեվիզիոնիզմի եյությունն ավելի լավ է արտահայտում, քան շատ յերկար դատողություններ: Իր վարքագիծը վորոշել դեպքից դեպք, հարմարվել որվա դեպքերին, քաղաքական մանրունքի շրջադարձերին, մոռանալ պրոլետարիատի արմատական շահերը և ամբողջ կապիտալիստական հասարակարգի, ամբողջ կապիտալիստական եվոլյուցիայի հիմնական գծերը, զոհաբերել այդ արմատական շահերն ի սեր րոպեյի իրական կամ յենթադրական ոգուտի,—սա յե ռեվիզիոնիստական քաղաքականությունը: Յեվ այս քաղաքականության հենց եյությունից է բղխում ակներևորեն, վոր նա կարող է անվերջ բազմատեսակ ձևեր ընդունել և վոր յուրաքանչյուր քիչ թե շատ «նոր» հարց, դեպքերի քիչ թե շատ անսպասելի և աննախատեսելի շրջադարձ, թեկուզ այդ շրջադարձը միայն մանրիկ աստիճանի և ամենակարճ ժամանակով փոխի զարգացման հիմնական գծը—

անխուսափելիորեն միշտ առաջ պիտի բերի ռևիզիոնիզմի այս կամ այն այլատեսակությունները:

Ռևիզիոնիզմի անխուսափելիությունը պայմանավորվում է ժամանակակից հասարակության մեջ նրա ունեցած դասակարգային արմատներով: Ռևիզիոնիզմը միջազգային յերևույթ է: Յուրաքանչյուր քիչ թե շատ տեղյակ ու խորհող սոցիալիստի համար ամենափոքր կասկած իսկ չի կարող լինել, վոր հարաբերությունը օրթոդոքսների ու բերնշտայնականների Գերմանիայում, գեդիստների ու ժորեսիստների (այժմ մանավանդ բրուսիստների) Ֆրանսիայում, Սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի ու Անկախ բանվորական կուսակցության Անգլիայում, Բրուկերի ու Վանդերվելդեյի Բելգիայում, ինտեգրալիստների ու ռեֆորմիստների Իտալիայում, բոլշևիկների ու մենշևիկների Ռուսաստանում, ամենուրեք ըստ իր եյության միատեսակ է, չնայած բոլոր այդ յերկրների ժամանակակից դրության մեջ յեղած ազգային պայմանների և պատմական մոմենտների հսկայական այլազանության: «Բաժանումը» ժամանակակից միջազգային սոցիալիզմի ներսում եյապես արդեն ա՛յժմ աշխարհի զանազան յերկրներում մի գծով է գնում, վավերագրելով սրանով հսկայական մի քայլ դեպի առաջ՝ համեմատած 30—40 տարի սրանից առաջ յեղածի հետ, յերբ միատեսակ միջազգային սոցիալիզմի ներսում զանազան յերկրներում վոչ-միատեսակ տենդենցներ եյին պայքարում: Յեվ այն «ռևիզիոնիզմը» ձախից, վորն այժմ ուրվագծվել է ռոմանական յերկրներում իբրև «հեղափոխական սինդիկալիզմ», նույնպես հարմարվում է մարքսիզմին՝ «ուղղելով» այն. Լաբրիոլան Իտալիայում, Լագարդելը Ֆրանսիայում ամեն քայլափոխում սխալ հասկացած Մարքսի դեմ առկոչում են ուղիղ հասկացվող Մարքսին:

Մենք չենք կարող այստեղ կանգ առնել գաղափարական բովանդակության քննության վրա այս ռևիզիոնիզմի, վորը դեռ բնավ այնպես չի զարգացել, ինչպես ոպորտունիստական ռևիզիոնիզմը, չի միջազգայնացել, վոչ մի խոշոր գործնական ընդհարման չի դիմացել թեկուզ մի յերկրի սոցիալիստական կուսակցության հետ: Այդ պատճառով էլ մենք կսահմանափակվենք այն «ռևիզիոնիզմով աջից», վորն ուրվագծեցինք վերևում:

Վո՞րն է նրա անխուսափելիությունը կապիտալիստական հասարակության մեջ: Ինչո՞ւ նա ավելի խորն է, քան ազգային առանձնահատկությունների ու կապիտալիզմի զարգացման աստիճանների տարբերությունները: Վորովհետև յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում պրոլետարիատի կողքին կանգնած են

միշտ մանր բուրժուազիայի, մանր սեփականատերերի լայն խավերը: Կապիտալիզմը ծնվել է և շարունակ ծնվում է մանր արտադրությունից: Կապիտալիզմն անխուսափելիորեն նորից է ստեղծում «միջին խավերի» մի ամբողջ շարք (ֆաբրիկայի հավելված, տանը կատարվող աշխատանք, մանր արհեստանոցներ՝ ցրված ամբողջ յերկրում՝ շնորհիվ խոշոր, օրինակ հեծանվային և ավտոմոբիլային ինդուստրիայի պահանջների և այլն): Այս նոր մանր արտադրողներն էլ անխուսափելիորեն կրկին պրոլետարիատի շարքերն են նետվում: Միանգամայն բնական է, վոր մանր-բուրժուական աշխարհայացքը նորից ու նորից դուրս է պրծնում, յերևան գալիս լայն բանվորական կուսակցությունների շարքերում: Միանգամայն բնական է, վոր այդպես պիտի լինի և կլինի միշտ ընդհուպ մինչև պրոլետարական հեղափոխության իրադարձությունները, վորովհետև խորապես սխալ կլիներ կարծել, թե այդպիսի հեղափոխության իրականացման համար անհրաժեշտ է բնակչության մեծամասնության «լիակատար» պրոլետարացումը: Այն, ինչ վոր մենք այժմ հաճախ ապրում ենք միայն գաղափարապես—վեճեր Մարքսի ուսմունքի թեորիական ուղղումների դեմ,—այն, ինչ վոր այժմ գործնականում յերևան է գալիս բանվորական շարժման միայն առանձին մասնավոր հարցերի վերաբերմամբ, իբրև ռևիզիոնիստների հետ տակտիկական տարաձայնություններ ու պառակտումներ այս հողի վրա,—այդ անպայման դեռ պիտի վիճակվի բանվոր դասակարգին ապրել անհամեմատ ավելի խոշոր չափերով, յերբ պրոլետարական հեղափոխությունը կսրի բոլոր վիճելի հարցերը, կկենտրոնացնի բոլոր տարաձայնությունները այնպիսի կետերում, վորոնք ամենաանմիջական նշանակություն ունեն մասսաների վարքագիծը վորոշելու համար, կստիպի կռվի տաքացած րոպեյին ջոկել թշնամիներին բարեկամներից, դուրս շպրտել վատթար դաշնակիցներին՝ թշնամուն վճռական հարվածներ հասցնելու համար:

Գաղափարական պայքարը հեղափոխական մարքսիզմի և ռևիզիոնիզմի միջև XIX դարի վերջին՝ միայն նախադուռն է պրոլետարիատի մեծ հեղափոխական կռիվների, պրոլետարիատի, վորն առաջ է գնում դեպի իր գործի լիակատար հաղթանակը հակառակ քաղքենիության բոլոր տատանումների և թուլությունների:

Գրված է 1908 թ. ապրիլին: Տպագրված է 1908 թ.
«Памяти Карла Маркса» ժողովածվում: Ս.-Պետերբուրգ:
Ստորագրություն՝ Վլ. Իլյին:
Յերկ., հ. XII, եջ 179—189:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՄԱՐՔՍԻ ՄԱՍԻՆ

Տուրգենևյան մի հերոս գերմանացի մեծ բանաստեղծի վոտանավորն այսպես է փոխել՝

Wer den Feind will versteh'n
Muss im Feindes Lande geh'n.

այսինքն՝ «Ով ցանկանում է ճանաչել իր թշնամուն, նա պետք է գնա այդ թշնամու յերկիրը», անմիջականորեն ծանոթանա թշնամու սովորությունների, բարքերի, մտածելակերպի և գործողությունների մեթոդների հետ:

Մարքսիստներին ևս չէր խանգարի հայացք գցել այն բանի վրա, թե Մարքսի մահվան 25-ամյակի մեծարման առթիվ ինչպես արտահայտվեցին զանազան յերկրների ազդեցիկ քաղաքական որգանները, հատկապես լիբերալ և «դեմոկրատական» բուրժուական լրագրերը, վորոնք ընթերցողների մասսաների վրա ազդելու հնարավորությունը միացնում են պաշտոնական, կազյոննի, ախտոսավոր, պրոֆեսորական գիտության անունից խոսելու իրավունքի հետ:

Սկսենք մեր տեսությունը «Русские ведомости»-ից: Դա ամենահանդիսավոր (և ամենից տաղտկալի), ամենից՝ գիտական (և կենդանի կյանքից ամենից հեռու) պրոֆեսորական թերթն է: Կարլ Մարքսի մահվան 25-ամյակի առթիվ այդ թերթի փոքրիկ հոդվածում (մարտի 1-ի № 51) գերիշխում է չոր, փայտե տոնը—«օբյեկտիվությունը», ինչպես այդ կոչվում է «օրդինարների» և «էքստրաօրդինարների» լեզվով... Փաստեր և փաստիկներ—ահա թե ինչո՛վ է ուզում սահմանափակվել հոդվածի հեղինակը: Եվ վորպես անաչառ պատմագիր նա պատրաստ է Մարքսին արժանին տալ—գոնե անցյալի համար, վորն արդեն մեռել է, վորի մասին կարելի յե խոսել վորպես մեռածի: «Русские

ведомости»-ն Մարքսի մեջ ընդունում է և՛ «բացառիկ դեմք», և՛ «մեծ մարդ գիտության մեջ», և՛ «պրոլետարիատի ականավոր ղեկավար», մասսաների կազմակերպիչ: Բայց այս ընդունումը վերաբերում է անցյալին. այժմ,—ասում է թերթը,—«իրոք անհրաժեշտ են նոր ճանապարհներ», այսինքն՝ բանվորական շարժման և սոցիալիզմի նոր ճանապարհներ, վորոնք նման չլինեն «հին մարքսիզմին»: Վորո՛նք են արդյոք այդ նոր ճանապարհները, այս մասին լրագիրն ուղղակի չի ասում—պրոֆեսորների համար խիստ կենդանի թեմա յե այս և խիստ «անզգույշ» սյուժետ «լռելու տակտի» արվեստում կատարելագործվածների համար: Սակայն բացահայտ ակնարկներ արվում են. «Նրա (Մարքսի) կառուցումներից շատերը խորտակված են գիտական վերլուծության և դեպքերի անողոք քննադատության կողմից: Գիտնականների մեջ համարյա բացակայում են նրա ամբողջ սիստեմին հավատարիմ հետևողներ. Մարքսի հոգեզավակը—գերմանական սոցիալ-դեմոկրատիան—բավական ուժեղ է շեղվել այն ճանապարհից, վոր գծել եյին գերմանական սոցիալիզմի հիմնադիրները»: Դուք տեսնում եք, հեղինակը մինչև վերջը չի ասում շատ քիչ բան՝ Մարքսին ռևիզիոնիստորեն ուղղելու իր ցանկությունը:

Մի այլ ազդեցիկ լրագիր, «Речь»-ը, որգանը քաղաքական կուսակցության, վոր ռուսաստանյան լիբերալիզմի համերգում առաջին ջութակ նվագողն է, Մարքսի շատ ավելի կենդանի գնահատականով է հանդես գալիս: Հասկանալի յե, նույնն է ուղղությունը, ինչ վոր «Русские ведомости»-ինը, բայց այնտեղ մենք տեսնում ենք առաջաբան հաստ գրքի առթիվ, այստեղ—քաղաքական լոզունգներ, վորոնք անմիջականորեն ուղղություն են տալիս մի շարք յելույթների պառլամենտական ամբիոնից՝ որվա բոլոր դեպքերի, այժմեյականության բոլոր հարցերի գնահատականով միասին: «Карл Маркс и Россия» հոդվածը (մարտի 2-ի № 53) գրում է հայտնի փախստական Իզգոյեվը, այն ռուսաստանյան ինտելիգենտների տիպարը, վորոնք 25—30 տարի «մարքսիստություն են անում», 35—40 տարի լիբերալություն անում, հետո եվ սևհարյուրակայնանում են:

Գ-ն Իզգոյեվը սոցիալ-դեմոկրատներից շուռ յեկավ լիբերալների կողմը (ինչպես հայտարարում է ինքը և ինչպես նրա մասին հայտարարում եր ռենեգատության մեծ վարպետ պ. Ստրուվեն), հենց այն ժամանակ, յերբ հեղափոխության առաջին շշմեցնող հաղթություններից հետո սկսվում եր յերկար ու համառ պայ-

քարի դժվարին ժամանակը ամրացող հակահեղափոխության դեմ։ Եվ պ. Իզգոյեվն այս տեսակետից վերին աստիճանի տիպիկ է։ Նա հիանալի կերպով պարզաբանում և ցույց է տալիս, թե Կարլ Մարքսին գնահատելիս ո՛ւմ օգտին են գնում պրոֆեսորական սեթևեթանքը, ո՛ւմ գործն է շինում այդ տիտղոսավոր «գիտությունը»։ «Այս պոլիտիկանություն անող տակտիկը,—դատում է Իզգոյեվը Մարքսի մասին,—սաստիկ խանգարում էր մեծ գիտնականին և հարկադրում էր նրան վոչ սակավ սխալներ գործել»։ Հիմնական սխալն, իհարկե, այն է, վոր բացի ուղիղ, խելացի, «մեծամասնության» (ֆիլիստերների՛ մեծամասնության) կողմից ընդունված «էվոլյուցիոն մարքսիզմից» լույս աշխարհ յեկավ կոպտաբեր, վոչ-գիտական, ֆանտաստիկ և «նարոդնիկական բրագայով կնքված» հեղափոխական մարքսիզմը։ Մեր լիբերալին առանձնապես վրդովում է այս մարքսիզմի դերը ռուսական հեղափոխության մեջ։ Միտք արեք միայն. հենց այս «բուրժուական հեղափոխության» կատարման համար հասան մինչև պրոլետարիատի դիկտատուրային, կամ էլ՝ մինչև «մարքսիստների բերանում պրոլետարիատի և գյուղացիության բոլորովին ֆանտաստիկ դիկտատուրային»։ «Զարմանալի չէ, վոր հեղափոխական մարքսիզմն իր այն ձևով, վորով յուրացրին նրան զանազան գույնի բոլշևիկները, փլուզման յենթարկվեց»... «Մնում է մտածել սովորական «բուրժուական» (պ. Իզգոյեվի հեղնական չակերտները) սահմանադրության հաստատման մասին»։

Ահա ձեզ գաղափարապես բոլորովին պատրաստ և քաղաքականապես հասուն ոկտյաբրիստ, լիովին համոզված այն բանում, թե փլուզման են յենթարկվել մարքսիզմն ու հեղափոխական տակտիկան, բայց վոչ կոմպրոմիսների, դավաճանությունների ու մատնությունների կադետակա՛ն տակտիկան։

Առաջ գնանք։ Ռուսական մամուլից անցնենք գերմանականին, վորը գործում է ազատ մթնոլորտում, դեմ առ դեմ բաց սոցիալիստական կուսակցության հետ, վոր տասնյակ ամենօրյա օրգաններում իր հայացքներն է արտահայտում։ Գերմանիայի ամենահարուստ, ամենից տարածված, ամենից «դեմոկրատական» բուրժուական լրագրերից մեկը՝ «Frankfurter Zeitung»-ը[1], մեծ առաջնորդող է նվիրում Մարքսի մահվան 25-ամյա տարեդարձին (Նոր տոմարով մարտի 16-ի «Abendblatt»-ի[2], № 76)։ Գերմանական

1 — «Ֆրանկֆուրտյան լրագիր»։ Խմբ.։

2 — «Յերեկոյան հրատարակություն»։ Խմբ.։

«դեմոկրատները» միանգամից յեզան յեղջյուրներից են բռնում։ «Ինքնին հասկանալի յե,—ասում են մեզ,—վոր այդ որը սոցիալ-դեմոկրատական մամուլը բազմաթիվ հոդվածներում մեծարեց իր ուսուցչին։ Բայց նույնիսկ մի ազդեցիկ ազգային-լիբերալ թերթում Մարքսը ճանաչվեց մեծ մարդ՝ թեպետ սովորական վերապահումներով։ Այո՛, իհարկե, նա մեծ էր, բայց նա մեծ այլասերող էր»։

Լրագիրը, վորում ներկայացված է գաղափարական սևհարյուրյակայնության այն այլաձևության ծաղիկը, վորը յեվրոպական լիբերալիզմ է կոչվում, բացատրում է, վոր բնավ չի կասկածում Մարքսի անձնական ազնվության վրա։ Բայց նրա թեորիաներն անթիվ վնասներ բերին։ Հասարակական յերևույթների բնագավառը մտցնելով անհրաժեշտության և օրինաչափության հասկացողությունը, ժխտելով մորալի նշանակությունը և մեր գիտելիքների հարաբերական, պայմանական բնույթը, Մարքսը հակագիտական ուտոպիա և իր աղանդավոր հետևորդների իսկական «յեկեղեցի» հիմնեց։ Իսկ նրա գլխավոր վնասակար գաղափարը դասակարգային պայքարն է։ Սրանումն է ամբողջ չարիքը։ Մարքսը լուրջ ընդունեց հին two nations ասացվածքը քաղաքակիրթ ազգություններից յուրաքանչյուրի մեջ յերկու ազգության, «շահագործողների» ազգության և «շահագործվողների» ազգության մասին (լրագիրն այս վոչ-գիտական արտահայտությունների սպանիչ-հեղնական չակերտների մեջ է առնում)։ Մարքսը մոռացավ ինքնաակնհայտնի, պարզ, բոլոր առողջ մարդկանց հասկանալի ճշմարտությունը, թե հասարակական կյանքում վո՛չ թե պայքարն է նպատակ հանդիսանում, այլ համաձայնությունը»։ Մարքսը «ժողովրդին յերկու մասի յեր բաժանում, վորովհետև նա մուրճով իր մարդկանց գլուխն էր մտցնում, թե իրենց և մնացած մարդկանց միջև ընդհանուր վոչինչ չկա, թե նրանք մահացու թշնամիներ են»։

«Ավելի բնական ի՞նչ կարող եր լինել,—հարցնում է լրագիրը,—քան այն, վոր սոցիալ-դեմոկրատիան, վորը պրակտիկ շատ պահանջներում համաձայն է բուրժուազիայից շատերի հետ, աշխատեր մոտենալ նրանց։ Բայց հենց այդ է, վոր չի լինում՝ շնորհիվ մարքսիստական թեորիայի։ Սոցիալ-դեմոկրատիան ինքն իրեն մեկուսացման է դատապարտել։ Մի վորոշ ժամանակի ընթացքում կարելի յեր կարծել, թե այս ուղղությամբ սկզբունքային փոփոխություն է տեղի ունենում։ Այդ այն ժամանակ եր,

յերբ ռեվիզիոնիստներն սկսել եյին իրենց կամպանիան։ Բայց այդ սխալ դուրս յեկավ, և մեր ու ռեվիզիոնիստների միջև տարբերությունը, ի միջի այլոց, այն է, վոր մենք այդ սխալը հասկացանք, իսկ նրանք՝ վոչ։ Ռեվիզիոնիստները կարծում եյին, և դեռ մինչև հիմա յել կարծում են, թե վորոշ ձևով կարելի յե կառչել Մարքսից և այնուամենայնիվ ուրիշ կուսակցություն դառնալ։ Զուր հույս։ Մարքսին կամ ամբողջովին պիտի կլանել, կամ բոլորովին դեն գցել, իսկ կիսատ-պռատությամբ այստեղ բան չի դուրս գա»...

Ճիշտ է, պարոնա՛յք լիբերալներ։ Պատահում է, վոր յերբեմն դուք ել եք հանկարծ ճիշտ բան ասում։

...«Քանի սոցիալ-դեմոկրատիան հարգում է Մարքսին, մինչև այդ նա ձեռք չի քաշի դասակարգային պայքարի գաղափարից և այն բոլոր բաներից, վորոնք նրա հետ ապրելու խնդիրն այնքան ծանր են դարձնում... Գիտական աշխարհը համաձայն է այն բանում, վոր մարքսիզմի քաղաքատնտեսական թեորիաներից և վոչ մեկը ճիշտ դուրս չեկավ»...

Այդպես։ Այդպես։ Դուք հիանալի արտահայտեցիք, պարոննե՛ր, բուրժուական գիտության, բուրժուական լիբերալիզմի և նրա ամբողջ քաղաքականության եյությունը։ Դուք հասկացել եք, վոր Մարքսին մաս-մաս կլանել չի կարելի։ Պարոնայք Իզգոյեվները և ռուսաստանյան լիբերալներն այս դեռ չեն հասկացել։ Շուտով նրանք ել կհասկանան։

Բայց ահա, վորպես յեզրակացություն, բուրժուական հանրապետության պահպանողական օրգան «Journal des Débats»-ը[1]։ Մարտի 15-ի համարում հոբելյանի առթիվ թերթը գրում է, թե սոցիալիստները, այս «վայրենի հավատարարները» իրենց մեծ մարդկանց պաշտամունքն են քարոզում, թե Մարքսի, վոր «ատում եր բուրժուազիային», ուսմունքների գլխավոր չարիքը դասակարգերի պայքարի թեորիան է։

«Նա բանվորական դասակարգերին քարոզում եր վո՛չ թե գինադադարներով ուղեկցվող ժամանակավոր կոնֆլիկտներ, այլ սրբազան պատերազմ, պատերազմ կործանման, եքսպրոպրիացիայի, պատերազմ կոլեկտիվիզմի ավետյաց յերկրի համար... հրեշավոր ուտոպիա...»

Լավ են գրում բուրժուական լրագրերը, յերբ մի բան նրանց իսկապես վոր դիպչում է։ Յեվ ավելի ուրախ է դառնում ապրելը, յերբ տեսնում ես, թե ամբողջ աշխարհում ինչպես է դասավորվում ու ամրանում պրոլետարիատի լիբերալ թշնամիների գաղափարական միասնությունը,—վորովհետև այդ միասնությունը միջազգային պրոլետարիատի միլիոնների միավորման յերաշխիքներից մեկն է, պրոլետարիատի, վորն, ինչ ել լինի, նվաճելու է իր ավետյաց յերկիրը։

«Пролетарий» № 25
25 (12) մարտի 1908 թ.։
Յերկ., հ. XII, եջ 165—168։

1 «Վիճաբանությունների լրագիր»։ Խմբ.։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԴԵՊԻ ԿՐՈՆԸ

Սինոդի նախահաշիվը քննելիս Պետական դումայում պատգամավոր Սուրկովի արտասանած ճառը և ճառի նախագծի քննարկման ժամանակ տեղի ունեցած այն վիճաբանությունները Դումայի մեր ֆրակցիայում, վոր մենք տպագրում ենք ստորև, հենց ներկայիս համար չափազանց կարևոր ու հրատապ մի հարց բարձրացրին[1]: Հետաքրքրություն դեպի այն ամենը, ինչ վոր կրոնի հետ կապ ունի, ներկայումս անշուշտ «հասարակության» լայն շրջաններ է ընդգրկել ու թափանցել բանվորական շարժմանը մոտիկ ինտելիգենցիայի շարքերը, ինչպես և բանվորական վորոշ շրջաններ: Սոցիալ-դեմոկրատիան անշուշտ՝ պարտավոր է հանդես գալ՝ արտահայտելով իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ:

Սոցիալ-դեմոկրատիան իր ամբողջ աշխարհըմբռնումը գիտական սոցիալիզմի, այսինքն՝ մարքսիզմի վրա յե կառուցում: Մարքսիզմի փիլիսոփայական հիմքը, ինչպես հաճախ Մարքսն ու Ենգելսն եյին հայտարարում, հանդիսանում է դիալեկտիկական մատերիալիզմը, վոր միանգամայն յուրացրել է XVIII դարի՝ ֆրանսիական մատերիալիզմի և Ֆոյերբախի (XIX դարի առաջին կեսը)՝ գերմանական մատերիալիզմի պատմական տրադիցիաները, այսինքն՝ մի մատերիալիզմի, վոր անշուշտ աթեիստական և ամեն տեսակ կրոնի վճռական թշնամի յե: Հիշենք, վոր Ենգելսի ամբողջ «Անտի-Դյուրինգը», վորի ձեռագիրը կարդացել է Մարքսը, մերկացնում է մատերիալիստ ու աթեիստ Դյուրինգին նրա մատերիալիզմի անկայունության մեջ, նրա կողմից կրոնի

1 *Սոցիալ-դեմոկրատական պատգամավոր Սուրկովը հանդես յեկավ* III *Պետական Դումայի նիստում սինոդի ծախսերի նախահաշվի վերաբերյալ վիճաբանությունների ժամանակ մի ճառով, վորի մեջ նա բնութագրեց յեկեղեցին իբրև ինքնակալության հենարան և մատնանշեց նրա կապը սևհարյուրյակային կազմակերպությունների հետ:* Խմբ.:

ու կրոնական փիլիսոփայության համար սողանցքներ թողնելու մեջ: Հիշենք, վոր Լուդվիգ Ֆոյերբախի մասին գրած իր աշխատության մեջ Ենգելսը կշտամբում է նրան, վոր նա կրոնի դեմ պայքարել է վո՛չ թե հանուն կրոնի վոչնչացման, այլ այն նորոգելու, նոր, «վերամբարձ» կրոն հնարելու և այլն: Կրոնը ժողովրդի համար հաշիշ է,—Մարքսի այս ասույթը կրոնի հարցում մարքսիզմի ամբողջ աշխարհըմբռնման անկյունաքարն է[1]: Ժամանակակից բոլոր կրոններն ու յեկեղեցիները, բոլոր և ամեն տեսակի կրոնական կազմակերպությունները մարքսիզմը միշտ ել քննարկում է իբրև բուրժուական ռեակցիայի օրգաններ, վորոնք բանվոր դասակարգի շահագործման պաշտպանությանն ու հիմարացմանն են ծառայում: Յեվ միաժամանակ՝ Ենգելսը հաճախ դատապարտում եր այն մարդկանց փորձերը, վորոնք ուզում եյին սոցիալ-դեմոկրատիայից «ավելի ձախ» կամ «ավելի հեղափոխական» լինել, կրոնին պայքար հայտարարելու իմաստով՝ բանվորական կուսակցության ծրագրի մեջ ուղղակի աթեիզմ մտցնել: 1874 *թ., խոսելով կոմունայի փախստականների, բլանկիստների հռչակավոր մանիֆեստի մասին, վորոնք իբրև վտարանդիներ Լոնդոնում եյին ապրում, կրոնին կռիվ հայտարարելու մասին նրանց արած աղմկալի ազդարարությունն Ենգելսը բացատրում է իբրև նրանց հիմարություն, հայտարարելով, թե պատերազմ հայտարարելու այս ձևը կրոնի հանդեպ ունեցած հետաքրքրությունն աշխուժացնելու և կրոնի իսկական մահացումը դժվարացնելու լավագույն միջոցն է[2]: Ենգելսը բլանկիստներին մեղադրում է, վոր նրանք չեն կարողացել հասկանալ, թե պրոլետարիատի ամենալայն խավերը հասարակական գիտակից ու հեղափոխական* պրակտիկայի *մեջ բազմակողմանիորեն ներգրավելու միջոցով է միայն, վոր բանվորական մասսաների դասակարգային պայքարն ի վիճակի կլինի իրոք ազատագրելու ճնշված մասսաներին կրոնի ճնշումից, մինչդեռ բանվորական կուսակցության կողմից կրոնին պայքար հայտարարելու գործը քաղաքական խնդիր ազդարարելն անարխիստական ֆրազ է: Յեվ* 1877 *թվականին «Անտի-Դյուրինգում» անողոք կերպով խարազանելով փիլիսոփա Դյուրինգի ամենաչնչին զի-*

1 *Տե՛ս «Հեգելի իրավունքի փիլիսոփայության քննադատության շուրջը»: Ներածություն, Կ. Մարքսի և Ֆր. Ենգելսի Յերկերը, հատ.* I, *եջ* 399 Гиз.—ИМЭЛ, 1928 г. Խմբ.:

2 *Ենգելսի «Կոմունայի բլանկիստ եմիգրանտների ծրագիրը» հոդվածը ռուսերեն տպագրված է Մ.—Ե.-ի Յերկերի* XV *հատորում, եջ* 224—230: Խմբ.:

ջումներն իդեալիզմին ու կրոնին, Էնգելսը վոչ պակաս վճռականությամբ դատապարտում է սոցիալիստական հասարակակարգում կրոնն արգելելու մասին Դյուրինգի ունեցած իբր թե հեղափոխական գաղափարը: Կրոնին այդպիսի պատերազմ հայտարարել՝ նշանակում է,—ասում է Էնգելսը,—հենց «Բիսմարկին վերաբիսմարկացնել, այսինքն՝ կրկնել կղերականների դեմ մղվող՝ բիսմարկյան պայքարի հիմարությունը (չարաբաստիկ «պայքար կուլտուրայի համար» Kulturkampf, այսինքն՝ 1870 թվականներին կաթոլիկների գերմանական կուսակցության դեմ, «կենտրոնի» կուսակցության դեմ մղած Բիսմարկի պայքարը կաթոլիկականությունը վոստիկանական միջոցով հետապնդելու ճանապարհով): Նման պայքարով Բիսմարկը միայն կաթոլիկների մարտնչող կղերականությունն ամրապնդեց, միայն իսկական կուլտուրայի գործին վնասեց, վորովհետև քաղաքական անջատումների փոխարեն առաջին տեղը կրոնական անջատումներին տվեց, բանվոր դասակարգի ու դեմոկրատիայի վորոշ խավերի ուշադրությունը դասակարգային ու հեղափոխական պայքարի կենսական խնդիրներից ամենամակերեսային ու կեղծ բուրժուական հակակղերականության կողմը դարձրեց: Մեղադրելով ծայրահեղ հեղափոխական լինելու ցանկություն ունեցող Դյուրինգին, վորը կամենում եր այլ ձևով կրկնել Բիսմարկի նույն հիմարությունը, Էնգելսը բանվորական կուսակցությունից պահանջում եր համբերատար աշխատելու ունակություն՝ պրոլետարիատին կազմակերպելու և լուսավորելու գործի համար, այն գործի համար, վոր դեպի կրոնի մահն է տանում, այլ վոչ թե պահանջում է կրոնի դեմ մղվող քաղաքական պատերազմի ավանտյուրաների դիրքը նետվել: Այս տեսակետը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մսի ու արյան մեջ է մտել, այն սոցիալ-դեմոկրատիայի, վոր, որինակ, հոգուտ ճիզվիտների ազատագրման, նրանց Գերմանիա թողնելու, հոգուտ կրոնի դեմ մղվող վոստիկանական պայքարի այս կամ այն միջոցների վոչնչացման է արտահայտվել: «Կրոնը մասնավոր գործ հայտարարելը»—Երֆուրտի ծրագրի (1891 թվի) այդ հռչակավոր կետն ամրապնդեց սոցիալ-դեմոկրատիայի վերոհիշյալ քաղաքական տակտիկան:

Այս տակտիկան այժմ արդեն կարողացել է ավանդամոլություն դառնալ, կարողացել է մարքսիզմի նոր աղավաղում առաջ բերել—դեպի հակառակ կողմը՝ դեպի ոպորտունիզմը: Սկսեցին Երֆուրտի ծրագրի դրույթն այն իմաստով մեկնաբանել, թե մենք

սոցիալ-դեմոկրատներ ենք, մեր կուսակցությունը կրոնը մասնավոր գործ է համարում, թե մեզ համար, վորպես սոցիալ-դեմոկրատների, վորպես կուսակցության համար, կրոնը մասնավոր գործ է: Ուղղակի բանավեճի մեջ չմտնելով ոպորտունիստական այդ տեսակետի հետ, 1890-ական թվականներին Էնգելսն անհրաժեշտ համարեց վճռականապես հանդես գալ նրա դեմ վո՛չ թե բանավեճի ձևով, այլ պոզիտիվ կերպով: Էնգելսը հենց դիտմամբ եվ այս բանը իր կողմից շեշտված հայտարարության ձևով արեց, թե սոցիալ-դեմոկրատիան պետության նկատմամբ է կրոնը մասնավոր գործ համարում և ամենևին վո՛չ իր նկատմամբ, վո՛չ մարքսիզմի նկատմամբ, վո՛չ բանվորական կուսակցության նկատմամբ[1]:

Այսպես է կրոնի հարցի վերաբերմամբ Մարքսի և Էնգելսի ունեցած ելույթների արտաքին պատմությունը: Դեպի մարքսիզմն անհոգ վերաբերմունք ունեցող մարդկանց համար, մտածել չգիտցող կամ չցանկացող մարդկանց համար այս պատմությունը մարքսիզմի անմիտ հակասությունների ու յերերումների մի կծիկ է: «Հետևողական» աթեիզմի ու կրոնի «ներողամտության» ինչ-վոր շիլափլավ է, ինչ-վոր «անսկզբունք» տատանում է աստծու դեմ մղվող հե՛ե՛ե՛ղափոխական պայքարի և հավատացյալ բանվորներին «համարվելու» վախկոտ ցանկության միջև, նրանց վախեցնելու յերկյուղով և այլն, և այլն: Անարխիստական դատարկախոսների գրականության մեջ կարելի յե մարքսիզմի դեմ այս վոգով արված շատ հարձակումներ գտնել:

Բայց ով փոքրիշատե ընդունակ է դեպի մարքսիզմը լուրջ վերաբերմունք ցույց տալու, մարքսիզմի փիլիսոփայական ու միջազգային սոցիալ-դեմոկրատիայի փորձի հիմքերը թափանցելու, նա հեշտությամբ կտեսնի, վոր կրոնի նկատմամբ մարքսիզմի տակտիկան խորապես հետևողական և Մարքսի ու Էնգելսի կողմից մտածված է, թե այն, ինչ վոր դիլետանտները կամ տգետները յերերումներ են համարում, դիալեկտիկական մատերիալիզմի ուղղակի և անխուսափելի յեզրակացությունն է: Խորապես սխալ կլիներ կարծել, թե կրոնի նկատմամբ մարքսիզմի թվացող «չափավորությունն» այսպես կոչված «տակտիկական» նկատա-

1 Տե՛ս Ֆ. Էնգելսի «Ներածությունը» Կ. Մարքսի՝ «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում (1870—1871)», գրքի առթիվ, եջ 10, Կուսհրատ—ИМЭЛ, 1934 թ.: Խմբ.:

առումներով է բացատրվում՝ «չվախեցնելու» և այլ ցանկությունների իմաստով: Ընդհակառակը, մարքսիզմի քաղաքական գիծն այս խնդրում ևս անքակտելիորեն կապված է նրա փիլիսոփայական հիմունքների հետ:

Մարքսիզմը մատերիալիզմ է: Իբրև մատերիալիզմ՝ մարքսիզմն էլ անողոք թշնամի յէ կրոնին, ինչպես XVIII դարի էնցիկլոպեդիստների մատերիալիզմը, կամ ինչպես Ֆոյերբախի մատերիալիզմը: Այդ անկասկած է: Բայց Մարքսի և Էնգելսի դիալեկտիկական մատերիալիզմն էնցիկլոպեդիստներից ու Ֆոյերբախից առաջ է անցնում, մատերիալիստական փիլիսոփայությունը կիրառելով պատմության բնագավառում, հասարակական գիտությունների բնագավառում: Մենք պետք է պայքարենք կրոնի դեմ: Այս ամբողջ մատերիալիզմի, հետևապես և մարքսիզմի այբուբենն է: Բայց մարքսիզմն այբուբենի վրա կանգ առնող մատերիալիզմ չէ: Մարքսիզմն ավելի հեռուն է գնում: Մարքսիզմն ասում է՝ պետք է կարողանալ պայքարել կրոնի դեմ, իսկ այդ անելու համար պետք է մասսաների հավատի ու կրոնի աղբյուրը մատերիալիստորեն բացատրել: Կրոնի դեմ մղվող պայքարը չի կարելի սահմանափակել վերացական-իդեոլոգիական քարոզով, չի կարելի այդպիսի մի քարոզի վերածել այն. այս պայքարը պետք է կապակցել դասակարգային շարժման կոնկրետ գործնականի հետ, այն շարժման, վորի նպատակն է վոչնչացնել կրոնի սոցիալական արմատները: Ինչո՞ւ յէ կրոնը մնում քաղաքի պրոլետարիատի հետամնաց խավերի մեջ, կիսապրոլետարիատի լայն խավերի մեջ, ինչպես նաև գյուղացիության զանգվածներում: Ժողովրդի տգիտության պատճառով,—պատասխանում է բուրժուական պրոգրեսիստը, ռադիկալը, կամ բուրժուական մատերիալիստը: Հետևաբար, կորչի՛ կրոնը, կեցցե՛ աթեիզմը, աթեիստական հայացքների տարածումը մեր գլխավոր անելիքն է: Մարքսիստն ասում է՝ ճիշտ չէ՛: Այդպիսի հայացքը մակերեսային, բուրժուական-սահմանափակ կուլտուրայնություն է: Այդպիսի հայացքը վո՛չ թե բավարար խորությամբ, վո՛չ թե մատերիալիստորեն, այլ իդեալիստորեն է բացատրում կրոնի արմատները: Արդի կապիտալիստական յերկրներում այդ արմատները գլխավորապես սոցիալական են: Աշխատավոր մասսաների սոցիալական ճնշվածությունը, նրանց առերևույթ կատարյալ անզորությունը հանդեպ կապիտալի կույր ուժերի, այն կապիտալիզմի, վոր ամեն որ և ամեն ժամ հազարապատիկ ավելի ամենասոսկալի տառա-

պանքներ, ամենավայրագ տանջանքներ է պատճառում շարքային բանվորներին, քան թե արտակարգ ամեն տեսակի պատահարներ, ինչպես, որինակ, պատերազմներ, յերկրաշարժեր և այլն,—ահա թե վորտեղ է կրոնի արդի ամենախորունկ արմատը: «Յերկյուղն է աստվածներ ստեղծել»: Վախը կապիտալի կույր ուժի հանդեպ, այն ուժի, վոր կույր է, վորովհետև ժողովրդի լայն զանգվածների կողմից նախատեսվել չի կարող, վոր պրոլետարի ու մանր տնտեսարարի կյանքի ամեն մի քայլափոխում սպառնում է նրան «հանկարծահաս», «անակնկալ», «պատահական» քայքայման, կորստի, մուրացկանության, պաուպերության, պոռնկության, սովամահության դուռը հասցնել և հասցնում է,—ահա արդի կրոնի այն արմատը, վոր ամենից առաջ և ամենից ավելի նկատի պետք է ունենա մատերիալիստը, յեթե չի ուզում նախապատրաստական դասարանի մատերիալիստ մնալ: Լուսավորական վոչ մի գրքույկ չի կարող արմատախիլ անել կրոնը կապիտալիստական տաժանակրությունից ընկճված մասսաների միջից, վորոնք կախված են կապիտալիզմի կույր կործանիչ ուժերից, քանի դեռ այդ մասսաներն իրենք չեն սովորել միահամուռ, կազմակերպված, ծրագրված, գիտակցորեն պայքարել կրոնի այդ արմատի դեմ կապիտալի ամեն ձևի տիրակալության դեմ:

Հետևո՞ւմ է արդյոք սրանից այն, վոր կրոնի դեմ գրված լուսավորական գրքույկը վնասակար է կամ ավելորդ: Վո՛չ: Սրանից ամենևին էլ այ՛դ չի հետևում: Սրանից հետևում է այն, վոր սոցիալ-դեմոկրատիայի աթեիստական պրոպագանդան պետք է ստորադասվի իր հիմնական անելիքին—շահագործվող մասսաների դասակարգային պայքարի զարգացմանը՝ շահագործողների դեմ:

Ով չի թափանցել դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքները, այսինքն՝ Մարքսի և Էնգելսի փիլիսոփայության մեջ, նա այս դրույթը կարող է չհասկանալ (կամ, առնվազն, միանգամից չհասկանալ): Ի՞նչպես թե: Գաղափարական պրոպագանդան, վորոշ գաղափարներ քարոզելու գործն ու հազարավոր տարիներ գոյություն ունեցող՝ կուլտուրայի ու պրոգրեսի թշնամու (այսինքն՝ կրոնի) դեմ մղվող պայքարն ստորադաս դասակարգային պայքարին, այսինքն՝ տնտեսական ու քաղաքական ասպարեզներում վորոշ գործնական նպատակների համար մղվող պայքարի՞ն:

Նման առարկությունը պատկանում է մարքսիզմի դեմ գոյություն ունեցող տարածված առարկությունների թվին, այն առարկությունների, որոնք Մարքսի դիալեկտիկական լրիվին չըմբռնելն են վկայում: Այն հակասությունը, որ շփոթեցնում է նման առարկություն անողներին, կենդանի կյանքի կենդանի հակասությունն է, այսինքն՝ դիալեկտիկական, ոչ-ֆրազային, ոչ-մտացածին հակասություն: Բացարձակ անանցանելի սահմանով աթեիզմի թեորիական պրոպագանդան բաժանելը, այսինքն՝ պրոլետարիատի որոշ խավերի կրոնական հավատալիքների խորտակումը և այդ խավերի դասակարգային պայքարի հաջողությունը, ընթացքն ու պայմանները—նշանակում է դիալեկտիկորեն չդատել, շարժական, հարաբերական սահմանագիծը բացարձակ սահմանագիծ դարձնել, նշանակում է՝ բռնի կերպով պոկել այն, ինչ որ անքակտելիորեն կապված է կենդանի իրականության մեջ: Մի օրինակ վերցնենք: Տվյալ շրջանի և արդյունաբերության տվյալ ճյուղի պրոլետարիատը բաժանվում է, ասենք թե, բավական գիտակից ս.-դ. առաջավոր խավի, որոնք (սոցիալ-դեմոկրատները), իհարկե, անաստվածներ են, և դեռևս գյուղի ու գյուղացիության հետ կապված՝ բավական հետամնաց բանվորների, որոնք հավատում են աստծուն, յեկեղեցի յեն գնում, կամ նույնիսկ գտնվում են տեղական այն քահանայի անմիջական ազդեցության տակ, որ, դիցուք, քրիստոնեյական բանվորական միություն է հիմնել: Ապա՝ ընդունենք, թե տնտեսական պայքարն այդ վայրում գործադուլի հանգրեց: Մարքսիստի համար պարտադիր է գործադուլային շարժման հաջողությունն առաջին տեղը դնել, պարտադիր է վճռականորեն հակազդել այդ պայքարի մեջ բանվորներին անաստվածների ու քրիստոնյաների բաժանելուն, վճռականորեն պայքարել այդպիսի բաժանման դեմ: Անաստվածական քարոզը, այդպիսի հանգամանքներում, կարող է և՛ ավելորդ, և՛ վնասակար լինել—ո՛չ թե հետամնաց խավերին չխրտնեցնելու, ընտրությունների մանդատը և ուրիշ իրավունքներ կորցնելու՝ քաղքենուն հատուկ նկատառումների տեսակետից, այլ դասակարգային պայքարի իսկական պրոգրեսի տեսակետից, այն պայքարի, որ արդի կապիտալիստական հասարակության պայմաններում քրիստոնյա բանվորներին հարյուրապատիկ ավելի լավ կհասցնի սոցիալ-դեմոկրատիային և անաստվածության, քան լոկ անաստվածական քարոզը: Անաստվածության քարոզիչն այդպիսի մոմենտում և այդպիսի պայմաններում ոգուտ տված կլինի այն

տերտերին ու տերտերներին, որոնք ո՛չ մի բան այնպես չեն ուզում, ինչպես բանվորների՝ ըստ գործադուլին ցույց տված մասնակցության բաժանումը փոխարինել ըստ առ աստված ունեցած հավատի բաժանումով: Անարխիստը, ինչպես էլ լինի՝ կռիվ քարոզելով աստծու դեմ, գործով տերտերներին ու բուրժուազիային ոգնած կլինի (ինչպես և անարխիստներն ամեն ժամանակ գործով ոգնում են բուրժուազիային): Մարքսիստը մատերիալիստ պետք է լինի, այսինքն՝ կրոնի թշնամի, բայց դիալեկտիկական մատերիալիստ, այսինքն՝ կրոնի դեմ պայքարելու գործը ո՛չ թե վերացական կերպով, ո՛չ թե վերացական, զուտ թեորիական, միշտ իրեն հավասար քարոզի հողի վրա դնող, այլ կոնկրետ, իրոք տեղի ունեցող ու մասսաներին ամենից ավելի ու ամենից լավ դաստիարակող դասակարգային պայքարի հողի վրա դնող: Մարքսիստը պետք է կարողանա հաշվի առնել ամբողջ կոնկրետ իրադրությունը, միշտ գտնել անարխիզմի և ոպորտունիզմի սահմանագիծը (այս սահմանագիծը հարաբերական է, շարժական, փոփոխական, բայց և այնպես գոյություն ունի), չընկնել ո՛չ անարխիստի վերացական, լոկ խոսքով, իրոք դատարկ «հեղափոխականության» և ո՛չ էլ մանր բուրժուայի կամ լիբերալ ինտելիգենտի քաղքենիության և ոպորտունիզմի գիրկը, այն ինտելիգենտի, որ վախենում է կրոնի դեմ պայքարելուց, մոռանում է իր այդ անելիքը, հաշտվում է աստծու հավատի հետ, ղեկավարվում է ո՛չ թե դասակարգային պայքարի շահերով, այլ մանր, չնչին աննշան հաշիվներով, այսինքն՝ չվիրավորել, չփախցնել, չվախեցնել ու իմաստուն սկզբունքով՝ «ապրի՛ր և թող, որ ուրիշներն էլ ապրեն» և այլն, և այլն:

Վերոհիշյալ տեսակետից պետք է լուծել բոլոր այն մասնակի խնդիրները, որոնք վերաբերում են կրոնի հանդեպ սոցիալ-դեմոկրատիայի բռնած դիրքին: Օրինակ, հաճախ այսպիսի մի հարց է ծագում՝ կարո՞ղ է արդյոք քահանան անդամ լինել սոցիալ-դեմոկրատական կուսակցության, և սովորաբար, առանց որևէ վերապահումների, այս հարցին դրական պատասխան են տալիս, հիմնվելով յեվրոպական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների փորձի վրա: Սակայն այս փորձը ո՛չ միայն մարքսիզմի ուսմունքը բանվորական շարժման նկատմամբ կիրառելուց է ծնունդ առել, այլև Արևմուտքի պատմական առանձնահատուկ պայմանների շնորհիվ, որոնք Ռուսաստանում գոյություն չունեն (ստորև կխոսենք այդ պայմանների մասին), այնպես որ

անպայման դրական պատասխանն այստեղ սխալ է: Չի կարելի մի անգամ ընդմիշտ ու ամեն տեսակ պայմանների համար հայտարարել, թե քահանաները չեն կարող սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ լինել, բայց միանգամ ընդմիշտ հակառակ կանոն էլ դնել չի կարելի: Յեթե քահանան մեր կողմն է անցնում միասնական քաղաքական աշխատանքի համար ու բարեխղճաբար կուսակցական աշխատանք է կատարում, առանց կուսակցության ծրագրին դեմ դուրս գալու, ապա ուրեմն մենք կարող ենք նրան ընդունել սոցիալ-դեմոկրատիայի շարքերը, վորովհետև մեր ծրագրի վոգու և հիմունքների հակասությունը քահանայի կրոնական համոզմունքներին՝ այդպիսի պայմաններում միայն իրեն՝ քահանային վերաբերող, իր անձնական հակասությունը լինել կարող է, իսկ քննել իր անդամներին՝ իրենց հայացքների ու կուսակցության ծրագրի միջև հակասություններ չլինելու տեսակետից—քաղաքական կազմակերպությունը չի կարող: Բայց, իհարկե, այդպիսի մի դեպք նույնիսկ Յեվրոպայում կարող է հազվագյուտ բացառություն լինել, իսկ Ռուսաստանում այդ դեպքն արդեն շատ քիչ է հավանական: Յեվ յեթե, որինակ, քահանան սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ մտնի և սկսի այդ կուսակցության մեջ, վորպես իր գլխավոր և գրեթե միակ աշխատանք, ակտիվ կերպով կրոնական հայացքներ քարոզել, ապա կուսակցությունն անշուշտ պետք է նրան հեռացնի իր շարքերից: Բոլոր այն բանվորներին, վորոնք դեռ հավատում են աստծուն, մենք վո՛չ միայն պետք է թույլ տանք սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ մտնելու, այլև յեռանդուն կերպով պետք է ներգրավենք նրանց. մենք անպայման դեմ ենք նրանց կրոնական համոզմունքները մազաչափ անգամ վիրավորելուն, սակայն մենք նրանց ներգրավում ենք՝ մեր ծրագրի վոգով դաստիարակելու նպատակով, այլ վոչ թե նրա դեմ ակտիվ պայքարելու համար: Մենք կուսակցության ներսում կարծիքների ազատություն թույլատրում ենք, բայց վորոշ սահմաններում, վորոնք խմբավորման ազատությամբ են գծվում. մենք պարտավոր չենք ձեռքձեռքի տված գնալու այն ակտիվ քարոզիչների հետ, վորոնց հայացքները կուսակցության մեծամասնության կողմից ժխտվում են:

Մի ուրիշ որինակ. կարելի՞ յե, արդյոք, բոլոր պայմաններում միատեսակ դատապարտել սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներին այն հայտարարության համար, թե՝ «սոցիալիզմն իմ կրոնն է»[1], և այդպիսի մի հայտարարության համապատասխանող հայացքներ քարոզելու համար: Վո՛չ: Մարքսիզմից (հետևապես և սոցիալիզմից) շեղվելն այստեղ անկասկած է, սակայն այս շեղումի նշանակությունը, այսպես ասած՝ շեղումի տեսակարար կշիռը տարբեր պայմաններում տարբեր կարող է լինել: Այլ բան է, յերբ ագիտատորը կամ բանվոր մասսայի առաջ դուրս յեկողն այսպես է խոսում, վոր ավելի հասկանալի լինի, վոր սկսի շարադրանքը, վոր ավելի ռեալ կերպով յերանգավորի իր հայացքներն այնպիսի տերմիններով, վորոնք ամենից ավելի սովորական են անզարգացած մասսայի համար: Այլ բան է, յեթե գրողն «աստվածաշինարարության» կամ աստվածաշինարարական սոցիալիզմ է սկսում քարոզել (որինակ, մեր Լունաչարսկու և Ընկ. վոգով): Ինչ չափով առաջին դեպքում դատապարտությունը կարող է բծախնդրություն կամ նույնիսկ ագիտատորի ազատության, «մանկավարժական» ներգործության ազատության անտեղի ճնշում լինել, այնչափով յերկրորդ դեպքում կուսակցական դատապարտությունն անհրաժեշտ է ու պարտադիր: «Սոցիալիզմը կրոն է» դրույթը—վոմանց համար կրոնից սոցիալիզմին անցնելու, վոմանց համար էլ՝ սոցիալիզմից կրոնին անցնելու ձև է:

Այժմ անցնենք այն պայմաններին, վորոնք Արևմուտքում՝ «կրոնը մասնավոր գործ հայտարարելը» թեզիսի ոպորտունիստական բացատրություն առաջացրին: Այստեղ, իհարկե, ընդհանուր պատճառների ազդեցություն կա, այնպիսի պատճառների, վորոնք, վորպես զոհաբերություն բանվորական շարժման հիմնական շահերի վայրկենական ոգուտներին, առհասարակ ոպորտունիզմ են ծնում: Պրոլետարիատի կուսակցությունը պետությունից պահանջում է կրոնը մասնավոր գործ հայտարարել, ամենևին էլ «մասնավոր գործ» չհամարելով ժողովրդի հաշիշի դեմ կռվելու, կրոնական սնոտիապաշտությունների և այլ բաների դեմ կռվելու հարցը: Ոպորտունիստները գործն այնպես են խեղաթյուրում, կարծես թե սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը կրոնը մասնավոր գործ էր համարում:

Բայց, բացի ոպորտունիստական սովորական խեղաթյուրումից (վոր բոլորովին չի պարզաբանված այն վիճաբանությունների ժամանակ, վոր կրոնի մասին տեղի ունեցած յելույթը քննարկե-

[1] Լենինը նկատի ունի Ա. Վ. Լունաչարսկու բազմաթիվ յելույթներն աստվածաշինարարական սոցիալիզմի քարոզով: Խմբ.:

լիս Դումայի մեր Ֆրակցիան էր մղում), պատմական առանձին պայմաններ էլ կան, որոնք, եթե այսպես կարելի է ասել, առաջ են բերել եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի չափազանց անտարբեր վերաբերմունքը կրոնի հարցի նկատմամբ: Այդ պայմանները երկու տեսակ են: Նախ՝ կրոնի դեմ պայքարելու խնդիրը պատմականորեն հեղափոխական բուրժուազիայի խնդիրն է, և բուրժուական դեմոկրատիան Արևմուտքում այս խնդիրն զգալի չափով իրականացրել է (կամ իրականացնում էր) իր հեղափոխությունների կամ ֆեոդալիզմի ու միջնադարականության վրա իր գործ դրած գրոհումների դարաշրջանում: Թե՛ Ֆրանսիայում և թե՛ Գերմանիայում սոցիալիզմից շատ առաջ սկսված (էնցիկլոպեդիստներ, Ֆոյերբախ), կրոնի դեմ մղվող բուրժուական պայքարի տրադիցիաներ կան: Ռուսաստանում, մեր բուրժուական դեմոկրատական հեղափոխության պայմանների համեմատ, այս խնդիրն էլ համարյա ամբողջապես ծանրանում է բանվոր դասակարգի ուսերին: Եվրոպայի համեմատությամբ՝ մանր-բուրժուական (նարոդնիկական) դեմոկրատիան այս տեսակետից մեզնում ո՛չ թե չափազանց շատ (ինչպես կարծում են նորահայտ սևհարյուրյակային կադետները կամ «Вехи»-ից դուրս եկած կադետային սևհարյուրյակայինները), այլ չափազանց քիչ բան է արել:

Մյուս կողմից, բուրժուական կռվի տրադիցիան կրոնի դեմ կարողացավ Եվրոպայում այդ կռվին անարխիզմով այլասերելու բուրժուական յուրահատուկ հնարավորություն ստեղծել, այն անարխիզմով, որ, ինչպես վաղուց արդեն ու բազմիցս բացատրել են մարքսիստները, բուրժուազիայի վրա հարձակումներ կատարելու իր ողջ «կատաղությամբ» հանդերձ կանգնած է բուրժուական աշխարհհայացքի վրա: Անարխիստներն ու բլանկիստները ռոմանական երկրներում, Մոստը (ի միջի այլոց, Դյուրինգի նախկին աշակերտն է) և Ընկ. Գերմանիայում, 80-ական թվականների անարխիստներն Ավստրիայում կրոնի դեմ մղվող պայքարում հեղափոխական ֆրազը nec plus ultra»-յի[1] հասցրին: Զարմանալի չէ, որ եվրոպական սոցիալ-դեմոկրատներն այժմ անարխիստների ծռած փայտը վերածում են: Այս հասկանալի է ու որոշ չափով օրինական, բայց մոռանալ Արևմուտքի պատմական առանձնահատուկ պայմանները՝ մեզ, ռուս սոցիալ-դեմոկրատներիս, վայել չէ:

[1] — մինչև ծայրահեղություն: Խմբ.:

Երկրորդ՝ Արևմուտքում ազգային բուրժուական հեղափոխություններն ավարտվելուց հետո, դավանանքի շատ թե քիչ լրիվ ազատություն մտցնելուց հետո, կրոնի դեմ մղվող դեմոկրատական պայքարի խնդիրը սոցիալիզմի դեմ մղվող բուրժուական պայքարով պատմականորեն այն աստիճան էր արդեն հետ քըշվել, որ բուրժուական կառավարությունները գիտակցաբար փորձում էին կղերականության դեմ quasi-լիբերալ «արշավանք» կազմակերպելով՝ մասսաների ուշադրությունը սոցիալիզմից շեղել: Այսպիսի բնույթ ուներ թե՛ Kulturkampf-ը[1] Գերմանիայում և թե՛ բուրժուական հանրապետականների պայքարը կղերականության դեմ՝ Ֆրանսիայում: Բուրժուական հակակղերականությունը, որպես բանվորական մասսաների ուշադրությունը սոցիալիզմից շեղելու միջոց,—ահա թե ինչ էր նախորդում Արևմուտքում սոցիալ-դեմոկրատների մեջ կրոնի դեմ պայքարելու՝ ժամանակակից «անտարբերությունը» տարածվելուն: Եվ դարձյալ այդ հասկանալի է ու օրինական, որովհետև բուրժուական և բիսմարկական հակակղերականությանը սոցիալ-դեմոկրատները պետք է հակադրեին կրոնի դեմ մղվող պայքարի հենց ստորադասումը սոցիալիզմի համար մղվող պայքարին:

Ռուսաստանում պայմանները բոլորովին այլ են: Պրոլետարիատը մեր բուրժուական-դեմոկրատական հեղափոխության առաջնորդն է: Նրա կուսակցությունը գաղափարական առաջնորդը պետք է հանդիսանա ամեն տեսակի միջնադարականության դեմ մղվող պայքարում, որոնց թվում նաև հին՝ կազյոննի կրոնի դեմ մղվող պայքարում ու կրոնը նորոգելու կամ նորից հիմնելու կամ այլ կերպ դնելու փորձի դեմ: Ուստի, եթե Էնգելսը համեմատաբար մեղմաբար էր ուղղում գերմանական սոցիալ-դեմոկրատների օպորտունիզմը, որոնք բանվորների պահանջը՝ կրոնը պետության կողմից մասնավոր գործ հայտարարելու մասին, նենգափոխում էին կրոնն իրենց՝ սոցիալ-դեմոկրատների ու սոցիալ-դեմոկրատական կուսակցության համար մասնավոր գործ հայտարարելով,—ապա հասկանալի է, որ գերմանական այդ այլասերման ընդօրինակումը ռուս օպորտունիստների կողմից կարժանանար Էնգելսի հարյուրապատիկ ավելի խիստ դատապարտմանը:

Դումայի ամբիոնից հայտարարելով, թե կրոնը ժողովրդի հաշիշն է, մեր Ֆրակցիան միանգամայն իրավացի վարվեց և այդ-

[1] — պայքար կուլտուրայի համար: Խմբ.:

ակտով սահմանեց մի նախադեպ, որ ռուս սոցիալ-դեմոկրատներին հիմք պետք է դառնա կրոնի հարցերի առթիվ ունենալիք բոլոր յելույթների համար: Կարիք կա՞ր արդյոք ե՛լ ավելի հեռուն գնալու՝ աթեիստական հետևությունները ե՛լ ավելի մանրամասն զարգացնելով: Կարծում ենք, որ՝ ո՛չ: Այս բանը կարող է սպառնալ պրոլետարիատի քաղաքական կուսակցության կողմից կրոնի դեմ մղվող պայքարի չափազանցումով. այս բանը կարող է հասցնել կրոնի դեմ մղվող բուրժուական ու սոցիալիստական պայքարի միջև գոյություն ունեցող սահմանագծի ջնջմանը: Առաջին խնդիրը, որ պետք է իրագործեր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան սևհարյուրյակային Դումայում, պատվով գլուխ բերվեց:

Յերկրորդը,—սոցիալ-դեմոկրատների համար գրեթե գլխավորը,—բուրժուազիայի կողմից բանվոր դասակարգի դեմ մղվող պայքարում սևհարյուրյակային կառավարության ու բուրժուազիային պաշտպանելու համար յեկեղեցու ու հոգևորականության դասակարգային դերի պարզաբանումը,—նույնպես պատվով գլուխ բերվեց: Իհարկե, այս թեմայի մասին դեռ շատ բան կարելի յե ասել, և սոցիալ-դեմոկրատների հաջորդ յելույթները կգտնեն, թե ինչով լրացնեն ընկ. Սուրկովի ճառը, բայց և այնպես, նրա ճառը հիանալի յեր, և բոլոր կուսակցական կազմակերպությունների կողմից այդ ճառի տարածումը մեր կուսակցության անմիջական պարտականությունն է:

Յերրորդ,—պետք էր հանգամանորեն պարզաբանել գերմանական օպորտունիստների կողմից այնքան հաճախ աղավաղված «կրոնը մասնավոր գործ հայտարարելը» դրույթի ճիշտ իմաստը: Ընկեր Սուրկովը, դժբախտաբար, այդ չարեց: Այս բանն առավել ևս ցավալի յե այն պատճառով, որ նախորդ գործունեության մեջ ֆրակցիան թույլ է տվել այս հարցի առթիվ ընկ. Բելոուսովի կողմից գործված այն սխալը, որ իր ժամանակին նշել է «Пролетарий» թերթը: Ֆրակցիայի վիճաբանությունները ցույց են տալիս, որ աթեիզմի մասին տեղի ունեցող վիճաբանությունը ծածկել է ֆրակցիայից՝ կրոնը մասնավոր գործ հայտարարելու վերաբերյալ չարաբաստիկ պահանջը ճիշտ բացատրելու հարցը: Վողջ ֆրակցիայի այդ սխալի համար մենք միայն ընկ. Սուրկովին չենք մեղադրի: Այդ քիչ է: Ուղղակի խոստովանենք, որ այստեղ կա ամբողջ կուսակցության մեղքը, որ բավարար չափով չի պարզել այդ հարցը, սոցիալ-դեմոկրատների գիտակցության մեջ բավարար չափով չի նախապատ-

րաստել գերմանական օպորտունիստների հասցեին Էնգելսի կողմից արված նկատողության նշանակությունը: Ֆրակցիայի վիճաբանություններն ապացուցում են, որ այդ ուղղակի նշանակում է՝ հարցը պարզ չհասկանալ և ոչ թե Մարքսի ուսմունքը հաշվի չառնելու ցանկություն, և մենք համոզված ենք, որ ֆրակցիայի հետագա յելույթներում այս սխալը կուղղվի:

Կրկնում ենք, ընդհանուր առմամբ ընկ. Սուրկովի ճառը հիանալի ճառ է և բոլոր կազմակերպությունները պետք է տարածեն այն: Այս ճառի քննարկումով ֆրակցիան ապացուցեց, որ ինքն ամենայն բարեխղճությամբ կատարել է իր սոցիալ-դեմոկրատական պարտքը: Մնում է ցանկալ, որ ֆրակցիայի ներսում տեղի ունեցող վիճաբանությունների մասին կուսակցության մամուլի մեջ թղթակցություններ հաճախ յերևան գան՝ ֆրակցիան կուսակցությանը մոտեցնելու, ֆրակցիայի կողմից կատարված ներքին ծանր աշխատանքին՝ կուսակցությանը ծանոթացնելու, կուսակցության ու ֆրակցիայի գործունեության միջև գաղափարական միասնականություն հաստատելու համար:

«Пролетарий» № 45,
26 (13) մայիսի 1909 թ.:
Երկ., հ. XIV, էջ 68—76:

ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

Յեվրոպայի և Ամերիկայի ժամանակակից բանվորական շարժման հիմնական տակտիկական տարաձայնությունները հանգում են այն պայքարին, վոր մղվում է յերկու խոշոր ուղղությունների դեմ, վորոնք շեղվում են մարքսիզմից, վոր փաստորեն տիրապետող թեորիա յե դարձել այդ շարժման մեջ։ Այդ յերկու ուղղություններն են ռևիզիոնիզմը (օպորտունիզմ, ռեֆորմիզմ) և անարխիզմը (անարխո-սինդիկալիզմ, անարխո-սոցիալիզմ)։ Բանվորական շարժման մեջ տիրող մարքսիստական թեորիայից ու մարքսիստական տակտիկայից այս յերկու շեղումները տարբեր ձևերով ու տարբեր յերանգներով յերևում են բոլոր քաղաքակիրթ յերկրներում՝ մասսայական բանվորական շարժման ավելի քան կեսդարյա պատմության ընթացքում։

Հենց միայն այս փաստից յերևում է, վոր չի կարելի այս շեղումները բացատրել վո՛չ պատահականություններով, վո՛չ առանձին անհատների կամ խմբերի սխալներով, վո՛չ նույնիսկ ազգային առանձնահատկությունների կամ տրադիցիաների ազդեցությամբ և այլն։ Բոլոր կապիտալիստական յերկրների տնտեսակարգում և զարգացման բնույթի մեջ պետք է ընկած լինեն արմատական պատճառներ, վորոնք շարունակ առաջացնում են այդ շեղումները։ Հոլլանդական մարքսիստ Անտոն Պաննեկուկի անցյալ տարի լույս տեսած փոքրիկ գրքույկը՝ «Տակտիկական տարաձայնություններ բանվորական շարժման մեջ» (Anton Pannekoek: «Die taktischen Differenzen in der Arbeiterbewegung». Hamburg, Erdmann Dubber, 1909) *այդ պատճառների գիտական հետազոտության հետաքրքրական փորձ է հանդիսանում։ Հետագա շարադրանքի մեջ մենք ընթերցողին կծանոթացնենք Պաննեկուկի յեզրակացությունների հետ, վորոնք չի կարելի կատարելապես ճիշտ չհամարել։*

Ամենախոր պատճառներից մեկը, վոր տակտիկայի վերաբերյալ պարբերաբար տարաձայնություններ են առաջացնում, հանդիսանում է բանվորական շարժման հենց աճման փաստը։ Յեթե այդ շարժումը չչափենք ինչ-վոր ֆանտաստիկ իդեալի չափով, այլ դիտենք վորպես սովորական մարդկանց գործնական շարժում, ապա պարզ կդառնա, վոր նորանոր «նորակոչիկների» ներգրավմանը, աշխատավոր մասսայի նոր շերտերի ներքաշմանը անխուսափելիորեն պիտի ուղեկցեն տատանումներ թեորիայի և տակտիկայի բնագավառում, հին սխալների կրկնումներ, ժամանակավոր վերադարձ դեպի հնացած հայացքներն ու հնացած յեղանակները և այլն։ Նորակոչիկներին «սովորեցնելու» վրա յուրաքանչյուր յերկրի բանվորական շարժումը պարբերաբար ծախսում է էներգիայի, ուշադրության ու ժամանակի մեծ կամ փոքր պաշարներ։

Այնուհետև։ Կապիտալիզմի զարգացման արագությունը միատեսակ չի տարբեր յերկրներում և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում։ Բանվոր դասակարգը և նրա իդեոլոգները մարքսիզմն ամենից հեշտ, ամենից արագ, ամենից լրիվ ու ամենից հաստատուն կերպով են յուրացնում խոշոր արդյունաբերության ամենաբարձր զարգացման պայմաններում։ Իրենց զարգացման մեջ հետամնաց կամ հետ մնացող տնտեսական հարաբերությունները բանվորական շարժման այնպիսի կողմնակիցներ են յերևան բերում, վորոնք յուրացնում են մարքսիզմի միայն միքանի կողմերը, նոր աշխարհայեցողության լոկ առանձին մասերը կամ առանձին լոզունգներ, պահանջներ, անկարող լինելով վճռականորեն խզել կապերը բուրժուական աշխարհայեցողության բոլոր տրադիցիաներից ընդհանրապես և բուրժուա-դեմոկրատական աշխարհայեցողությունից մասնավորապես։

Այնուհետև, տարաձայնությունների մշտական աղբյուրը հանդիսանում է դիալեկտիկական բնույթը հասարակական զարգացման, վոր ընթանում է հակասությունների մեջ և հակասությունների միջոցով։ Կապիտալիզմն առաջադեմ է, վորովհետև վոչնչացնում է արտադրության հին յեղանակները և զարգացնում է արտադրողական ուժերը, և միևնույն ժամանակ, զարգացման վորոշ աստիճանի վրա նա հետ է պահում արտադրողական ուժերի աճումը։ Նա զարգացնում, կազմակերպում, կարգապահության է յենթարկում բանվորներին,—և նա սղմում, ճնշում է, տանում է դեպի այլասերում, աղքատություն և այլն։ Կապիտալիզմն ինքն է ստեղծում իր գերեզմանափորին, ինքն է ստեղծում

նոր հասարակակարգի տարրեր և, միևնույն ժամանակ, այդ առանձին տարրերն իրերի ընդհանուր դրության մեջ առանց «թռիչքի» վոչինչ չեն փոխում, չեն դիպչում կապիտալի տիրապետությանը: Կենդանի կյանքի, կապիտալիզմի և բանվորական շարժման կենդանի պատմության այս հակասությունները կարողանում է ընդգրկել մարքսիզմը, վորպես դիալեկտիկական մատերիալիզմի թեորիա: Բայց ինքն իրեն հասկանալի յե, վոր մասսաները կյանքից են սովորում և վոչ թե գրքույկից, ուստի և առանձին անհատները կամ խմբակները, կապիտալիստական զարգացման մերթ մեկ, մերթ մյուս գիծը, այս զարգացման մերթ մեկ, մերթ մյուս «դասը» շարունակ չափազանցացնում, բարձրացնում, դարձնում են միակողմանի թեորիա, տակտիկայի միակողմանի սիստեմ:

Բուրժուական իդեոլոգները, լիբերալները և դեմոկրատները, չհասկանալով մարքսիզմը, չհասկանալով ժամանակակից բանվորական շարժումը, շարունակ վոստնում են մի անճարակ ծայրահեղությունից դեպի մյուսը: Նրանք յերբեմն ամբողջ գործը բացատրում են նրանով, թե չար մարդիկ «գրգռում են» դասակարգը դասակարգի դեմ, յերբեմն իրենց մխիթարում են նրանով, թե բանվորական կուսակցությունը «ռեֆորմների խաղաղ կուսակցություն է»: Բուրժուական այս աշխարհայեցողության և նրա ազդեցության ուղիղ արդյունք պիտի համարել և՛ անարխոսինդիկալիզմը, և՛ ռեֆորմիզմը, վորոնք կպչում են բանվորական շարժման մի կողմին, միակողմանիությունը թեորիայի յեն հասցնում, փոխադարձ կերպով իրար ժխտող են հայտարարում այդ շարժման այնպիսի տենդենցներ կամ այնպիսի գծեր, վորոնք կազմում են բանվոր դասակարգի այս կամ այն ժամանակաշրջանի, գործունեության այս կամ այն պայմանների սպեցիֆիկ առանձնահատկությունը: Իսկ իրական կյանքը, իսկական պատմությունը ներառում են այդ տարբեր տենդենցները, այնպես, ինչպես կյանքը և զարգացումը բնության մեջ ներառում են և՛ դանդաղ եվոլյուցիան, և՛ արագ թռիչքները, աստիճանականության ընդմիջումները:

Ռեվիզիոնիստները փրազներ են համարում բոլոր դատողությունները «թռիչքների» մասին և բանվորական շարժման սկզբունքային հակադրության մասին՝ ամբողջ հին աշխարհի հանդեպ: Նրանք ռեֆորմներն ընդունում են սոցիալիզմը մասնակիորեն իրագործելու տեղ: Անարխո-սինդիկալիստը ժխտում է «մանր

աշխատանքը», մանավանդ պառլամենտական ամբիոնի օգտագործումը: Իրոք այս վերջին տակտիկան հանգում է «մեծ որերի» սպասելուն, անկարող լինելով մեծ դեպքեր ստեղծող ուժեր ժողովելու: Թե՛ սրանք, թե՛ նրանք արգելակում են ամենակարևոր, ամենակենսական բանը՝ բանվորների համախմբումը խոշոր, ուժեղ, լավ գործող, ամեն տեսակ պայմաններում լավ գործել կարողացող կազմակերպությունների մեջ, վոր տոգորված են դասակարգային պայքարի վոգով, պարզ գիտակցում են իրենց նպատակները, դաստիարակված են իսկապես մարքսիստական աշխարհայեցողությամբ:

Այստեղ մենք թույլ կտանք մի փոքրիկ շեղում և փակագծում կնշենք, խուսափելու համար հնարավոր թյուրիմացություններից, վոր Պաննեկուկն իր անալիզը նկարագարդում է բացառապես արևմտա-յեվրոպական, հատկապես Գերմանիայի ու Ֆրանսիայի պատմությունից առած որինակներով, բնավ նկատի չունենալով Ռուսաստանը: Յեթե յերբեմն թվում է, թե նա Ռուսաստանն է ակնարկում, այդ էլ կախված է միայն նրանից, վոր հիմնական տենդենցները, վորոնք վորոշ շեղումներ են առաջ բերում մարքսիստական տակտիկայից, յերևում են նաև մեզնում, չնայելով Ռուսաստանի հսկայական կուլտուրական, կենցաղային և պատմա-տնտեսական տարբերություններին Արևմուտքից:

Վերջապես, մի չափազանց կարևոր պատճառ, վոր բանվորական շարժման մասնակիցների մեջ տարաձայնություններ է առաջ բերում, ընդհանրապես կառավարող դասակարգերի և մասնավորապես բուրժուազիայի տակտիկայի մեջ յեղած փոփոխություններն են հանդիսանում: Յեթե բուրժուազիայի տակտիկան միշտ միակերպ կամ թեկուզ միշտ միատեսակ լիներ, բանվոր դասակարգն արագ կերպով կսովորեր նրան պատասխանել նույնչափ միակերպ կամ միատեսակ տակտիկայով: Իրոք բուրժուազիան բոլոր յերկրներում անխուսափելիորեն կառավարելու յերկու սիստեմ, իր շահերի և իր տիրապետությունը պաշտպանելու համար պայքարի յերկու մեթոդ է մշակում, ըստորում այդ յերկու մեթոդները մերթ փոխարինում են մեկը մյուսին, մերթ միահյուսվում են տարբեր զուգորդումներով: Այդ, նախ, բռնության մեթոդն է, բանվորական շարժմանը ամեն տեսակ զիջումներ անելուց հրաժարվելու մեթոդը, բոլոր հին ու իրենց ժամանակն անցրած հիմնարկությունները պահպանելու մեթոդը, ռեֆորմների անհաշտ ժխտման մեթոդը: Այսպես է եյությունը

պահպանողական քաղաքականության, վորն Արևմտյան Յեվրոպայում ավելի ու ավելի յե դադարում հողատիրական դասակարգերի քաղաքականություն լինելուց, ավելի ու ավելի յե դառնում համաբուրժուական քաղաքականության այլազանություններից մեկը։ Յերկրորդ մեթոդը «լիբերալիզմի»՝ դեպի քաղաքական իրավունքների զարգացումը, դեպի ռեֆորմները, զիջումների կողմը կատարվող քայլերի մեթոդն է և այլն։

Բուրժուազիան մի մեթոդից մյուսին է անցնում վո՛չ թե առանձին անձերի չարամիտ հաշիվներով և վո՛չ էլ պատահականությամբ, այլ իր սեփական դրության արմատական հակասությունների ուժով։ Նորմալ կապիտալիստական հասարակությունը չի կարող հաջողությամբ զարգանալ առանց ամրապինդ ներկայացուցչական հասարակակարգի, առանց բնակչության վորոշ քաղաքական իրավունքների, բնակչության, վորը «կուլտուրական տեսակետից» չի կարող աչքի չընկնել համեմատաբար բարձր պահանջկոտությամբ։ Կուլտուրականության վորոշ մինիմումի այդ պահանջկոտությունն առաջ են բերում հենց կապիտալիստական արտադրության յեղանակի պայմանները այդ արտադրության բարձր տեխնիկայով, բարդությամբ, ճկունությամբ, շարժունությամբ, համաշխարհային մրցման արագ զարգացումով և այլն։ Տատանումները բուրժուազիայի տակտիկայում, բռնության սիստեմից իբր թե զիջումների սիստեմին անցնելը հատուկ է, դրա հետևանքով, բոլոր յեվրոպական յերկրների վերջին կես դարի պատմությանը, ըստ վորում տարբեր յերկրներ առավելապես զարգացնում են այս կամ այն մեթոդի կիրառումը վորոշ ժամանակաշրջանների ընթացքում։ Որինակ, XIX դարի 60-ական, 70-ական թվականներին Անգլիան «լիբերալ» բուրժուական քաղաքականության կլասիկ յերկիրն էր, 70-ական և 80-ական թ. թ. Գերմանիան բռնության մեթոդն էր կիրառում։

Յերբ Գերմանիայում թագավորում էր այս մեթոդը, բուրժուական կառավարման այս սիստեմներից մեկի միակողմանի արձագանքն էր անարխո-սինդիկալիզմի կամ, ըստ այն ժամանակվա, անարխիզմի աճումը բանվորական շարժման մեջ («յերիտասարդները» 90-ական թ. թ. սկզբին, Յոհանն Մոստը 80-ականների սկզբին)։ Յերբ 1890 թ. շրջադարձ կատարվեց դեպի «զիջումները», այս շրջադարձը, ինչպես և միշտ, ավելի վտանգավոր դուրս յեկավ բանվորական շարժման համար, առաջ բերելով բուրժուական «ռեֆորմատորության» նույնքան միակողմանի ար-

ձագանք, ոպորտունիզմ բանվորական շարժման մեջ «Բուրժուազիայի լիբերալ քաղաքականության պոլիտիկ, ռեալ նպատակն է,—ասում է Պաննեկուկը,—մոլորեցնել բանվորներին, պառակտում գցել նրանց մեջ, նրանց քաղաքականությունը դարձնել վորպես թե ռեֆորմատորության անզոր, միշտ անզոր և եֆեմեր[1] կցորդ»։

Հաճախ բուրժուազիան վորոշ ժամանակ հասնում է իր նպատակին «լիբերալ» քաղաքականության միջոցով, վորն իրենից, ըստ Պաննեկուկի իրավացի դիտողության, «ավելի խորամանկ» քաղաքականություն է ներկայացնում։ Բանվորների մի մասը, նրանց ներկայացուցիչների մի մասը յերբեմն իրեն խաբել է տալիս առերևույթ զիջումներով։ Ռևիզիոնիստները «հնացած» են հռչակում դասակարգային պայքարի ուսմունքը կամ սկսում են իրոք վոր նրանից հրաժարվելն իրականացնող քաղաքականություն վարել։ Բուրժուական տակտիկայի զիգզագները ռևիզիոնիզմի ուժեղացումն են առաջացնում բանվորական շարժման մեջ և հաճախ տարաձայնությունները նրա ներսում հասցնում են մինչև ուղղակի պառակտման։

Ցույց տված ձևի բոլոր պատճառները տարաձայնություններ են առաջացնում բանվորական շարժման ներսի, պրոլետարական միջավայրի ներսի տակտիկայի վերաբերյալ։ Սակայն չինական պարիսպ չկա և չի կարող լինել պրոլետարիատի և նրա հետ շըփվող մանր բուրժուազիայի շերտերի, այդ թվում նաև գյուղացիության միջև։ Հասկանալի յե, վոր առանձին անհատների, խմբերի և շերտերի անցումները մանր բուրժուազիայից պրոլետարիատին՝ իրենց կողմից չեն կարող տատանումներ չծնել այս վերջինի տակտիկայում։

Զանազան յերկրների բանվորական շարժման փորձը պրակտիկայի կոնկրետ հարցերով ոգնում է պարզել մարքսիստական տակտիկայի եյությունը, ավելի յերիտասարդ յերկրներին ոգնում է ավելի պարզ տարբերելու մարքսիզմից շեղվելու իսկական դասակարգային նշանակությունը և ավելի հաջող պայքարելու այդ շեղումների դեմ։

Տպագրված է 1910 թ. դեկտեմբերի 29 (16)-ին
«Звезда» թերթի № 1-ում։
Ստորագրություն՝ Վ. Իլյին։
Երկ., հ. XV, էջ 1—9։

[1] — անցողիկ։ Խմբ.։

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր ուսմունքը,—ասում էր Էնգելսն իր և իր հռչակավոր բարեկամի մասին,—դոգմա չէ, այլ ուղեցույց գործողության համար: Այս կլասիկ դրույթի մեջ զարմանալի ուժով ու արտահայտչությամբ ընդգծված է մարքսիզմի այն կողմը, որ միշտ ու ամեն տեղ աչքաթող են անում: Իսկ աչքաթող անելով այդ՝ մարքսիզմը դարձնում ենք միակողմանի, այլանդակ, անկենդան, հանում ենք նրանից նրա կենդանի հոգին, տակից քանդում նրա արմատական թեորիական հիմունքները—դիալեկտիկան՝ ամենակողմանի ու հակասություններով լի պատմական զարգացման ուսմունքը. մենք քանդում ենք նրա կապը դարաշրջանի որոշ պրակտիկ խնդիրների հետ, որոնք կարող են փոխվել պատմության յուրաքանչյուր նոր շրջադարձի հետ:

Եվ, հատկապես, մեր ժամանակ նրանց շրջանում, ում հետաքրքրում է մարքսիզմի բախտը Ռուսաստանում, առանձնապես հաճախ են պատահում մարդիկ, որոնք աչքաթող են անում նրա հենց այդ կողմը: Մինչդեռ ամեն մեկի համար պարզ է, որ վերջին տարիներս Ռուսաստանն այնպիսի խիստ բեկումներ է ապրել, որոնք անսովոր արագությամբ և անսովոր խստությամբ փոխել են իրադրությունը, սոցիալական-քաղաքական իրադրությունը, որոնք ամենամոտ և անմիջական կերպով որոշում են գործողության պայմանները, հետևապես՝ նաև գործողության խնդիրները: Խոսքս, իհարկե, ընդհանուր և հիմնական խնդիրների մասին չէ, որոնք չեն փոխվում պատմության շրջադարձերի հետ, եթե չի փոխվում դասակարգերի հիմնական փոխհարաբերությունը: Միանգամայն ակներև է, որ Ռուսաստանի տնտեսական (և ոչ միայն տնտեսական) էվոլյուցիայի այդ ընդհանուր ուղղությունը, հավասարապես նաև ռուսական հասարակության զանազան դասակարգերի հիմնական փոխհարաբերությունը վերջին, ասենք, վեց տարվա ընթացքում չի փոխվել:

Բայց մոտակա և անմիջական գործողության խնդիրներն այդ ժամանակվա ընթացքում շատ խիստ կերպով փոխվել են, ինչպես փոխվել է կոնկրետ սոցիալ-քաղաքական իրադրությունը,—հետևաբար, *նաև մարքսիզմի, ինչպես կենդանի ուսմունքի, մեջ չէ*ին կարող *առաջին պլան չմղվել նրա* զանազան *կողմերը:*

Այս միտքը պարզելու համար մի ակնարկ գցենք, թե կոնկրետ սոցիալ-քաղաքական իրադրությունը վերջին վեցամյակի ընթացքում ինչպիսի փոփոխություն է կրել: Այս շրջանը յերկու, միանգամից ջոկվող յեռամյակի յե բաժանվում. մեկը, որ վերջանում է մոտավորապես 1907 *թվի ամռանը, մյուսը՝* 1910 *թվի ամռանը: Զուտ թեորիական տեսակետից առաջին յեռամյակը բնորոշվում է Ռուսաստանի պետական կազմի հիմնական գծերի արագ փոփոխություններով, ընդորում այդ փոփոխությունների ընթացքը շատ անհարթ էր, դեպի յերկու կողմ տատանումների ամպլիտուդան շատ մեծ էր: «Վերնաշենքի» այդ փոփոխությունների սոցիալ-տնտեսական բազան ռուսական հասարակության բոլոր դասակարգերի այնքան բաց, ազդու, մասսայական յելույթն էր* ամենազանազան *ասպարեզներում (գործունեություն Դումայում և Դումայից դուրս, մամուլ, միություններ, ժողովներ և այլն), որպիսին քիչ է պատահում պատմության մեջ:*

Ընդհակառակը, յերկրորդ յեռամյակը բնորոշվում է,—կրկնում ենք՝ այս անգամ սահմանափակվում ենք զուտ թեորիական «սոցիոլոգիական» տեսակետով,—այնպիսի դանդաղ էվոլյուցիայով, որ համարյա հավասար է անշարժության: Պետական կարգերում ոչ մի քիչ թե շատ նկատելի փոփոխություն: Դասակարգերի *ոչ մի կամ համարյա ոչ մի բացահայտ և բազմակողմանի յելույթ այն «ասպարեզների» մեծ մասում, որտեղ ծավալվում էին այդ յելույթները նախորդ ժամանակաշրջանում:*

Այդ յերկու ժամանակաշրջանների նմանությունն այն է, որ Ռուսաստանի էվոլյուցիան թե՛ մեկի և թե՛ մյուսի ընթացքում մնում էր նախկին, կապիտալիստական էվոլյուցիան: Այդ տնտեսական էվոլյուցիայի հակասությունը մի ամբողջ շարք ֆեոդալական, միջնադարյան հիմնարկների գոյության հետ չէր վերացվում, նույնպես նախկինն էր մնում, չհարթվելով, այլ ավելի շուտ սրվելով այս կամ այն առանձին հիմնարկությունը մի որոշ մասնակի բուրժուական բովանդակություն թափանցելուց:

Այս և մյուս ժամանակաշրջանի տարբերությունն այն է, որ առաջին ժամանակաշրջանի ժամանակ պատմական գործողության

նախաբեմում այն հարցն էր կանգնած, թե վերևում մատնանշված արագ ու անհարթ փոփոխությունները հատկապես ինչ հետևանք կունենան: Ռուսաստանի եվոլուցիայի կապիտալիստական բնույթի զորությամբ՝ այդ փոփոխությունների բովանդակությունը չէր կարող բուրժուական չլինել, բայց բուրժուազիա էլ կա, բուրժուազիա էլ: Միջին և խոշոր բուրժուազիան, որ քիչ թե շատ չափավոր լիբերալիզմի դիրքում է կանգնած, հենց ըստ իր դասակարգային դրության, վախենում էր խիստ փոփոխություններից և ձգտում էր, որ հին հիմնարկների մնացորդների խոշոր մասը պահպանվի և՛ ագրարային կարգերում, և՛ քաղաքական «վերնաշենքում»: Գյուղական մանր բուրժուազիան «իր ձեռքի աշխատանքով» ապրող գյուղացիության հետ հյուսվելով՝ չէր կարող չձգտել այլ տեսակի բուրժուական բարենորոգումների, որոնք շատ ավելի քիչ տեղ են թողնում միջնադարյան ամեն տեսակի հնություններին: Վարձու բանվորները, որչափ նրանք գիտակցորեն եյին վերաբերվում իրենց շուրջն անցած-դարձածին, չեյին կարող իրենց համար չմշակել որոշ վերաբերմունք դեպի այդ բախումը յերկու տարբեր տենդենցների, որոնք յերկուսն էլ մնացին բուրժուական կարգերի շրջանակում, բայց որոշում եյին նրա բոլորովին տարբեր ձևերը, նրա զարգացման բոլորովին տարբեր արագությունը, նրա առաջադիմական ազդեցությունների ընդգրկումների տարբեր լայնությունը:

Այսպիսով, անցած յեռամյակի դարաշրջանը ո՛չ թե պատահաբար, այլ անհրաժեշտաբար առաջին շարքը քաշեց մարքսիզմի այն հարցերը, որ ընդունված է տակտիկայի հարցեր անվանել: Ավելի սխալ բան չկա, քան այն կարծիքը, թե իբր այդ հարցերի առթիվ տեղի ունեցած վեճերն ու տարամիտումները «ինտելիգենտական» վեճեր եյին, «տհաս պրոլետարիատի վրա ազդեցություն ձեռք բերելու համար վարած պայքար» եյին, արտահայտում եյին «ինտելիգենցիայի հարմարվելը պրոլետարիատին», ինչպես կարծում են ամեն տեսակի վեխովեցները: Ընդհակառակը, հենց այն պատճառով, որ տվյալ դասակարգը հասունացել էր, նա չէր կարող անտարբեր մնալ դեպի Ռուսաստանի ամբողջ բուրժուական զարգացման յերկու տարբեր տենդենցների ընդհարումը, և այդ դասակարգի իդեոլոգները չեյին կարող այդ յերկու տենդենցներին համապատասխանող (ուղղակի, թե անուղղակի, շիտակ, թե հակառակ անդրադարձությամբ) թեորիական ձևակերպումներ չտալ:

Յերկրորդ յեռամյակում Ռուսաստանի բուրժուական զարգացման տարբեր տենդենցների ընդհարումն օրվա հերթական խնդիր չէր, որովհետև այդ յերկու տենդենցներն էլ ճնշված եյին «զուբրի» կողմից, հետ եյին հրած, ներս եյին մղած, խեղդվել եյին միաժամանակ: Միջնադարյան զուբրերը ո՛չ միայն նախաբեմն եյին լցրել, այլև բուրժուական հասարակության ամենալայն խավերի սրտերը լցրել եյին վեխովյան տրամադրությամբ, վհատությամբ, ուրացողության ոգով: Ո՛չ թե հնի բարենորոգման յերկու յեղանակների ընդհարումը, այլ հավատի կորուստը դեպի որևէ բարենորոգումն, «հեզության» և «զղջման» ոգին, հակահասարակական ուսմունքներով հափշտակվելը, միստիցիզմի մոդան և այլն,—ահա թե մակերեսի վրա ինչ ստացվեց:

Յեվ այդ զարմանալի խիստ հերթափոխումը ո՛չ պատահականություն էր, ո՛չ էլ միմիայն «արտաքին» ճնշման հետևանք: Նախընթաց դարաշրջանն այնքան խորն ալեկոծեց բնակչության խավերը, որոնք սերունդներ շարունակ, դարեր շարունակ հեռու եյին կանգնած իրենց համար խորթ քաղաքական հարցերից, որ «բոլոր արժեքների վերագնահատումը», հիմնական պրոբլեմների վրա նոր աշխատանքը, նոր հետաքրքրությունը դեպի թեորիան, դեպի այբուբենը, դեպի տարրական գիտելիքներից սկսելը՝ ծագեց բնական և անխուսափելի կերպով: Միլիոնավոր մարդիկ, որոնց միանգամից զարթնեցրել եյին յերկարատև քնից, միանգամից ամենակարևոր պրոբլեմների առաջ դրել, յերկար այդ բարձրության վրա մնալ չեյին կարող, չեյին կարող յոլա գնալ առանց ընդմիջումի, առանց վերադարձի դեպի տարրական հարցերը, առանց նոր նախապատրաստման, որն օգներ «մարսելու» չտեսնված հարուստ դասերը և հնարավորություն տար անհամեմատ ավելի ընդարձակ մասսային՝ նորից առաջ գնալ, այս անգամ արդեն շատ ավելի հաստատորեն, ավելի գիտակցաբար, ավելի վստահ, ավելի տոկուն կերպով:

Պատմական զարգացման դիալեկտիկան այնպես դուրս յեկավ, որ առաջին ժամանակաշրջանում, առաջին հերթին յերկրի կյանքի բոլոր բնագավառներում անմիջական բարենորոգումների իրագործումն էր դրված, իսկ յերկրորդում՝ փորձի վերամշակումը, նրա յուրացումն ավելի լայն խավերի կողմից, նրա թափանցումը, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, հողի յերկրորդ շերտը, զանազան դասակարգերի հետամնաց շարքերը:

Հենց այն պատճառով, վոր մարքսիզմը մեռած դոգմա չէ, մի ինչ-վոր ավարտված, պատրաստի, անփոփոխ ուսմունք չէ, այլ գործողության կենդանի ուղեցույց, հենց այդ պատճառով նա չէր կարող իր վրա չարտացոլել հասարակական կյանքի պայմանների զարմանալի սուր փոփոխումը: Փոփոխման արտացոլումն հանդիսացավ խոր քայքայումը, խառնաշփոթը, ամեն տեսակի տատանումները, մի խոսքով՝ մարքսիզմի ամենալուրջ ներքին կրիզիսը: Այդ քայքայմանը վճռական հակահարված տալը, մարքսիզմի հիմունքների համար վճռական և համառ պայքարը նորից հերթական խնդիր դարձավ: Չափազանց լայն խավերն այն դասակարգերի, վորոնք իրենց խնդիրները ձևակերպելիս չեն կարող մարքսիզմին չդիմել, նախընթաց եպոխայում մարքսիզմը յուրացրել էին ծայրահեղորեն միակողմանի, այլանդակ կերպով, անգիր անելով այս կամ այն «լոզունգները», տակտիկական հարցերի այս կամ այն պատասխանները և չհասկանալով այդ պատասխանների մարքսիստական կրիտերիումները: «Բոլոր արժեքների վերագնահատումը» հասարակական կյանքի զանազան բնագավառներում հասցրեց մարքսիզմի ամենից աբստրակտ ու ընդհանուր փիլիսոփայական հիմունքների «ռևիզիային»: Բուրժուական փիլիսոփայության ազդեցությունն իր զանազան իդեալիստական յերանգներով իրեն արտահայտությունը գտավ մարքսիստների շրջանում տարածված մախիստական համաճարակի մեջ: Անգիր արած, բայց չհասկացած, չմտածված «լոզունգների» կրկնությունը հասցրեց դատարկ ֆրազի լայն տարածմանը, վոր իրականում հանգեց կատարելապես վոչ-մարքսիստական, մանրբուրժուական հոսանքների, նման անկեղծ կամ ամոթխած «ոտզովիզմի», կամ ոտզովիզմը մարքսիզմի «որինական մի յերանգը» ընդունելուն:

Մյուս կողմից, վեխովշչինայի վոգին, ուրացողության վոգին, վոր ընդգրկել էր բուրժուազիայի ամենալայն խավերը, թափանցեց նաև այն հոսանքի մեջ, վոր ձգտում է մարքսիստական թեորիան ու պրակտիկան «չափավորության և ճշտապահության» հունում տեղավորել: Այստեղ մարքսիստական մնաց արդեն միմիայն ֆրազեոլոգիան, վոր ծածկում էր ամբողջովին լիբերալ վոգով տոգորված դատողությունները «հիերարխիայի» և «հեգեմոնիայի» մասին և այլն:

Այդ դատողությունների քննարկումն, իհարկե, ներկա հոդվածի խնդիրը դառնալ չի կարող: Բավական է դրանք մատնանշել, վորպեսզի պատկերացնենք վերևում ասածը մարքսիզմի

ապրած ճգնաժամի խորության մասին, ներկա ժամանակաշրջանի ամբողջ հասարակական-տնտեսական իրադրության հետ նրա ունեցած կապի մասին: Այդ ճգնաժամի բարձրացրած հարցերին կարևորություն չտալ չի կարելի: Ավելի վնասակար, ավելի անսկզբունք բան չկա, քան նրանցից ֆրազի միջոցով ազատվելու փորձերը: Ավելի կարևոր բան չկա, քան ճգնաժամի խորությունը և նրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը գիտակցած բոլոր մարքսիստների համախմբումը՝ պաշտպանելու համար մարքսիզմի թեորիական հիմունքները և նրա արմատական դրույթները, վոր խեղաթյուրում են ամենահակադիր կողմերը՝ բուրժուական ազդեցությունը մարքսիզմի զանազան «ուղեկիցների» վրա տարածելու միջոցով:

Նախընթաց յեռամյակը հասարակական կյանքին գիտակցորեն մասնակցելու բարձրացրեց այնպիսի լայն խավեր, վորոնք հաճախ այժմ են առաջին անգամ սկսում իսկական կերպով ծանոթանալ մարքսիզմին: Բուրժուական մամուլը դրա վերաբերմամբ շատ ավելի մոլորություններ է ստեղծում, քան առաջ, և ավելի լայն է տարածում դրանք: Քայքայումը մարքսիզմի շրջանում առանձնապես վտանգավոր է այդպիսի պայմաններում: Այդ պատճառով էլ մեր ապրած որերում այդ քայքայման անխուսափելիության պատճառները հասկանալը և նրա դեմ հետևողական պայքար վարելու համար համախմբվելը, բառիս ամենաուղիղ և ճշգրիտ իմաստով, դարաշրջանի խնդիրն է մարքսիստների համար:

«Звезда» № 2,
5 հունվարի 1911 թ. (23 դեկտեմբերի 1910 թ.):
Ստորագրություն՝ Վ. Իլյին:
Երկ., հ. XV, եջ 71—75:

ՀԱՅՆԴՄԱՆԸ ՄԱՐՔՍԻ ՄԱՍԻՆ

Մոտ անցյալում լույս տեսան անգլիական «սոցիալ-դեմոկրատական կուսակցության» հիմնադիրներից և առաջնորդներից մեկի՝ Հենրի Մայերս Հայնդմանի ստվարածավալ մեմուարները: Գիրքը, վոր համարյա հինգ հարյուր եջից ե, կոչվում ե՝ «Դիտողություններ արկածալի կյանքի մասին»[1] և ներկայացնում ե իրենից աշխույժ գրված հիշողություններ հեղինակի քաղաքական գործունեության և այն «հռչակավոր» մարդկանց մասին, վորոնց հետ հեղինակը ծանոթ ե յեղել: Հայնդմանի գիրքը տալիս ե հետաքրքրական շատ նյութ անգլիական սոցիալիզմի բնութագրման և միջազգային ամբողջ բանվորական շարժման մի քանի կարևորագույն հարցերի գնահատման համար:

Ուստի մենք կարծում ենք, վոր ժամանակ ե մի քանի փոքրիկ հոդվածներ նվիրել Հայնդմանի գրքին, հատկապես նկատի ունենալով աջ-կադետական «Русские ведомости» *թերթի յելույթները (հոկտեմբերի* 14*-ին) լիբերալ Դիոնեոյի հոդվածով, վոր տալիս ե այդ հարցերի լիբերալ լուսաբանության, կամ ավելի ճիշտ՝ մթագնման հետաքրքրական մի նմուշ:*

Սկսենք Հայնդմանի՝ Մարքսին նվիրած հիշողություններից: Հ. Հայնդմանը ծանոթացել ե նրա հետ միմիայն 1880 *թվին, ինչպես յերևում ե, շատ քիչ տեղյակ լինելով նրա ուսմունքին և ընդհանրապես սոցիալիզմին: Բնորոշ ե անգլիական հարաբերությունների համար, վոր Հայնդմանը, վորը ծնվել ե* 1842 *թվին, մինչև այդ ժամանակ կոնսերվատիվ կուսակցության (տորի) հետ կապեր պահպանող և նրան համակրող անորոշ գույնի «դեմոկրատ» ե յեղել: Հայնդմանը հակվում ե սոցիալիզմին «Կապիտալը» (ֆրանսերեն թարգմանությամբ) կարդալուց հետո, իր՝ դեպի Ամերիկա ունեցած բազմաթիվ ճանապարհորդություններից մեկի ժամանակ,* 1874—1880 *թ. միջև:*

[1] «The Record of an Adventurous Life», by Henry Mayers Hyndman, London (Macmillan and C°). 1911.

Կարլ Հիրշի ուղեկցությամբ ճանապարհվելով Մարքսի հետ ծանոթանալու, Հայնդմանն իր մտքում համեմատում եր նրան... Մաձ՛ինիի հետ:

Թե ինչպիսի մակերևույթի վրա յեր դնում Հայնդմանն այդ համեմատությունը, յերևում ե նրանից, վոր Մաձինիի ազդեցությունը շրջապատողների վրա նա անվանում ե «անձնական և ինդիվիդուալ-եթիկական», իսկ Մարքսի ազդեցությունը «գրեթե ամբողջովին ինտելեկտուալ և գիտական»: Կ. Մարքսի մոտ Հայնդմանը գնում եր, ինչպես «մեծ անալիտիկ հանճարի» մոտ, ձգտելով սովորել նրանից,—Մաձինիի մեջ նրան գրավում եր բնավորությունը, «մտքերի և վարքի վերամբարձ ձևը»: Մարքսը, «անվիճելիորեն, ավելի հզոր միտք եր»: Հայնդմանը, անվիճելի յե, վոր 1880 *թվին բոլորովին վատ եր հասկանում (հիմա ել դեռ լիովին չի հասկացել—դրա մասին ներքևը) բուրժուական դեմոկրատի և սոցիալիստի տարբերությունը:*

«Յերբ յես տեսա Մարքսին,—գրում ե Հայնդմանը—իմ առաջին տպավորությունն եր՝ ուժեղ, թավամազ, անընկճելի մի ծերունի, վորը պատրաստ ե—յեթե չասենք՝ ձգտում ե—կոնֆլիկտի մեջ մտնել և տրամադրված ե վորոշ կասկածամտությամբ, կարծես թե նա պետք ե հենց հիմա հարձակում կրի: Բայց նա ինձ բարևեց սիրալիր, և նույնքան ել սիրալիր եյին նրա առաջին խոսքերը: Յես ասացի, վոր ինձ շատ մեծ բավականություն և պատիվ ե սեղմել «Կապիտալի» հեղինակի ձեռքը. Նա պատասխանեց, վոր հաճույքով ե կարդացել իմ հոդվածները Հնդկաստանի մասին[1] *և գովեստով ե արտահայտվել նրանց մասին իր լրագրական թղթակցություններում»:*

«Յերբ Մարքսը կատաղի զայրույթով խոսում եր լիբերալ կուսակցության քաղաքականության մասին, հատկապես Իռլանդիայի վերաբերմամբ, վաղեմի մարտիկի մանր, խորն ընկած աչքերը վառվում եյին, ծանր հոնքերը կիտվում, լայն մեծ քիթը և դեմքը շարժվում, ու շուրթերից հորդառատ հոսում եյին կրակոտ, փոթորկալի մեղադրանքներ, վորոնք ցույց տվին ինձ

[1] *Մինչև վերջերս կատարած իր թեքումը դեպի շովինիզմ Հայնդմանը յեղել ե անգլիական իմպերիալիզմի վճռական թշնամին և* 1878 *թվից մերկացումների ազնիվ կամպանիա յե մղել այն բոլոր ամոթալի բռնությունների, վայրագությունների, թալանների, անարգանքների (մինչև քաղաքական «հանցավորներին» ծեծելու) դեմ, վորոնցով Հնդկաստանում վաղուց արդեն հռչակվել են բոլոր կուսակցություններին պատկանող անգլիացիները—կից մինչև «կրթված» և «ռադիկալ» գրող Ջոն Մորլին* (Morley):

թե՛ նրա ամբողջ կրքոտ խառնվածքը և թե՛ անգլերեն լեզուն սքանչելի գիտենալը։ Զարմանալի յեր կոնտրաստը նրա խոսելու ձևի—յերբ նրան խորը հուզում եր զայրույթը—և նրա ամբողջ արտաքինի միջև, յերբ նա արտահայտում եր իր հայացքները վորոշ ժամանակաշրջանի տնտեսական դեպքերի մասին։ Առանց վորևե նկատելի ջանքի նա անցնում եր մարգարեյի և հզոր տրիբունի դերից հանգիստ փիլիսոփայի դերին, և յես միանգամից զգացի, վոր կանցնեն շատ յերկար տարիներ, մինչև վոր կդադարեմ ինձ զգալ, այս վերջին հարցերի վերաբերյալ, վորպես աշակերտ ուսուցչի առաջ։

«Յերբ յես կարդում եյի «Կապիտալը» ու մանավանդ նրա մանր յերկերը Փարիզի կոմունայի և «Բրյումերի 18–ի» մասին, ինձ զարմացնում եր, թե ինչպես նա կարողանում է միացնել տնտեսական պատճառների և սոցիալական հետևանքների ամենաճշգրիտ և սառը հետազոտությունը ամենակրակոտ ատելության հետ դեպի դասակարգերը և նույնիսկ դեպի Նապոլեոն III–ի կամ Թյերի նման առանձին անձինք, վորոնք, ըստ իր իսկ սեփական թեորիայի, ավելի չեյին, քան կապիտալիստական զարգացման Ջագերնաուտի կառքի անիվներին կպած ճանճեր։ Չպետք ե մոռանալ, վոր Մարքսը, հրեա յեր, և ինձ թվում եր, վոր նա միացնում եր իր բնավորության, իր արտաքինի մեջ—ազդեցիկ ճակատով, մեծ կախված հոնքերով, վառվռուն, փայլուն աչքերով, լայն զգայուն քթով և շարժուն բերանով, ամեն կողմից թափվող մազերով ծածկված յերեսով,—իր ցեղի մեծ մարգարեների արդար զայրույթը և Սպինոզայի ու հրեական գիտնականների սառը վերլուծողական միտքը։ Այդ՝ զանազան ընդունակությունների մի անսովոր զուգորդում ե, վորի նմանը յես չեմ հանդիպել վոչ մի մարդու մեջ։

«Յերբ մենք Հիրշի հետ դուրս յեկանք Մարքսի մոտից, և յես գտնվում եյի այդ մեծ մարդու անձնավորության խորը տպավորության տակ, Հիրշը հարցրեց ինձ՝ ինչ եմ կարծում յես Մարքսի մասին։ «Կարծում եմ,—պատասխանեցի յես, վոր նա XIX դարի Արիստոտելն ե»։ Յեվ սակայն, ասելով այդ, յես իսկույն ևեթ նկատեցի, վոր այդպիսի բնորոշումը չի ընդգրկում ամբողջ «առարկան»։ Ամենից առաջ այն, վոր անկարելի յե պատկերացնել Մարքսին, վորպես միացնողի Ալեքսանդր Մակեդոնացու պատերազմական դերը մի շարք սերունդների վրա այնպիսի զորեղ ազդեցություն ունեցած խորը, գիտական աշխատանքների հետ։

Բացի այդ՝ Մարքսը յերբեք լիովին չի անջատել իրեն—հակառակ նրան, ինչ վոր նրա մասին շատ անգամ ասել են,—մարդկային անմիջական շահերից, վորպեսզի փաստերը և նրանց շրջապատող հանգամանքները քննի այն սառը և չոր լուսաբանությամբ, վոր բնորոշ ե հին ժամանակների ամենամեծ փիլիսոփայի համար։ Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր Մարքսի ատելությունը դեպի իրեն շրջապատող շահագործման սիստեմը և վարձու ստրկությունը վո՛չ միայն բանական և փիլիսոփայական ե, այլև բուռն անձնական։

«Հիշում եմ, մեկ անգամ յես ասացի Մարքսին, վոր տարիքով ավելի մեծ դառնալով, ինձ թվում ե, վոր դառնում եմ ավելի հանդուրժող։ «Ավելի՞ հանդուրժող,—պատասխանում եր Մարքսը—ավելի՞ հանդուրժող»։ Պարզ եր, վոր նա ավելի հանդուրժող չեր դառնում։ Ինձ թվում ե, վոր Մարքսի հենց այդ խորը ատելությունը դեպի գոյություն ունեցող կարգերը և թշնամիներին վոչնչացնող նրա քննադատությունն են, վոր խանգարել են ունևոր դասակարգերի կրթված մարդկանց թվից շատերին՝ գնահատել նրա մեծ աշխատությունների ամբողջ նշանակությունը և Բյոմ–Բավերկի նման յերրորդ կարգի կիսագետներին ու լոգոմախներին այդպիսի հերոսներ են դարձրել միայն նրա համար, վոր նրանք խեղաթյուրել են Մարքսին և փորձել են նրան «հերքել»։ Մենք սովորել ենք այժմ, մանավանդ Անգլիայում, մենամարտել, ունենալով սուսերի ծայրին մեծ, փափուկ գնդակներ։ Մարքսի մոլեգին հարձակումները թշնամիների վրա, մերկացրած սրով, թվում են անպարկեշտ մեր ջենտլմենորեն կեղծավոր գիտնական մենամարտողներին, և նրանք անկարող են հավատալ, վոր այդպիսի անողորմ պոլեմիստը և կապիտալի ու կապիտալիստների մոլեգին թշնամին յեղել ե մեր եպոխայի ամենախոր մտածողը»։

1880 թվին Մարքսը գրեթե անծանոթ եր անգլիական հասարակությանը։ Նրա առողջությունն այն ժամանակ արդեն նկատելիորեն թուլանում եր, յերկարատև պարապմունքները (մի օրում մինչև 16 ժամ և ավելի՛ մտավոր աշխատանք) քայքայել եյին նրա օրգանիզմը, բժիշկներն արգելել եյին նրան պարապել յերեկոները, և յես, սկսած 1880 թվի վերջից մինչև 1881 թվի սկիզբը, օգտվում եյի,—պատմում ե Հայնդմանը,—նրա պարապ ժամերից՝ նրա հետ զրույցներ ունենալու համար։

«Մեր զրուցելու ձևը բավական տարօրինակ եր․ Մարքսը սովորություն ուներ սենյակում արագ քայլել հետ ու առաջ, յերբ նա

վոգևորվում էր մեծով,—կարծես զբոսնում էր ծովային նավի տախտակամածի վրա: Իմ յերկար ճանապարհորդությունների ժամանակ (Ամերիկա, Ավստրալիա և այլն) յես ձեռք եյի բերել նույնպիսի սովորություն—քայլել հետ ու առաջ, յերբ գլուխս վորևէ բանով առանձնապես զբաղված էր: Յեվ ահա, կարելի յեր դիտել այսպիսի տեսարան, վոր ուսուցիչը և աշակերտը յերկու-յերեք ժամ քայլում են սենյակի լայնությամբ և յերկարությամբ, սեղանի շուրջը, քննելով ժամանակակից եվրոպայի հարցերը և անցած որերի գործերը»:

Ինչպիսի յեր Մարքսի դիրքը զանազան հարցերի վերաբերյալ, վոր նա քննում էր Հայնդմանի հետ, վերջինս վոչ մի հարցի նկատմամբ քիչ թե շատ մանրամասն չի հաղորդում: Վերը շարադրածից յերևում է, վոր Հայնդմանն ավելի շատ և գրեթե բացառապես գործի անեկդոտիկ կողմի վրա յե կենտրոնանում. այդ համապատասխանում է նրա գրքի մնացած ամբողջ բովանդակությանը: Հայնդմանի ինքնակենսագրությունը անգլիական բուրժուական Ֆիլիստերի կենսագրություն է, վորը, լինելով իր դասակարգի լավագույններից լավագույնը, վերջիվերջո իրեն ճանապարհ է բաց անում դեպի սոցիալիզմը, յերբեք լրիվ չազատվելով բուրժուական տրադիցիաներից, բուրժուական հայացքներից ու նախապաշարմունքներից:

Կրկնելով Ֆիլիստերական կշտամբանքներ Մարքսի և Ենգելսի հասցեյին, վոր իբր նրանք «իբրև թե դեմոկրատական» Ինտերնացիոնալում «ինքնակալներ» են յեղել, գործնականը չեն հասկացել, չեն ճանաչել մարդկանց և այլն, Հայնդմանը վոչ մի անգամ չի փորձում այդ կշտամբանքներից և վոչ մեկը գնահատել համապատասխան մոմենտների իրադրության ճշգրիտ, կոնկրետ շարադրման հիման վրա:

Ստացվում է անեկդոտ և վոչ թե մարքսիստի պատմական անալիզ: Մարքսը և Ենգելսը կռվել են գերմանական սոցիալ-դեմոկրատական միության (լասսալականների հետ) գործի դեմ, իսկ միությունն անհրաժեշտ էր: Այսքանն է, վոր ասում է Հայնդմանը: Այն մասին, վոր Մարքսն ու Ենգելսը Լասսալից ու լասսալականներից սկզբունքորեն հազար անգամ ավելի ճշմարիտ են յեղել, Հայնդմանը վոչինչ չի ասում: Հայնդմանն այդ հարցը մինչև իսկ չի դնում: Այն բանի մասին, թե «դեմոկրատիզմը» (կազմակերպական) Ինտերնացիոնալի ժամանակաշրջանում արդյոք պրոլետարական սոցիալ-դեմոկրատիայի կառուցումը քայ-

քայող բուրժուական աղանդների թագստոց չի՞ յեղել, Հայնդմանն իրեն առաջ հարց անգամ չի դնում:

Դրանից է, վոր Հայնդմանի և Մարքսի հարաբերությունների խզումն այնպես է պատմված, վոր բամբասանքից (պարոնայք Դիոնեոյի վոգով) զատ վոչինչ դուրս չի գալիս: Ենգելսը, յերևակայեցեք, վոր «բծախնդիր, կասկածամիտ, խանդոտ» մարդ էր, իբր թե Մարքսի կինն ասել է Հայնդմանի կնոջը, վոր Ենգելսը Մարքսի «չար վոգին» (!!) է յեղել. Ենգելսը, վորին Հայնդմանը յերբեք մինչև իսկ չի հանդիպել (հակառակ այն բանին, վոր գրել է լիբերալ Դիոնեոն «Русские ведомости»-ի մեջ), հակում ուներ այն մարդկանց վերաբերյալ, վորոնց ոգնում էր փողով (Ենգելսը շատ հարուստ էր, Մարքսը շատ աղքատ), իր փողերից լրիվ փոխանակային արժեք կորզել. իբր թե Ենգելսն էլ հենց կռվեցրել է Մարքսին Հայնդմանի հետ, վախենալով, վոր Հայնդմանը, վորը այն ժամանակ հարուստ մարդ էր, կբռնի Ենգելսի տեղը, իբրև հարուստ բարեկամի—Մարքսին կից!!:

Պարոնայք լիբերալներին, իհարկե, հաճույք է պատճառում արտագրել հենց նման անասելի դռեհկությունները: Ծանոթանալ Զորգեյին ուղղած (Մարքսի և Ենգելսի) թեկուզ հենց այն նամակներին, վորոնք ինքը Հայնդմանն է ցույց տալիս, և գլուխ հանել այնտեղ, վորտեղ հարկավոր է, այդ, հասկանալի յե, վոր լիբերալ գրչակների ոգտին չե՛ բոլորովին: Դրա մասին նրանք չե՛ն հոգում: Մինչդեռ այդ նամակներին տեղեկանալը և Հայնդմանի «մեմուարների» հետ համեմատելը միանգամից վորոշում է հարցը:

1880 թ. Հայնդմանը հրատարակեց «Անգլիան բոլորի համար» բրոշյուրը, վորտեղ նա անցնում է սոցիալիզմին, մնալով շատ և շատ չհղկված բուրժուական դեմոկրատ: Բրոշյուրը գրված է այն ժամանակ առաջացած «Դեմոկրատական ֆեդերացիայի» (վոչ սոցիալիստական) համար, վորի մեջ կային մեծ քանակությամբ հակասոցիալիստական տարրեր: Ցեվ ահա Հայնդմանը պատմում, արտագրում է «Կապիտալը» իր բրոշյուրի յերկու գլխում, չանվանելով Մարքսին, նախաբանում միայն խուլ հիշելով մի վոմն «մեծ մտածողի և որիգինալ գրողի», վորին նա շատ պարտական է և այլն: Դրա համար էլ Ենգելսը «կռվեցրեց» ինձ Մարքսի հետ,—պատմում է Հայնդմանը,—մեջ բերելով միաժամանակ Մարքսի մի նամակն իրեն (1880 թ. դեկտեմբերի 8), վորտեղ Մարքսը գրում է, վոր Հայնդմանի ասելով, նա, Հայնդմանը,

«Համակարծիք չէ իմ (Մարքսի) կուսակցության հետ Անգլիայի վերաբերմամբ»:

Պարզ է, ինչումն է Հայնդմանի չհասկացած, չնկատած, չգնահատած տարաձայնությունը. նրանում, որ Հայնդմանն այն ժամանակ յեղել է (ինչպես ուղղակի էլ Մարքսը գրում է Զորգեյին 1881 թ. դեկտեմբերի 15-ին) «բարեհոգի մանր-բուրժուական գրող» «կիսաբուրժուա, կիսապրոլետար»: Պարզ է, որ յերբ մի մարդ, որը ծանոթանում է Մարքսի հետ, մոտենում նրան, անվանում իրեն նրա աշակերտը, ապա հիմնում «դեմոկրատական» ֆեդերացիա և գրում է նրա համար բրոշյուր, որտեղ աղավաղում է մարքսիզմը և լռում Մարքսի մասին, ապա Մարքսն այդ չէր կարող առանց «կատաղի» բողոքի թողնել: Յեվ ինչպես յերևում է, բողոք յեղել է, որովհետև Մարքսը, Զորգեյին ուղղած նույն նամակում, բերում է քաղվածքներ Հայնդմանի ներումն խնդրող նամակներից, Հայնդմանի, որն արդարանում է նրանով, որ «անգլիացիները չեն սիրում սովորել օտարազգիներից», որ «Մարքսի անունն այնպես ատելի յե» (!!) և այլն: (Ինքը Հայնդմանը հայտնում է, որ ոչնչացրել է իրեն ուղղված՝ Մարքսի գրեթե բոլոր նամակները, այնպես որ այդ կողմից ճշմարտության բացահայտմանն սպասելն իզուր է).

Ճշմարիտ չե՞ արդյոք, այսպես ներումն խնդրելը հրաշալի յե: Յեվ ահա, յերբ Հայնդմանի և Մարքսի այն ժամանակվա տարաձայնությունների հարցը լիակատար որոշակիությամբ պարզվում է, յերբ Հայնդմանի մինչև իսկ այժմյան ամբողջ գիրքն ապացուցում է, որ նրա հայացքներում շատ բան ֆիլիստերական և բուրժուական է (օրինակ՝ այն, թե ինչպիսի՛ փաստարկներով է պաշտպանում Հայնդմանը մահվան պատիժը քրեականների համար), Մարքսի հետ կապերը խզելու բացատրության համար մեջ են բերում Ենգելսի «ինտրիգները», Ենգելսի, որը քառասուն տարի Մարքսի հետ մի սկզբունքային գիծ է վարել: Յեթե մինչև իսկ Հայնդմանի մնացած ամբողջ գիրքը մեղրի տակառ էլ լիներ, այս մի գդալ կուպրը բավական կլիներ...

Գերազանց բնորոշությամբ դրսևորվում են այն ժամանակվա տարաձայնությունները Մարքսի և Հայնդմանի միջև նրանից, ինչ որ վերջինս հաղորդում է Մարքսի՝ Հենրի Ջորջին տված գնահատականի մասին: Այդ գնահատականը հայտնի յե Մարքսի 1881 թվի հունիսի 30-ին Զորգեյին ուղղած նամակից: Հայնդմանը պաշտպանում էր Հ. Ջորջին Մարքսի առաջ այսպիսի փաստ-

արկումներով, որ իբր «Ջորջը սխալը մարդկանց գլուխները մտցնելով կսովորեցնի ավելի, քան թե ուրիշ մարդիկ ճշմարտությունը լրիվ շարադրելով»:

«Մարքսը,—գրում է Հայնդմանը,—բնավ անգամ չի ցանկանում նման պատճառաբանությունների թույլատրելիության մասին: Սխալի տարածումը յերբեք չէր կարող ժողովրդին օգտակար լինել, այդպես էր նրա կարծիքը: Թողնել սխալը չհերքված—կնշանակի դրվատել ինտելեկտուալ անազնվությունը: Ջորջից դենը գնացող տասը հոգուն կընկնեն թերևս հարյուրավոր այնպիսիները, որոնք կմնան Ջորջի հայացքների կողմնակից, իսկ այդ վտանգը չափազանց մեծ է՝ այն անտեսելու համար»: Այդպե՛ս էր ասում Մարքսը:

Իսկ Հայնդմանը հաղորդում է մեզ, որ, մի կողմից, նա մինչև հիմա էլ պաշտպանում է իր նախկին կարծիքը Ջորջի մասին, իսկ, մյուս կողմից, Ջորջը մի տղա յեր կոպեկանոց մոմով, որ հիմարություններ էր անում այն մարդու մոտ, որ էլեկտրական լուսարձակ ուներ:

Սքանչելի համեմատություն է, միայն... միայն Հայնդմանի կողմից համարձակություն էր մեջ բերել այս սքանչելի համեմատությունը՝ Ենգելսի վերաբերյալ իր խղճուկ բամբասանքի հետ միասին:

«Звезда» № 31,
9 դեկտեմբերի (26 նոյեմբերի) 1911 թ :
Ստորագրություն՝ Վլ. ԻԼՅԻՆ:
Յերկ., հ. XV, էջ 266—271:

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԽՏԸ

Մարքսի ուսմունքի մեջ գլխավորը—պրոլետարիատի՝ իբրև սոցիալիստական հասարակության կառուցողի՝ համաշխարհային-պատմական դերի պարզումն է: Ամբողջ աշխարհում տեղի ունեցած դեպքերի ընթացքը հաստատե՞ց արդյոք այդ ուսմունքը նրանից հետո, յերբ Մարքսը շարադրեց այն:

Մարքսն առաջին անգամ հրապարակ բերեց իր ուսմունքը 1844 *թվին: Մարքսի ու Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը», վոր լույս տեսավ* 1848 *թվին, արդեն տալիս է այդ ուսմունքի ամբողջական, սիստեմատիկ, մինչև օրս լավագույնը մնացող շարադրանքը: Համաշխարհային պատմությունն այդ ժամանակից ի վեր ակներևորեն յերեք գլխավոր շրջանների յե բաժանվում.* 1) 1848 *թվի հեղափոխությունից մինչև Փարիզի կոմունան* (1871 *թ.*), 2) *Փարիզի կոմունայից մինչև ռուսական հեղափոխությունը* (1905 *թ.*), 3) *ռուսական հեղափոխությունից սկսվող շրջանը:*

Մի հայացք գցենք Մարքսի ուսմունքի բախտի վրա այդ շրջաններից ամեն մեկի ընթացքում:

I

Առաջին շրջանի սկզբում Մարքսի ուսմունքն ամենևին իշխող չէ: Նա սոցիալիզմի չափազանց բազմաթիվ ֆրակցիաներից կամ հոսանքներից մեկն է միայն: Իսկ իշխում են սոցիալիզմի այնպիսի ձևերը, վորոնք հիմնականում ազգակից են մեր նարոդնիկությանը—պատմական շարժման մատերիալիստական հիմունքը չհասկանալը, կապիտալիստական հասարակության յուրաքանչյուր դասակարգի դերն ու նշանակությունը ջոկելու անկարողությունը, դեմոկրատական բարեփոխումների բուրժուական էության քողարկումը զանազան, իբր թե սոցիալիստական ֆրազներով «ժողովրդի», «արդարության», «իրավունքի» մասին և այլն:

1848 *թվի հեղափոխությունը մահացու հարված է հասցնում* նախա-*մարքսյան սոցիալիզմի այդ բոլոր աղմկալի, խայտաբղետ,*

ճչան ձևերին: Հեղափոխությունը բոլոր յերկրներում ցույց է տալիս հասարակության զանազան դասակարգերը գործողության մեջ: 1848 *թվի հունիսյան օրերին Փարիզում հանրապետական բուրժուազիայի ձեռքով կատարված՝ բանվորների գնդակահարումը վերջնականապես վորոշում է, վոր սոցիալիստական բնույթ* միայն *պրոլետարիատն ունի: Լիբերալ բուրժուազիան հարյուր անգամ ավելի յե վախենում այդ դասակարգի ինքնուրույնությունից, քան վորևէ ռեակցիայից: Վախկոտ լիբերալիզմը սողում է նրա առաջ: Գյուղացիությունը բավարարվում է ֆեոդալիզմի մնացորդների վերացմամբ և կարգի կողմն է անցնում, միայն յերբեմն տատանվելով* բանվորական դեմոկրատիայի և բուրժուական լիբերալիզմի *միջև:* Ան-*դասակարգային սոցիալիզմի և* ան-*դասակարգային քաղաքականության բոլոր ուսմունքները փուչ դատարկաբանություն են դուրս գալիս:*

Փարիզի կոմունան (1871 *թ.*) *լրացնում է բուրժուական փոխակերպությունների այդ զարգացումը. իր ամրացումը միայն պրոլետարիատի հերոսությանն է պարտական հանրապետությունը, այսինքն՝ պետական կազմակերպության այն ձևը, վորի մեջ դասակարգային հարաբերություններն ամենից անքող են հանդես գալիս:*

Մյուս բոլոր յեվրոպական յերկրներում ավելի խճճված և ավելի պակաս ավարտված զարգացումն ելի նույն կազմավորված բուրժուական հասարակությանն է հասցնում: Առաջին շրջանի (1848—1871), *փոթորիկների ու հեղափոխությունների շրջանի վերջին նախամարքսյան սոցիալիզմը* մեռնում է: *Ծնվում են ինքնուրույն* պրոլետարական *կուսակցություններ՝ առաջին Ինտերնացիոնալը* (1864—1872) *և գերմանական սոցիալ-դեմոկրատիան:*

II

Յերկրորդ շրջանը (1872—1904) *առաջինից տարբերվում է իր «խաղաղ» բնույթով, հեղափոխությունների բացակայությամբ: Արևմուտքը վերջացրեց բուրժուական հեղափոխությունները: Արևելքը դրանց համար դեռ չի հասունացել:*

Արևմուտքն ապագա փոխակերպությունների դարաշրջանի համար «խաղաղ» նախապատրաստման շրջանն է թևակոխում: Ամենուրեք կազմվում են պրոլետարական, ըստ իրենց հիմունքի սոցիալիստական կուսակցություններ, վորոնք սովորում են օգտագործել բուրժուական պառլամենտարիզմը, ստեղծել իրենց

ամենօրյա մամուլը, իրենց լուսավորական հիմնարկները, իրենց արհեստակցական միությունները, իրենց կոոպերատիվները։ Մարքսի ուսմունքը լիակատար հաղթանակ է տանում և—ընդարձակվում է։ Դանդաղ, բայց անշեղ առաջ է գնում պրոլետարիատի ուժերի փորձման ու հավաքման պրոցեսը, գալիք ճակատամարտերի համար նրա նախապատրաստման պրոցեսը։

Պատմության դիալեկտիկան այնպես է, որ մարքսիզմի թեորիական հաղթանակն ստիպում է նրա թշնամիներին մարքսիստի զգեստ հագնել։ Ներքուստ փտած լիբերալիզմը փորձում է վերակենդանացնել իրեն իբրև սոցիալիստական ոպորտունիզմ։ Մեծ ճակատամարտերի համար ուժերի նախապատրաստման շրջանը նրանք մեկնաբանում են այդ ճակատամարտերից հրաժարվելու իմաստով։ Վարձու ստրկության դեմ պայքարելու համար ստրուկների դրության բարելավումը նրանք պարզաբանում են ստրուկների կողմից իրենց ազատության իրավունքը հինգ կոպեկով ծախելու իմաստով։ Երկչոտությամբ քարոզում են «սոցիալական հաշտություն» (այսինքն՝ հաշտություն ստրկատիրության հետ), հրաժարումն դասակարգային կռվից և այլն։ Սոցիալիստական պառլամենտարների, բանվորական շարժման զանազան չինովնիկների ու «համակրող» ինտելիգենցիայի շրջանում նրանք շատ ու շատ կողմնակիցներ ունեն։

III

«Սոցիալական հաշտության» և «դեմոկրատիայի» որով փոթորիկների անհրաժեշտ չլինելու գովքն անելուց դեռ չեյին կըշտացել օպորտունիստները, յերբ Ասիայում ամենախոշոր համաշխարհային փոթորիկների նոր աղբյուր բացվեց։ Ռուսական հեղափոխությանը հետևեց տաճկականը, պարսկականը, չինականը։ Մենք այժմ ապրում ենք հենց այդ փոթորիկների ու Եվրոպայի վրա նրանց «հակառակ անդրադարձման» եպոխայում։ Ինչպիսի բախտ էլ որ ունենա մեծ չինական հանրապետությունը, որի վրա այժմ ատամ են սրում զանազան «քաղաքակիրթ» բորենիներ, բայց և այնպես աշխարհումս ոչ մի ուժ Ասիայում հին ճորտատիրությունը չի վերականգնի, չի ջնջի աշխարհիս յերեսից ասիական ու կիսաասիական յերկրների ժողովրդական մասսաների հերոսական դեմոկրատիզմը։

Միքանի մարդկանց, որոնք անուշադիր եյին մասսայական պայքարի նախապատրաստման ու զարգացման պայմաններին,

Եվրոպայում կապիտալիզմի դեմ վճռական պայքարի յերկարատև հետաձգումները հուսահատության ու անարխիզմի եյին հասցնում։ Այժմ մենք տեսնում ենք, թե որքան կարճատես ու փոքրոգի յե անարխիստական հուսահատությունը։

Ութհարյուր միլիոնանոց Ասիայի հենց նույն յեվրոպական իդեալների համար կռվի մտնելու փաստից ո՛չ թե հուսահատություն, այլ կորով պիտի քաղել։

Ասիական հեղափոխությունները ցույց տվին մեզ լիբերալիզմի նույն բնութագրկությունն ու ստորությունը, դեմոկրատական մասսաների ինքնուրույնության նույն բացառիկ նշանակությունը, ամեն տեսակի բուրժուազիայից պրոլետարիատի նույն որոշակի սահմանազատումը։ Ով թե՛ Եվրոպայի, թե՛ Ասիայի փորձից հետո խոսում է ոչ-դասակարգային քաղաքականության և ոչ-դասակարգային սոցիալիզմի մասին, նրան արժի ուղղակի վանդակ նստեցնել և ցուցադրել որևէ ավստրալիական կենգուրուի կողքին։

Ասիայից հետո սկսեց շարժվել—միայն ոչ ասիականորեն—նաև Եվրոպան։ 1872—1904 թ. թ. խաղաղ շրջանն անդարձ կերպով հավիտենականության գիրկն անցավ։ Թանկությունն ու տրեստների ճնշումը տնտեսական պայքարի չտեսնված սրվածություն են առաջ բերում, որը տեղից շարժեց նույնիսկ լիբերալիզմի շնորհիվ ամենից շատ այլասերված անգլիական բանվորներին։ Մեր աչքի առաջ քաղաքական ճգնաժամը հասունանում է նույնիսկ ամենից «ամրապինդ» բուրժուական-յունկերական յերկրում՝ Գերմանիայում։ Իմպերիալիզմի կատաղի սպառազինումներն ու քաղաքականությունը ժամանակակից Եվրոպայից այնպիսի «սոցիալական հաշտություն» են ստեղծում, որն ամենից շատ նման է մի տակառ վառոդի։ Իսկ բոլոր բուրժուական կուսակցությունների քայքայումն ու պրոլետարիատի հասունացումն անշեղ առաջ է գնում։

Մարքսիզմի յերևան գալուց հետո համաշխարհային պատմության յերեք մեծ դարաշրջաններից ամեն մեկը նրան նոր հաստատումներ ու նոր հաղթանակներ եր բերում։ Բայց մարքսիզմին, իբրև պրոլետարիատի ուսմունքի, ե՛լ ավելի մեծ հաղթանակ կբերի գալիք պատմական դարաշրջանը։

«Правда» № 50 (254), 14 (1) մարտի 1913 թ.։

Ստորագրություն՝ Վ. Ի.։

Երկ., հ. XVI, էջ 331—333։

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԵՐԵՔ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԵՐԵՔ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ

Մարքսի ուսմունքն ամբողջ քաղաքակիրթ աշխարհում իր դեմ հարուցում է ամենամեծ թշնամությունն ու ատելությունն ամբողջ բուրժուական (թե՛ կազյոննի, թե՛ լիբերալ) գիտության, վորը մարքսիզմի մեջ «վնասակար աղանդի» նման մի բան է տեսնում։ Ուրիշ վերաբերմունք չի էլ կարելի սպասել, վորովհետև «անաչառ» սոցիալական գիտություն չի կարող լինել մի հասարակության մեջ, վոր դասակարգային պայքարի վրա յե կառուցված։ Այսպես թե այնպես, բայց ամբողջ կազյոննի և լիբերալ գիտությունը պաշտպանում է վարձու ստրկությունը, իսկ մարքսիզմն անողոք պատերազմ է հայտարարել այդ ստրկությանը։ Վարձու ստրկության հասարակության մեջ անաչառ գիտություն սպասելը նույնպիսի հիմար միամտություն է, ինչպես գործարանատերերի անաչառությունն սպասել այն հարցում, թե հարկավոր չե՞ արդյոք ավելացնել բանվորների վարձը՝ պակասեցնելով կապիտալի շահույթը։

Բայց այս քիչ է։ Փիլիսոփայության պատմությունն ու սոցիալական գիտության պատմությունը լիակատար պարզությամբ ցույց են տալիս, վոր մարքսիզմի մեջ չկա մի բան, վոր նման լինի «աղանդավորության»՝ համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեծ ճանապարհից հեռու ծագած, ինչ-վոր կղզիացած, քարացած գիտության իմաստով։ Ընդհակառակը, Մարքսի ամբողջ հանճարեղությունը հենց կայանում է նրանում, վոր նա պատասխան տվեց այն հարցերին, վոր մարդկության առաջավոր միտքն արդեն առաջադրել էր։ Նրա ուսմունքն առաջ յեկավ իբրև փիլիսոփայության, քաղաքատնտեսության ու սոցիալիզմի խոշորագույն ներկայացուցիչների ուսմունքի ուղիղ և անմիջական շարունակություն։

Մարքսի ուսմունքն ամենազոր է, վորովհետև այն ճշմարիտ է։ Նա լրիվ է ու ներդաշնակ, տալով մարդկանց ամբողջական աշխարհայեցողություն, վոր անհաշտելի յե վորևե նախապաշարմունքի, վորևե ռեակցիայի, բուրժուական ճնշման վորևե պաշտպանության հետ։ Նա ուրինական հաջորդն է լավագույնի, ինչ վոր ստեղծել է մարդկությունը XIX դարում հանձինս գերմանական փիլիսոփայության, անգլիական քաղաքատնտեսության, ֆրանսիական սոցիալիզմի։

Մարքսիզմի այս յերեք աղբյուրների ու միևնույն ժամանակ բաղկացուցիչ մասերի վրա էլ մենք համառոտակի կանգ կառնենք։

I

Մարքսիզմի փիլիսոփայությունը մատերիալիզմն է։ Յեվրոպայի ամբողջ նորագույն պատմության ընթացքում, և մանավանդ XVIII դարի վերջում—Ֆրանսիայում, վորտեղ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ ընդդեմ ամեն տեսակի միջնադարյան անպետք հնոտիների, ընդդեմ ճորտատիրության՝ հիմնարկություններում ու գաղափարներում, մատերիալիզմը հանդիսացավ միակ հետևողական փիլիսոփայությունը՝ հավատարիմ բնական գիտությունների բոլոր ուսմունքներին, թշնամի՝ նախապաշարմունքներին, կեղծ բարեպաշտությանը և այլն։ Այդ պատճառով դեմոկրատիայի թշնամիները բոլոր ուժերով ձգտում էյին «հերքել», վարկաբեկել, զրպարտել մատերիալիզմը և պաշտպանում էյին զանազան ձևերը փիլիսոփայական իդեալիզմի, վորը միշտ, այս կամ այն կերպ, հանգում է կրոնի պաշտպանության, կամ նրան զորավիգ լինելուն։

Մարքսն ու Ենգելսն ամենավճռական կերպով պաշտպանում էյին փիլիսոփայական մատերիալիզմը և բազմիցս պարզաբանում այդ հիմունքից ամեն տեսակի շեղումների խոր սխալականությունը։ Նրանց հայացքներն ամենից ավելի պարզ ու մանրամասն շարադրված են Ենգելսի «Լուդվիգ Ֆոյերբախ», «Դյուրինգի հերքումն» յերկերում, վորոնք «Կոմունիստական մանիֆեստի» նման—միշտ սեղանին գտնվելիք գրքեր են յուրաքանչյուր գիտակից բանվորի համար։

Սակայն Մարքսը կանգ չառավ XVIII դարի մատերիալիզմի վրա, այլ առաջ մղեց փիլիսոփայությունը։ Նա այն հարստացրեց գերմանական կլասիկ փիլիսոփայության, մանավանդ Հեգելի սիստեմի ձեռքբերումներով, վորն իր հերթին Ֆոյերբախի մատերիալիզմին հասցրեց։ Այդ ձեռքբերումներից գլխավորը դիալեկ-

տիկան է, այսինքն՝ ուսմունք զարգացման մասին իր ամենալրիվ, խոր և միակողմանիությունից ազատ ձևի մեջ, ուսմունք մարդկային գիտության հարաբերականության մասին, գիտության, որ մեզ տալիս է անվերջ զարգացող նյութի արտացոլումը: Բնագիտության նորագույն գյուտերը,—ռադիում, էլեկտրոններ, տարրերի փոխարկվելը,—հիանալի կերպով հաստատեցին Մարքսի դիալեկտիկական մատերիալիզմը, հակառակ բուրժուական փիլիսոփաների ուսմունքներին՝ իրենց «նոր» վերադարձերով դեպի հին և փտած իդեալիզմը:

Խորացնելով և զարգացնելով փիլիսոփայական մատերիալիզմը՝ Մարքսը տարավ հասցրեց այն մինչև վերջ, տարածեց նրա բնության իմացությունը մարդկային հասարակության իմացության վրա: Գիտական մտքի ամենախոշոր նվաճումը հանդիսացավ Մարքսի պատմական մատերիալիզմը: Պատմության ու քաղաքականության մասին գոյություն ունեցող հայացքներում մինչ այդ տիրող քաոսն ու կամայականությունը փոխարինվեցին զարմանալի ամբողջական և ներդաշնակ գիտական թեորիայով, որը ցույց է տալիս, թե ինչպես հասարակական կյանքի մի կացութաձևից, շնորհիվ արտադրողական ուժերի աճման, զարգանում է մյուսը, ավելի բարձրը,—ճորտատիրությունից, օրինակ, աճում-բարձրանում է կապիտալիզմը:

Ճիշտ այնպես, ինչպես մարդուս իմացությունն արտացոլում է նրանից անկախ գոյություն ունեցող բնությունը, այսինքն՝ զարգացող նյութը, նույնպես և մարդուս հասարակական իմացությունը (այսինքն՝ զանազան փիլիսոփայական, կրոնական, քաղաքական և այլն հայացքներ ու ուսմունքներ) հասարակության տնտեսական կարգն է արտացոլում: Քաղաքական հիմնարկները վերնաշենք են հանդիսանում տնտեսական հիմքի վրա: Մենք տեսնում ենք, օրինակ, թե ինչպես ժամանակակից յեվրոպական պետությունների քաղաքական զանազան ձևերը պրոլետարիատի վրա բուրժուազիայի իշխանությունն ամրացնելուն են ծառայում:

Մարքսի փիլիսոփայությունը՝ ավարտված փիլիսոփայական մատերիալիզմն է, որ մարդկությանը, իսկ բանվոր դասակարգին—առանձնապես, տվել է իմացության մեծ գործիքներ:

II

Ընդունելով, որ տնտեսական կարգը հանդիսանում է այն հիմքը, որի վրա քաղաքական վերնաշենքն է բարձրանում,

Մարքսն ամենից շատ ուշադրություն դարձրեց այդ տնտեսական կարգի ուսումնասիրությանը: Մարքսի գլխավոր աշխատությունը՝ «Կապիտալը» նվիրված է ժամանակակից, այսինքն՝ կապիտալիստական հասարակության տնտեսական կարգի ուսումնասիրությանը:

Կլասիկ քաղաքատնտեսությունը նախքան Մարքսը սկիզբն առավ Անգլիայում՝ ամենից զարգացած կապիտալիստական յերկրում: Ադամ Սմիթն ու Դավիդ Ռիկարդոն, հետազոտելով տնտեսական կարգը, սկիզբ դրին արժեքի աշխատանքային թեորիային: Մարքսը շարունակեց նրանց գործը: Նա խստիվ հիմնավորեց և հետևողականորեն զարգացրեց այդ թեորիան: Նա ցույց տվեց, որ յուրաքանչյուր ապրանքի արժեքը որոշվում է ապրանքի արտադրության վրա գործադրվող հասարակականորեն անհրաժեշտ աշխատաժամանակի քանակով:

Այնտեղ, որտեղ բուրժուական տնտեսագետներն իրերի հարաբերություն էին տեսնում (ապրանքի փոխանակություն ապրանքով), այնտեղ Մարքսը հայտաբերեց հարաբերություններ մարդկանց միջև: Ապրանքների փոխանակությունն արտահայտում է առանձին արտադրողների կապը շուկայի միջոցով: Փողը նշանակում է, որ այդ կապն ավելի ու ավելի սերտ է դառնում՝ անքակտելիորեն միացնելով առանձին արտադրողների ամբողջ տնտեսական կյանքն ի մի ամբողջություն: Կապիտալը նշանակում է այդ կապի հետագա զարգացումը—ապրանք է դառնում մարդու բանվորական ուժը: Վարձու բանվորը վաճառում է իր բանվորական ուժը հողի, գործարանների, աշխատանքի գործիքների տիրոջը: Բանվորական օրվա մի մասը բանվորը գործադրում է, որ ծածկի իր և իր ընտանիքի ապրուստի ծախսերը (աշխատավարձ), իսկ օրվա մյուս մասը բանվորն աշխատում է ձրի, ստեղծելով կապիտալիստի համար հավելյալ արժեք, որ կապիտալիստների դասակարգի շահույթի աղբյուրն է, հարստության աղբյուրը:

Հավելյալ արժեքի ուսմունքը Մարքսի տնտեսական թեորիայի անկյունաքարն է:

Բանվորի աշխատանքով ստեղծված կապիտալը ճզմում է բանվորին, քայքայելով մանր սեփականատերերին և գործազուրկների բանակ ստեղծելով: Արդյունաբերության մեջ խոշոր արտադրության հաղթանակն աչքի յե ընկնում միանգամից, բայց հողագործության մեջ էլ նույն յերևույթն ենք տեսնում.

խոշոր կապիտալիստական հողագործության գերազանցությունը մեծանում է, մեքենաների կիրառումն աճում է, գյուղացիական տնտեսությունը փողային կապիտալի օղակն է ընկնում, նա քայքայվում ու ընկնում է հետամնաց տեխնիկայի ճնշման տակ: Հողագործության մեջ մանր արտադրության անկման ձևերն այլ են, բայց նրա անկումն անվիճելի փաստ է:

Հաղթելով մանր արտադրությանը՝ կապիտալը տանում է դեպի աշխատանքի արտադրողականության մեծացումն ու ամենախոշոր կապիտալիստների միությունների մենաշնորհ դրության ստեղծումը: Արտադրությունն ինքն ավելի ու ավելի հասարակական է դառնում,—հարյուր հազարավոր ու միլիոնավոր բանվորներ կապվում-դառնում են մի պլանաչափ տնտեսական օրգանիզմ,—իսկ ընդհանուր աշխատանքի արդյունքը մի բուռ կապիտալիստներն են յուրացնում: Աճում է արտադրության անարխիան, կրիզիսները, կատաղի վազքը շուկաների հետևից, բնակչության մասսայի գոյության անապահովությունը:

Մեծացնելով բանվորի կախումը կապիտալիստից՝ կապիտալիստական հասարակակարգը միավորված աշխատանքի մեծ հզորություն է ստեղծում:

Ապրանքային տնտեսության առաջին սաղմերից, պարզ փոխանակությունից սկսելով, Մարքսը հետաքննեց կապիտալիզմի զարգացումը՝ մինչև նրա բարձրագույն ձևերը, մինչև խոշոր արտադրությունը:

Եվ բոլոր կապիտալիստական երկրների փորձը, ինչպես հներինը, նույնպես և նորերինը, տարեցտարի ավելի ու ավելի մեծ թվով բանվորների ակնառու կերպով ցույց է տալիս Մարքսի այդ ուսմունքի ճշտությունը:

Կապիտալիզմը հաղթանակեց ամբողջ աշխարհում, սակայն, այդ հաղթությունը նախադուռն է միայն աշխատանքի հաղթության՝ կապիտալի դեմ:

III

Երբ ճորտատիրությունը տապալվեց և լույս աշխարհ եկավ «ազատ» կապիտալիստական հասարակությունը, միանգամից դրսևորվեց, վոր այդ ազատությունն աշխատավորների ճնշման ու շահագործման նոր սիստեմ է նշանակում: Իբրև արտացոլումն այդ ճնշման և իբրև բողոք նրա դեմ, անմիջապես սկսեցին առաջ գալ զանազան սոցիալիստական ուսմունքներ: Բայց սկզբնական

սոցիալիզմն ուտոպիական սոցիալիզմ էր: Նա քննադատում էր կապիտալիստական հասարակությունը, դատապարտում, անիծում էր այն, երազում էր նրա վոչնչացման մասին, երևակայում էր լավագույն հասարակակարգի մասին, համոզում էր հարուստներին, վոր շահագործումն անբարոյական բան է:

Բայց ուտոպիական սոցիալիզմն իսկական ելք ցույց տալ չէր կարող: Նա վո՛չ կարողանում էր կապիտալիզմի օրով գոյություն ունեցող վարձու ստրկության էությունը պարզաբանել, վո՛չ նրա զարգացման օրենքները երևան բերել, վո՛չ էլ գտնել այն հասարակական ուժը, վորն ընդունակ է նոր հասարակության ստեղծողը դառնալու:

Մինչդեռ այն փոթորկալից հեղափոխությունները, վորոնք ուղեկցում էին ֆեոդալիզմի, ճորտատիրության անկմանը, ամենուրեք Եվրոպայում, և մանավանդ Ֆրանսիայում, ավելի ու ավելի ակնբախ կերպով դրսևորում էին, վոր ամբողջ զարգացման հիմքը և այն մղող ուժը՝ դասակարգերի պայքարն է:

Քաղաքական ազատության վոչ մի հաղթություն ճորտատերերի դասակարգի դեմ առանց կատաղի դիմադրության չի ձեռք բերվել: Վոչ մի կապիտալիստական երկիր չի կազմվել քիչ թե շատ ազատ, դեմոկրատական հիմքի վրա, առանց կապիտալիստական հասարակության զանազան դասակարգերի միջև մղված կյանքի ու մահվան կռվի:

Մարքսի հանճարեղությունն այն է, վոր նա բոլորից առաջ կարողացավ սրանից հանել և հետևողականորեն կիրառել այն եզրակացությունը, վոր սովորեցնում է համաշխարհային պատմությունը: Այդ եզրակացությունը դասակարգային պայքարի ուսմունքն է:

Մարդիկ քաղաքականության մեջ միշտ եղել են ու միշտ կմնան խաբեության ու ինքնախաբեության հիմար զոհեր, մինչև վոր նրանք կսովորեն յուրաքանչյուր բարոյական, կրոնական, քաղաքական, սոցիալական ֆրազների, հայտարարությունների, խոստումների հետևում այս կամ այն դասակարգի շահերը վորոնել: Ռեֆորմների ու բարելավումների կողմնակիցները միշտ էլ կհիմարացվեն հնի պաշտպանների կողմից, մինչև կհասկանան, վոր ամեն մի հին հիմնարկություն, ինչքան էլ անհեթեթ ու փտած թվա այն, այս կամ այն իշխող դասակարգերի ուժերով է պահպանվում: Իսկ այդ դասակարգերի դիմադրությունը խորտակելու համար միայն մի միջոց կա՝ գտնել հենց

մեզ շրջապատող հասարակության մեջ, լուսավորել և կռվի համար կազմակերպել այն ուժերը, վորոնք կարող են—և ըստ իրենց հասարակական դիրքի պետք է կազմեն մի ուժ, վոր ընդունակ լինի ավլել—սրբելու հինը և ստեղծելու նորը:

Միայն Մարքսի փիլիսոփայական մատերիալիզմը ցույց տվեց պրոլետարիատին ելքը հոգևոր ստրկությունից, վորի մեջ մինչև այս իրենց գոյությունը քարշ էին տալիս բոլոր ճնշված դասակարգերը: Միայն Մարքսի տնտեսական թեորիան պարզաբանեց պրոլետարիատի իսկական դրությունը կապիտալիզմի ընդհանուր հասարակակարգում:

Ամբողջ աշխարհում՝ Ամերիկայից մինչև Յապոնիա և Շվեդիայից մինչև Հարավային Աֆրիկա, բազմանում են պրոլետարիատի ինքնուրույն կազմակերպությունները: Պրոլետարիատը լուսավորվում ու դաստիարակվում է՝ իր դասակարգային պայքարը մղելով, ազատվում է բուրժուական հասարակության նախապաշարմունքներից, համախմբվում է ավելի ու ավելի սերտ կերպով և սովորում է չափել իր հաջողությունների չափը, կոփում է իր ուժերը և աճում անդիմադրաբար:

«Просвещение» № 3, մարտ 1913 թ.:

Ստորագրություն՝ Վ. Ի.:

Երկ., հ. XVI, էջ 349—353:

ՄԱՐՔՍԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԳԵԼՍԻ ՀԵՏ

ԵՆԳԵԼՍԸ ՎՈՐՊԵՍ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Գիտական սոցիալիզմի հռչակավոր հիմնադիրների նամակագրության վաղուց խոստացված հրատարակությունը վերջապես լույս տեսավ: Էնգելսը հրատարակությունը կտակել էր Բեբելին ու Բերնշտայնին, և Բեբելը կարողացավ իր մահից վոչ այնքան առաջ ավարտել խմբագրական աշխատանքի իր մասը:

Մարքսի և Էնգելսի նամակագրությունը, վոր լույս է տեսել սրանից միքանի շաբաթ առաջ Շտուտգարտում Դիտցի մոտ, չորս մեծ հատոր է ներկայացնում: Նրանց մեջ մտել են ընդամենը Մարքսի և Էնգելսի 1844—1883 թվերի ահագին ժամանակաշրջանի 1386 նամակները:

Խմբագրական աշխատանքը, այսինքն՝ առանձին շրջանների համար նամակագրության առաջաբաններ կազմելը կատարել է Էդ. Բերնշտայնը: Ինչպես և պետք էր սպասել, այս աշխատանքը բավարար չէ վո՛չ տեխնիկական և վո՛չ էլ գաղափարական տեսակետից: Բերնշտայնը դեպի օպորտունիստական հայացքները կատարած իր տխրահռչակ «էվոլյուցիայից» հետո չպետք է ձեռք խփեր ամբողջովին հեղափոխական վոգով տոգորված նամակների խմբագրությանը: Բերնշտայնի առաջաբանները մասամբ անբովանդակ են, մասամբ ուղղակի կեղծ. օրինակ, յերբ Լասսալի և Շվայցերի օպորտունիստական սխալները ճշգրիտ, հստակ, ուղղակի բնութագրելու փոխարեն, սխալներ, վորոնք մերկացվել են Մարքսի և Էնգելսի կողմից, հանդիպում ես էկլեկտիկ ֆրազների ու հարձակումների, վորպես թե, «Մարքսն ու Էնգելսը Լասսալի հանդեպ վոչ միշտ են արդարացի յեղել» (հ. III, էջ XVIII) կամ իբր թե տակտիկայով նրանք «ավելի մոտ են յեղել» Շվայցերին, քան Լիբկնեխտին (հ. IV, էջ X): Այս հարձակումների մեջ օպորտունիզմը ծածկելուց և գունավորելուց զատ՝ վոչ մի այլ բովանդակություն չկա: Դժբախտաբար, Մարքսի՝ իր շատ հակառակորդների դեմ մղած գաղափարական պայքարի մասին ավելի ու

ավելի ուժեղ է տարածվում էկլեկտիկ վերաբերմունք ժամանակակից գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ:

Տեխնիկական կողմից անհաջող է կազմված բոլոր չորս հատորների համար մեկ ցանկը (օրինակ, բաց են թողնված Կաուցկու, Ստիրլինգի անունները). առանձին նամակների ծանոթագրությունները չափից դուրս աղքատիկ են և կորած՝ խմբագրի առաջաբաններում, փոխանակ նրանք զետեղելու համապատասխան նամակների շարքում, ինչպես այդ արել է Զորգեն և այլն:

Նամակագրությունը հրատարակված է չափազանց թանգ—բոլոր չորս հատորները մոտ 20 ռուբլի: Կասկած չկա, որ կարելի էր, և պետք էր լրիվ նամակագրությունը պակաս շքեղ, ավելի մատչելի գնով հրատարակել, իսկ բացի այդ լույս ընծայել—բանվորների մեջ տարածելու համար—սկզբունքային տեսակետից ամենակարևոր տեղերից քաղվածքներ:

Հրատարակության այս բոլոր թերությունները, իհարկե, կդժվարացնեն նամակագրության հետ ծանոթանալը: Ցավալի է այս, որովհետև նրա գիտական ու քաղաքական արժեքն ահագին է: Այստեղ ընթերցողի առաջ ոչ միայն Մարքսն ու Էնգելսն են առանձին ցայտունությամբ հանդես գալիս՝ իրենց ամբողջ հասակով: Մարքսիզմի անչափ հարուստ թեորիական բովանդակությունը ծավալվում է վերին աստիճանի ակներև կերպով, որովհետև նամակներում Մարքսն ու Էնգելսը հաճախ վերադառնում են իրենց ուսմունքի ամենաբազմազան կողմերին, ընդգծելով ու պարզաբանելով—երբեմն միասին քննարկելով ու իրար համոզելով—ամենանորը (նախկին տեսակետների նկատմամբ), ամենակարևորը, ամենադժվարինը:

Ընթերցողի առջևից զարմանալի կենդանությամբ անցնում է ամբողջ աշխարհի բանվորական շարժման պատմությունը—ամենակարևոր մոմենտներում և ամենաէական կետերում: Է՛լ ավելի արժեքավոր է բանվոր դասակարգի քաղաքականության պատմությունը: Ամենատարբեր առիթներով, հին աշխարհի զանազան երկրներում և նոր աշխարհում, պատմական տարբեր մոմենտներում Մարքսն ու Էնգելսը քննարկում են ամենից սկզբունքայինը՝ բանվոր դասակարգի քաղաքական խնդիրների հարցադրման վերաբերմամբ: Իսկ նամակագրության ընդգրկած դարաշրջանը հենց բանվոր դասակարգի՝ բուրժուական դեմոկրատիայից զատվելու դարաշրջանն է, ինքնուրույն բանվորական շարժման ծագման դարաշրջանը, պրոլետարական տակտիկայի և քաղաքականության հիմունքների որոշվելու դարաշրջանը:

Մեր ժամանակ որքան ավելի հաճախ է հարկ լինում դիտել, թե ինչպես զանազան երկրների բանվորական շարժումը տուժում է օպորտունիզմից—բուրժուազիայի լճացման և նեխման հետևանքով, բանվորական առաջնորդների ուշադրությունը մանր-մունր բաներով կլանված լինելու հետևանքով և այլն—այնքան ավելի արժեքավոր է նամակագրության անչափ հարուստ նյութը, որը ցույց է տալիս պրոլետարիատի արմատական փոխակերպող նպատակների խորագույն ըմբռնումը և տակտիկայի տվյալ խնդիրների անօրինակ ճկուն որոշումը, այդ հեղափոխական նպատակների տեսակետից և առանց նվազագույն զիջում անելու օպորտունիզմին կամ հեղափոխական ֆրազին:

Եթե փորձենք մի բառով բնորոշել, այսպես ասած, ամբողջ նամակագրության ֆոկուսը, այն կենտրոնական կետը, որին հանգում է արտահայտված և քննարկվող գաղափարների ամբողջ ցանցը, ապա այդ բառը կլինի դիալեկտիկան: Մատերիալիստական դիալեկտիկայի կիրառումն ամբողջ քաղաքատնտեսության վերամշակման նկատմամբ, նրա հիմնավորումից,—պատմության, բնագիտության, փիլիսոփայության, բանվոր դասակարգի քաղաքականության ու տակտիկայի նկատմամբ,—ահա թե ի՛նչն է ամենից շատ հետաքրքրում Մարքսին ու Էնգելսին, ահա թե ինչումն են նրանք մտցնում ամենից ավելի էականն ու ամենից ավելի նորը, ահա թե ինչումն է նրանց հանճարեղ քայլը դեպի առաջ՝ հեղափոխական մտքի պատմության մեջ:

* * *

Հետագա շարադրանքի մեջ, նամակագրության ընդհանուր տեսությունից հետո, մենք մտադիր ենք տալ Մարքսի և Էնգելսի ամենից ավելի հետաքրքիր դիտողությունների ու դատողությունների ակնարկը, բնավ չհավակնելով սպառել նամակների ամբողջ բովանդակությունը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նամակագրությունն սկսվում է 24 տարեկան Էնգելսի՝ 1844 թվին Մարքսին գրած նամակներով: Այն ժամանակի իրադրությունը Գերմանիայում զարմանալի ցայտուն կերպով է հանդես գալիս: Առաջին նամակը 1844 թ. սեպտեմբերի վերջի թվակիր է և ուղարկված է Բարմենից, որտեղ ապրում էր Էնգելսի ընտանիքը և որտեղ ծնվել է Էնգելսը: Այդ ժամանակ Էնգելսը դեռ լրիվ 24 տարեկան չկար: Նա ձանձրանում էր ընտանեկան պայ-

մաններում և ձգտում եր հեռու գնալ։ Հայրը—բռնակալ, կրոնասեր գործարանատեր, վրդովվում եր վորդու՝ քաղաքական ժողովներ վազվզելուց և նրա կոմունիստական համոզմունքներից։

Յեթե չլիներ մայրս, վորին շատ եմ սիրում,—գրում է Ենգելսը,—յես նույնիսկ միքանի օր էլ չեյի դիմանա, վոր մնամ եր մինչև մեկնելս։ Դու չես կարող յերևակայել,—գանգատվում է նա Մարքսին,—ի՛նչ մանր նկատառումներ, ի՛նչ նախապաշարված վտանգներ են առաջ քաշում այստեղ, ընտանիքում, իմ մեկնելու դեմ։

Բանի դեռ Ենգելսը Բարմենումն եր, ուր նրան դեռ պահում եր մի սիրային պատմություն ևս,—նա զիջում է հորը և յերկու շաբաթով աշխատելու գնում գործարանային գրասենյակը (նրա հայրը գործարանատեր եր)։ «Առևտուրը նողկանք է,—գրում է նա Մարքսին,—նողկալի յե Բարմեն քաղաքը, նողկալի յե այստեղի ժամանցը, և առանձնապես նողկալի յե մնալ վո՛չ միայն բուրժուա, այլ նույնիսկ գործարանատեր, այսինքն՝ պրոլետարիատին ակտիվ կերպով դեմ յելնող բուրժուա»։ «Յես ինձ մխիթարում եմ,—շարունակում է Ենգելսը,—բանվոր դասակարգի դրության վերաբերյալ գրքույկիս վրա թափած աշխատանքով» (այս գիրքն, ինչպես հայտնի յե, լույս տեսավ 1845 թ. և համաշխարհային սոցիալիստական գրականության մեջ լավագույն աշխատություններից մեկն է հանդիսանում)։ «Դեռ կարելի յե, լինելով կոմունիստ, արտաքին պայմաններով մնալ բուրժույ և չարչիության բեռնատար անասուն, յեթե չպարապես գրական գործունեյությամբ,—բայց միաժամանակ տանել լայն կոմունիստական պրոպագանդա և չարչիությամբ, արդյունաբերական գործերով զբաղվել, այդ անկարելի յե։ Յես կհեռանամ։ Դրան ավելացրած նաև այս քնաբեր, ամբողջովին քրիստոնեական-պրուսական կյանքն ընտանիքում,—յես այլևս չեմ կարող տանել այս, յես վերջիվերջո այստեղ կարող կլինեյի գերմանական ֆիլիստեր դառնալ և ֆիլիստերություն մտցնել կոմունիզմի մեջ»։ Այսպես եր գրում յերիտասարդ Ենգելսը։ 1848 թվի հեղափոխությունից հետո կյանքը նրան ստիպեց վերադառնալ հոր գրասենյակը և յերկար տարիներ «չարչիության բեռնատար անասուն» դառնալ, բայց դրա հետ միասին, նա կարողացավ դիմանալ, ստեղծել իրեն համար վո՛չ թե քրիստոնեական-պրուսական, այլ բոլորովին այլ ընկերական միջավայր, կարողացավ ընդմիշտ անողոք թշնամի դառնալ «կոմունիզմի մեջ ֆիլիստերության մտցնելուն»։

Հասարակական կյանքը 1844 թ. գերմանական գավառում նման է ռուսականին՝ XX դարի սկզբում, 1905 թ. հեղափոխությունից առաջ։ Բոլորը քաղաքականության են ձգտում, ամեն ինչ ոպոզիցիոն զայրույթով է յեռում կառավարության դեմ, պաստորները խարանում են յերիտասարդությանը՝ աթեիզմի համար, բուրժուական ընտանիքներում յերեխաները ծնողների դեմ անբարոյականության տեսարաններ են սարքում՝ «սպասավորի կամ բանվորների նկատմամբ արիստոկրատորեն վերաբերվելու համար»։

Ընդհանուր ընդդիմադրականությունն արտահայտվում է նրանում, վոր բոլորն էլ իրենց կոմունիստներ են հայտարարում։ «Բարմենում վոստիկանական կոմիսարը կոմունիստ է»—գրում է Ենգելսը Մարքսին։ «Յես յեղա Քյոլնում, Դյուսսելդորֆում, Ելբերֆելդում—ամենուրեք յուրաքանչյուր քայլում կոմունիստի յեմ հանդիպում»։ «Մի վառվռուն կոմունիստ, նկարիչ, ծաղրանկարիչ, ազգանունը Զեել, յերկու ամսից հետո Փարիզ է գնալու։ Յես նրան կասեմ ձեզ ներկայանա։ Նա ամեն բանով ձեզ դուր կգա—ենտուզիաստ է, սիրում է յերաժշտությունը, օգտակար կլինի վորպես ծաղրանկարիչ»։

«Այստեղ—Ելբերֆելդում հրաշքներ են կատարվում։ Յերեկ (գրված է 1845 թ. փետրվարի 22-ին) ամենամեծ դահլիճում, քաղաքի ամենալավ ռեստորանում, մենք ունեցանք յերրորդ կոմունիստական ժողովը։ Առաջինում 40 մարդ եր, յերկրորդում—130, յերրորդում՝ առնվազն 200։ Ամբողջ Ելբերֆելդն ու Բարմենը—սկսած դրամական արիստոկրատիայից ու վերջացրած մանր խանութպաններով, ներկայացված եր, բացառությամբ միայն պրոլետարիատի»։

Տառացի այսպես է գրում Ենգելսը։ Գերմանիայում այդ ժամանակ բոլորը կոմունիստ եյին, բացի պրոլետարիատից։ Կոմունիզմը բոլորի և ամենից շատ բուրժուազիայի ոպոզիցիոն տրամադրությունների արտահայտության ձևն եր։ «Ամենից բութ, ամենից ծույլ, ամենից ֆիլիստեր հասարակությունը, վոր աշխարհում վոչնչով չեր հետաքրքրվում, սկսել է ուղղակի հիանալ կոմունիզմով»։

Կոմունիզմի գլխավոր քարոզիչներն այդ ժամանակ մեր նարոդնիկների, «սոցիալիստ-հեղափոխականների», «ժողովրդական սոցիալիստների» և այլոց նման մարդիկ եյին, այսինքն՝ եյապես բարեմիտ բուրժուաներ, վորոնք շատ կամ քիչ չափով մոլեգնած եյին կառավարության դեմ։

Ցեվ այսպիսի իրադրության մեջ, վորպես թե սոցիալիստական ուղղությունների ու ֆրակցիաների անընդգրկելի քանակության մեջ, Էնգելսը կարողացավ իրեն համար ճանապարհ բանալ դեպի պրոլետարական սոցիալիզմը, յերկյուղ չկրելով բարի մարդկանց, տաքարյուն հեղափոխականների, բայց վատ կոմունիստների մասսայից պառակտվելուց։

1846 թիվն ե։ Էնգելսը Փարիզումն ե։ Փարիզն այդ ժամանակ յեռում ե քաղաքականությամբ և զանազան սոցիալիստական թեորիաների քննարկմամբ։ Էնգելսն աղահարար ուսումնասիրում ե սոցիալիզմը, անձամբ ծանոթանում ե Կաբեյի, Լուի Բլանի և ուրիշ ականավոր սոցիալիստների հետ, վարվզում ե խմբագրությունների ու խմբակները։

Նրա գլխավոր ուշադրությունը դարձված ե այդ ժամանակի ամենալուրջ ու ամենատարածված սոցիալիստական ուսմունքի—պրուդոնիզմի վրա։ Ցեվ դեռ մինչև պրուդոնյան «Աղքատության փիլիսոփայությունը» լույս տեսնելը (1846 թ. հոկտեմբեր. Մարքսի պատասխանը—հռչակավոր «Փիլիսոփայության աղքատությունը» լույս տեսավ 1847 թ.) Էնգելսն անխնա խայթելով ու զարմանալի խորությամբ քննադատում ե Պրուդոնի հիմնական գաղափարները, վորոնցով այդ ժամանակ առանձնապես զբաղվում եր գերմանական սոցիալիստ Գրյունը։ Անգլիերեն լեզուն (վորը Մարքսը շատ ավելի ուշ յուրացրեց) և անգլիական գրականությունը հրաշալի գիտենալը թույլ ե տալիս Էնգելսին միանգամից (1846 թվի սեպտեմբերի 18-ի նամակը) մատնանշել տխրահռչակ պրուդոնյան «աշխատանքային չուկաների» սնանկության օրինակներն Անգլիայում։ Պրուդոնը խայտառակում ե սոցիալիզմը,—վրդովվում ե Էնգելսը,—ըստ Պրուդոնի դուրս ե գալիս, վոր բանվորները պետք ե hետ գնեն կապիտալը։

Բասնվեցամյա Էնգելսն ուղղակի վոչնչացնում ե «ճշմարիտ սոցիալիզմը»—այս դարձվածքին հանդիպում ենք նրա 1846 թվի հոկտեմբերի 23-ի նամակում «Կոմունիստական մանիֆեստից» շատ առաջ, ըստ վորում նրա գլխավոր ներկայացուցիչ անվանում ե Գրյունին։ «Հակապրոլետարական, մանր բուրժուական, ֆիլիստերական» ուսմունք, «դատարկ ֆրազներ», զանազան «հանրամարդկային» ձգտումներ, ««կոպիտ» կոմունիզմի նախապաշարված յերկյուղ» (Löffel-Kommunismus—բառացի «գդալի կոմունիզմ» կամ լափելու կոմունիզմ), մարդկության «յերջանկացնելու խաղաղ պլաններ»,—ահա Էնգելսի կարծիքները, վորոնք վերաբերում են մինչ-մարքսյան սոցիալիզմի բոլոր տեսակներին։

«Յերեք յերեկո,—գրում ե Էնգելսը,—մենք վիճում եյինք պրուդոնիզմի մասին. համարյա բոլորը, Գրյունի գլխավորությամբ, իմ դեմ եյին։ Գլխավորը,—վոր յես պիտի ապացուցեյի,—բանի հեղափոխության անհրաժեշտությունն եր այդ» (23 հոկտեմբերի 1846 թվի)։ Վերջիվերջո յես կատաղեցի և իմ հակառակորդներին այն տեղը հասցրի, վոր նրանք հարկադրված յեղան ուղղակի կոմունիզմի դեմ արտահայտվել։ Յես պահանջեցի քվեարկել այն հարցը, թե կոմունիստնե՞ր ենք մենք, թե վոչ։ Մեծ աղմուկն զայրույթ գրյունականների, վորոնք սկսեցին հավատացնել, թե նրանք ժողովվել են քննարկելու «մարդկության բարիքը» և թե վերջապես պետք ե գիտենալ, թե իսկապես ինչ բան ե կոմունիզմը։ Այդ ժամանակ յես նրանց ամենահասարակ վորոշումը տվի, վորպեսզի խնդրի եյությունից խորամանկ խուսափումներ թույլ չտամ։ Կոմունիստների տրամադրությունները,—գրում ե Էնգելսը,—յես այսպես բնորոշեցի. 1) պաշտպանել պրոլետարների շահերը ի հակադրություն բուրժուազիայի շահերի. 2) այդ բանն իրագործել մասնավոր սեփականությունը վոչնչացնելով և այն փոխարինելով գույքի հանրայնացումով. 3) այդ նպատակներն իրագործելու համար այլ միջոց չընդունել, բացի բռնի դեմոկրատական հեղափոխությունից (գրված ե 1848 թվի հեղափոխությունից 1½ տարի առաջ)։

Դիսկուսիան վերջացավ նրանով, վոր ժողովը 13 ձայնով, ընդդեմ գրյունականների 2 ձայնի, ընդունեց Էնգելսի բնորոշումը։ Այդ ժողովները հաճախում եյին մոտ 20 հյուսն արհեստավորներ։ Փարիզում 67 տարի առաջ այսպես եր դրվում Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հիմքը։

Մի տարի անց, 1847 թ. նոյեմբերի 24-ի նամակում, Էնգելսը հայտնում ե Մարքսին իր կազմած «Կոմունիստական մանիֆեստի» սևագրի մասին, ի միջի այլոց դեմ արտահայտվելով սովորած յեկեղեցական կատեխիզիսի ձևի դեմ։ «Յես սկսում եմ,—գրում ե Էնգելսը,—այն հարցից, թե ի՛նչ ե կոմունիզմը, և այնուհետև անցնում եմ ուղղակի պրոլետարիատին,—նրա ծագման պատմությունը, տարբերությունը նախկին աշխատավորներից, պրոլետարիատի և բուրժուազիայի հակադրության զարգացումը, կրիզիսները, յեզրակացությունները»։ «Վերջում կոմունիստների կուսակցական քաղաքականությունը»։

Էնգելսի այս պատմական նամակն այն յերկի առաջին ուր—

ճյուղի մասին է, վորը շրջեց ամբողջ աշխարհը և վորը բոլոր հիմնական բաներում մինչև այժմ ճիշտ է, կենդանի ու հրատապ, կարծես գրվել է յերեկ, ակնառու կերպով ցույց է տալիս, թե Մարքսի ու Ենգելսի անուններն իրավամբ են կողք կողքի գրվում, վորպես ժամանակակից սոցիալիզմի հիմնադիրների անուններ[1]:

Գրված է 1913 թ. հոկտեմբերին:
Առաջին անգամ տպագրվել է 1920 թ. նոյեմբերի 28-ին, «Պրավդայի» № 268:
Ստորագրություն՝ Ն. ԼԵՆԻՆ:
Յերկ., հ. XVII, եջ 29—34:

1 Հոդվածն այստեղ ընդհատվում է: Խմբ.:

[ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ[1]]

(«ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ ՅԵՎ ԵՄՊԻՐԻՈԿՐԻՏԻՑԻԶՄ» ԳՐՔԻՑ)

Մարքսի և Ենգելսի հանճարեղությունը հենց այն է, վոր շատ յերկար ժամանակաշրջանի, գրեթե կես դարի, *ընթացքում նրանք զարգացնում եյին մատերիալիզմը, առաջ եյին շարժում փիլիսոփայության մեջ մեկ հիմնական ուղղություն, չեյին կանգ առնում արդեն լուծված իմացաբանական հարցերի կրկնման վրա, այլ հետևողականորեն անց եյին կացնում,—ցույց եյին տալիս, թե* ի՛նչպես *պետք է կիրառել հենց* նույն *մատերիալիզմը հասարակական գիտությունների բնագավառում, անխնա կերպով մի կողմ նետելով, վորպես աղբ, անմտություն, ճոռոմ հավակնոտ ցնդաբանություն՝ փիլիսոփայության մեջ «նոր» գիծ «հայտնագործելու», «նոր» ուղղության գյուտն անելու անթիվ փորձերը և այլն: Նմանորինակ փորձերի բառական բնույթը, սխոլաստիկական խաղը փիլիսոփայական նոր «իզմերով», հարցի եյության խճճումը մանվածապատ խորամանկամտություններով, իմացաբանական յերկու արմատական ուղղությունների պայքարն ըմբռնելու և պարզ ներկայացնելու անկարողությունը,—ահա թե ի՛նչն են հալածել, հարվածել Մարքսն ու Ենգելսն իրենց ամբողջ գործունեյության ընթացքում:*

Մենք ասացինք՝ գրեթե կես դարի ընթացքում: Իսկապես, դեռևս 1843 թվին, յերբ Մարքսը դեռ նոր եր միայն դառնում Մարքս, այսինքն՝ սոցիալիզմի, վորպես գիտության, հիմնադիր, հիմնադիր արդի մատերիալիզմի, *վոր անչափ ավելի հարուստ է իր բովանդակությամբ, ու անհամեմատ ավելի հետևողական, քան մատերիալիզմի բոլոր նախորդ ձևերը,—դեռևս այն ժամանակ Մարքսը զարմանալի պարզությամբ գծում եր արմատական ուղղությունները փիլիսոփայության մեջ: Կ. Գրյունը բերում է այն*

1 Վերնագիրը պատկանում է հրատարակության խմբագրությանը: Խմբ.:

նամակը, վոր Մարքսը գրել է Ֆոյերբախին 1843 թվի հոկտեմբերի 20-ին, վորտեղ Մարքսը հրավիրում է Ֆոյերբախին մի հոդված գրել Շելլինգի դեմ «Deutsch–Französisdhe Jahrbücher»-ում[1]: Այդ Շելլինգը դատարկ պճրծենկոտ է,—գրում է Մարքսը,—բոլոր առաջվա փիլիսոփայական ուղղությունները ընդգրկելու և վերազանցելու իր հավակնություններով: «Ֆրանսական ռոմանտիկներին ու միստիկներին Շելլինգն ասում է՝ յես միացումն եմ փիլիսոփայության և աստվածաբանության. ֆրանսական մատերիալիստներին՝ յես միացումն եմ մարմնի և իդեայի. ֆրանսական սկեպտիկներին՝ յես դոգմատիկայի կործանողն եմ...»[2]: Վոր «սկեպտիկները»—կոչվեն նրանք յումիստներ թե կանտականներ (թե XX դարում՝ մախիստներ)—գոռում են թե՛ մատերիալիզմի, թե՛ իդեալիզմի «դոգմատիկայի» դեմ, Մարքսն արդեն այն ժամանակ տեսնում եր, և թույլ չտալով, վոր իրեն շեղի փիլիսոփայական հազար չնչին սիստեմիկներից վորևէ մեկը, նա կարողացավ Ֆոյերբախի միջոցով ուղղակի կանգնել մատերիալիստական ճանապարհի վրա ընդդեմ իդեալիզմի: Յերեսուն տարի անց, «Կապիտալի» I հատորի յերկրորդ հրատարակության վերջաբանում, Մարքսը նույնպես պարզ ու ճշտորոշ կերպով իր մատերիալիզմը հակադրում է հեգելյան, այսինքն ամենահետևողական, ամենազարգացած իդեալիզմին, արհամարհանքով մի կողմ նետելով Կոնտի «պոզիտիվիզմը» և վողորմելի եպիգոններ հայտարարելով ժամանակակից փիլիսոփաներին, վորոնք կարծում են, թե վոչնչացրել են Հեգելին, իսկ իրոք վերադարձել են Կանտի և Յումի մինչհեգելյան սխալների կրկնության: 1870 թվի հունիսի 27-ին Կուգելմանին գրած նամակում Մարքսը նույնպես արհամարհանքով է վերաբերվում «Բյուխներին, Լանգեյին, Դյուրինգին, Ֆեխներին և այլն» նրա համար, վոր դրանք չեն կարողացել ըմբռնել Հեգելի դիալեկտիկան ու արհամարհանքով են վերաբերվում Հեգելին[3]: Վերցրեք վերջապես Մարքսի փիլիսոփա-

[1] «Գերման-ֆրանսական Տարեգրքեր»: Խմբ.:

[2] Karl Grün. «Ludwig Feuerbach in seinem Briefwechsel und Nachlass, sowie in seiner philosophischen Charakterentwicklung», I Bd., Lpz. 1874, S. 361 (Կարլ Գրյուն, «Լուդվիգ Ֆոյերբախն իր նամակագրության մեջ...», հ. I, եջ 361, Լպցգ., 1874 թ.: Խմբ.):

[3] Պոզիտիվիստ Բիզլիի (Beesley) մասին Մարքսը խոսում է 1870 թվի դեկտեմբերի 13-ի նամակում. «Վորպես Կոնտի հետևորդ, նա չի կարող չդիմել ամեն տեսակ աչքակապությունների (crotchets): Համեմատեցեք սրա հետ այն գնահատականը, վոր Ենգելսն է տալիս 1891 թ. Հեքսլիի նման պոզիտիվիստներին:

յական առանձին նկատողությունները «Կապիտալի» մեջ և մյուս յերկերում,—դուք կտեսնեք անփոփոխ հիմնական մոտիվը. նա պնդում է մատերիալիզմի վրա և արհամարհական ծաղրի յե յենթարկում ամեն մի կոծկում, ամեն մի խառնաշփոթություն, դեպի իդեալիզմ արվող ամեն մի նահանջ: Այս յերկու արմատական հակադրությունների մեջ են պտտվում Մարքսի փիլիսոփայական բոլոր նկատողությունները—պրոֆեսորական փիլիսոփայության տեսակետից՝ այդ «նեղությունը» և «միակողմանիությունն» է հենց նրանց թերությունը: Իրոք մատերիալիզմն ու իդեալիզմը հաշտեցնելու որապակաս ծրագրերը հաշվի առնելուց հրաժարվելը փիլիսոփայական խստորոշ ուղիով առաջ գնացող Մարքսի մեծագույն ծառայությունն է:

Միանգամայն Մարքսի վոգով և սերտորեն աշխատակցելով նրա հետ՝ Ենգելսն իր բոլոր փիլիսոփայական աշխատությունների մեջ կարճ ու պարզ կերպով բոլոր հարցերի վերաբերմամբ հակադրում է մատերիալիստական և իդեալիստական գծերը, լուրջ ուշադրություն չդարձնելով վո՛չ 1878, վո՛չ 1888, վո՛չ 1892 թվերին մատերիալիզմի և իդեալիզմի «միակողմանիությունը» «դերազանցելու», նոր գիծ, վորևիցե «պոզիտիվիզմ», «ռեալիզմ» կամ այլ պրոֆեսորական շառլատանիզմ հոչակելու անվերջ ճիգերին: Բովանդակ պայքարը Դյուրինգի դեմ Ենգելսը մղել է ամբողջովին մատերիալիզմը հետևողականորեն անցկացնելու լոզունգով, մատերիալիստ Դյուրինգին մեղադրելով գործի եյությունը բառերով մթագնելու համար, ֆրազի համար, դատողության այնպիսի յեղանակների համար, վորոնք արտահայտում են զիջումն իդեալիզմին, անցումն դեպի իդեալիզմի դիրքը: Կա՛մ մինչև վերջը հետևողական մատերիալիզմ, կա՛մ փիլիսոփայական իդեալիզմի ստությունն ու խառնաշփոթությունը,—ահա այն հարցադրումը, վոր տրված է «Անտի-Դյուրինգի» յուրաքանչյուր պարագրաֆում և վորը չնկատել կարող եյին միայն այնպիսի մարդիկ, վորոնց ուղեղներն արդեն փչացած են պրոֆեսորական ռեակցիոն փիլիսոփայությամբ: Յեվ ընդհուպ մինչև 1894 թ., յերբ գրված է հեղինակի կողմից վերանայված և վերջին անգամ լրացված «Անտի-Դյուրինգի» վերջին առաջաբանը, Ենգելսը շարունակելով հետևել և՛ նոր փիլիսոփայությանը, և՛ նոր բնագիտությանը, առաջվա վճռականությամբ շարունակում եր պնդել իր պարզ ու ամրակուռ դիրքի վրա, մի կողմ նետելով նոր մեծ ու պստիկ սիստեմների աղբը:

Վոր Ենգելսը հետևում եր նոր փիլիսոփայությանը, յերևում

է «Լուդվիգ Ֆոյերբախից»: 1888 թվի առաջաբանում խոսվում է նույնիսկ այնպիսի յերևույթի մասին, ինչպես գերմանական կլասիկ փիլիսոփայության վերածնությունն է Անգլիայում և Սկանդինավիայում, իսկ տիրապետող նեոկանտականության և յումիզմի մասին Ենգելսի մոտ (և' առաջաբանում, և' գրքի տեքստում) չկան այլ խոսքեր, բացի ամենածայրահեղ արհամարհանքից: Բոլորովին ակներև է, վոր՝ դիտելով կանտականության ու յումիզմի հին, մինչհեգելյան սխալների կրկնությունը գերմանական և անգլիական մոդային փիլիսոփայության կողմից՝ Ենգելսը պատրաստ եր բարիք սպասելու նույնիսկ դեպի Հեգելը կատարվող շրջադարձից (Անգլիայում և Սկանդինավիայում), հուսալով, վոր խոշոր իդեալիստն ու դիալեկտիկը կոգնի իդեալիստական ու մետաֆիզիկական մանր մոլորությունները նկատելուն:

Գերմանական նեոկանտականության և անգլիական յումիզմի յերանգների ահագին քանակության քննարկման մեջ չմտնելով՝ Ենգելսը շեմքից դատապարտում է նրանց հիմնական նահանջը մատերիալիզմից: Ենգելսը թե' մեկ, թե' մյուս դպրոցի ամբողջ ուղղությունը հայտարարում է «գիտական քայլ դեպի հետ»: Յեվ ինչպես է նա գնահատում անտարակուսելիորեն «պոզիտիվիստական», տարածված տերմինաբանության տեսակետից՝ անտարակուսելիորեն «ռեալիստական» տենդենցն այդ նեոկանտականների և յումիստների, վորոնցից նա չեր կարող, որինակ, չգիտենալ Հեքսլիին: Այն «պոզիտիվիզմն» ու այն «ռեալիզմը», վոր հրապուրում եր և հրապուրում է անթիվ խառնաշփոթիչների, Ենգելսը, հայտարարում եր լավագույն դեպքում մատերիալիզմը գաղտագողի անցկացնելու փիլիստերական միջոց, հրապարակով ջախջախելով այն ու նրանից հրաժարվելով: Բավական է գեթ մի փոքր մտածել Տ. Հեքսլիի այսպիսի գնահատման վրա, ամենախոշոր բնագետի, վորն, անտարակույս, ավելի ռեալիստական ռեալիստ է և պոզիտիվ պոզիտիվիստ, քան Մախը, Ավենարիուսն ու Ընկ., վորպեսզի հասկանալի լինի, թե վորպիսի արհամարհանքով կնայեր Ենգելսը մի բուռը մարքսիստների «նորագույն պոզիտիվիզմով» կամ «նորագույն ռեալիզմով» այժմ հրապուրվելուն:

Մարքսն ու Ենգելսն սկզբից մինչև վերջը կուսակցական եյին փիլիսոփայության մեջ, կարողանում եյին բացարկել շեղումները մատերիալիզմից և գիջողականությունը իդեալիզմի և ֆիդեիզմի վերաբերմամբ բոլոր և ամեն տեսակ «նորագույն» ուղղությունների մեջ: Ուստի բացառապես մատերիալիզմի հետևողականության տեսակետից եյին նրանք գնահատում Հեքսլիին: Այդ պատճառով նրանք Ֆոյերբախին կշտամբում եյին նրա համար,—վոր Ֆոյերբախը մինչև վերջը չի հասցրել մատերիալիզմը,—նրա համար, վոր Ֆոյերբախն առանձին մատերիալիստների սխալների պատճառով հրաժարվում եր մատերիալիզմից,—նրա համար,—վոր Ֆոյերբախը մարտնչում եր կրոնի դեմ՝ այն նորոգելու կամ նոր կրոն հորինելու նպատակով,—նրա համար, վոր Ֆոյերբախը չեր կարողանում սոցիոլոգիայի մեջ ազատվել իդեալիստական ֆրազից ու մատերիալիստ դառնալ:

Գրված է 1908 թվի յերկրորդ կեսում:
Տպագրված է 1909 թվ. «Звено» հրատ. մեջ:
Ցերկ., հ. XIII, եջ 275—277:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Կարլ Մարքս 3
Մարքսիզմի բիբլիոգրաֆիան 48
Ֆրիդրիխ Էնգելս 57
Մարքսն ամերիկյան «Ջորնի պերեդելի» մասին 69
Սոցիալիզմն ու կրոնը 77
Առաջաբան Կ. Մարքսի՝ Լ. Կուգելմանին գրած նամակների ռուսերեն թարգմանության 83
«Ի. Ֆ. Բեկկերի, Ի. Դիցգենի, Ֆ. Էնգելսի, Կ. Մարքսի և ուրիշների նամակները՝ ուղղված Ֆ. Ա. Զորգեյին և ուրիշներին» գրքի ռուսերեն թարգմանության առաջաբանը 93
Մարքսիզմ և ռևիզիոնիզմ 114
Միջազգային լիբերալիզմի գնահատականը Մարքսի մասին 124
Բանվորական կուսակցության վերաբերմունքի մասին դեպի կրոնը . . 130
Տարաձայնություններ եվրոպական բանվորական շարժման մեջ . . . 144
Մարքսիզմի պատմական զարգացման միքանի առանձնահատկությունների մասին 150
Հայնդմանը Մարքսի մասին 156
Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը 164
Մարքսիզմի երեք աղբյուրներն ու երեք բաղկացուցիչ մասերը . . . 168
Մարքսի նամակագրությունը Էնգելսի հետ 175
Կուսակցականությունը փիլիսոփայության մեջ 183

Հայերեն թարգմանության խմբագիր Բ. Մարտիրոսյան
Տեխնիկական խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Հասրաթյան
Կոնտրոլ սրբագրիչ Ցե. Տ. Մինասյան

Գլավլիտի լիազոր № Ն—1601, հրատ. 761
Պատվեր № 251, տիրաժ 7000
Թղթի չափսը 60×92 1/16 (38.600 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
12 տպ. մամուլ, 6 թերթ թուղթ
Հանձնված է արտադրության 22/XI 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 4/I 1940 թ.
Գինը 1 ռ. 50. կազմը՝ շքեղ, 2 ռ., հասարակը 1 ռ. 50 կ

Քաղաքական գրականության Պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0179128

Jn. 504.